Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Բ պրակ

ԵՐԵՎԱՆ - 2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա.Ս.Գալստյան, Ս.Ա.Գալստյան, Գ.Կ. Հովսեփյան,
Ա.Գ. Սահակյան, Լ.Ե. Սահինյան

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Բ պրակ

ԱՍՈՂԻԿ

«Ասողիկ» հրատարակչություն
Երևան - 2016

INSTITUTE OF LINGUISTIES OF NAS OF RA AFTER H. ACHARYAN

Институт языка имени Р. Ачаряна НАН РА

NEW WORDS

Volume Two

НОВЫЕ СЛОВА

Выпуск Б

´´Asoghik´´ Publishing House
Yerevan - 2016

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ն 930
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Խմբագիր՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Լ.Կատվալյան
Գրախոս՝ բ.գ.թ.,դոցենտ Լ. Գ. Թելյան

Նոր բառեր. Բ պրակ/ Կազմողներ՝ Ա.Ս.Գալստյան (ղեկավար),
Ն 930 Ս. Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան,
Լ. Ե. Սահինյան. - Եր.: Ասողիկ, 2016.- 184 էջ:

Սույն գիրքը «Նոր բառեր. Ա պրակի» շարունակությունն է: Գրքում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառագիտությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին: Աշխատանքում ներկայացվող բառերը կարող են օգտագործվել բացատրական բառարանների կազմման ժամանակ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-343-1

©ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Բ պրակը» պարունակում է ավելի քան 1400 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի 8-րդ էջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բ պրակի կազմման աշխատանքներին մասնակցել է պրոֆ. Սերգեյ Գալստյանը՝ ներկայացնելով բառերի մի փունջ (*լ, ս, վ,ստ* տառերի հատվածներում)[1]: Հեղինակային խումբը շնորհակալություն է հայտնում նրան՝ համագործակցության համար:

[1] Պրոֆ. Ս.Գալստյանի տրամադրած բառացանկում գործածված են նաև *մամուլ, թարգմ.* (թարգմանական) նշումները, ինչպես նաև որոշ բառակապակցական օրինակներ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած- ածական
բ. - բայ
բժշկ. - բժշկական
բնստ. - բանաստեղծական
գ. – գոյական
գղտնտ. – գյուղատնտեսական
գրկն. – գրականագիտական
գրք. - գրքային
դիպվ. –դիպվածային
երժշտ. – երաժշտական
ժրգ. - ժարգոնային
իմ.նորբ. – իմաստային նորաբանություն
իրավ. – իրավաբանական
լեզվ. – լեզվաբանական
կենս. – կենսաբանական
կզմխս. – կազմախոսություն
կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ
հեգն. – հեգնական
հզվդ. - հազվադեպ
հրկտր դ. – հարակատար դերբայ
մկբ. – մակբայ
մարզ. – մարզական
մսնգ. - մասնագիտական
շին. - շինարարական
ռազմ. – ռազմական
տեխ. - տեխնիկական
տնտգ. – տնտեսագիտական
տպգր. - տպագրական
փխբ. – փոխաբերական
քղք. - քաղաքական
օդգ. - օդագնացություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա.գրքեր

1. Արեն Մարկ Արեն, Այնտեղ, որտեղ ծաղկում են վայրի վարդեր: Անատոլիական պատմություն, Եր., 2015:
2. Գրքարվեստ Գրքի համաշխարհային առաջին տոնավաճառի տեղեկատու, Եր., 2008:
3. ԼԱ Լյուդվիգ Աշկենազի, Բրուտոս, Եր., 2011, թարգմ. Մերի Հերունի - Սարգսյան:
4. ՀԼԽՄ Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Յու.Ս. Ավետիսյան և այլք): Դասագիրք բուհերի …. համար: Եր., 2016:
5. Համբ. Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 2, Եր., 2015:
6. ՀՇ Հովհաննես Շիրազ
7. Հրչ Ս 1 Հր. Սարուխան, Ի տրիտուր: Բանաստեղծություններ, Եր., 2005:
8. ՀրչՍ 2 Հր. Սարուխան,Սիրո հուշապսակ: Բանաստեղծություններ, Եր., 2005:
9. ՇՂ Շուշան Ղազարյան, Խաչվածին մահ չկա: Եր., 2011:
10. ՊՇ Պարոնյան Շուշանիկ, Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Եր., 2011:
11. Ջ Ջեյմս Ջոյս, Ուլիսես: Եր., 2014, թարգմ. Սամվել Մկրտչյան:
12. ՌԿ Ռոբերտ Կարայան, Փրկություն: Եր., 2008:
13. ՍԱ Սարգսյան Արմեն, Մանկական զվարճապատումներ: Եր., 2016:
14. ՍԿ Սիլվա Կապուտիկյան
15. ՍՄ Սուրեն Մուրադյան, Երգիծատուն, Եր., 2004:
16.ՎԱ Վալտեր Արամյան, Կոլիմա: Եր., 2006:
17. ՎԻ Վիգեն Իսահակյան, Հայրս: Եր., 2000:
18. ՎՍ Վանիկ Սանթրյան, Ձեր ընծայագրերի հետքերով. ինքնալրագիտարան, հ.1,2011, հ.2, Եր., 2012:
19. ՎՖ Վարդան Ֆերեշեթյան, Գրահավաքը: Եր., 2011:

20. Ուղեցույց Հայոց լեզու և գրականություն: Պետական ավարտական, միասնական և բանավոր քննությունների ուղեցույց: Գ-նահատման և թեստավորման կենտրոն, կազմ.՝ Մ.Հալաջ-յան, Ա. Ջրբաշյան, Փ. Մեյթիխանյան: Եր., 2012:

Բ. ամսագրեր

Անդին – Անդին
Արտ. գրակ. – Արտասահմանյան գրականություն
Գարուն – Գարուն
ԳԱ – Գիտության աշխարհում
Լրաբեր – Լրաբեր հասարակական գիտությունների
ՀԴ – Հայկական դեղաբույսեր
ՃՇ – Ճարտարապետություն, շինարարություն
Նորք – Նորք
Տն. առ. – Տնային առողջարան
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

Գ. լրագրեր

Ագրոլրատու - Ագրոլրատու
Ազգ – Ազգ
Առ. - Առավոտ
Ավ. – Ավանգարդ
ԳԹ – Գրական թերթ
Գրաշխարհ - Գրաշխարհ
Եր.համ.- «Երևանի համալսարան» ամսաթերթ
Ժամ. – Ժամանակ
Ժ. - Ժողովուրդ
Իրավունք - Իրավունք
Իր. – Իրատես
ՀՋ – Հայ զինվոր
ՀԺ – Հայկական ժամանակ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
168ժ. -168 ժամ
Հրապ. - Հրապարակ
ՉԻ – Չորրորդ իշխանություն
TVալիք - TVալիք
TVմոլ - TVմոլ

Դ. Զանգվածային լրատվամիջոցներ

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց), ռադիո:

Օգտագործված բառարաններ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., Լույս, 1973:
3. ԷլոյանՍ.Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Խլղաթյան Ֆ.Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան,1982:
6. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ.հրատ.,հհ. 1-3, 1944, հ.4, 1945:
7. Մեյթիխանյան Փ.Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
8. Նոր բառեր. Ա պրակ (Ա.Ս.Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2015:
9. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Զ.Ա.Հացագործյան, Ա.Հ.Դարբինյան, Հ.Գ. Հովումյան, Գ.Հ.Սրվանձտյան), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
10. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., 2000:

Ա

ԱԳՐՈԼՐԱՏՈՒ, գ. **Գյուղատնտեսությանը վերաբերող լուրեր հաղորդող:** *(Ագրոլրատու, 05.02.2015):*

ԱԳՈՒՅԱՇՂԹԱ, գ.**Պայուսակի՝ հագուստի եզրերը կցող՝ ագուցող շղթա:** Իր թիկնապայուսակը Վերոնիկան վերակախեց կրծքին և բացելով քաշեց կողքի **ագուցաշղթան***(Արեն, էջ 272):*

ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Ազատական՝ լիբերալ դարձնելը:** Եթե առաջիկայում մեր տնտեսությունում հեղափոխական փոփոխություններ տեղի չունենան՝ մասնավորապես լիակատար **ազատականացում,** ապա Հայաստանին առջևում շատ ծանր ժամանակներ են սպասում *(Ժող., 05.05.2015):*

ԱԶԱՏԱՄԱՐՏԵԼ, բ. **Ազատամարտ մղել:** Ժողովուրդը պատերազմի մեջ մեղավոր չէ, հանցավոր է, երբ ճախրելու, **ազատամարտելու** փոխարեն՝ կսպասի մեռնելու*(ՌԿ, էջ 39):*

ԱԶԳԱԳՐԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգագրությունն ու մշակույթը ուսումնասիրող գիտաճյուղ:** 1970-ական թթ. երկրորդ կեսից Է. Մարգարյանի, Ս.Հարությունովի և Յու. Մկրտումյանի համատեղ հետազոտությունները հիմք են դարձել Խորհրդային Միությունում **ազգագրամշակութաբանության** ձևավորման համար *(Լրաբեր, 2, 2015, էջ 346):*

ԱԶԳԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ, ած. **Ազգ կազմակերպող:** 1990-ականների սկզբից գրականությունը մղվեց ետնախորք, կորցրեց իր ազգասնուցիչ, **ազգակազմակերպիչ** և ազգակերտիչ դերը *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ԱԶԳԱԿԵՐՏԻՉ, ած. **Ազգ կերտող:** Տե՛ս ԱԶԳԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ-ի օրինակը:

ԱԶԳԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգի միասնական կեցություն:** ….Այսօր Հայաստանում կա մեկ կյանքով ապրելու **ազգակեցության** պահանջ *(Իր., 24.05.2016):*

ԱԶԳԱՀՈՒՅԶ, ած. **Ազգին հուզող:** Հռոմի պապը ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ …. պատարագ մատուցեց Վատիկանում, դուք պետք է տեսնեիք, թե ինչ **ազգահույզ** իրադարձություն էր *(Իրավունք,23.09.2015):*

ԱԶԳԱՁՈՒՅԼ, ած.**Ազգը միաձուլող՝ միասնականացնող:** ….Գլխացավի պատճառը ժողովրդի և իշխանության **ազգաձույլ** գործունեության պակասն է, հայի հորինովի ճակատագրի շրջադարձն ու ինքնամաքրվելը…. *(ԳԹ,24.04.2015):*

ԱԶԳԱՄՈՌ, ած. **Ազգը մոռացող՝ ուրացող:** ….Հուզմունքից քիչ էր մնում սիրտը պայթեր՝ այս ազգադավ, ազգուրաց և **ազգամոռ** ժողովրդի համար…*(ՎՖ, էջ 100):*

ԱԶԳԱՄՆՈՒՅԻՉ, ած. **Ազգ սնուցող:** Տե՛ս ԱԶԳԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ-ի օրինակը:

ԱԶԳԷԹՆՈՍ, գ. **Ազգ՝ ազգություն:** Ցեղասպանության 100-րդ տարեդարձը շատ քիչ մեր կամքով, իսկ իրականում տիեզերական ուրույն ցիկլով **ազգէթնոսին** տանում է այնտեղ, ուր էթնոսը վաղուց պետք է լիներ *(Իր., 14.04.2015):*

ԱԶՆՎԱԲՈՒԽ, ած. **Մաքուր սկիզբ ունեցող:** Ես նկատի չունեմ միայն նրա երգի ու հղացումի **ազնվաբուխ** ակունքները, նրա պոետական խոսքի անմիջականությունն ու թափը …. *(Իր., 29.04.2016):*

ԱԶՆՎԱԿԵՐՏ, ած. **Ազնվական կեցվածքով:** Ես ներշնչվեցի այդ հերոսական, **ազնվակերտ** ու վեհանձն գեներալով *(Հմց)*:

ԱԹՈՌԱԲՈԼՈՐ, ած. **Աթոռներով շրջապատված:** Իշխանական դռներից միակն էր, որի բանալու անցքից անմիջապես երևում էին զարդանախշ գահն ու գրասեղանին մեխված–կցված երկար, լայն ու **աթոռաբոլոր** խորհրդակցասեղանը *(ԳԹ,12.02.2016):*

ԱԹՈՌԱՎՈՐ, գ. (փխբ.): **Աթոռ՝ պաշտոն ունեցող:** ….Թշնամու գերազանցությունից երբեք չեմ վախեցել, ես՝ իր կրծքի տակ երկիր ու այդ երկրի հանդեպ սեր ու պաշտամունք չունեցող մեր **աթոռավորից** եմ սարսափում *(ԳԹ, 17.07.2015):*

ԱԼԻՔԵԶՐ, ած. **Ալիքավոր եզրերով:** Ծովաբողկը ….ունի հողի մեջ խոր թափանցող, մսոտ, սպիտակ արմատներ խոշոր ու լայն նշտարաձև **ալիքեզր**, արմատամերձ տերևներ *(Ազրոլրատու, 05.02.2015):*

ԱԿԱՆՋԱՀԱՃՈ, ած. **Լսելիքին հաճելի:** Գուցե այդ ընտրություններով են պայմանավորված **ականջահաճո** փոփոխությունների մասին հայտարարությունները *(Իր., 03.06.2016):*

ԱԿՆԱԴԻՄԱԿ, գ. **Աչքերը ծածկող դիմակ:** Հետո գիշերային ժամերը. սև՝ դաշույններով ու **ակնադիմակներով***(Ջ, էջ 59):*

ԱԿՈՒՄԲԱՄԵՐՁ, ած. **Ակումբին մոտ գտնվող:** Վետերանների հետ հանդիպումը տեղի է ունենում բացօթյա **ակումբամերձ** հրապարակում….*(ՇՂ, էջ 131):*

ԱՀԱԳՆԱՑՈՒՄ, գ. **Ահագնանալը՝ մեծանալը:** Մենք միավորվում ենք վտանգի **ահագնացման** պահին, երբ թշնամին բախում է մեր դուռը…. *(ԳԹ, 08.05.2015):*

ԱՀԱՍՓՅՈՒՌ, ած. **Ահ սփռող**: Սև, **ահասփյուռ** ջիպը ճռռոցով կանգ առավ դպրոցի դիմաց *(ԳԹ,12.02.2016):*

ԱՂԱՆԴԱՊԱՇՏՊԱՆ, գ. **Աղանդը պաշտպանող:** Հայտնի **աղանդապաշտպան** Ստեփան Դանիելյանը զարմանալիորեն շարունակում է

նենգ դավադրության փնտրտուքները նոր սահմանադրությունում *(Իրավունք,25.09.2015):*

ԱՂԱՉԱԳԻՐ, գ. **Աղերսագիր, խնդրագիր:** Նա հանդես եկավ որպես պատերազմի երդվյալ հակառակորդ, ուղերձներ և **աղաչագրեր** էր հղում պատերազմող երկրների ղեկավարներին…(*Անդին, թ. 7-8, 2015):*

ԱՂԲԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Աղբանոցում ապրելը՝ բնակվելը:** Բնականաբար, էկզոտիկ շղարշով պատած այս գործերում քննական ամենաչնչին փորձն անգամ չկա պարզելու, թե մարդն ինչու է հայտնվել այնտեղ, քանզի դա չէ հեղինակների նպատակը, այլ **աղբակեցության** թաքնված հմայքները գովազդելը*….(Ազգ,13.05.2016):*

ԱՂԲԱՍՏԱՆ, գ. **Աղբանոց, որտեղ մարդիկ են բնակվում: «Աղբաստան»**: Այս գիրքը չափազանց դժվար է կարդալ *(Իր., 29.07.2016):*

ԱՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Կյանքի հատակում՝ «աղբաստանում», հայտնված մարդկանց կյանքը պատկերող ստեղծագործություն:** Դ.Դոնիկյանի վեպն այս առումով շահեկանորեն առանձնանում է հայ արվեստի մեջ վերջերս հաստատված մարգինալապատումից և **աղբերգությունից,** որտեղ մի շարք հեղինակներ, հետևողականորեն մեր աչքը խոթելով զանազան դեգեներացված, պսևդոազգային կերպարներ, մշակելով այլանդակի ախտավարակ մի գեղագիտություն, ձգտում են այդ կերպ ներկայացնել արդի իրականության ընդհանրական պատկերը….*(Իր., 29.07.2016):*

ԱՂԵՓՔԱՆՔ, գ. **Աղիների փքվածություն:** Խատուտիկի հյութը օգտագործում են մի շարք հիվանդությունների….**աղեփքանքի**, փորկապության ժամանակ *(ՀԴ, թ. 1, 2014):*

ԱՄԲՈԽԱՎԱՅԵԼ, ած. **Ամբոխին վայելող:** Պայքար, բայց ոչ **ամբոխավայել**, հայհոյաբարբառ *(Ավ., 11.11/2015):*

ԱՄԵՆԻՆՉԱԳԵՏ, գ. (դիպվ.): **Ամեն ինչի մասնագետ, գիտակ:** Ազատ Եղիազարյանն **ամենինչագետ** է *(Գարուն, թ. 1-2, 2015):*

ԱՄՐԱՆԱԿԱՊ, գ. **Ամրանը միացնող՝ ագուցող:** Ամեն մի մույթի կշիռը մոտ 200 տոննա էր, և նրա քարերից յուրաքանչյուրը երկուական ամրանակապով միացված էր հիմնակմախքին *(ՀՇ, թ. 4, 2015):*

ԱՅԲԲԵՆԱԿԵՐՏ, ած. **Այբուբենով կերտված:** Ես Հուշասյուն կանգնեցրի **այբբենակերտ** //Բեկորներով բիբլիական բնաքարի…. *(ՀրչՍ 1, էջ 5):*

ԱՅԼԱԽՈՍԻԿ, ած. (փխբ.): **Այլաբանական:** «Դիետիկ ագռավներ»–ում բանաստեղծը, ասելիքն արտահայտելով **այլախոսիկ** հնարքով, ներկայացնում է մաֆիոզ միջավայրն ու այնտեղ գերիշխող փոխհարաբերությունները *(ԳԹ,20.02.2015):*

ԱՅԼԱԿԵՐՊԱՎՈՐՈՒՄ, գ. **Այլակերպում,կերպարափոխություն:** ….Զրադաշտը…. իր կյանքի ընթացքում իր բազում **այլակերպավորումների** ու ինքնուրացումների մասին պատմելով, իր մարմնի հետ իր ողբն է կիսում *(Գարուն, թ. 1-2, 2015):*

ԱՅԼԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Կեցության այլ ձև:** Մի խոսքով, լեզուն իրականության եթե ոչ միակ, գոնե հարաբերականորեն համազոր **այլակեցությունն** է, եզակի, համարժեք այլընտրանքը (*Անդին, թ. 9-10, 2015):*

ԱՅԼԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Այլ մշակույթներին հատուկ:** Ինքնությունը կորցրած ժողովուրդը չի կարող լինել կենսահաստատ, և նա տարրալուծվում է **այլամշակութային**, անգամ ներմուծված, մթնոլորտում *(Ազգ, 02.10.2015):*

ԱՅՍՊԱՀԱԿԱՆ, ած. **Այս՝ տվյալ պահին վերաբերող, այս պահից բխող, այսպահային**: Պոետին մտատանջում է, որ մարդը ներկա ժամանակներում անցյալի խլյակ է **այսպահական,** շահախնդրությամբ օրվա ուղեղի *(ԳԹ,20.02.2015):*

ԱՆԱՄՆԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ, ած. **Անասունների համաճարակին հատուկ:** Վերաբացման հիմք են …. ռուս գործընկերների հետ իրականացված համատեղ ուսումնասիրությունները, ինչպես նաև երկրում տիրող **անասնահամաճարակային** կայուն իրավիճակը *(Բն, թ. 9, 2015):*

ԱՆԴՐԱՆՑԱԿԱՆ, ած. **Անդրաշխարհային՝ անիրական:** Այն միշտ ինչ-որ այլ տեղ հայտնվելու մասին է, երբ իրենց ներսում պատմություններն ամենասովորական, առօրյա բաների մասին միշտ ինչ-որ **անդրանցական** բան են պարունակում *(ՎՖ, էջ 231):*

ԱՆԻԱՊԱՇՏ, գ. (դիպվ.): **Անին պաշտող:** Եվ ահա **անիապաշտ** ընկերներ, չորս գաղափարական համախոհներ՝ Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը…. ի հիշատակ Անիի յոթերորդ իշխաններից մեկի՝ Վիգենի, որոշում են արու զավակ ունենալու դեպքում անունը դնել Վիգեն *(ՎԻ, էջ116):*

ԱՆՁՐԵՎԱԾԵԾՎԵԼ, բ. **Անձրևածեծ լինել:** ….Այծերը…. նայում են …., թե ինչպես են **անձրևածեծվում** եղրևանու թփուտները…. *(Արեն, էջ 66):*

ԱՆՄՈՌՈՒԿԱՑԱՎ, գ.(դիպվ.): **Հայոց ցեղասպանության 100– ամյակի խորհրդանշանի՝ անմոռուկի չարաշահումը:** …. Վերջին շրջանում երկիրը մոռացել է իր սովորական հոգսառատ առօրյան ու գլխովին նետվել Ցեղասպանության թեմայի մեջ: Սկսած **անմոռուկացավից** …. մինչև ավելի ըստ էության երևույթներ *(Ազգ,17.04.2015):*

ԱՆՈԹԱԶԱՐԿ, գ. **Անոթների զարկը**: Հավասարակշռության օրգանի գրգռման ժամանակ կարող են առաջանալ սրտխառնոց, փսխում, **անոթազարկի** փոփոխություններ *(TV ալիք, 27.01.2014):*

ԱՆՎԱՆԱՆՇԵԼ, բ. **Անունով նշել, առանձնացնել:** Կանգնում է ամբիոնի առաջ ու նախատում հաղորդավարին՝ ինչո՞ւ առաջինը իրեն կանչեցին, երբ մեծ թվով հյուրեր կան, ապա **անվանանշում** Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին…. *(Ազգ, 04.03.2016):*

ԱՆՏԱՌԱՋԱՐԴ, գ. **Անտառների անխնա հատում:** ….Ի վերջո ոչնչացումը՝ հանքահարստահանումից ու **անտառաջարդից** մինչև գետերի չորացում *(Հրապ., 04.11.2014):*

ԱՆՏԱՌԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ, ած. **Անտառը վերականգնելուն ուղղված, անտառավերականգնման**: **Անտառավերականգնողական** աշխատանքները արմատապես բարելավելու անհրաժեշտություն կա *(ՀՀ, 20.05.2015):*

ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՈՒՆԱԿ, ած. **Աշխարհը ընկալելու ունակ:** Մեծ չէ ուկրաինացի այն բանաստեղծների թիվը, ովքեր նույնքան **աշխարհընկալունակ** են, որքան Իվան Դրաչը *(ԳԹ, 28.10.2016):*

ԱՇԽԱՐՀԱՑՐՎԵԼ, բ. **Աշխարհացրիվ լինել, աշխարհով մեկ ցրվել:** Բայց ամեն հայի մեջ, ապրելիս լինի մեծ Հայաստանից հազիվ փրկված էս հողակտորի վրա, Արցախում, Ջավախքում, թե **աշխարհացրված** լինի տասնյակ ու տասնյակ երկրներում, լուռ աղմկում է մի չմարող կարոտ. ուր է երկիրդ *(Իր., 08.07.2016):*

ԱՇՆԱՆԱԹՈՒՅՐ, ած. (բնստ.): **Աշնան գույներ ունեցող:** Թոթռանք է, թախծոտ իմ քույր,// Թոթռանք է հողմ-փաթիլի,//Թեև սաղարթն **աշնանաթույր**//Դեռ կարոտ է շող-կաթիլի *(ՀԲՍ 1, էջ 92):*

ԱՊԱԿԵԶՈՒՐԿ, ած. **Ապակիներից զուրկ:** Մարդաբոյ եղինջները կքվելով գլուխները խոթել էին ներքնահարկի **ապակեզուրկ** պատուհաններից ներս *(Իր., 12.02.2016):*

ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՆԵԼ, բ. **Մարդկային բնույթին խորթացնել:** ….**Ապամարդկայնացնող** է այն ամենը, ինչը ներկայացումը հեռացնում է զուտ կենսական ճշմարտությունից և հոգեբանական ճշմարտացիությունից …. *(Լրաբեր, 3, 2016):*

ԱՊԱՏԵՂԵԿԱՑՆԵԼ, բ. **Սխալ տեղեկություն հաղորդել, մոլորեցնել:** Տոտալիտար աղանդները ….**ապատեղեկացնում** և խաբում են քաղաքացուն *(Իր., 19.07.2016):*

ԱՊԱՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄ, գ. **Քրիստոնեազերծում:** Փետրվարի 12-ին Հռոմի Ֆրանցիսկոս պապը և Մոսկվայի ու համայն Ռուսիո պատրիարք Կիրիլն ընդունեցին Հավանայի համատեղ հռչակագիրը, որով աշխարհի երկու առավել ազդեցիկ բարձրագույն քրիստոնեական հիերարխիաները թե՛ քրիստոնեությանը…., թե՛ ամբողջ աշխարհին սպառնացող ամենագլխավոր վտանգը համարում են հենց Եվրոպայի **ապաքրիստոնեացման** փորձը *(Իր., 17.06.2016):*

ԱՊՐԻԼՎԵՐՋՅԱՆ, ած. **Ապրիլի վերջի: Ապրիլվերջյան** այդ երեկո մեզ է ներկայանում «Քրոնոսը» *(Ավ.,07.05.2015) :*

ԱՌԱՆՁՆԱՐԿՎԵԼ, բ. **Առանձնանալ, հատկանշվել:** ….Մեր իրականության մեջ Դավիթ Հովհաննեսի պոեզիան **առանձնարկվում,** դիֆերենցվում է մեկ այլ հատկանիշով ևս…. *(Իր., 29.04.2016):*

ԱՌԱՋԱՇԱՐՔ, գ. **Առաջին շարք:** Հպարտաշուք Սիլիկյանը, կաղրային կորովաշատ զինվորական, նստած է **առաջաշարքում***(ՌԿ, էջ 125):*

ԱՌԱՎԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Առավելական լինելը:** Ազնվականությունը, ինչպես մարդն ընդհանրապես, երկու առում ունի՝ մարմնավոր և հոգևոր. լավագույնը համերաշխն է՝ հոգևորի **առավելականության** գիտակցությամբ (*Անդին, թ. 2, 2015):*

ԱՌԱՎԵԼԱՊԱՇՏ, գ. **Միշտ առավելագույնին ձգտող, մաքսիմալիստ:** Պետք չէ ամեն մի հարցում **առավելապաշտ** լինել *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ԱՌԵՂԾՎԱԾԱՊԱՐՈՒՐ,ած. **Առեղծվածներով պարուրված:** Նամակով առաքված այդ **առեղծվածապարուր** տագնապը գրկաբաց ընդունելություն էր գտել պատասխան գրության մեջ՝ անպայման զանգահարիր, արի*(ԳԹ, 06.11.2015):*

ԱՌՆԵՏԱՀՈՍ, ած. (դիպվ.): **Հոսանքի հետ առնետներ տանող:** ….Նա սիրում էր մտազբաղ կանգնել ի վերա Գետառի ու նայել մամռակալած, ծանծաղ ու աղտոտ ու **առնետահոս** ջրերին….*(ՎՅ, էջ 126):*

ԱՌՆԵՏԱՎԱԶՔ, գ. (փխբ., քղք.): **Աննպաստ հեռանկարի դեպքում յուրայինների շարքերը լքելը:** Սերժ Սարգսյանի համար ստեղծված իրավիճակը լավ հնարավորություն է՝ հասկանալու համար…. ովքեր են հավատարիմները, իսկ ովքեր վտանգի դեպքում խորտակվող նավի **առնետավազքի** շարքերն առաջնորդողները *(Հմ):*

ԱՌՎԱԼՃԱԿ, գ. **Առվի ջրերից առաջացած լճակ:** Էգ արջը կանգնում է **առվալճակի** վրա, հայելում արտացոլվում է նրա գեղեցիկ գլուխը (*Գարուն, թ. 5-6, 2015):*

ԱՌՈՒՅԳԱԶԱՅՆ, ած. **Առույգ ձայնով:** Տղամարդը…. դառնալով հավաքվածներին, ոչ շինծու, նույնիսկ **առույգաձայն** խոսք գտավ *(ՌԿ, էջ 96):*

ԱՍԵԼԻՔԱՅԻՆ, ած. **Ասելիքին վերաբերող:** ….Նախաերկրաշարժյան այն բանաստեղծությունները, որոնք ուրախ–երգիծական–պարոդիկ կերպընկալում ունեին, երկրաշարժից հետո արդեն ընդարձակում են իրենց **ասելիքային** տարածքի պարագրկումը՝ ներառելով ողբերգականի էութենությունը *(ԳԹ,19.09.2015):*

ԱՍԵՂՆԱՊԱՏԿԵՐ, գ. **Ասեղնագործված պատկեր:** Արմինե Հայրապետյանի «Երգող **ասեղնապատկերներ,** խոսող ժայռապատկերներ» (Եր., 2015) գիրքը ճաշակով կազմել և հրատարակության է պատրաստել…. պահեստազորի փոխգնդապետ Արմինե Նազարեթյանը *(Ազգ, 22.04.2016):*

ԱՍՊԵՏԱՊԱՏԻՎ, ած. **Ասպետավայել: Ասպետապատիվ** երդմամբ հայտարարում եմ. Սարիղամիշից հրահանգ ստանալուն պես ես իմ ….գնդերը հանեցի ճանապարհ՝ նահանջողներին ապավինելու *(ՌԿ, էջ 79):*

ԱՍՏՂԱԿԱԹՈՑ, գ. **Աստղակաթ, աստղերի մարումը լուսաբացին:** Պարզ, **աստղակաթոցի** գիշեր էր, անհայտ հեռուներում մարմրում ու մեռնում են վերջին լույսերը *(ՇՂ, էջ 131):*

ԱՎԱԶԱԲԼՐԱԿ, գ. **Ավազից գոյացած բլրակ:** Նրանց շունը շորորալով թռչկոտում է նվազող **ավազաբլրակի** շուրջը՝ վազվզելով ու հոտոտելով չորսդին *(Ջ, էջ 41):*

ԱՎԱԶԱԿԱՌՐՋ, գ. **Ավազակների որջ:** Մոտակայքում հյուրանոցի նման մի բան կար, որն ավելի շուտ նման էր մի **ավազակաորջի***(ՎԻ, էջ 166):*

ԱՎԱԶԱՆԱՉԱՓ, ած. **Ավազանի չափ:** Բացատի կենտրոնում երևում է բլրաչափ մի քար՝ հարթ մակերեսով, իսկ քարի մակերեսի վրա միջնամասում՝ **ավազանաչափ** մի խոռոչ *(Գարուն, 5-6, 2015):*

ԱՎԱԶԱՆԿԱՐՉՈՒՀԻ, գ. **Կտավի՝ տախտակաշերտի՝ ստվարաթղթի վրա ամրացված ավազապատ շերտի վրա արվող գեղանկարի կին հեղինակ: Կին ավազանկարիչ: Ավազանկարչուհի** Դարյա Կոտյուխը ….Կարապի լճում տեղադրված էկրանի վրա կներկայացնի ավազե անիմացիա *(Ավ., 26.06.2015):*

ԱՏԱՄՆԱՀԱՃՈ, ած. **Ատամներին հաճելի:** ….Սկսեց մանրամասնորեն ծամել՝ վայելելով **ատամնահաճո,** կակուղ միսը *(Ջ, էջ 56):*

ԱՏԿԱՏԱՅԻՆ, ած. **Դրամական հատկացումներից ապօրինաբար որոշ մասնաբաժին հետ ստանալու (ատկատի) վրա հիմնված:** Խորհրդային ծանրաշարժ պլանային տնտեսության փոխարեն մեզ մոտ հիմա հաստատվել է **ատկատային** էկոնոմիկա…. *(Իր., 30.06.2016):*

ԱՏԿԱՏԱ-ՍՏՎԵՐԱՅԻՆ, ած. (դիպվ.): **Ատկատի՝ դրամական հատկացումներից ապօրինի յուրացումների վրա հիմնված և ստվերային (հարկերից խուսափող):** Թե արդյունքում ինչ ստացվեց, հայտնի է բոլո-

բիս. **ատկատա-ստվերային** տնտեսություն, փողի ու կաշառակերության վրա հիմնված պսևդոդեմոկրատիա *(Բր., 13.05.2016):*

ԱՐԱՔՍԱԿՈՂՄ, գ. **Արաքսի կողմը:** Ասողը Դանիել բեկն էր, որ վերադարձել էր **Արաքսակողմից,** շտապում էր Սարդարապատ *(ՌԿ, էջ125):*

ԱՐԲԵՄՈԼԱՅԻՆ, ած. **Հարբեցողին հատուկ: Արբեմոլային** ոգիների հետ/ /Խավար անկյունից ես կսավառնեմ *(ՀրչՍ2, էջ 33):*

ԱՐԴԱՐԱՀԵՆՔ, ած. **Արդար հենք՝ հիմք ունեցող**: …. Հայաստանի ոստիկանապետի՝ ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող ժամանակավոր **արդարահենք** առկայծումները կմնան որպես առկայծումներ՝ պահի մեջ *(Ազգ, 15.05.2015):*

ԱՐԴԱՐԱՎՐԵԺ, ած. **Արդար վրեժ լուծող՝ ունեցող:** Ահա ինչու ամբողջ առաջադեմ մարդկությունը պետք է Աստծուն աղոթի՝ հանուն հայոց զենքի հաղթության, փառաբանի՛ հայ քաջարի զինվորին ու սպային, որոնց հաղթական ու **արդարավրեժ** բազուկն է նաև պահպանում մեր աշխարհաշրջանի խաղաղությունն ու կայունությունը… *(Ազգ, 13.05.2016):*

ԱՐԵՎԱԹԱՐԹ, ած. (դիպվ.): **Արևի ճառագայթները սաղարթի միջով անդրադարձնող:** Նա քայլեց **արևաթարթ** ծառերի ստվերների կողքով…. *(Ջ, էջ 186):*

ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Արժեքաբանական, երևույթների գնահատողական մեկնաբանությանը վերաբերող՝ բնորոշ՝ հատուկ:** Նկատենք, որ ժամանակագրության օբյեկտիվությունը նույնպես սուբյեկտիվ է, որովհետև գրողն արձանագրում է իրողությունները՝ ըստ իր կամ տվյալ ժամանակաշրջանի **արժեբանական** համակարգի, արձանագրվածն ընտրվում է, իսկ յուրաքանչյուր ընտրություն սուբյեկտիվ է …. *(Լրաբեր, 2-3, 2012, էջ 111):*

ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Արժեքների համակարգի ընկալում:** ….Փաստերի ընտրությունը կրում է սուբյեկտիվ բնույթ, այսինքն

իրադարձությունները նրա (ժամանակագրություն շարադրողի) գիտակցության մեջ, ըստ կոդերի հանրագումարի (**արժեբանություն,** գաղափարախոսություն և այլն)՝ բաժանվում են կարևոր և ոչ կարևոր իրադարձությունների *(Լրաբեր, 2-3, 2012, էջ 111):*

ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՈՒՄ, գ. **Արժեթղթերով արտահայտելը: Արժեթղթավորումը** մի գործընթաց է, որով ի մի են բերվում ֆինանսական ակտիվներ /հիպոթեքային վարկեր, ավտոմեքենաների վարկեր/ *….(Ազգ,25.12.2015):*

ԱՐԺԵՇՂԹԱ, գ. (փխբ.): **Արժեքի գոյացման օղակներից կազմված շղթա:** Համալիր ծրագրով նախատեսվում է ձկնաբուծական համալիրի ստեղծում, որն իր մեջ կներառի ձկան արտադրության **արժեշղթայի** հետևյալ օղակները՝ մանրաձկան տնտեսություն…., վերամշակման գործարան *(ՀՀ, 24.04.2016):*

ԱՐԺԵՏԱՐԱԾՔ, գ. **Համանման արժեհամակարգերի գործողության ոլորտ:** Երանի արժանի, տեսակամերձ ու քաղաքակիրթ թշնամի ունեցողներին, երանի նրանց, ովքեր կենսագործում են իրենց հակառակորդների հետ հոգևոր–բարոյական նույն **արժետարածքում***(ԳԹ,08.04.2016):*

ԱՐԾԱԹԱՓՈՇՈՏ, ած. **Արծաթափոշու ճերմակ գույն ունեցող: Արծաթափոշոտ** ձիթենիներ *(Ջ, էջ 52):*

ԱՐԾՎԱՓԱՅԼ, ած. **Արծվի աչքերի փայլն ունեցող:** Իր **արծվափայլ** սև աչքերի թափանցիկ հայացքով կարող էր շրջապատը հիպնոսի ենթարկել *(ՎԻ, էջ 396):*

ԱՐԿԱԿՈԾՈՒՄ, գ. **Արկերով հրանոթից կրակ բաց անելը, հարվածելը, կրակելը, արկակոծություն, արկահարում:** Երեկ…. ադրբեջանական զինուժի կողմից հրթիռային **արկակոծման** է ենթարկվել զորամասերից մեկը *(Հմգ):*

ԱՐՃԻՃԱԹՂԹԵ, ած. **Փայլաթիթեղյա:** ….Կարդաց **արճիճաթղթե** փաթեթների մակագրությունները …. *(Ջ, էջ 60):*

ԱՐՄԱՏԱԿԱԶՄ, գ. **Բառախմբի արմատների ամբողջություն:** Այդ տեղանուններն ունեն բնիկ հայերեն **արմատակազմ***(Հմց):*

ԱՐՄՆԿԱՀԱՐՎԱԾ, գ. **Արմունկի հարված:** Բայց այդ պահին նա մեջքին մի **արմնկահարված** ստացավ *(ՎՖ, էջ 25):*

ԱՐՅՈՒՆԱԼԻՃ, ած. **Առատորեն հեղված՝ լճացած արյունով:** ….Ալազանը 1926-ից պիտի փոխվեր…. և գրեր, թե ինչպես «ըղձյալ այգաբացը» դարձավ «**արյունալիճ** կեսօր*» (Գարուն, թ. 7-8, 2015):*

ԱՐՆԱԹԵԼԻԿ, գ. **Արյան մազանոթ:** Պրն Բլումը մռայլ գլխով արեց՝ նայելով նրա ժիր, **արնաթելիկներով** լի աչքերին *(Ջ, էջ 89):*

ԱՐՋՆԱՄԱՌ, գ. **Արջնագույն: Արջնամառ** լռության մեջ ճամփամիջին խչմար տված կանգնել էին երկու հոգի, ու մեկն անվերջորեն լսում էր *(ՎՖ, էջ 15):*

ԱՐՏԱՇՆՉԱՆՔ, գ. **Արտաշնչություն:** Ծեր աժդահան գիրկընդխառն տանում էր երկու կին զաղթականների, որոնք կարկամել էին, ու միայն թույլ **արտաշնչանքից** էր նկատելի,որ նրանք դեռ կենդանի են *(ՌԿ, էջ 62):*

ԱՐՑԱԽԱԲՆԱԿ, ած. **Արցախում բնակվող:** ….**Արցախաբնակ** նախկին պատգամավոր, ազատամարտիկ Ռազմիկ Պետրոսյանն ասաց…. *(Իրավունք, 06.04.2016):*

ԱՐՑՈՒՆՔԱԽԱՇ, ած. **Արցունքներից այրված:** ….Քառասունն անց մի կին, ում **արցունքախաշ** այտերն այդպես էլ կռահել չէին տալիս, թե ժամանակին ինքն էլ է եղել օրիորդ*(TV ալիք, 17.08. 2015):*

Բ

ԲԱԶՄԱԿԻՐՃ, ած. **Բազմաթիվ կիրճեր ունեցող:** Անդրանիկը խորասուզված ծանր հոգսերի մեջ, չգիտես ինչու, հանկարծ մտաբերեց **բազմակիրճ** Դևե-Բոյնու լեռները *(ՌԿ, էջ 76):*

ԲԱԶՄԱՇԱՀԱԽՆԴԻՐ, ած. **Բազմակողմանի շահագրգռություններ ունեցող: Բազմաշահախնդիր** խմբում խթանելու են հասարակական կազմակերպությունների ընդհանուր համաձայնությանն արժանացած առաջարկությունները:

ԲԱԶՄԱՏԱՐԱԿՈՒՅՍ, ած. **Տարակույսներ հարուցող:** Այս անգամ էլ Կենտրոնը ապարդյուն ժամանակ է շահում՝ ի հաշիվ Արցախի ժողովրդի **բազմատարակույս** համբերության *(ՇՂ, էջ 8):*

ԲԱԶՄԱՏՈԿՈՍ, ած. (փխբ.): **Չարդարացված:** Քուրդ մտավորականության ուղերձը կոչ էր անում այլևս չհավատալ Ադրբեջանի **բազմատոկոս** խաբեությանը *(ՇՂ, էջ 19):*

ԲԱԺԱԿԱՃԱՌԵԼ, բ. **Բաժակաճառ ասել:** Իսկ Լևոնի ընկերը փիլիսոփայորեն **բաժակաճառում** է այս առիթով…. *(Իր., 03.06.2016):*

ԲԱՄԲԱԿԱՄՈՐՈՒՍ, ած. **Բամբակե մորուս կրող:** Դարակը բացել, սանրը մաքրել ու նայում էր ճերմակ լաթերին ու բամբակներին. **բամբակամորուս** Կաղանդ պապը լուսնալույսի միջով գնում էր նվերներ բաժանելու *(ՎՅ, էջ 27):*

ԲԱՆՏԱԳՆԱՑՔ, գ.**Բանտարկյալներ տեղափոխող գնացք:** Ռուսական անծայրածիր հարթություններով սողում էին սգավոր դիակառքերի նման **բանտագնացքները** *(ՎԱ, էջ 27):*

ԲԱՆՏԱՆԱՎ,գ. **Բանտարկյալներ տեղափոխող նավ: Բանտանավը** շուտով դուրս էր գալու Պետրոս Մեծի ծովածոցից *(ՎԱ, էջ27):*

ԲԱՌԱԶՈՒՅԳ,գ. **Միմյանց հետ որոշակի կապի մեջ գտնվող բառերի զույգ:** Իսկ որպես սթափեցնող ազդակ՝ ամենաանսպասելի պահին հառնում է գրքի վերնագիր դարձած **բառազույգը**. «Մի ծանր բզեզ անցավ» *(ԳԹ,06.05.2016):*

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒՄ, գ. **Բառարանագրելը:** ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժինը …. ձեռնամուխ էր եղել հայերենի բարբառների հավաքման, **բառարանագրման** մի հսկայածավալ աշխատանքի…. *(Համբ., էջ 37):*

ԲԱՌՕՐՅԱ, գ. (դիպվ.): Այստեղ՝ **առօրյա բառապաշարը, բառամթերքը:** Էդ. Միլիտոնյանի «Բազմահարկ շենքի առօրյան» պոեմի գրախոսական վերնագրից («Բազմահարկ հումորի **բառօրյան**»)*(ԳԹ, 28.10.2016):*

ԲԱՐԵՎԱՍԵՐ, ած. (դիպվ.): **Հանդիպող մարդկանց անխտիր բարևներ շռայլող:** ….Հայտնի է **բարևասեր** Ռաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգությունը»*(Իրավունք, 25.02.2015):*

ԲԱՐՈՅԱՀԱՐՑ, գ. **Բարոյականությանը վերաբերող հարց:** Եվ Զրադաշտը աշխարհում նանիր/ /Նոր ականջներին նոր խոսք էր հղել// Ինքնության մասին ու ինքնազեղծման,// Բարոյալքված **բարոյահարցի,** // Սրբազրերի կնիքազերծման,// Մշտնջենական հավերժադարձի… *(ՀրչՍ, 1, էջ 24):*

ԲԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Անկեղծություն:** Նույն **բացվածությամբ** նա խոսում էր ժամանակի քաղաքական դեմքերի հետ *(Գարուն, թ. 7-8, 2015):*

ԲԵՂԱՄԱԶ, գ. **Բեղի մազ:** Բարալիկ **բեղամազերը** վեր–վեր ցցած՝ նրանք հոտոտում էին օդը՝ակնհայտորեն ուղղություն բռնած փռի, ձիթատան մաշված արահետը (*ԳԹ,29.04.2016):*

ԲԵՂԱՄՈԼ, ած. (փխբ.): **Ստալինին պաշտող**: **Բեղամոլ** պետեր շատ կային բանտերում, և այդ մոլուցքը թելադրում էր նրանց հարգալից լինել վրացիների նկատմամբ *(ՎԱ, էջ48):*

ԲԵՂԱՊԱՇՏ,գ. (փխբ.): **Ստալինին պաշտող անձ**: Ավելի բութ, մոլի **բեղապաշտները** նույնիսկ քրեական հանցագործներին նշանակում էին իրենց օգնականներ*….(ՎԱ, էջ 48):*

ԲԵՄԱԳԻՐ, ած. **Բեմի համար գրված**:….Խանդիկյանի հուշումներով ու պահանջով պիեսը ունեցավ տասից ավելի **բեմագիր** տարբերակներ*….(ԳԹ, 15.05.2015):*

ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆ, գ. **Բենզալցման կայան:** Դիմակավորված երեք անձինք **բենզալցակայանի** աշխատակցին կողոպտել են *(Իրավունք, 16.03.2016):*

ԲԵՐԴԱԿԱՄԱՐ, գ. **Բերդի կամար:** Բազմության ….մի ծայրը….դուրս էր եկել հյուսիսային **բերդակամարից** *(ՌԿ, էջ 87):*

ԲԺՇԿԱՀԱՅՐ, գ. **Բժշկապետ:** Մեծ **բժշկահայր** Հիպոկրատեսն ասել էր, որ սնունդը պիտի դեղ լինի մարդու համար, իսկ դեղը՝ սնունդ *(Ազգրոլրատու, 15.03.2016):*

ԲԼՈԳՈԼՈՐՏ, գ. **Բլոգի ընդգրկման ոլորտը:** Գիտաժողովի առաքելությունն է փոխճանաչելիության և փոխգործակցության նպատակով քննարկման հրավիրել ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի գիտակրթական, մշակութային, լրատվական, գրադարանային դաշտին առնչվող առաջատար կառույցներ, կազմակերպությունների համացանցային հարթակում ներկայացված կայքերի, սոցիալական ցանցերի և **բլոգոլորտի** պատասխանատու ներկայացուցիչներին *(Եր. համ., սեպտ., 2016):*

ԲՂԱՎԵԼԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բղավելու՝ գոռալու միջոցով բուժելը:** Ամերիկայում նույնիսկ **բղավելաթերապիայի** սեանսներ կան, և դրանք մեծ պահանջարկ են վայելում *(TV մոլ, 08.06.2015):*

ԲՆԱԳՐԱՍՏԵՂԾ,ած. **Բնագիր ստեղծող**:Բանաստեղծության ընդդիմությունը հետագայում ամրագրվեց իբրև Գրիգորյանի բանաստեղծության **բնագրաստեղծ** գերակայություն….*(ԳԹ, 18.09.2015):*

ԲՆՈՒԹԵՆԱԿԱՆ, ած. **Բնությունից ստացված:** Հայերենը պետություն բառով ընդհանրացնում է պետ, այսինքն՝ ինքնիշխան առաջնորդ լինելու մարդու **բնութենական** վիճակ (*Անդին, թ. 2, 2015):*

ԲՈԴԻԲԻԼԴԻՆԳ, գ. **Մարզաձև:** «Մոսկվա» կինոթատրոնում կայացավ **բոդիբիլդինգի** 2013թ. առաջնությունը *(Ժամ., 20.11.2013):*

ԲՈՂՈՔԱՇՈՒՆՉ, գ.**Բողոքի շունչ:** Կինը կամեցավ կատակել, սակայն ձայնի մեջ առավել զգալի էր **բողոքաշունչը** *(ՌԿ, էջ 95):*

ԲՈՑԱԽՈՍ, ած. (փխբ.): **Բոցաշունչ, խանդավառ:** Փաստորեն այս **«բոցախոս»** գեղեցկուհին զուր չէր շեշտում, որ առաջիկայում պատրաստվում է սիրելիի հետ հանգստի մեկնել*(TV մոլ, 27.07.2015):*

ԲՌՆԱՆՎԱՃ, ած. **Բռնի կերպով նվաճող:** Եվ անհատն իր դռներն է բացում օտարանվաճման դեմ, որն այն ժամանակում գալիս է աղավնու տոտիկներով, սակայն **բռնանվաճ** կերպով (*Անդին, թ. 1, 2015):*

ԲՌՆԱՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (քղք.): **Բռնի տեղահանելը, բռնատեղահանում:** Խստորեն դատապարտել «Կոլցո» օպերացիան, որի նպատակը ԼՂ և հարակից շրջանների հայ բնակչության զանգվածային կոտորածները և **բռնատեղահանությունն** էր *(Հմ):*

ԲՌՆԱՔՍՈՐ, գ. **Բռնագաղթ, բռնի աքսորում:** ….Փերիա ու Բուրվարիա գավառներում շահը վերաբնակեցրել էր **բռնաքսորի** ճանապարհից ողջ մնացած հայ գյուղացիներին *(Իր., 29.04.2016):*

ԲՐԵՆԴԱՆՇԱՆ, գ. **Ապրանքանիշ:** Անհեթեթ ինչ-որ **բրենդանշանի** համար …. կառավարությունը վճարում է այնպիսի գումար…. *(Իր., 22.07.2016):*

ԲՐՆԶԱԽՅՈՒՍ, գ. **Բրնձի խյուս, մածուկ**: Փորձում է **բրնձախյուսի** համը…. *(Իր., 02.02.2015):*

ԲՐՆԶԵՓ, գ. **Բրինձ եփող՝ եփելու սարք:** «Sony» ֆիրմայի առաջին արտադրանքը եղել են էլեկտրական ***բրնձեփները****(TV մոլ, 14.09.2015):*

ԲՈՒՐԺՈՒԱՕԼԻԳԱՐԽԻԱԿԱՆ, ած.**Բուրժուազիային և օլիգարխիային հատուկ:** «Բարգավաճ Հայաստանը» ըստ էության **բուրժուաօլիգարխիական** դաշնակցության մեջ էր մտել ՀՀԿ-ի հետ *(Հրապ., 30.04.2014):*

Գ

ԳԱԶԱՆԱԳԵՏ, գ.**Գազանների մասնագետ**: Նա հուսահատ, անձայն լալիս էր գլխավոր **գազանագետի** ձայն չհանելու խիստ պատվերի համաձայն *(ԳԹ, 12.07.2015):*

ԳԱԶԱՓՈՇԱՅԻՆ, ած. **Գազից և փոշուց կազմված:** Աստղերը առաջանում են նախնական **գազափոշային** տիեզերական նյութի խտացման արդյունքում *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԳԱՂԹԱԿԱՆՈՒՀԻ, գ. **Կին գաղթական:** Խաբված **գաղթականուհին** անխոս և անշտապ, ասես սահելով, նստեց իր տեղը *(ՌԿ, էջ 96):*

ԳԱՂԹԱՃԱՄԲԱՐ, գ. **Գաղթականների ճամբար:** ԿՊ-ի հատուկ թղթակից Դարյա Ասլամովան եղել է Լեսբոս կղզու **գաղթաճամբարում** և պարզել, թե ովքեր և ինչպես են հարստություն դիզում ի հաշիվ մարդկային ողբերգության *(Իր., 02.09.2016):*

ԳԱՂԹԱՑՈՒՊ, գ. **Պանդուխտի ցուպ:** Թշվառներիդ՝ **գաղթացուպ,** // Քեզ լռություն նվիրեմ…. *(ՀԸՍ1, էջ 39):*

ԳԱՂՏՆԱԽԱՂ, գ. **Գաղտնի խաղ:** Արտավազդը հիշեց, որ միակ մարդը, ում նա մի ժամանակ մասնակից էր դարձրել իր մանկական **գաղտնախաղին**, Հայկն էր *(ՎՖ, էջ 109):*

ԳԱՂՏՆԱԽՈՍ, գ. **Ասեկոսե: Գաղտնախոսի** կարգով երկյուղալի շշուկ է պտտվում այստեղ, Թիֆլիսում *(ՌԿ, էջ 100):*

ԳԱՂՏՆԱՍԵՆՅԱԿ, գ. **Գաղտնի սենյակ:** Մահապատժի օրը Թալեաթը պատերազմական ատյանի շենքում է եղել, **գաղտնասենյակից** հետնել է, թե ինչպես են Բայազիդ հրապարակում կախաղանում քսան հնչակյաններին *(Ազ., 24.06.2016):*

ԳԱՂՏՆԻՔԱԿՈՒԼ, ած.(դիպվ.): **Գաղտնիքը քողարկող, գաղտնապահ**: Խորտկարանի **գաղտնիքակուլ** հետնախորշերում ինչ–որ աղջիկներ էին շրջում կիսամերկ.... *(ԳԹ,16.10.2015):*

ԳԱՐՆԱՆԱՇՈՂ, ած. **Գարնանային, գարնանաշունչ, գարնանաբույր:** Երկարուկ կացարանը ողողված էր երկու երդիկից թափվող **գարնանաշող** լույսով *(ՌԿ, էջ 95):*

ԳԱՐՇԱԿՈՒՅՏ, գ. (դիպվ.): **Գարշահոտ վերնակույտ:** 3-րդ հանրապետության կառավարող վերնադասը գրեթե ակնթարթորեն վերափոխվեց վերնակույտի և սպառնում է տեսանելի ապագայում վերաձևվել **գարշակույտի** *(Իր., 05,06.2015):*

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Գեղարվեստական և գոյաբանական:** ....Ժողովածուն հայ ժողովրդի ոչ հեռավոր անցյալի ու մեր օրերի հերոսապատման **գեղարվեստագոյաբանական** մի ինքնատիպ կերտվածք է *(ԳԹ, 28.10.2016):*

ԳԵՂՀԱՐԴԱՐՈՒՄ, գ. (Ճիշտ է՝ **գեղահարդարում**): ....Եվրոմիությունում **գեղհարդարման** միջոցներ պատրաստելիս արգելված է օգտագործել 1382 զանազան քիմիկատներ, ԱՄՆ–ում՝միայն 11 *(Ազգ,06.05.2016):*

ԳԵՈԽԱՂԱՅՈՂ, գ. **Աշխարհաքաղաքական խաղերում դերակատարություն ունեցող միավոր՝պետություն՝երկիր:** Խնդիրն առնչվում է, ա-

սացինք, **գեռխաղացողներին** ևս, այդ թվում՝ գերագույն շահառու Ռուսաստանին *(Իր., 11.07.2016):*

ԳԵՏՆԱԲՈՒՔ, գ. **Բուք գետնի մակերեսին: Գետնաբուքը** երամակ դարձած և միաձուլված ահեղ ճախրողներին՝ ասես աղաղակում էր *(ՌԿ, էջ 66):*

ԳԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄ, գ. **Չափից ավելի արժևորելը:** Մարդը միայն մարմին չէ, ու պացիֆիստների տեքստերի թուլությունը, ըստ իս, մարմնական գոյության **գերարժևորումն** է *(Հրապ., 16.04.2016):*

ԳԵՐԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, գ.**Խիստ գաղտնիություն:** Ու իրար մեջ էլ իրավունք չունեինք խոսել. պայմանը **գերգաղտնիությունն** էր *(ՇՂ, էջ 69):*

ԳԵՐԹԱՆԿ, ած. **Չափազանց թանկ:** …. **Գերթանկ** դեղերով այդ բիզնեսը կողոպտում է մարդկանց *….(Ազգ, 13.05.2016):*

ԳԵՐՄԱՆԱԳԻՐ, ած. **Գերմաներեն ստեղծագործող: Գերմանագիր** գրող Էդգար Հիլգենբաթը լույս ընծայեց «Վերջին մտքի հեքիաթը» եռահատոր վեպը *(Իր., 12.05.2015):*

ԳԵՐՆՅԱՐԴԱՅԻՆ, ած. **Չափազանց նյարդային:** …. Լրացուցիչ եզրակացությունների տեղիք է տալիս Ալիևի **գերնյարդային** ռեակցիան *(Իրավունք, 18.09.2015):*

ԳԵՐՈՒՇԱԳՐԱՎ, ած. **Չափազանց ուշագրավ:** Վերջերս **գերուշագրավ** մի միտք լուսաբանեց մեր անցած և դեռ անցնելիք ուղին *(Իր., 05.06.2015):*

ԳԻՇԵՐԱՆԿԱՐ, գ. **Գիշերային պատկեր՝ տեսարան:** Առջևից ընկած երկարուկ ստվերն ասես լուսնի **գիշերանկարը** չէր գետնին *(ՌԿ, էջ 106):*

ԳԼԱՆԱՓԱԹԱԹՎԱԾ, հրկտր դ. **Գլանաձև փաթաթված:** Տան լայն բացված դարպասների մոտ մի տղամարդ փորձում էր ավտոմեքենայի ներսը խցկել **գլանափաթաթված** մի գորգ *(Արեն, էջ 77):*

ԳԾԱԾԱՎԱԼԱՅԻՆ, ած.**Գծային և ծավալային:** Իրականության, վիզուալ՝ արտաքին ձևերի երկրաչափական **գծածավալային** պատկերների կոմբինացիան տեղափոխվում է միանգամայն այլ հարթություն…. *(Ազգ, 11.03.2016):*

ԳԾԱՆՇԱՆ, գ. **Գծանշում:** ….Շրջադարձի **գծանշանը** տեղափոխվել է ավելի վերև (վերգետնյա կամրջի մոտ), ինչն անհնարին է դարձնում շրջադարձը, որքան էլ հմուտ վարորդ լինես *(Իր., 22.04.2016):*

ԳՅՈՒՂԱՐՎԱՐՁԱՆ, գ. **Գյուղի արվարձան: Գյուղարվարձանից** դեպի մի օրվա ազատություն *(Ջ, էջ 33):*

ԳՅՈՒՂԱՔԱՆԴ, ած. (դիպվ.): **Գյուղը քանդող:** ….Անհապաղ պետք է դադարեցնել «Համայնքների խոշորացում» անվանումով սկսված **գյուղաքանդ** գործընթացը…. *(Իր., 09.06.2015):*

ԳՆԱԹՌԻՉՔ, գ. **Գների աճ:** ՀԷՑ-ը պահուստային տարբերակ բերեց սակարկարան, ամենասկզբում խոսվում էր 6 դրամի մասին, հետո՝ 17 դրամանոց **գնաթռիչքը** մեջտեղ բերվեց *(Ակ., 11.06.2015):*

ԳՆԴԱԿԱԶԱՐԿ, ած. **Գնդակից խոցված, գնդակոծված:** Ով պիտի հասնի դժբախտության ժամին, հարավից Վանն ու Բաղեշը **գնդակազարկ** են *(ՌԿ, էջ 76):*

ԳՈԳՆՈՑԱԲՈՒՅՐ, ած. (փխբ.): Այստեղ՝ **գոգնոցի բույրով՝ մանկության հուշեր արթնացնող:** Օտարների լինելիք հեռապատկերը՝ արդեն իսկ հստակ, հայոց ստույգ անցածը՝ **գոգնոցաբույր** հեքիաթ…(*Անդին, թ. 1, 2015):*

ԳՈՅԱԳԻՐՔ, գ. (փխբ., բնստ.): **Գոյութենական գիրք:** Մի եղեռնաբույր անարմատ քրքում՝// Ցիրուցան արված հրով ու սրով,// Որ աստվածային իր **գոյագրքում**//Սփյուռք է կոչվում ճակատագրով…. *(ՀրչՍ 1, էջ 48):*

ԳՈՅԱՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ, գ. **Գոյության օրինաչափություններ վերլուծող փիլիսոփա:** Այս հարցերը… արծարծվել են համաշխարհային տեսական մտքի կողմից…. հոգեվերլուծաբաններից մինչև **գոյավերլուծաբաններ**…. *(Գարուն, թ. 7-8, 2015):*

ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Լինելություն:** ….Նյութը պարզ վիճակից հասցնում է **գոյութենականության** սուբստանցին՝ անվերջության գաղափարին (*Ազգ, 11.03.2016):*

ԳՈՉԱՆՔ, ած. **Գոչյուն:** Վարարած Արաքսը ելել ու փորձում է առաջվա ճողփյունով և **գոչանքով**…. (*ՌԿ, էջ 121):*

ԳՈՎԱԶԴԱՌՈՒ, գ. **Գովազդի հասցեատեր:** Գովազդատուն շահագրգռված է ներգործման խնդրով, իսկ **գովազդառուն**՝ տեղեկատվությամբ: Եթե տեղեկատվությունը անարժեք է, ապա **գովազդառուն** կորցնում է վստահությունը գովազդի հանդեպ *(ՀԼԽՄ, էջ 249):*

ԳՈՐԾԱԿԱԼԱՑԱՆՑ,գ. **Գործակալների ցանց:** Թուրքական հետախուզության **գործակալացանցի** «վերնախավը» Ղրիմում *(Ազգ,22.04.2016):*

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գործառնական լինելը:** Վլ. Գասպարյանը ոստիկանությանն ընդդիմացող քաղաքական կազմակերպությունների դերի և **գործառնականության** օրինականությունը դնում է կասկածի տակ *(Հրապ., 28.11.2013):*

ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ, ած. **Գործառույթին վերաբերող:** Նրանք գտնվում են միևնույն գործառութային դաշտում *(Իր.,12.05.2015):*

ԳՐԱԽԱՂԱՑ, գ. (դիպվ.): **Գրին և գրականությանը հմտորեն տիրապետող:** Բանաստեղծի լուսավոր միտքը, սուր աչքը, տեղին խոսքը, **գրախաղացի** իմաստնությամբ Էդվարդ Միլիտոնյանը վերածում է ապրեցնող հումորի, որը հաստատում է կյանքի կենսարարությունը…. *(ԳԹ, 28.10.2016):*

ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Գրական և մշակութային:** ….Երկրորդ հոդվածը վերնագրված է «Եղիշե Չարենցը և արևմտահայ **գրամշակութային** փոխառնչությունները »*(Գարուն, թ. 1-2, 2015):*

ԳՐԱՆՏԱԼԱՓ,ած. (դիպվ.): **Գրանտներ յուրացնող, գրանտակեր:** Բնականաբար, չեն մոռանում և ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի դեմ հիսթերիայի բորբոքումը Պարույր Հայրիկյանի տիպի գործիչների և տարբեր **գրանտալափ** դեմքերի միջոցով *(Իրավունք, 04.05.2016):*

ԳՐԱՇԽԱՐՀ, գ. **Գրքերի աշխարհ:** Մրցանակային հանձնաժողովը, ուր ընդգրկված են **գրաշխարհի** հետ կապված անձինք Հայաստանից և Սփյուռքից, խնդրել է իրենց անունները չհրապարակել *(Գրաշխարհ, թ. 10-12, 2015-16):* 2. Գրական - մշակութային պարբերաթերթի վերնագիր: Ներկայացնում է **<<Գրաշխարհը>>***(Գրաշխարհ, թ. 7-9, 2015-16):*

ԳՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գիրը պաշտելը**:Մեր ինքնության մեջ ամենակարևորն իմացականությունն է**, գրապաշտությունը**, խելքը *(ԳԹ, 08.05.2015):*

ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ, ած. **Գրական և պատմական, գրականության պատմությանը վերաբերող:** Հանգի մուտքը հայ բանաստեղծություն խորհրդանշվում է **գրապատմական** մի շատ լուրջ և հիշարժան իրադարձությամբ *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԳՐԱՎՈՐԵԼ, բ. **Գրի առնել:** Հին այբբենական համակարգերի համար սա թվային հասկացությունները **գրավորելու** սովորական եղանակ է (*Անդին, թ. 7-8, 2015):*

ԳՐՉԱՊԵՏ, գ. **Գրի և գրականության վարպետ:** Թուրք թշնամին…. Առաջին աշխարհամարտին, պատերազմական վիճակի պատրվակով, …. կանաչ, ճոխ հողից շարժեց մեծ ու փոքր, իմաստուն և **գրչապետ**, բազում շնորհաձեռ արհեստավոր- շինարար բնիկներին և քշեց դարանակալ կիրճերն ու դարավանդները *(ՌԿ, էջ 37):*

ԳՐՉԸՆԿԵՐՈՒՀԻ, գ. **Գրչակից ընկերուհի:** Ծննդյան հոբելյանի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ **գրչընկերուհուս**…. *(ԳԹ, 16.09.2016):*

ԳՐՔԱՐՎԵՍՏ, գ. **Գրքի տպագրության արվեստ: <<Գրքարվեստ>>** հանրապետական առաջին մրցույթի 8 անվանակարգի համար ներկայացված են 36 անուն գիրք *(Գրքարվեստ, էջ 44):*

ԳՈՒԺԱԴՂՈՐԴ,ած. (դիպվ.): **Չարագույժ:** Սակայն բռունցքը չհասցրեց ետ վերադառնալ, կախվեց–մնաց օդում, քանզի **գուժադրդրդ** զրնգոցով դռդռաց …. փղոսկրյա հեռախոսը…. *(ԳԹ,12.02.2016):*

ԳՈՒԺԱՀԱՐԵԼ, բ. **Գույժը տարածել:** Մեծահասակներից մեկը պատահաբար նկատեց նրանց և **գուժահարեց** ողջ գյուղը *(Անդին, թ. 2, 2015):*

ԳՈՒՆԱԽԱՌՆՈՒՐԴ, գ. **Գույների խառնուրդ**: Նա ցույց է տալիս վերջին նկարներից մեկը՝ վերնագրված «Քաղաքը». սև – սպիտակի թույլ **գունախառնուրդը** մշուշի տպավորություն է գործում…. *(Ազգ, 19.06.2015):*

ԳՈՒՆԱՆԱԽՇԱԶԱՐԴ, ած. **Գունավոր նախշերով զարդարված:** Երբ դուրս եկանք մեր պատմության թանգարանից, տեսանք հարսանեկան **գունանախշազարդ** մոմերը….*(ՎՖ, էջ 246):*

ԳՈՒՆԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Գունաբմբռնում:** Իսկ թե ինչպիսի ազդեցություն է թողնում գունապատկերը անձի վրա, կախված է թե՛ նկարչի, թե՛ դիտողի **գունընկալումներից,** գնահատականներից *(Լրաբեր, 1, 2016, էջ 333):*

Դ

ԴԱՇՏԱՍՏԱՆ, գ. **Լայնարձակ դաշտ:** Աչքդ ընկալում էր ամբողջ **դաշտաստանը**, որը կորչում էր հորիզոնի մշուշում*(ՎԻ, էջ 180):*

ԴԱՋԱՆԱԽՇ, գ. **Դաջված նախշ:** Բեհեզե **դաջանախշեր,** մետաքսե վեհապանծ տիկիններ…. *(Ջ, էջ 140):*

ԴԱՌՆԱԲՈՒՅՐ, գ. **Դառը բույր:** Ակացիաների **դառնաբույրը** ծեփվել էր հագուստներին ու ծանոթ օծանելիքի բույր էր հիշեցնում …. *(Իր., 20.05.2016):*

ԴԱՌՆԱՀԱԲ, գ. (փխբ.): **Դառը հաբ, մերժումից առաջացած դառը՝ տհաճ զգացում:** Կուլ տալով Կենտրոնից եկած հերթական մերժումի **դառնահաբը՝** Հայաստանից ու Ադրբեջանից Մոսկվա էին թռչում նոր դիմումներ, հերքումներ *(ՇՂ, էջ 43):*

ԴԱՎԱԴՐԱԳԻՐ, գ. **Դավադրական գրություն:** Ֆարաշյանը խոստովանեց.//-Պարոն Դրոյի հրամանն է, ներկայանալ Զինվորագիր Ատյան: //Զորավարը քմծիծաղեց.//-Ինչպես Շապուհի **դավադրագիրը՝** Արշակ թագավորին *(ՌԿ, էջ 44):*

ԴԵՂԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Դեղի չափաբաժնի գերազանցում:** Եզրակացությունը՝ **դեղազանցություն:** Մահ անզգուշության պատճառով *(Ջ, էջ 82):*

ԴԵՂՋԱՏՈՆ, գ. **Դեղձի տոն:** Մրգերի հասունացման օրերին այստեղ նշվում է նաև թթատոնը, կեռասատոնը, **դեղձատոնը,** խաղողատոնը, նռնատոնը, ընկույզի տոնը՝ յոթ պտղատոն՝ ձոնված հայկական մրգերին *(ԳԹ, 08.07.2016):*

ԴԵՂՆԱԿԱԹՆԱԳՈՒՅՆ, ած. **Դեղին և կաթնագույն:** Սպիտակ սփռոցով սեղանից վերև լուսամփոփի լույսը մաղում է **դեղնակաթնագույն** ճառագայթի փնջեր *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ԴԵՂՆԱՆԱԽՇ, ած. **Դեղին նախշերով:** Գիրքը, ընկած, կոթնել էր **դեղնանախշ** գիշերանոթին *(Ջ, էջ 55):*

ԴԺԲԱԽՏԱՇԱՏ, ած. **Դժբախտ դեպքերով առատ:** Ապրիլյան **դժբախտաշատ** օրերին դուրս պրծած խուժանը պաշարեց վարպետի արհեստանոցը *(ՌԿ, էջ 12):*

ԴԺՎԱՐԱԺՊԻՏ, ած. **Դժվար ժպտացող:** Ուղղակի ինձ հարկավոր է….մնա միայն Յոհանը՝ ձիու պես **դժվարաժպիտ,** դժվարամարս երեսով…. *(Անդին, թ. 2, 2015):*

ԴԻՄԱԳԻՐՔ, գ. **Ֆեյսբուք:** ….Ինքնադրսևորվելու,…. գլխավոր հարթակն այսօր, արդեն 10 տարի ֆեյսբուքն է կամ **դիմագիրքը** *(Ազգ,04.03.2016):*

ԴԻՄԱԿՆՃԻՌ, գ. **Դեմքի կնճիռ:** Պատմության ամենատեսանելի կերպը մեծ տեղաշարժերն են, որոնք սովորաբար աշխարհի **դիմակնճիռները** հարդարում են հազար տարվա հեռանկարով *(Անդին, թ. 1, 2015):*

ԴԻՄԱՍՐԱՀ, գ. Այստեղ՝ **նկարչի ստեղծած բոլոր դիմանկարները:** Ռոժդեստվենսկայայի **դիմասրահում** կան նաև մի քանի հայեր *(Ազգ,06.05.2016):*

ԴԻՐՔԱՊԵՏ, գ. **Դիրքը հսկող հրամանատար:** Նրան թվաց, թե հայդուկ-վրիժառուն ,ահա, գտել է իր տեղը և **դիրքապետերին** մատնացույց անելով՝ հրացանները պարզել են դեպի իր խոցելի կուրծքը *(ՌԿ, էջ 122):*

ԴԻՑԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. **Դիցաբանական և առասպելական:** Պաշտամունք խմբի ժայռապատկերն արտացոլում է մարդու ներաշխարհն ու **դիցաառասպելական** պատկերացումները *(ՊԲՀ, 2, 2016, էջ 189):*

ԴՂՅԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Դղյակներ կառուցելը:** Այսօր ալան-թալանի, գողության, կաշառակերության, **դղյակաշինության** ժամանակը չէ…. *(Իր., 07.06.2016):*

ԴՈԼԱՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Դոլարի պաշտամունք:** Պատերազմի համար են աշխատում եվրոպական իմպերիալիզմը, անգլիական ծովատիրությունը, ամերիկյան **դոլարապաշտությունը***(Ազգ, 29.04.2016):*

ԴՈՓԱՊԱՐԵԼ, բ. 1. **Դոփապար պարել:** 2. **Դոփելով պարել:** …. Խփեցին 50 բադ և 10 վարազ, ….**դոփապարեցին** ողջ գիշեր… *(ԳԹ, 19.02.2016):*

ԴՈՓԱՊԱՐՈՂ, գ. **Դոփապար պարող: Դոփապարողը** միշտ ներքուստ կենտրոնացած և արտաքուստ ազատ է *(Լրաբեր, 1, 2016, էջ 327):*

ԴՈՓՅՈՒՆԱԶԱՐԿ, գ. **Ձիու սմբակների դոփյունի ձայնը:** Մի քանի ձիավոր թողեց տեղում, **դոփյունազարկով** սուրաց այրվող կամրջի ուղղությամբ *(ՌԿ, էջ 62):*

ԴՌՆԱԼԱՅՆՔ, գ. **Դռան շրջանակը:** Նա դուրս եկավ՝ այլայլանքից մեծ ուսերը զարկելով **դռնալայնքին** (*ՌԿ, էջ 80):*

ԴՍՏՐԱՉԱՓ, ած. **Դստեր տարիքին:** Ինքնագիր խնդրող// **Դստրաչափ** իմ քո'ւյր…. *(ՀրչՍ, 2, էջ 66):*

ԴՐԱՄԱԳԱՐ,ած. **Դրամի մոլուցք ունեցող:** Օրինաչափ մի անհամատեղելիություն կա 21–րդ դարի շահառատու **դրամագար,** անսիրտ ու անոգեղեն, անբարո և ծախված բարքերի և Հովհ.Ղազարյանի բանաստեղծական աշխարհի միջև *(ԳԹ, 29.04.2016):*

ԴՐԱՄԱԹԱՓՎԵԼ, բ. **Դրամազրկվել**:….Ոնց կարգավորենք գազի կալորիականության խնդիրը, որի աճպարարությամբ ևս մեր գրպանը **դրամաթափվում է***(Ազգ, 10.04.2015):*

ԴՐԱՊԱՇՏՈՐԵՆ, մկբ. **Պոզիտիվ, դրապաշտ կերպով:** Սա **դրապաշտորեն** մտածող ֆիզիկոսի, կիբեռնետիկի և կրթության բերումով վսեմության հասցված մտավորականի լեզու է *(Անդին, թ. 9-10, 2015):*

ԴՐՎԱԳԱՇԱՐ, գ. **Դրվագների՝ անցքերի շարք:** Ու ֆիլմն էլ այդ բազմադարյա ժամանակների ու մեր օրերի կյանքի ներդաշնակ համադրության իմաստուն **դրվագաշարն** է ներկայացնում մեծ էկրանից *(Իր., 11.07.2016):*

ԴՈՒՔԵՆԴՈ, գ. **Մարզաձև: Դուքենդոյի** ֆեդերացիայի շենքը մարտի 1-ի օրերին զորանոց է եղել…*(TV ալիք, 06.02.2014):*

Ե

ԵԶԴՈՒՀԻ, գ. **Եզդի կին:** ….Իսլամիստ բարբարոսները, որ իրենց շուրջն ահ ու սարսափ են տարածում, տեսնելով **եզդուհի** ազատամարտիկին, փախչում են, որ նրա գնդակի բաժինը չդառնան *(Իր., 16.06.2015):*

ԵԶՐԱԳԼԽԱՐԿ, գ. **Լայնեզր գլխարկ:** ….Նրա ուշադրությունը գրավեց դեղնավուն մետաքսե կիտել հագած մոտ երեսնամյա մի տղամարդ՝ մուգ ակնոցով, թավ բեղերով և ծղոտե **եզրագլխարկով** *(Անդին, 9-10, 2015, էջ 52):*

ԵԶՐԱՀԱՆԳ, գ. **Տողավերջի հանգը:** Ներքին հանգերը, **եզրահանգերը,** հնչյունական կազմի նույնաձայն ընթացքը ներդաշնակ չափաբերմամբ ստեղծում են բառերի մի շարժում, ինչն իրոք երգ է, մեղեդի *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԵԶՐԱՄԱՅԹ, գ. Այստեղ՝ **եզերող մայթ:** ….Պետք է …. հուշարձանի շուրջը **եզրամայթեր** ամրակայել, որ ջուրը չթափանցի հիմքերի մեջ…. *(Իր., 13.05.2016):*

ԵԹԵՐԱՑԱՆԿ, գ. **Օրվա հեռուստահաղորդումների ցանկը:** Այժմ ծանոթանանք այսօրվա **եթերացանկին***(Հեռ., Հայլուր, 22.09.2016):*

ԵԼՈՒՅԹԱՎՃԱՐ, գ. **Ելույթի վարձատրություն:** Համաշխարհային բեմերում մեր արվեստը ներկայացնող արտիստները նաև **ելույթավճար** են ստանում *(Ավ., 28.05.2015):*

ԵՂԵՌՆԱԿՈԾՎԵԼ, բ. **Եղեռնի ենթարկվել՝ եղեռնազարկ լինել՝ եղեռնազարկվել:** – Ահա այսպես ենք ապրել, այսպես են ապրել 1915 թ. **եղեռնակոծված** մեր հայրենակիցները *(ԳԹ, 08.04.2016):*

ԵՂԵՌՆԱՑԱՎ, գ. **Եղեռնի պատճառած վիշտը՝ ցավը:** Այդ իրավունքին ի տրիտուր, **եղեռնացավի** ազգովի կամ ներանձնական անդրադարձումներում միշտ էլ, ավել կամ պակաս սրությամբ, բարձրաձայնվել են մեր ժողովրդի մեծ ողբերգության ազդականչերը*....(ԳԹ, 24.04.2015):*

ԵՂՅԱՄԱՄՈՐՈՒՍ, ած. **Եղյամի նմանվող մորուքով:** Մեկ էլ գետնի տակից էր, երկնքից էր, մի բարձրահասակ, **եղյամամորուս** ծերուկ հայտնվեց *(ՎՖ, էջ 64):*

ԵՆԹԱՌԱՋԱԴՐԱՆՔ, գ. **Առաջադրանքի մի մաս**: Այսպիսով՝ առաջադրանքների և **ենթաառաջադրանքների** ընդհանուր քանակը ութսուն է *(Ուղեցույց, էջ 4):*

ԵՎՐԱՊԱՇՏՈՆՅԱ, գ. **Եվրամիության պաշտոնյա: Եվրապաշտոնյաները** թերևս դա հասկանում են *(Իր., 26.05.2015) :*

ԵՎՐՈԱՍՈՑԱՑՆԵԼ, բ. **Եվրոպայի հետ ինտեգրել:** Ոչ ոք չի հասկանում, թե ինչպես կարելի է **եվրոասոցացնել** ամբողջ մաքսային միությունը՝ հանուն Հայաստանի եվրոասոցացման*(Հրապ., 12.02.2014):*

ԵՎՐՈՅԱԽԵՂԴ, ած. (դիպվ., փխբ.): **Եվրոյով լեցուն:** Ձեններդ տաք տեղից է գալիս, եվրոպաներում և այլուր ծվարած «ազգի փրկիչներ»: Տակներդ՝ չոր, փորներդ՝ կուշտ, գլուխներդ՝ դինջ, գրպաններդ՝ **եվրոյախեղդ***(Իր., 26.07.2016):*

ԵՐԱԶԱԲՆԱԿ, գ. (փխբ.): **Երազներով ապրող:** ....Գիշերաթիթեռի թևերին մի քանի բառ շշնջացի, որ պիտի հանգչեին աղամամութին, ու տխրեցի, որ այլևս **երազաբնակ** չեմ *(ՎՖ, էջ 106):*

ԵՐԱԺՇՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Երաժշտագրում:** Հայրս հաճախ իր հետ համերգի էր բերում այդ երեկո կատարվելիք գործերից ոմանց նոտաները, **երաժշտագրությունները** և տալիս ինձ*....(ԳԹ,16.10.2015):*

ԵՐԱԺՇՏԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում երաժշտության միջոցով, երաժշտաբուժում:** ….Կոմիտասի երաժշտությունը նաև թերապևտիկ նշանակություն ունի: …. Կիրառել ենք **երաժշտաթերապիա**… *(Եր.համ., 05, 2016):*

ԵՐԱԺՇՏԱՄԱՐՏԻԿ, գ. **Երաժշտության միջոցով պայքարող:** Աննկուն **երաժշտամարտիկ** Զուբին Մեթան հատուկ համերգներով խնկարկել է Հոլոքոստի միլիոնավոր զոհերի հիշատակը*(Այվ., 16.09.2015):*

ԵՐԱԽՏՈՒՐԱՑ, ած. **Երախտիքն ուրացող, երախտամոռ:** Այն տեղի չունեցավ Կրեմլի բարձրագույն ատյանում աշխատող, մեծ լիազորություններով օժտված Անաստաս Միկոյանի **երախտուրաց** ու վնասակար միջամտությունների շնորհիվ *(ՇՂ, էջ 31):*

ԵՐԳԱՊԱՏՈՒՄ, գ. **Բանահյուսական պատում՝ երգով:** ….Հայրիկ Մուրադյանը հայտնի է պապի եղբայր Զրբոնի և նրա ու հովվական ընկեր Բազկե Շահենի հետ «Սասնա Դավիթ» **երգապատումով** *(Իր., 05.05.2015):*

ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐՈՒՀԻ, գ. **Կին երգեհոնահար:** Դանիելի մշակումները կատարել և կատարում են այլազգի երաժիշտները՝ …. **երգեհոնահարուհի** Լյուբով Շիլխանովան…., Յուրատե Լանդասբերգիտեն…. *(Իր., 20.09.2016):*

ԵՐԳԻԾԱՆԻ, գ. **Երգիծական ստեղծագործությունների ժողովածու:** Ընթերցողը ջերմորեն է ընդունել նրա «Վարդեր և փշեր», «Սիրավեճ ապահարզանից հետո», «Ուրախ **երգիծանի**» երգիծական գրքերը *(ՍՍ, էջ 2):*

ԵՐԳԻԾԱՏՈՒՆ, գ. **Երգիծական ստեղծագործությունների ժողովածու:** Ս.Մուրադյանի «Երգիծատուն» գիրքը:

ԵՐԴՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ, գ.**Պաշտոնի ստանձնման հանդիսավոր արարողություն: Երդմնառության** արարողություն ՌԱԿ կենտրոնական գրասենյակում *(Ազգ, 25.03.2016):*

ԵՐԵՎԱՆԱՊԱՏՈՒՄ, գ. **Երևանին նվիրված ստեղծագործություններ-ի շարք:** Նրա քաղաքանկարը կամ **երևանապատումը** փոխում են պատկերացումներն այն մասին, թե քաղաքը մեր այդքան էլ նկարչական չէ, մանավանդ այս օրերում…. *(Ազգ, 19.06.2015):*

ԵՐԹԵՎԵԿԱԳԻԾ, գ. **Երթևեկը նշող գիծը:** Ահա խճուղին՝ **երթևեկագծի** կողքերին լուսանդրադարձիչների ցոլարձակող շղթայով, ահա հանդիպական ցոլարձակ լապտերները, իսկ ահա իրեն վազանցող մեքենաների կարմիր լույսերը…. *(Արեն, էջ 90):*

ԵՐԿԱՐԱԿԱՆՉ, գ. **Տևականորեն հնչող կանչ:** Քաղաքի մինարեթից տարածվեց մոլլայի երկարուկ մուազին, ծոր-ծոր **երկարականչը** *(ՌԿ, էջ 11):*

ԵՐԿԲՈՎԱՆԴԱԿ, ած. **Երկակի բովանդակություն ունեցող:** Մրցույթի պայմանների վերլուծմամբ և հուշարձանի բազմաթիվ ճեպապատկերների ուրվագծմամբ եկանք եզրահանգման, որ մեր առջև դրված խնդիրը գործնականում **երկբովանդակ է** *(ՃՇ, թ. 4, 2015):*

ԵՐԿՆՈՒՄ, գ. **Երկնելը:** ….Ու մնացել հին ու նոր Հայաստանի, իր ժողովրդի ցավ ու տառապանքի, հավատի ու **երկնումի** հետ *(Իր., 08.07.2016):*

ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ած. **Երկրատեղեկատվությանը հատուկ՝ վերաբերող:** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի Ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ) կարևորում է **երկրատեղեկատվական** տեխնոլոգիաների ներդրումը տուրիզմի զարգացման ոլորտում *(ՀՀ,06.02.2016):*

ԵՓՐԱՏԱՀԱՅ, գ., ած.**Եփրատի ափերին ծնված՝ ապրող հայ:** ….Հազարադաշույն արյունոտեցին **եփրատահայ** ծնողներիս ու նրանց սերնդակիցների որբացած ճակատագիրը *(ՌԿ, էջ 10):*

Զ

ԶԱԶԱՅԱԽՈՍ, ած. **Զազայերեն խոսող:** …. Մարիա Զիքս-Հոհենբալկեն ուսանողների և դասախոսների առջև հանդես եկավ «1937թ. Դերսիմի ջարդեր. հիշողություններ **զազայախոս** հանրույթում» թեմայով *(Եր.համ., հունիս-հուլիս, 2016):*

ԶԱՄԲԻԿԱՀՈՏ, գ. **Զամբիկի հոտ:** Հանդերի բույրերին էլ **զամբիկահոտեր** էին խառնվել, էլ առաջվանը չէին *(Անդին, թ. 9-10, 2015):*

ԶԱՅՐԱԽԱՂ, գ. (գրկն.)**Մանկական բանահյուսության ժանր**: Ի տարբերություն մանկական բանահյուսության տեսակների (հաշվերգեր, բառախաղեր, **զայրախաղեր**(дразнилки), նմանողական խաղերգեր, ծաղրերգեր, շուտասելուկներ)…. մանկական զվարճախոսությունները փոքր տարիքի երեխաների շրջանում չեն կենցաղավարում *(ՍԱ, էջ 12):*

ԶԱՆԳԱԿԱԿԱՆՉ, գ. **Զանգակ հնչեցնելը:** Բոլորը հասկացան, որ առաջինը նա է նկատել և հնչեցրել յուրայինների զալուստը **զանգականչով** *(ՌԿ, էջ 42):*

ԶԳԵՍՏԱԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. Այստեղ՝ **կրկեսային ներկայացման հատուկ ժանր:** Միջազգային կրկեսային արենայում նորանոր հաղթանակներով անմրցելիությունն են նորից ու կրկին հավաստում **«զգեստակերպարանափոխություն»** ժանրում Գինեսի ռեկորդակիրներ…. Սոսն ու Վիկտորյան *(Ավ., 16.09.2015):*

ԶԵՓՅՈՒՌԱՀԱՐԵԼ, բ. (փխբ.): **Քամահարել:** Դու դրել ես կուտակային կրակին թշթշացնում ես, …. հետն էլ **զեփյուռահարում՝** մենք հո ժողովրդի թշնամին չե՞նք *(Հրապ.,26.04.2014)*

ԶԶՎԱՀԱՅԱՑ, մկբ. **ԶԶվանք արտահայտող հայացքով: Զզվահայաց,** հայհոյանքն ատամների տակ սեղմած՝ նա ներս խցկվեց և զայրույթով մռնչաց *(Անդին, թ. 6, 2015):*

ԶԻՆԱԿԱԼՈՒՄ, գ. **Շրջափակում:** Գարիբալդին….շատ լավ զգացել էր այն ամբողջ զրկանքները, որը պատճառել էր Վենետիկին Հաբսբուրգյան զորքերի **զինակալումը***(ՎԻ, էջ 115):*

ԶԻՆԱՆՁՆԱԿԱԶՄ, գ. (հպվ.): **Զինվորական անձնակազմ:** Նպատակ ունենալով տեղում ստուգել **զինանձնակազմի** առօրյա ծառայության մի քանի դրվագներ …. Սեյրան Օհանյանը անակնկալ այցի շրջանակում անձամբ հետևել է անձնակազմի վերկացին *(Ավ., 28.05.2015):*

ԶՆՆԱՍԵՆՅԱԿ, գ. **Զննման համար հատկացված սենյակ:** Ի դեպ, հարկաբաժնի **զննասենյակներ**ը նաև նոր գույքով են համալրվել *(ՀՀ, 12.12.2015):*

ԶՐՈՒՑԱԿՏՈՐ, գ. **Զրույցի դրվագ՝ հատված:** ….Ծայր առան **զրուցակտորներ**…. *(Իր., 12.02.2016):*

ԶՈՒԳՍԱՆԱԽՇ, ած. **Զուգսերով զարդարված:** ….Ավագ դարպասը հանկարծ բացվեց ու հայտնվեց Մորիկ արքան յուր շքախմբով, մի չալպտուրիկ ու **զուգսանախշ** ձիու վրա բազմած *(ՎՖ, էջ 135):*

Է

ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Էթնոսի հոգեբանությանը վերաբերող:** ….Եթե նայենք նրանց **էթնոհոգեբանական** էվոլյուցիայի մակարդակին, ապա կտեսնենք, որ այդ մակարդակն ի զորու չէ

ցեղասպանությունը որպես հանցանք ճանաչելու առհասարակ *(Անդին, թ. 5, 2015):*

ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Ժողովրդի մշակույթին վերաբերող**: Հայոց աշխարհում ցարդ հայտնի ժայռապատկերների տարածական համասեռ բաշխումը և իմաստա-ոճային ընդհանրականությունը փաստում է ժայռանիստները կերտողների **էթնոմշակութային** միասնականությունը *(ՊՀԲ, 2, 2016, էջ 197):*

ԷԿՈԲԱՆՏ, գ. **Էկոչափանիշներին համապատասխանող բանտ:** Այն առաջին և առայժմ աշխարհում միակ **էկոբանտն** է (Բաստոյ կղզի, Նորվեգիա) *(TV մոլ, 07.09.2015):*

ԷԿՈԵՐԹՈՒՂԻ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող երթուղի:** Վայոց ձորի Գոմք, Զառիթափ և Մարտիրոս համայնքներում ստեղծվել են նոր **էկոերթուղիներ,**որոնք մեծապես կնպաստեն այդ շրջաններում էկոզբոսաշրջության զարգացմանը *(ՀՀ,08.09.2015):*

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ, ած. **Գոյապահպանական զբոսաշրջությանը վերաբերող:** Հունիսի 4–ին և 5–ին Վայոց ձորի Գոմք և Մարտիրոս համայնքներում առաջին անգամ կանցկացվի **էկոզբոսաշրջային** փառատոն*….(ՀՀ,03.03.2016):*

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող զբոսաշրջություն:** Տե՛ս ԷԿՈԵՐԹՈՒՂԻ –ի օրինակը:

ԷԿՈԼՈՒՐ, գ.**Գոյապահպանությանը վերաբերող լուր:** Վերջերս՝ նոյեմբերի 4–ին, **«Էկոլուր»** բնապահպանական կայքէջում տեսանյութ է տեղադրվել, որից պարզ է դառնում, թե ինչ աղետալի վիճակում է գտնվում Եղեգիս գետը*…. (Ժող., 21.11.2015):*

ԷԿՈԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանության խնդիրները ներառող կրթություն:** Քննարկվել են նաև **էկոկրթության** ոլորտում փորձի փոխանակման հարցեր *(ՀՀ,08.09.2015):*

ԷԿՈՏՈՒՐԻԶՄ, գ. **Էկոզբոսաշրջություն:** Մասնակիցներին նախ ներկայացվել է տարածքի կենսաբազմազանությունը,**էկոտուրիզմի** հիմնարար սկզբունքները և կազմակերպումը համայնքներում…. *(ՀՀ, 21.10.2015):*

ԷՋԱՏԱՐԱԾՔ, գ. **Էջի սահմաններում:** Բերված օրինակները կնքվում են կա՛մ **էջատարածքում,** կա՛մ փակագծերում նշված էջերում *(Լրաբեր, 1, 2016, էջ 288):*

ԷՍՍԵԱՇԱՐ, գ. **Էսսեների շարք՝ ժողովածու:** Սույն **էսսեաշարը,** ավելի ստույգ՝ քնարական երգիծապատումը, խոհեմ սրտով և մտքով արի նվիրում եմ ՀՀ անկախ պետականության 25-րդ փառահեղ հոբելյանին *(Իր., 15.07.2016):*

ԷՐԳՐԱԿԱՐՈՏ, գ. **Կորցրած հայրենիքի՝Արևմտյան Հայաստանի՝ էրգրի կարոտ:** Դպրոցի սաները Խաչիկ Դաշտենցից ու Մուշեղ Գալշոյանից հետո **էրգրակարոտի** գրականության մեջ նոր խոսք ասած հայորդու գրքերը սովորականից ավելի հպարտությամբ են ընթերցում. չէ՞ որ իրենք Վրեժ Իսրայելյանի ժամանակակիցներն են…. *(ԳԹ,15.04.2016):*

ԷՐԳՐԱՅՑ, գ. (դիպվ.): **Այցելություն էրգիր՝ Արևմտյան Հայաստան:** Բանաստեղծին հաղորդված պատումներն **էրգրայցերի** ցնցող պատկերների, հիշողությունների և անանց վերապրումների ոգեկանչերով արարվեցին «Էրգիրը տեսա հորս աչքերով» մատյանում *(ԳԹ, 18.12.2015):*

ԷՈՒԹԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Էութենականություն, բնույթ:** ….Նախաերկրաշարժյան այն բանաստեղծությունները, որոնք ուրախ–երգիծական–պարոդիկ կերպընկալում ունեին, երկրաշարժից հետո արդեն ընդար-

ձակում են իրենց ասելիքային տարածքի պարագրկումը՝ ներածելով ողբերգականի **էութենությունը** *(ԳԹ, 18.09.2015*):

Ը

ԸՆԴԴԻՄԱՄՈԼ, գ.(դիպվ.): **Ընդդիմադիր լինելու մոլուցք ունեցող:** Դե ինչ ասես մեր **ընդդիմամոլներին՝** ձեր ճաշակի վրա կզարմանան *(Իրավունք,18.09.2015):*

ԸՆԹԱՑԱԳՈՐԾ, գ. **Ավտոմեքենայի ընթացամասերը վերանորոգող մասնագետ (ходовик):** *(Ավտովերանորոգման արհեստանոցի ցուցանակ):*

ԸՆԹԵՐՑԱԽԵՂԴ ԼԻՆԵԼ, բ.(դիպվ.): **Նույն բանի մասին չափից ավելի կարդալ:** Մեկ է, հայ ընթերցողներն արդեն **ընթերցախեղդ** են եղել 2016– Հրե կապիկի գալով կապկային քմահաճությունների, անսպասելի շրջադարձերի, ուրախությունների ու տհաճությունների հերթագայման, քաոսի ու խառնաշփոթի տարում հայտնվելու կանխատեսումներից *(Ազգ, 25.12.2015):*

ԸՆՏԱՆԻՔԱՄԻՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ընտանիքին միտված լինելը:** Մի տեսակ գերիշխող է դարձել **ընտանիքամիտվածություն** հանդիսացող հոգեբանության գիծը….*(ԳԹ, 29.04.2016):*

ԸՆՏՐԱՏՈՒՓ, գ. **Քվեարկող:** Տեղիցս վեր թռա ու նրանց առաջը կտրելով թույլ չտվեցի, որ ընտրաթերթիկները գցեն **ընտրատուփերի** մեջ…. *(Իր., 19.04.2016):*

Թ

ԹԱԳԱՎՈՐԱՄԵՏ, ած. **Թագավորին՝ թագավորությանը միտված:** Ու այնուհետև Մեծն Պատմահոր ներկայությունն ու նրա պետականակենտրոն ու **թագավորամետ** ոգին միավորեց ու կազմավորեց մեզ (*Անդին, թ. 7-8, 2015):*

ԹԱԽԾԱԿԱՐՈՏ, ած. **Թախծալի, թախծոտ և կարոտալի:** Ծննդավայրի ծաղկած թախծաշխարհն ու **թախծակարոտ** գույները թեև Հրաչյա Մաթևոսյանը հետը վերցրել էր Երևան…. *(Իր., 08.07.2016):*

ԹԱԽԾԱՇԽԱՐՀ, գ. **Թախիծ հարուցող աշխարհ:** Տե՛ս ԹԱԽԾԱԿԱՐՈՏ-ի օրինակը:

ԹԱՄԲԱԹՈԿ, գ. **Թամբը ամրացնող թոկ:** Հետո էլ թամբը դրեցին մեջքին, փորատակերից ու պոչատակից **թամբաթոկեր** ձգեցին *(Անդին, թ. 9-10, 2015):*

ԹԱՆԱՔԱՆՅՈՒԹ, գ. **Թանաք:** Նրա ձեռքին թանաք է հայտնաբերվել, բայց ընտրողների ցուցակում բացակայել է ստորագրությունը, որ նա մասնակցել է քվեարկությանը, ու հարց է առաջանում **թանաքանյութո՞վ** է շարժվել, թե՞ ընտրացուցակով *(Իրավունք, 30.10.2015):*

ԹԱՆԱՔՄԱՔՐԻՉ, գ. **Թանաքը մաքրող իր՝ հարմարանք:** ….«Քենսել»**թանաքմաքրիչը** պիտի առնեմ՝ միակ վստահելին *(Ջ, էջ 129):*

ԹԱՎՇԱՄՈՐՄՈՔ, ած. **Թավշի նման՝ նուրբ ու դուրեկան հնչող:** ….Որոնք երբեք ի զորու չեն արտաբերել// Թառանչները **թավշամորմոք** ջութակների *(ՀրչՍ 1, էջ 68):*

ԹԱՏԵՐԱԺՈՂՈՎ, գ. **Թատերական գործիչների հավաք:** Անթաքույց նպատակ ունեի ընդդիմանալու միութենական **թատերաժողովում**…հնչեցված կարծիքին *(Ակ., 14.10.2015):*

ԹԱՏԵՐԱԽՃԱՆԿԱՐ, գ. **Թատերական խճանկար:** Վլադիմիր Գաբբեն…. ի զորու է եղել ՌԴ սրտում փարթամորեն ծաղկող **թատերախճանկարում**…. ճանաչելի դարձնել Սերգեյ Փարաջանովի անվան գեղարվեստական թատրոնի ուրույն գրավչությունը *(Ակ., 30.09.2015):*

ԹԱՏԵՐԱԿԱՌՈՒՅՑ, գ. **Թատերական կառույց:** Կարեն Դուրգարյանի ու …. Վիլեն Գալստյանի հետ անմիջական երկխոսությամբ ընթեր-

ցողի համար հստակեցնել բացառիկ **թատերակառույցի** ներկան *(Ավ., 28.05.2015) :*

ԹԱՏԵՐԱՏՈՆ, գ. **Թատերական տոն:** Այս ….խոշորագույն **թատերատոնին** մասնակցելու են եկել 2 աղջիկներս, աբովյանցի հազարավոր երեխաների ուսուցիչները *(Ավ., 14.10.2015):*

ԹԱՐԱԽԱԲՈՐԲ, գ. **Թարախային բորբոքում:** Խատուտիկի հյութը տրվել է ըմպելու ստամոքսի սուր բորբոքումների, իսկ չորացած տերևը՝ ստամոքսի **թարախաբորբի** ժամանակ *(ՀԴ, թ. 1, 2014):*

ԹԱՔՆԱՐՎԵՍՏ, գ. Այստեղ՝ **մասնագիտական գաղտնիք պարունակող արհեստ:** Կոմիտասը կատարելապես տիրապետում էր կապարը ոսկու վերածելու ալքիմիական **թաքնարվեստին***(ՎՅ, էջ 238):*

ԹԱՔՈՆ,գ. **Գաղտնի պահած, թաքցրած**: Իսկ մենք սարսռում էինք այն մտքից անգամ, որ եթե հայտնաբերեին **թաքոնը**, ինչ էր սպասում տան տղամարդկանց Շուշիի բանտում…. *(ԳԹ, 22.04.2016):*

ԹԵՅԱՓՈՇԻ, գ. **Թեյախոտի փոշի:** Բարի բաց դռներից դուրս էր հորդում քաղցրաբլիթի, **թեյափոշու** և փափուկ թխվածքի հոտը *(Ջ, էջ 49):*

ԹԵՐՋԻՆՈՒՄ, գ. **Բավարար չափով զինված չլինելը:** Չգիտես ինչու, այսօր խոսում են նաև մեր բանակի **թերզինման** մասին *(Իր., 22.04.2016):*

ԹԵՐՋԻՆՎԵԼ, բ. **Բավարար չափով զինված չլինել:** Եթե մեր բանակը **թերզինված** լիներ, ադրբեջանական բանակին այդպես հաջողությամբ չէր կարողանա առաջնային գծից հետ շպրտել *(Իր., 22.04.2016):*

ԹԵՐՍՏԱՑՈՒՄ, գ. **Թերի ստանալը:** ՀԷՑ- ի կողմից ոչ մի արտադրող ֆինանսական ոչ մի պատասխանատվություն չի կրում էներգիայի նախատեսված **թերստացման** համար *(Իրավունք, 30.09.2015):*

ԹԹԱՏՈՆ, գ. **Թթի տոն:** Տե՛ս ԴԵՂՁԱՏՈՆ-ի օրինակը:

ԹԻԹԵՌԱՀԱՎԱՔ, գ. **Թիթեռ հավաքող:** Շուտով մեզ մատով զայրացած ցույց են տալու **թիթեռահավաքները**…. *(Արեն, էջ 108):*

ԹԻԿՈՒՆՔՈՏ, ած. **Թիկնեղ՝ լայնաթիկունք:** Սասնա երգերը ռազմախինդ են, թմբուկի նման պնդականչ, **թիկունքոտ** պարողներին իրար զարկող *(ՌԿ, էջ 52):*

ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼ, բ. (փխբ.): **Որպես նշանակետ՝ թիրախ ընդունել:** ԱՄՆ ՀԴԲ-ն հետաքննությունը սկսել է դեռ 2013-ին՝ **թիրախավորելով** 2018 թվականին ֆուտբոլի աշխարհի առաջնությունը Ռուսաստանում անցկացնելու ՖԻՖԱ-ի որոշումը:

ԹՎԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Ընտրությունների արդյունքները կեղծ թվերով ներկայացնելը:** Պատասխանատու են այն քաղաքացիները, որոնք համապետական ընտրություններին, վերցնելով 5-10 հազար դրամ, գնում են ընտրատեղամաս, որով հնարավորություն են ընձեռում վարչախմբին ցինիկ ձևով ընտրությունները **թվանկարչությամբ** կեղծելու….*(Ժող., 04.05.2015):*

ԹՐՔԱԿԵՐՊ, ած. Այստեղ՝ **թուրքերենին նմանվող:** Թելլի բաջին՝ **թրքակերպ** հայերենով, մի քանի նախադասություն է փոխանակում և այդքանով ավարտում զրույցը *(Անդին, թ. 2, 2015)*:

ԹՈՒՄՈ, գ. 1. **Թումանյանի անվան զբոսայգու՝ մանկական խոսքում տարածված կրճատ անվանումը:** 2. **Նույն տարածքում գործող ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի և տարբեր վայրերում գտնվող նրա մասնաճյուղերի անվանումը: Թումոյի** անդամը պարտավոր է պահպանել կենտրոնի կողմից հաստատված «**Թումո** ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնից օգտվելու կանոնակարգի» պահանջները…. *(Թումոյի ընդհանուր կանոններից):*

ԹՈՒՄՈՅԻ, գ. **Թումոյի անդամ:** ….Օհանյանը **թումոցիներին** սովորեցնում է ֆիլմերի ստեղծման բոլոր փուլերն ու նրբությունները *(Հմգ, tumo. Org):*

ԹՈՒՐԻՆՋԱՋՈՒՐ, գ. Այստեղ՝ **թուրինջից պատրաստված օծանելիք:** Այս **թուրինջաջուրն** այնքա՞ն թարմ է *(Ջ, էջ 72):*

ԹՈՒՐՔԱՀՈՒՆՉ, ած. **Թուրքերեն հնչող:**….Մեղեդուն հյուսվեց երգչի **թուրքահունչ** ողբը, որը գնալով վերածվեց կաղկանձ հիշեցնող ինչոր զառանցանքի *(ԳԹ, 16.10.2015):*

Ժ

ԺԱՄԱՆԱԿԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժամանակից դուրս լինելը:** Գիշերները նույնը չէին, և նույնը չէին ցերեկները, բայց **ժամանակազրկության** տարածքում անձրևոտ պարզկա ցերեկները զգացողության միևնույն ալեբախությունն ունեին *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ԺԱՄԱՆԱԿԱՄՆԱ,ած. **Մնայուն, ժամանակի մեջ հարատևող:** Քավ լիցի, սա առանձին խոսելիք է, ավելի լավ է ասելիքս ծավալեմ «Խազեր տերևի վրա» կոչվող, պարզ ու շիտակ, **ժամանակամնա** գրքի շուրջ *(ԳԹ, 16.10.2015):*

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՈՒՄ, գ. **Ժայռապատկեր ստեղծելը: Ժայռապատկերումն** աղերսներ ունի նաև մարտարվեստի ու մարզարվեստի, պարի ու թատերախաղի, դիցաբանության և ծեսի, այբուբենի, քարտեզի ու տոմարի, գրական ու բանահյուսական ոլորտների հետ *(ՊԲՀ, 2, 2016, էջ 196):*

ԺԱՅՌԱՐՎԵՍՏ, գ. **Ժայռափորագրության արվեստ:** Հայոց **ժայռարվեստում** լավագույնս մեկտեղված են մշակույթի այս բաղադրիչները *(Լրաբեր, 2, 2015, էջ 375):*

ԺԱՆԳԱԹԱԹԱԽ, ած. **Ժանգոտ:** Տան մուտքը պահակում էր մեծ **ժանգաթաթախ** կողպեքը *(Իր., 12.02.2016):*

Ի

ԻՄԱՍՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Իմաստասիրական և գեղագիտական:** Ռուդոլֆ Խաչատրյանն իր գծանկարների մերկ բնորդների մեջ տեսնում է բոլոր ժամանակների մարդուն՝ **իմաստագեղագիտական** պատկերացումներով հարելով անտիկ շրջանին *(Անդին, թ. 2, 2015):*

ԻՄԱՍՏԱՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ, ած. (լեզվբ.): **Իմաստային և հնչերանգային:** Եվ հայերենի մաշտոցյան այբուբենը այն վերջին հանգրվանն է, որ ներառում է հայերեն լեզուն, նախապատմական ու պատմական **իմաստահնչերանգային** նրբագույն նշույլներով հանդերձ….*(Անդին, թ. 2, 2015):*

ԻՆՔՆԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ, գ. **Կամավոր գաղութացում:** Սա ճակատագիր չէ, այլ ազգի կամ անհատի **ինքնագաղութացման** դեմ տածած անտարբերություն, որը հաճախ վերածվում է ազգային աղետի *(ԳԹ, 24.04.2015):*

ԻՆՔՆԱԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ, գ. **Ինքն իրեն գերազանցելը:** Մենք հիմա զարմանում ենք՝ պարզունակ սողուններից ինչպես ծագեց մարդը հրաշակերտվածք, որ բնության **ինքնագերազանցումն** է*(Գարուն, թ. 1-2, 1915):*

ԻՆՔՆԱԹԻՌԱՍՐԱՀ, գ. **Ինքնաթիռի սրահ:** Բարձրանալով **ինքնաթիռասրահ**՝ հսկիչը բլանկը տվեց ուղեկցորդին, որը ուշադիր զննելով այն, գլխով ցույց տվեց նստելատեղը *(Արեն, էջ 48):*

ԻՆՔՆԱԼՐԱԳԻՏԱՐԱՆ, գ. (դիպվ.): **Հեղինակին ուղղված ընծայագրերի և այլ նյութերի ժողովածու:** «Ձեր ընծայագրերի հետքերով. **Ինքնալրագիտարան»**(գրքի վերնագիր): Երբեք հավասար տաղանդ ու

ավանդ հայ կյանքում չունեն «**Ինքնալրագիտարանի**» դեմքերը, սակայն հավասար է հեղինակի ջերմությունը *(ՎՄ, էջ 600):*

ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն լուծարվելը:** ….Որոշ կուսակցություններ կայացնում են **ինքնալուծարման** և վերակազմման միջոցով «Հայկական վերածննդին» միանալու որոշումներ*(Իրավունք, 26.06.2016):*

ԻՆՔՆԱԿԼԱՆՎԵԼ, բ. **Ինքն իրեն կլանվել, ներծծվել:** Մոսկվայի սիրիական քայլից և դրան հետևելիք հնարավոր կարգավորումների հեռանկարից առաջին դժգոհողը…. Թուրքիան է, որին սպասում է կծկվել և **ինքնակլանվել** ներքին՝ գլխավորաբար քրդական ապստամբությունը ճնշելու դժվարին գործի մեջ *(Ազգ, 02.10.2015):*

ԻՆՔՆԱՀՂԿՈՒՄ, գ. **Ինքնակատարելագործում: Ինքնահեղկման** ճանապարհ ունեն անցնելու հմուտ մենապարող մեր հայրենակիցներ Արման Զազյանը և Սոնա Խառատյանը *(Այ., 26.06.2015);*

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իրեն ճանաչելը՝ ինքնաճանաչություն՝ինքնաճանաչում: Ինքնաճանաչողությունը** կազդուրվելու գլխավոր աստիճաններից մեկն է *(Իր., 21.06.2016):*

ԻՆՔՆԱՄԵՐՁ, ած. (բնստ., դիպվ.): **Ինքն իրեն մերձեցնող:** Ինչ էլ լինի՝ անցյալում// Մի գիշեր կա **ինքնամերձ***(ՀրՍՍ2, էջ 58):*

ԻՆՔՆԱՆՑՈՒՄ, գ. **Անցում ժամանակի մեջ՝ ինքնությունը պահպանելով:** Ստեղծելով իր գորգը արդի արվեստի տիրույթում՝ Մարկոս Գրիգորյանը նպատակադրված իրականացրեց հայ ավանդական դասական գորգի **ինքնանցումը** և բեմարկումը 20-րդ դարասկիզբ, ներզգայորեն 21-րդ դար՝ առանց արմատներից կտրվելու *(Իր., 27.05.2016):*

ԻՆՔՆԱՈՐՍ, ած. **Առանց որսորդի միջամտության կենդանի որսացող:** Որոշմամբ առաջարկվում է նաև ուժը կորցրած ճանաչել

նախկինում ընդունված որոշման այն ենթակետը, որով թույլատրվում էր որս իրականացնել **ինքնաորս** գործիքներով՝ թակարդներով, քանի որ դրանցով գայլերից բացի որսվում են նաև այլ կենդանիներ *(ՀՀ, 24.04.2016):*

ԻՆՔՆԱՊԱՏԱՍԽԱՆԻՉ, գ. **Պատասխանը ավտոմատ վերարտադրող սարք:** Վիրահատությունից հետո ես զանգահարեցի նրան և լսեցի **ինքնապատասխանիչի** ձայնը….*(TV ալիք, 30.05.2016):*

ԻՆՔՆԱՎԵՐԱՓՈԽՎԵԼ, բ. **Ինքն իրեն վերափոխվել:** ….Ռուսաստանը ոչ միայն փորձում է **ինքնավերափոխվել** առաջին քրիստոնյա ազգի հաշվին, այլև քաղաքական իր շահերը «կերտել» տարածաշրջանում *(Իր., 15.07.2016):*

ԻՆՔՆԱՓԻԱՌ, գ. **Ինքն իրեն ներկայացնելը:** Կամֆուլյաժե բիկինիով պատանյակներն առայսօր մեր անվտանգության հաշվին **ինքնափիառ** են անում *(Հրապ., 14.11.2014):*

ԻՆՔՆԱՖՈԿՈՒՍ, գ. **Նկարահանող սարքը ավտոմատ կերպով ֆոկուսի բերող հարմարանք,ավտոֆոկուս:** Հիմա դյուրին է, տեխնիկան **ինքնաֆոկուս** ունի, որքան ուզում ես՝ կարող ես չխկացնել *(Անդին, թ. 9-10, 2015):*

ԻՆՖԱՐԿՏԱԶԱՐԿ, գ. (դիպվ.): **Ինֆարկտով հիվանդ:** Շտապ օգնության սպիտակավոր աշխատակիցները դեպի մեքենայի բաց դուռն են տանում պատգարակի վրա խոտի պես պառկած **ինֆարկտազարկին**(*ԼԽ, էջ 20):*

Լ

ԼԱԲԻՐԻՆԹԱՊՈՒՐԾ, ած. (բնստ., դիպվ.): **Լաբիրինթոսից ազատագրված:** Նաքոսոր հիշեց, կծիկի թելով// **Լաբիրինթապուրծ** Թեսևսին

տմարդ….// Օ՜, ամենայն ինչ համաբերելով՝// Նա կամբողջացնի Ուսմունքն անավարտ…. *(Հր�չՍ, էջ 23):*

ԼԱՅՆԱՏԵՂ, ած. **Լայն նստելատեղ(եր) ունեցող: Լայնատեղ** վարձու կառք *(թարգմ.):*

ԼԱՆՋԱՁՅՈՒՆ, գ. **Սարի լանջի ձյունը:** Աննկատ կերպով նա խրվեց **լանջաձյան** մեջ *(ՌԿ, էջ 63):*

ԼԱՊՏԵՐԱՇԱՏ, ած. **Որտեղ շատ լապտերներ կան:** Հոգնել եմ գիշերվա նույն **լապտերաշատ** փողոցներում հոգնած ստվերիս կողմից հետապնդվելուց *(TV ալիք, 21.03.2016):*

ԼԱՐՎԱԾԱԿԵՏ, գ. **Լարման բարձրակետ:** Այն, ինչ անում է ձեր օրգանիզմը, տագնապային խանգարումների **լարվածակետն** է *(TV մոլ, 17.04.2016):*

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆ, գ. (լեզվբ.): **Գործաբանական լեզվաբանությամբ զբաղվող լեզվաբան: Լեզվագործաբաններն** այս հարցում հենվում են լեզվափիլիսոփայության ուղղություններից մեկի՝ փաստարկման տեսության վրա *(ՊՇ, էջ 104):*

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ, ած. (լեզվբ.): **Գործաբանական լեզվաբանությանը վերաբերող: Լեզվագործաբանական** հետազոտությունների շնորհիվ խոսքի լեզվաբանության մեջ կատարվող հետազոտությունների շրջանակը ընդլայնվեց՝ կենտրոնանալով խոսող անհատի հասարակական վարքի և մտածողության այն հայեցակետերի վրա, որոնք աչքաթող էին արված լեզվի ոլորտին վերաբերող հետազոտություններում *(ՊՇ, էջ 4):*

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (լեզվբ.): **Գործաբանական լեզվաբանություն**: Ընդմիջարկումների կապերին առնչվող մեկ այլ մոտեցում ենք գտնում **լեզվագործաբանության** մեջ, որտեղ հետազոտվում են խոսքային ակտերի գործաբանական կապերը *(ՊՇ, էջ 58):*

ԼԵԶՎԱԲԱՌԱՇԻՆԱՐԱՐ,գ. **Լեզվին հմուտ, բառաստեղծ:** Լոռու ակոսդիր–բառուբանոտ չքնաղ եզերք սարսռացին՝ **լեզվաբառաշինարար**, ազնվական–տոհմիկ մեծի, բանաստեղծ Հրաչյա Սարուխանի մահվան լուրն առնելով *(ԳԹ, 15.04.2016):*

ԼԵԶՎԱՃԱՆԱՉՈՂԱԲԱՆ, գ. (լեզվբ.): **Ճանաչողական լեզվաբանությամբ զբաղվող մասնագետ:** ….**Լեզվաճանաչողաբաններ**ը Ռ. Սանդերսը, Փ. Դրյուն և Ջ. Հերիթիջը, որոնք անդրադառնում են ճանաչողական գործընթացներին, խոսող անձանց հոգեվիճակին, խոսքի ընկալման և խոսքաստեղծման ալգորիթմներին, երաշխավորում են, որ լեզվի գործառության վերաբերյալ իրենց կատարած դիտարկումները վստահելի և հավաստի են *(ՊՇ, էջ 11):*

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (լեզվբ.): **Միջգիտակարգ՝ լեզվաբանության և մշակութաբանության հատույթում:** Նելլին ունի մի շարք բարձրակարգ աշխատություններ, որոնք նվիրված են լեզվաբանության արդի ուղղություններից մեկին՝ **լեզվամշակութաբանությանը***(ԳԹ,04.12.2015):*

ԼԵՂԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. **Լեղու գոյացումը, լեղազատում:** Ժամանակի ժողովրդական…բժշկությունը թրթնջուկի արմատներից և տերևներից պատրաստված դեղամիջոցներ է կիրառում ….**լեղագոյացման** խթանման համար *(Տն. առ., թ. 8, 2014):*

ԼԻԱԲԱԺԻՆ, (գղտնտ.): 1. **Սահմանված քանակով, ինչքան անհրաժեշտ է որոշված նպատակին հասնելու համար: Լիաբաժին կերակրում:** 2. գ. **Սահմանված՝ անհրաժեշտ կերաբաժին:** Անասունները իրենց **լիաբաժինը** չեն ստանում:

ԼԻԱԳԻՐԿ, ած. **Լրիվ գրկով, գիրկը լիքը, մի լրիվ գրկաչափ: Լիագիրկ** խոտը լցնել ձիերի առաջ:

ԼԻԱԼՑՈՒՄ, գ. **Ամբողջապես՝ տարողության լրիվ ծավալով լցնելը:** Ջրավազանի **լիալցում:**

ԼԾԱԹԱՄԲ, գ. **Լծելու ժամանակ գրաստի մեջքին դրվող հարմարանք՝ թամբ: Լծաթամբի** փոկից կախ պատյանից երկուսն էլ հանեցին ատրճանակները *(թարգմ.):*

ԼՈՂԱԿԱՄՈՒՐՋ, գ. **Լողացող՝ լողացող առարկաների վրա հենվող կամուրջ:** Պոմպը .... ծծում էր տիղմը .... և **լողակամրջի** վրայով ձգվող խողովակով .... դեպի ափ մղում *(թարգմ.):*

ԼՈՂԱՆՇԱՆ, գ. **Լողալու թույլատրելի սահմանը ցույց տվող նշան:** Անվտանգության համար պետք է լողալ մինչև **լողանշանները***(Հեռ., h. 2, 01.07.2016):*

ԼՈՂԱՇԵՐՏ, գ. **Ջրային տարածքի այն հատվածը, որի սահմաններում լողալը թույլատրված է՝ չի արգելվում: Լողաշերտի** սահմանները նշվում են կարմիր կամ դեղին լողաններով:

ԼՈՂԱՇՐՋԱՆ, գ. **Պաշտոնապես լողալ թույլատրելու ժամանակաշրջան:** Հուլիսի 1-ին տեղի ունեցավ Սևանա լճի **լողաշրջանի** բացումը *(Հեռ., h. 2, 01.07.2016):*

ԼՈՂԱՓՈՍ, գ. **Փոքրիկ՝ նեղ լողավազան:** ....Փաշան դիտել է, թե ինչպես են իր կանայք լողացել մարմարե **լողափոսերում***(թարգմ.):*

ԼՈՐՁՆԱՄԻՏ, ած. Իրենց **լորձնամիտ** ուղեղի չափումներով հաշվել են, թե մեր եկեղեցու հետ մեր հիշողությունն էլ թաղեցին, պրծավ *(ՇՂ, էջ 150):*

ԼՍԱՐԺԱՆ, ած. **Լսելու արժանի:** Նախերգանքը կլինի **լսարժան** (մամուլ):

ԼՎԱՑԱԹԱՍ, գ. **Լվացվելու թաս՝ կոնք, լվացարան: Լվացաթասի** ջուրը փոքր-ինչ վարդագույն էր *(թարգմ.):*

ԼՎԱՑՔԱՊԱՐԱՆ, գ. **Լվացքի պարան:** Իրար են հաջորդում միջնադարյան պալատները, նեղ փողոցները՝ **լվացքապարաններով** կապկպված .... *(ԳԹ,10.07.2015):*

ԼՐԱԳԻՏԱՐԱՆ, գ. (դիպվ.): **Ընծայագրերի և այլ գրությունների ժողովածու:** .... Սույն երկհատորյա **լրագիտարանս** ապագայի ընթերցողի համար է *(ՎՍ, հ. 2, էջ 9):*

ԼՐԱԳՐԱՀԵՆ, գ. **Առանց օրինական թույլտվության՝ գրանցման՝ ապօրինի լրագիր հրատարակող:**

ԼՐԱԳՐԱՀԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրագրահեն լինելը, լրագրահենի գործունեությունը՝ հատկությունը:**

ԼՐԱԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԻՉ, գ. **Լրագիր հրատարակող, լրագրի հրատարակիչ:**

ԼՐԱԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒՀԻ, գ. **Կին լրագրահրատարակիչ:**

ԼՐԱԳՐԱՏՈՒՆ, գ. **Լրագրի խմբագրության շենքը՝ խմբագրատունը:**

ԼՐԱԳՐՉԱԿ, գ. **Լրագրությամբ զբաղվող թերուս և անարհեստավարժ անձ:** Մի տեսնես, թե էս **լրագրչակները** ոնց են հայացքները փոխում, երբ նոր քամի է փչում *(Ջ, էջ 106):*

ԼՐԱՏՎԱԿԱՅՔ, գ. **Լրատվական կայք:** Ադրբեջանական կայքի նյութը շատ օպերատիվ կերպով թարգմանվել ու հրապարակվել է հայկական ընդդիմադիր **լրատվակայքերից** մեկում *(Իրավունք, 18.09.2015):*

ԼՐՈՒՐԴ, գ. **Որպես ինչ-որ բանի հավելում տրվող բան:** Լիքը ամանը ուտելով **լրուրդ** խնդրեց: Վերարկուի համար վճարված փողը հաշվելով՝ իր համար **լրուրդ** խնդրեց:

ԼՑԱԿԱՐ, գ. **Գործվածքի փոքրիկ պատռվածքը կան անցքը ցանցի նման գործելով լցնելը՝ նորոգելը,լիցք:** Լցակարը չէր նկատվում:

ԼՑԱԿԱՐԵԼ, բ. **Լցակար անել, լցակարի միջոցով պատռվածքը կամ անցքը փակել՝ նորոգել:** Լցակարել գուլպան:

ԼՑԱՆՔ, գ. (մսնգ.): **Փչացած ատամների խոռոչների մեջ լցվող հատուկ նյութ, ատամնալիցք:**

ԼՈՒՍԱԳՈՎԱԶԴՈՒՄ, գ. **Լուսագովազդելը, լուսագովազդվելը: Լուսագովազդման** ծախսերը վերջին հաշվով վճարում է գնորդը *(մամուլ):*

ԼՈՒՍԱԺԱՄ, գ. **Օրվա լուսավոր ժամանակահատվածը, ցերեկ: Լուսաժամի** ձախորդ որսորդ:

ԼՈՒՍԱԼԱՊՏԵՐ, գ. **Լուսազդանշանային լապտեր՝ լամպ, լուսազդանշանիչ լապտեր:** Ավտոմեքենաների հոսքը մակաղել է լայնշի փողոցում, **լուսալապտերի** կարմիր արգելափակոցից այս կողմ *(Ս.Կապուտիկյան):*

ԼՈՒՍԱԿԱԾԱՆ, գ. **Լույսի նեղ ու երկար՝ (լուսեղեն) շերտ՝ անդրադարձում՝ հետք հեղուկի մակերեսին**: Ձուկը ....երբեմն դուրս էր թռչում ջրից, ասես ցանկանում էր թռչել սպիտակ **լուսակածանի** վրայով *(թարգմ.):*

ԼՈՒՍԱՀԱՐ, ած. **Լույսի հարած, լույսի ուժեղ ճառագայթների ազդեցության ենթարկված՝ դրանցից վնասված՝ փոփոխություն կրած**: **Լուսահար** մաշկ՝ աչքեր:

ԼՈՒՍԱՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ, գ. **Լուսաճառագայթելը, լուսաճառագայթվելը: Աստղիլուսաճառագայթումը: Լուսաճառագայթման** գործընթացի քանակական նկարագրություն:

ԼՈՒՍԱՄԵՐՁ, ած. **Լույսին՝ լույսի աղբյուրին մերձ՝ մոտ գտնվող՝ ընկած: Լուսամերձ** տարածություն:

ԼՈՒՍԱՄՈՒՏԱԴՈՒՌ, գ. **Նաև որպես լուսամուտ ծառայող դուռ, դուռ, որի վերևի մասը սովորաբար ապակեպատ է՝ լուսամուտ է**: Սողնակով փակեց գավթի **լուսամուտադուռը***(թարգմ.):*

ԼՈՒՍԱՅՏ, գ. (բնստ.): **Լուսե այտ:** Անբնական հիացում և ժպիտ է նկարվում նրա՝ արդեն լուսավոր, արևից ծաղկող **լուսայտերին***(Անդին, թ. 9-10, 2015):*

ԼՈՒՍԱՆԺԱՐ, գ. (բնստ.): **Լույսերի նժար, իրար հավասարակշռող լույսի երկու աղբյուր:** Հայրենիք և սեր, բիբերիս երկու **լուսանժարին** կշռում եք ինձ…. *(Ս.Եղիազարյան):*

ԼՈՒՍԱՆԿԱՐԱԶԱՐԴԵԼ, բ. **Լուսանկարներով՝ լուսանկարներ փակցնելով զարդարել:** Ցուցափեղկը **լուսանկարազարդել:**

ԼՈՒՍԱՆՑՔԱՅՆԱՑՎԵԼ,բ.(փխբ.): **Կյանքի լուսանցքում հայտնվել, մարգինալացվել:** …. Նրանք մեր երկրի **լուսանցքայնացված** (մարգինալացված), արհամարհված, անտեսված, խավերի զավակներն են ու ներկայացուցիչները, որոնք քաղաքական կարևորագույն գործ կատարեցին ….(*Ազգ,13.05.2016):*

ԼՈՒՍԱՇԱՂԵԼ, նբ. 1. **Լույս շաղել՝ սփռել՝ տարածել:** 2. (փխբ.): **Պայծառանալ, երջանկություն՝գոհություն՝ բավարարվածություն արտահայտել:** Երիտասարդի հայացքը …. աղջկա դեմքը **լուսաշաղեց***(մամուլ):*

ԼՈՒՍԱՇԱՂՎԵԼ, կր. և չբ. **Լուսաշաղել**-ի: Կոզետը … արշալույսով **լուսաշաղված**՝ սկսեց նայել այդ թռչնիկներին *(թարգմ.):*

ԼՈՒՍԱՇԵՂԲ, գ. **Լույսի ճառագայթների նեղ ու երկար շերտ՝ խուրձ՝ շեղբ:** Ասուպի **լուսաշեղբը** անսպասելիորեն պատռում է գիշերային խավարը *(թարգմ.):*

ԼՈՒՍԱՍԵՂԱՆ, գ. (բնստ.): **Լուսավոր, լուսեղեն սեղան:** Պահը խաչվում է անզոր կարոտիս **լուսասեղանին***(Ն.Գասպարյան):*

ԼՈՒՍԱՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսային ճառագայթների միջոցով կատարվող փորագրություն փայտի վրա, լուսային փայտափորագրություն:**

ԼՈՒՍԵԲԱՐՈՒՐ,ած.(բնստ.): **Լույսով բարուրված, պայծառ:** Քեզնով նաև փրկվեց Էրգրի պատմության **լուսեբարուր** շուքը, որ դանդաղ մարում էր տարիների մեգ–մշուշի մեջ, մոռացության դավադիր մացառուտը ծածկում էր ամեն ինչ և ամենքին *(ԳԹ, 27.12.2015):*

ԼՈՒՍԵՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. Ծաղկաթեր թերթերունքներից կաթող արևի, արև-անձրևի վարդացող մեղեդու, **լուսերերգության** նրբագեղ հնչերանգների ուղեկցությամբ, հիշողությունը վերադառնում էր (*Անդին, թ. 9-10, 2015):*

ԼՈՒՍՆԱԽԱՂԱՂ, ած. **Լուսնկա և խաղաղ: Լուսնախաղաղ** գալիքներ *(ՀՇ):*

ԼՈՒՍՆԱԽԱՌՆ, ած. 1. (բնստ.): **Թռվիչ, առինքնող: Լուսնախառն** ժպիտներով գերում էիք ինձ ու կանչում *(ԱԳ):* 2. Լուսնի ճառագայթներով լուսավորված, լուսնի պատկերը՝ ճաճանչները իրենց մեջ արտացոլող: **Լուսնախառն** ալիքներ:

ԼՈՒՍՆԱԾՆՈՒՆԴ, գ. **Լուսնի նորելը, նորալուսնի երևալը:** Նոյեմբերի քսանին **լուսնածնունդի** հետ բնությունը խաղաղվեց *(Հ.Ղուկասյան):*

ԼՈՒՍՆԱԿԱՆՉ, գ. **Լուսնի կանչ, լուսինը երևալու՝ երևացած ժամանակ շների հաչոցը երկնքում փայլող լուսնի վրա:** Մեր գամփռների **լուսնականչն** ինչու ոռնոցի փոխվեց *(ՀՇ):*

ԼՈՒՍՆԱՀԱՍ, ած. **Լուսնին հասած, երբ հասել են լուսնին: Լուսահաս** դար *(ՀՇ):*

ԼՈՒՄՆԱՀԱՐՍ, գ. (բնստ.): **Լուսնի շողերով լուսավորված փերի, հրեշտակ:** Երեք արմավենի էր աճել այնտեղ, ինչպես երեք **լուսնահարս**….:

ԼՈՒՄՆԱՀԱՐՎԵԼ, բ. (փխբ., բնստ.): **Լուսնից խփված, երազային:** Եվ որքան **լուսնահարված** էի ես,….որ մի ամբողջ գիշեր հավատացի, թե պատուհանագոգին դրված ծաղկամանով ծաղիկը նա էր *(TV ալիք, 21.03.2016):*

ԼՈՒՄՆԱՌԻԿ, ա., գ. **Լուսինը առնող՝ գրավող, լուսնի վրա իջնող:** Ով **լուսնառիկ,** ով էլ լինես, քո թռիչքն եմ համբուրում *(ՀՇ):* **Լուսնառիկ** փառք *(ՀՇ):*

ԼՈՒՄՆԱՔՈՂ, ած. (բնստ.): **Լուսնի քողով պատված, լուսնի ճառագայթներով ողողված:** Երբ շղարշվեց **լուսնաքող** իրիկունը բոստանի վրա *(ՀՇ):*

ԼՈՒՄՆԱՔՈՒՅՐ, գ. (բնստ.): **Լուսնի նման քույր:** Դու լուսատենչ իմ **լուսնաքույր**, լույսս վրադ հավերժ շաղեմ *(Տ.Գամառելյան):*

Խ

ԽԱՂԱՂԱՊԱՀԱԿԱՆ, ած. **Խաղաղության պահպանմանն ուղղված:** ՄԱԿ-ի խաղաղապահության գագաթնաժողովին զուգահեռ Հայաստանում տեղի ունեցան հայ-ռուսական **խաղաղապահական** համատեղ վարժություններ *(Իրավունք, 30.09.2015):*

ԽԱՂԱՂԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Խաղաղության պահպանում:** Տե՛ս ԽԱՂԱՂԱՊԱՀԱԿԱՆ-ի օրինակը:

ԽԱՂԱՇԱՊԻԿ, գ. **Մարզաշապիկ:** ….Երկրպագուներն այրել են նրա անվամբ **խաղաշապիկներն** ու արգենտինացու պատկերով լուսանկարները *(Իր., 29.07.2016):*

ԽԱՂԸՆԿԵՐՈՒՀԻ, գ. **Կին ընկերուհի:** Ինչ վերաբերում է Դավթի անվան շուրջ պտտվող բամբասանքներին, նրան և սերիալային **խաղընկերուհիներին** վերագրելուն, զույգն արդեն իմունիտետ է ձեռք բերել *(Հմգ):*

ԽԱՂՈՂԱՏՈՆ, գ. **Խաղողի տոն:** Տե՛ս ԴԵՂՁԱՏՈՆ-ի օրինակը:

ԽԱՄՐԱՓԱՅԼ, մկբ. **Փայլը կորցրած:** Այս ամենը տանջալիորեն խճճված ու տարտամ, **խամրափայլ** ու բեկբեկուն պտտվում էր դեռ գլխումս….*(ՎՖ, էջ 117):*

ԽԱՇԱՄԱԴԱՐՍ, ած. **Խաշամի կույտերով լի:** Սեպտեմբերի գոլ քամիները սարերի դոշերով գալիս ու մոլորվում էին անտառում, հանգչում, հանգստանում էին **խաշամադարս** փոսերի մեջ*(Գարուն, թ. 5-6, 2015):*

ԽԱՎԸՆԹԱՑ, մկբ. **Խավի ուղղությամբ:** Ջոն Հենրի Մենթը հանեց գլխարկը, ուղղեց փոսիկն ու այն **խավընթաց** հարթեցրեց վերարկվի թևքով *(Ջ, էջ 98):*

ԽԱՐԴԱԽԱԿԵՐՊ, մկբ. **Խարդախ կերպով:** Մենք այսօր պիտի փակենք արյան ու կորստի այն ճանապարհը, որ **խարդախակերպ** երկարել է մեր երկու բարեկամ ժողովուրդների մեջ *(ՌԿ, էջ103):*

ԽԱՐԴԱԽԱՏԻՊ, ած. **Խարդախ: Խարդախատիպ** Սեիդովը զինանոցների գլխին տնօրե՛ն է կարգված *(ՌԿ, էջ 59):*

ԽԵԼՔԱՏԵՐ, գ. **Խելք ունեցող, խելացի**…. Ցուցակների ամեն տասնյակի տասից յոթ–ութը փողատերերը, մի երկուսը որպես ցուցափեղկ **խելքատերերն** են լինելու….*(Ազգ,09.10.2015):*

ԽԵՑԵՆՄԱՆ, ած. **Խեցու ձև ունեցող:** Ջոն Հենրի Մենթը …. նայեց գինուց ուռած **խեցենման** աչքերով *(Ջ, էջ 215):*

ԽԽՈՒՆՋՎԵԼ,բ. **Ինքն իր մեջ ամփոփվել:** Ինքն իր մեջ **խխունջվածի** մշտապես մտազբաղ ու հոգսաշատ, ներփակ ողբերգական, ջղուտ ու նիհար տեսք ուներ*(ԳԹ, 12.02.2016):*

ԽՃԱԼՑՈՒՄ,գ. **Խիճով լցնելը:** Հորի ամբողջ խորությամբ իրականացվել են **խճալցման** ու կավալցման աշխատանքներ.... *(ՀՀ, 16.05.2015):*

ԽՄԲԵՐԳԱՇԱՐ, գ. **Խմբերգերի շարք:** Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ Արմինե Աթոյանը վերլուծեց Մարտուն Իսրայելյանի«Սիրո և տրտմության խոսքեր»**խմբերգաշարը** երկսեռ երգչախմբի համար (a cappella, խոսք՝ Վահան Տերյանի) *(Լրաբեր, 1, 2016, էջ 358):*

ԽՆԴԱՀՈՒՄՈՐԻԿ, ած. **Հումոր և խինդ արտահայտող:** Մթության մեջ մարդն ասես մտաբերեց պատանու բարի և **խնդահումորիկ** ժպիտը *(ՌԿ, էջ 13):*

ԽՆԴՐԱՊԱՀԱՆՋ, գ. **Խնդիրք-պահանջ:** Ես բավարարեցի նրա՝ իր նոր ավարը ցույց տալու անհամբերությամբ տուն այցելելու **խնդրապահանջը**....*(ՎՖ, էջ 152):*

ԽՈՀԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Անձնական **խոհաբանությունը** «Խազեր տերևի վրա» գրքում խարսխված է իրականության բանահյուսական ընկալման վրա.... *(ԳԹ, 16.04.2015):*

ԽՈՍԱԴՈՒԼ, գ. (դիպվ.): **Հրապարակային ելույթների դադարեցում:** Ի դեպ, ուշագրավ է, որ անհապաղ ճանաչման անհրաժեշտության մասին շտապել է հանդես գալ երկարատև **խոսադուլից** հանկարծակի դուրս եկած .... Ռաֆֆի Հովհաննիսյանը *(Իրավունք, 04,05.2016):*

ԽՈՍՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,գ. (դիպվ.): **Պարապ ճառախոսություն:** Մեզանում ներկայումս տեսական **խոսքաբանությունն** աշխուժացել է, հենց խոսքաբանությունը, շատերն օգտվելով համացանցի կցկտուր

տեղեկություններից, տերմինախեղդ են անում ընթերցողին՝ առանց բառի խորքն ըմբռնելու…. *(ԳԹ, 08.04.2016):*

ԽՈՍՔԱԿԱՌՈՒՅՑ, ած. **Խոսք կառուցող:** Հանգը **խոսքակառույց** կարևոր դեր ունի հայերենում, բայց առանձնապես ճոխ հնչեղություն չունի *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԽՈՍՔԱԿԵՐՏԻՉ, ած. **Խոսք կերտող:** Սարյանը, Շիրազը, Սահյանը այն հաջողությամբ զարգացնում են և պահպանում հանգի **խոսքակերտիչ** նշանակությունն ու կշռույթային դերը *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԽՈՍՔԱՁԱՅՆԱՅԻՆ, ած. **Խոսքային և հնչական:** Նա ջանք չի խնայել ստեղծելու բառի և հնչյունի **խոսքաձայնային** ներդաշնակություն *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԽՈՍՔԱՇԵՐՏ,գ. **Լեզվագործածության որևէ ոլորտի բնորոշ շերտ:** Ավետարանական **խոսքաշերտերի** օգտագործումը ևս վկայում է, որ Սոնա Վանը իրեն փոխակերպում է որպես միստերիայի՝ խորհրդավոր ծիսակատարության հերոսի (*ԳԹ, 06.11.2015):*

ԽՈՍՔԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Խոսքը կառուցելը, ստեղծելը:** Տե՛ս ԼԵԶՎԱՃԱՆԱՉՈՂԱԲԱՆ-ի օրինակը:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱՍԵՂԱՆ, գ. **Խորհրդակցության համար նախատեսված սեղան** : Տե՛ս ԱԹՈՌԱԲՈԼՈՐ–ի օրինակը:

ԽՈՐՀՐԴԱՁԱՅՆ,գ. **Խորհրդատու ձայն:** Ականջն զգաստության կոչող **խորհրդաձայներին**, և անգամ աչքերը ևս լսողություն դարձրած բանաստեղծը փորձում է պահել կյանքի ներդաշնակությունը, որի համար պատրաստ է ինքնանվիրումի *(ԳԹ,20.05.2016):*

ԽՏԱՊՆԱԿ,գ. **Ձայնը, պատկերը ձայնագրելու և վերարտադրելու համար նախատեսված սկավառակ:** ….Ձայնագրման ֆիրման թողարկել է հայ երաժշտության ութ խտասկավառակ՝ «Հայաստան», «Անուշ»,

«Գառնի», «Շորոր»,«Արարատ», Մուրադյան համույթի զույգ **խտապնակ-ները՝** յուրաքանչյուրում 18 պարեղանակ *(Ազգ, 16.10.2015):*

ԽՏԱՍԿԱՎԱՌԱԿ,գ.Տե՛ս ԽՏԱՊՆԱԿ–ի օրինակը:

ԽՑԱՓԱԿՈՒՄ, գ. **Խողովակը հատուկ խցանիչով փակելը:** Բեռնակիրների և Չելյուսկինցիների փողոցներում **խցափակման** միջոցով շահագործումից հանվել են թուջե հին վթարված ջրագծերը *(Իրավունք, 25.03.2015)* :

ԽՈՒԹԱՇԱՏ, ած. **Շատ խութեր՝ խոչընդոտներ ունեցող:** Հեռակառավարման վահանակի առջև նստած՝ ժամանակակից մեթոդներով մահ սփռող դիպուկահարի մեջ մարդկային որակների արթնացումը անցնում է **խութաշատ** ոլորանների միջով, որոնք լարված սպասում են պարտադրում ֆիլմի հանդիսատեսին *(Իր., 11.07.2016):*

ԽՈՒԽԱՄՈՒՂ, ած. **Խորխաբեր, խուխաբեր, խխահան:** Խատուտիկի բուսահյութը… ունի **խուխամուղ**, մարսողությունը կանոնավորող, դեղնուկը կարգավորող հատկություն (*ՀԴ, թ. 1, 2014):*

Ծ

ԾԱԾԿՈՑԱՇԱԼ, գ. **Ծածկոց:** Իսկ ես **ծածկոցաշալը** ներա տակն էի խցկում ու շուտ-շուտ դզում վզամորթին *(Ջ, էջ 499):*

ԾԱԾԿՈՑԱՏԻՊ,ած. **Ծածկոցի նմանվող:** Եվ ամենակարևորը՝ **ծածկոցատիպ**, տատիկական մեծ շալերից էր պետք փաթաթվելու համար: Մնացածն արդեն «խաղալու գործ է»…. *(ԳԹ,22.04.2016):*

ԾԱՂԿԱԹԵՐ, ած. **Ծաղկաթերթի նմանվող:** Տե՛ս ԼՈՒՍԵՐԵՐ-ԳՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԾԱՂԿԱԽՈՒՆԿ,գ. (դիպվ.): **Խնկաբույր ծաղկափոշի:** Մեղուներս թռչում են Անի// Երազգավորս ու Արգինա,//Բերում են նեկտարը Երկրի,// **Ծաղկախունկ** ու մանանա… *(ԳԹ, 29.04.2016):*

ԾԱՂԿԵԴՐՈՒՄ, գ. (Ճիշտ է՝ **ծաղկաղրում**) **Ծաղիկ դնելը:** Ս. Սարգսյանը ողջունեց բոլորին, զրուցեց ստեփանակերտցիների հետ,որից հետո շարժվեցին մասնակցելու **ծաղկեդրման** արարողությանը *(Հմց):*

ԾԱՆՐԱՔԱՅԼՔ, գ. **Ծանր՝ դանդաղ քայլք:** Նրա սերթուկի պոչերը հերթով աչքով արեցին նրա **ծանրաքայլքին** համընթաց՝ բարկ արևի տակ *(Ջ, էջ 204):*

ԾԻՍԱԽՈՒՄԲ, գ. **Ծեսին մասնակցողների խումբ:** Հուշարձան այցելող **ծիսախումբը**, արևմուտքից մոտենալով հուշարձանին, աստիճաններով պետք է իջներ մատուռ,պսակ դներ կամ մոմ վառեր *(ՀՇ, թ. 4, 2015):*

ԾԻՍԱՎԱՅՐ,գ. **Ծիսակատարությունների համար նախատեսված շինություն:** ….Եվ՛ արևելքից, և՛ արևմուտքից կրկնակի գահերով կառուցում էր իր ու հոր՝ Միհրդատ Կալլինիկոսի պաշտամունքային **ծիսավայրը** և ողջ շրջակայքը զարդարում նախնիների հարթաքանդակներով *(ԳԹ, 22.04.2016):*

ԾԻՐԱՆՕՐՀՆԵՔ, գ. **Ծիրանն օրհնելու արարողություն:** Տոնն սկսվեց **ծիրանօրհնեքով**՝ Սուրբ Զորավոր եկեղեցում *(Իր., 11.07.2016):*

ԾԽԱԲՈՒՐՄՈՒՆՔ, գ. **Ծխի հոտ:** –Եղբայր,- Պրն Դեդլըսն ասաց **ծխաբուրմունքի** միջով…. *(Ջ, էջ 229):*

ԾԽԱՓՈՂԱԿՈՐԴ, գ. **Ծխափող:** Նա հետ դարձավ դեպի բար՝ գտնելու իր կորած **ծխափողակորդը***(Ջ, էջ 227):*

ԾԾԱԿԱԳՈՂ, գ. **Ծծակ գողացող:** Վտանգ կա, որ այսօրվա **ծծակագողերը** վաղն արդեն կարող են հիանալի գործիք դառնալ քիդնեփինգի՝ երեխաներ առևանգող հանցախմբերի ձեռքին *(ՉՐ, 28.11.2013):*

ԾՈՎԱՍԱՌՆ, ած. **Ծովի նման սառը:** Ծովերի տիրակալը: Նրա **ծովասառն** աչքերը նայում էին դատարկ ծովածոցին *(Ջ, էջ 27):*

ԾՈՎԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծովային տարածք:** ….Հրթիռները տեղակայված են փոքր ջրատարողությամբ ռազմանավերում, որոնք ազատ կարող են լողարկել նաև ներքին գետերով՝ չմտնելով միջազգային **ծովատարածություններ***(Ազգ, 23.10.2015):*

ԾՈՎԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. Տե՛ս ԴՈԼԱՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԾՈՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծովին նվիրված ստեղծագործություն:** Ահա այսպիսի զուգահեռներ արթնացրին Հայրապետյանի **ծովերգությունը՝** «Պավանը», և Ջուն Սան Պարկի մեկնաբանությունը, որի համար նա արժանացավ հատուկ մրցանակի *(Իր., 24.06.2016):*

Կ

ԿԱԹՆԱՁՎԱՅԻՆ, ած. **Ձվից ու կաթից կազմված:** Ձուն ու կաթը հարել, աղ ու պղպեղ անել, կաղապարի վրայից հանել փայլաթուղթը և լցնել **կաթնաձվային** խառնուրդը *(TV մոլ, 25.05.2015):*

ԿԱԹՆԱՄԵԶՈՏ, ած. **Կաթի և մեզի խառը հոտով:** Հերթական փոսը փորելուց հետո տուն մտնելով՝ Ավոն զգում էր՝ ինչպես մեռելահոտը ծանծաղում, նոսրանում էր տղայի **կաթնամեզոտ** տակաշորերի ու կնոջ հացաբույրի խառնուրդից (*Անդին, թ. 7-8, 2015):*

ԿԱԽԱՂԱՆԱՀԱՆԵԼ, բ.**Կախաղան բարձրացնել՝ կախաղանել՝ կախել**: Թուրքիայի ռազմական ատյանը քսան ամենակարկառուն հնչակյաններին մահվան դատապարտեց, 1915 թվականի հունիսի 15-ին Պոլսի Բայազիդ հրապարակում **կախաղանահանեց…***(ԳԹ,03.07.2015):*

ԿԱՂԱՊԱՐԱԶԵՐԾՎԵԼ, բ. **Կաղապարից ձերբազատվել:** Այժմ մարդը պիեսում **կաղապարազերծվեց** և դարձավ առավել մարդ, իր նման և ոչ «հարևան» մյուսների *(Ազգ, 25.12.2015):*

ԿԱՂԱՊԱՐԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Կաղապարային դառնալը:** Գրողի ժամանակը, ըստ իս, ենթակա է բոլորովին այլ չափումի։ Այն պայքար է ընդդեմ ժամանակի **կաղապարայնացման**…. *(ԳԹ, 11.12.2015):*

ԿԱՄՈՒՖԼՅԱԺԱՅԻՆ, ած. **Ձևական կերպարանափոխված:** Որքանո՞վ էր տեղին զինվորական հագուստով դասալիքների այդ **կամուֆլյաժային** հանդեսը *(Ժող., 17. 10.2013):*

ԿԱՅԱՆԱՍՅՈՒՆ, գ. **Կայանելու համար շղթայով կապելու այուն:** Մոտոցիկլետը կապելով **կայանասյանը** և սրընթաց մտնելով մոտակա խանութը՝ Դենն իր սաղավարտը դրեց պահախցիկից մեկում, ուշադրությունը շեղելու համար անցավ վաճառադարակների երկայնությամբ և դուրս թռչելով այդտեղից՝ սլացավ քիչ ձախ գորշացած բուրգի կողմը *(Արեն, էջ 27):*

ԿԱՆԱՉԱՎԱՅՐ, գ. **Կանաչ տարածություն:** …. Ազդանշանները ….պահանջեցին արգելակել մակույկը և նավարկել դեպի **կանաչավայր** *(ՌԿ, էջ 17):*

ԿԱՆԳԱՌԵԼ, բ. **Կանգ առնել:** Հիշելով հարևանությամբ բնակվող բարեկամներիս մասին՝ մտածեցի **կանգառել** նրանց մոտ…. *(Արտ.գրակ., թ. 3, 2016, էջ 10):*

ԿԱՆԳԱՌԱԳՈՏԻ, գ. **Փողոցի՝ կանգառի համար նախատեսված հատված:** Տե՛ս ԳԾԱՆՇՈՒՄ-ի օրինակը:

ԿԱՆՉԱՎԱՅՐ, գ. **Վայր, որտեղից կանչ է ստացվել:** Վեգները կառքից իջավ սպանության առիթով **կանչավայր** ժամանած քննիչի զգուշավորությամբ *(ՌԿ, էջ 20):*

ԿԱՇԵՃԻՏՔ, ած. **Կաշվե ճիտքերով:** Ահա օտար ոտքեր են երևում անտառում **կաշեճիտք** կոշիկներով, չարագուշակ և տագնապազդու *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ԿԱՉԱՂԱԿԱՁԵՎ, ած. **Կաչաղակի ձև ունեցող:** Ֆարաշյանը հեռվից նկատել էր Պետական դումայի ծանոթ պաշտոնյային՝ հագին պաշտոնական **կաչաղակաձև** հագուստը *(ՌԿ, էջ115):*

ԿԱՊՏԱԱՐԾԱԹԱՎՈՒՆ, ած. **Արծաթագույն կապույտ երանգով:** Ինքս տեսա դրա **կապտաարծաթավուն** փայլը *(Ջ, էջ 126):*

ԿԱՊՏԱԲԻԼ, ած. **Կապույտ:** Օրորվում է՝ մեկ, երկու, երեք…և սրընթաց ճախրը առ անհունը, **կապտաբիլ** երկինքն ու ցիրուցան ամպերը *(ՎՖ, էջ 97):*

ԿԱՊՏԱՓԱՅԼՈՒՆ, ած. **Կապույտ փայլ ունեցող՝ կապույտ փայլով՝ կապտափայլ:** Մյուսը՝ թողնելով ընկերներին, դանդաղ հեռացավ. ուսերին՝ **կապտափայլուն** սայրերով իրենց զենքը *(Ջ, էջ 95):*

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կառուցվածքային վերլուծություն՝կառուցվածքաբանություն:** ….Պըլտյանը իր սերնդի շատ երիտասարդների նման, տարվում է **կառուցվածքապաշտության** ալիքով, որը, ինչպես ինքը կասի ավելի ուշ, մոդայիկ երևույթ էր *(Ազգ, 11.03.2016):*

ԿԱՎԱԼՑՈՒՄ,գ. **Կավ լցնելը:** Տե՛ս ԽՃԱԼՑՈՒՄ–ի օրինակը:

ԿԱՏԱՐՈՂԱՑԱՆԿ, գ. **Երկացանկ, կատարվող ստեղծագործությունների ցանկ:** Նրա շնորհիվ օպերայի **կատարողացանկում** պահպանվեցին բացառիկ, բարդագույն ներկայացումները ….*(ԳԹ, 28.10.2016):*

ԿԱՐԱՊԱՆՈՑ, գ. **Կարապների բուծման վայր:** Շեյքսփիրը դուրս է եկել Սիլվը փողոցի հուգենոթյան տնից ու անցնում է գետափով, **կարապանոցների** կողքով *(Ջ, էջ 158):*

ԿԱՐԳԱԹՎԱՅԻՆ, ած. **Թվային կարգ՝ հաջորդականություն արտահայտող:** Այբուբենի գրային նշանների համակարգի հիմքային ընկա-

լումն ունի երեք շերտ. այն է՝ հնչյունային, թվային և **կարգաթվային** (*Անդին, թ. 7-8, 2015):*

ԿԱՐԾՐԱԿԱՂԱՊԱՐ,գ. **Կարծրատիպ:** Ժամանակի հայրենասիրական պոեզիայի **կարծրակաղապարներից** մեկը Հայաստանի տարածքային ու հայ ժողովրդի քանակական փոքրությունն ընդգծելով՝ մեծ կարողությունների ու կարելիությունների հետ համեմատումն է *(ԳԹ, 18.09.2015):*

ԿԱՐՄՐԱՍԵՎ, ած. **Կարմրին տվող սև:** Ճարճատեցին օձահրթիռները՝**կարմրասև** ծուխ արձակելով *(Լ.Ա, էջ 24):*

ԿԵՂԵՎԱՀՈՏ,ած.**Ծառի կեղևի հոտ ունեցող:** Ծառերը ….գիշերային լոգանքից ելած մերկ, թաց կանանց տեսքով ճկվում էին, շորորում, **կեղևահոտ,** խեժազույն անձրև կաթեցնում բների շուրջ *(ԳԹ,29.04.2016):*

ԿԵՂԵՎԱՄԱՇԿ, գ. **Ծառի կեղևը:** Մի պահ ոտքերը կտրեց հողից, թաթիկները ափլփեցին պինդ **կեղևամաշկը,** ծնկները զարնվեցին ծառաբնին, ու մի ուժ նրան ներքև տապալեց (*Անդին, թ. 7-8, 2015):*

ԿԵՆԱՑԱՍԱՑ,գ. **Կենաց խոսք ասողը:** …. Նախ առաջարկվել է խմել՝ Հայաստանի Հանրապետության, պետության և ժողովրդի համերաշխության կենացը (հավանաբար պետություն ասելով **կենացասացը** նկատի է ունեցել իշխանությունը) *(Ազգ, 18.09.2015):*

ԿԵՆՍԱԴՐՎԱԳ, գ. **Կյանքի դրվագ:** …. Առաջին անգամ գեղարվեստորեն տարբեր **կենսադրվագներով** ու հերոսների բարոյահոգեբանական խնդիրների արծարծումներով պատկերվել էին 1890-1900-ական թթ. Արևմտյան Հայաստանի գավառներում տեղի ունեցած հայդուկային-ֆիդայական մարտերը, դրանց մասնակիցների կերպարները *(ԳԹ, 16.09.2016):*

ԿԵՆՍԱԽՈՀ, գ. **Կյանքի մասին միտք, խոհ:** …. Հետևաբար «ապրելու իրավունք ունի» ամեն մի էպիստոլ՝ ընթերցողին իր բարի խորհուրդն ու **կենսախոհը** փոխանցելու նպատակով *(Իր., 10.06.2016):*

ԿԵՆՍԱԿԱՌՈՒՅՑ, գ. **Կենսակերպի, բարքերի ու սովորույթների դրվածքը, հոգեկերտվածք՝ կենսակառուցվածք:** Ի դեպ հայերն ու հին հռոմեացիները նույն դարաշրջանի ժողովուրդներ են, այնպես որ զարմանալ պետք չէ, եթե այն ժամանակների **կենսակառույցից** ինչ-որ բան նրանց մոտ պահպանվել է *(Արտ.գրակ., թ.3, 2016, էջ 46):*

ԿԵՆՍԱԿԱՌՈՒՅՎԱԾՔ, գ. **Կենսակառույց, հոգեկերտվածք, աշխարհընկալում, մենթալիտետ:** ….Ես ճանաչում եմ միայն մեկին, փոխարենը՝ շատ մոտիկից, ի դեմս իմ քենու, ում ապստամբությունը հայկական **կենսակառուցվածքի** դեմ գիտակցական ու երկարատև էր*(Արտ.գրակ., թ.3, 2016, էջ 490):*

ԿԵՆՍԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ած. **Կենսաբանական և հասարակական:** Էկոլոգիայի տեսակետից մարդը **կենսահասարարական** արարած է *(Անդին, թ. 5, 2015):*

ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳ, գ. **Կենսաբանության և տեխնիկայի հատույթում գտնվող միջգիտակարգի մասնագետ:** Ես, որպես գործող **կենսատեխնոլոգ**, ….հակված եմ հեռու մնալ արհեստական և քիմիական միացություններից*(Իր., 12.05.2015):*

ԿԵՆՑԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Կենցաղին՝ որպես մշակութաբանական համակարգի դրսևորման վերաբերող:** Հայոց **կենցաղամշակութային** համակարգում հավաքչությունը՝ որպես տնտեսական հնագույն զբաղմունք, մինչև օրս պահպանել է իր օժանդակ դերը…. *(Լրաբեր, 1, 2016, էջ 244):*

ԿԵՌԱՍԱՏՈՆ, գ. **Կեռասի տոն:** Տե՛ս ԴԵՂՁԱՏՈՆ-ի օրինակը:

ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Կերպարաստեղծում:** Ինչ հատկանիշներ եք օգտագործել **կերպարակերտման** ընթացքում.... *(Եր.համ., 05, 2016):*

ԿԵՐՊԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Կերպը ընկալելը:** Տե՛սԱՍԵԼԻՔԱՅԻՆ–ի օրինակը:

ԿԶԱՔԻՍԱՉՎԻ, ած. **Կզաքիսի աչքերի պես աչքեր ունեցող՝ աչքերով: Կզաքիսաչվի** խոզավաճառը ծալեց հավաքեց երշիկները .... *(Ջ, Էջ 50):*

ԿԻԲԵՌԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. **SS միջոցներին վերաբերող ահաբեկչական գործողություն:** .... Ապագայում կիբեռհանցագործությունները վերածվելու են **կիբեռահաբեկչությունների**, որոնք ուղղվելու են ենթակառույցների դեմ.... *(Ազգ, 20.11.2015):*

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ,գ. **SS ոլորտում գործելու անվտանգություն:** Միաժամանակ, նա կարևոր համարեց **կիբեռանվտանգության** ապահովման ուսուցումը և համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացումը.... *(Ազգ, 20.11.2015):*

ԿԻԲԵՌԻՍԿ,գ. **Կիբեռհանցագործության ենթարկվելու հավանականություն**: Նրանք խոսել են կիբեռանվտանգության սպառնալիքների և կիբեռհանցավորության վերաբերյալ, **կիբեռիսկերի** նվազեցմանն ուղղված քայլերից, մեկնաբանել կիբեռհասկացությունները....*(ՀՀ,24.03.2016):*

ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾ,գ. **SS ոլորտում հանցավոր գործունեություն իրականացնող:** .... Հազարավոր **կիբեռհանցագործներ** գրոհում են մեր համակարգիչները և փչացնում մեր կյանքը.... *(Ազգ,20.11.2015):*

ԿԻԲԵՌՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտում կատարվող հանցանք:** Տե՛ս ԿԻԲԵՌԻՍԿ-ի օրինակը:

ԿԻԲԵՌՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտին վերաբերող հասկացություն:** Տե՛ս ԿԻԲԵՌԻՍԿ-ի օրինակը:

ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՒՄ, գ. **SS միջոցներով իրականացվող հարձակում:** ….Ղարաբաղում ռազմական ագրեսիա սանձազերծած Բաքվին աջակցություն են ցուցաբերել նաև թուրք հաքերները՝ մասնակցելով Հայաստանի դեմ իրականացվող **կիբեռհարձակումներին** *(Իր., 15.04.2016):*

ԿԻԲԵՌՃԳՆԱԺԱՄ,գ. **SS ոլորտում իրականացվող գործունեության ճգնաժամ:** Ձեկուցողներն անդրադարձել են **կիբեռճգնաժամին** և դրա դեմ արձագանքման պետական արդյունավետ մեխանիզմներին *(ՀՀ,24.03.2016):*

ԿԻԲԵՌՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտը հսկող ոստիկանություն:** ….Ընկերությունը ոչ միայն համակարգիչները պաշտպանող ծրագրեր է ստեղծում, այլև օգնում է աշխարհի տարբեր երկրների **կիբեռոստիկանություններին** և հատուկ ծառայություններին…. *(Ազգ, 20.11.2015):*

ԿԻԲԵՌՊԱՌՆԱԼԻՔ, գ. **SS ոլորտում առկա սպառնալիք:** Նշվեց **կիբեռսպառնալիքների** նվազեցման հարցում պետության բոլոր օղակների համագործակցված աշխատանքի կարևորություն *(ՀՀ, 04.03.2016):*

ԿԻԲԵՌՎՏԱՆԳ, գ. **SS ոլորտի գործունեության հնարավոր վտանգ:** Ինչպես պաշտպանվել ժամանակակից **կիբեռվտանգներից:** Հակառակորդի կողմից նոր **կիբեռվտանգներ** են ստեղծվում *(Հեռ., Շանթ, Հորիզոն, 17.10.2016):*

ԿԻԲԵՌՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **SS գործունեության ոլորտը՝ տարածքը:** Այսինքն՝ մենք մեր երեխաներին մտցնում ենք **կիբեռտարածություն**՝ չտրամադրելով ինքնապաշտպանության համապատասխան գիտելիքներ (*ՀՀ, 24.03.2016):*

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Կիլիկիայի հայ բնակչություն: Կիլիկիահայությանը** փրկելու մտահոգությամբ 1914 թ. նոյեմբերին Նժդեհը դիմեց Եգիպտոսի անգլիական հրամանատարությանը *(ԳԱ, թ. 4, 2009):*

ԿԻՆՈԱՆՑՅԱԼ, գ. **Անցյալում ստեղծված կինոարժեքներ:** ….Մենք առիթ կունենանք ոչ միայն վերհիշելու մեր **կինոանցյալը,** այլև պատկերացում կազմելու այսօր ծնունդ առնող հայկական ֆիլմերի մասին *(Իր., 11.07.2016):*

ԿԻՆՈԲԵՐՔ, գ. (փխբ., դիպվ.): **Ցուցադրության ներկայացված ֆիլմեր:** Ն.Փայտյանը կասի, թե ինչ **կինոբերք** է խոստանում«Ոսկե ծիրանը»*(Հեռ., h. 2, 15.06.2016):*

ԿԻՆՈԲՆԱԳԱՎԱՌ, գ. **Կինոյի բնագավառ:** Հարկ է նշել, որ 60-ականներին **կինոբնագավառում** (և ոչ միայն) մեծ հաջողություններ ունեցանք *(Իր., 16.01.2015):*

ԿԻՆՈԳՈՎԱԶԴ, գ. **Կինոնկարահանման միջոցով ստեղծվող և տարածվող գովազդ:** Լեզվագործածության առումով գովազդները լինում են՝ ա) տեսողական (տպագիր գովազդ, լուսագովազդ, ֆոտոգովազդ նն), բ) լսողական (ռադիոգովազդ), գ) տեսալսողական (հեռուստագովազդ, **կինոգովազդ**)*(ՀԼԽՍ, էջ395):*

ԿԻՆՈԹՈԹՈՎԱՆՔ, գ. **Լուրջ արժեք չներկայացնող կինոստեղծագործություն:** Այս ֆիլմը կարելի է համարել **կինոթոթովանք,** որում ակնհայտ են հեռանկարում լիարժեք կինոյի վերաճելու նախանշանները *(Իր.,11. 07.2016):*

ԿԻՆՈԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի ասպարեզում նշանակալի իրադարձություն՝ երևույթ:** Իսկ մենք յուրաքանչյուր հյուրից փորձում ենք քաղել առավելագույնը, որ հնարավորություն կտա ստեղծելու կարևոր **կինոիրադարձություն** մեզ համար, ծառայեցնելու նրանց գալը ի

շահ կինոփառատոնի, ի շահ Հայաստանի, ի շահ մեր կինոգործիչների *(Իր., 15.07.2016):*

ԿԻՆՈԽՈՐՀՐԴԱՆԻՇ, գ. **Կինոմիջոցառման՝ կինոփառատոնի խորհրդանիշ: Կինոխորհրդանիշ** ծիրանի 13-րդ մեկնարկը (խորագիր) *(Իր., 11.07.2016):*

ԿԻՆՈՀՅՈՒՍՎԱԾՔ, գ. **Կինոստեղծագործության դիպաշար:** Ռիթմի, շարժման հետ միասին **կինոհյուսվածքի** մեջ մտան նաև պոետիկ լուծումներ, ոճաձևեր *(Իր., 16.01.2015):*

ԿԻՆՈՃԱՄԲԱՐ, գ. **Կինոցուցադրության ժամանակավոր վայր:** Փառատոնային օրերից 3-ը անցկացվելու են Շիրակի մարզում՝ վրանային **կինոճամբարի** ձևաչափով *(Ակ., 26.06.2015):*

ԿԻՆՈՄԻՋԱՎԱՅՐ, գ. **Կինոարվեստով զբաղվող և դրանով հետաքրքրվող մարդկանց միջավայր:** «Ոսկե ծիրանին» սպասող հասարակությունը վերջին տարիներին արդեն սովորել է վայելել աստղային փայլի առկայությունը երևանյան **կինոմիջավայրում,** մեր քաղաքի փողոցներում և զբոսավայրերում տեսնել ոչ միայն համաշխարհային մեծության ռեժիսորների, այլև մեծ էկրանին փայլող դերասանների *(Իր., 15.07.2016):*

ԿԻՆՈՄԻՋՈՑԱՌՈՒՄ, գ. **Կինոարվեստին վերաբերող միջոցառում:** ….Այդպիսի պատասխանը հակասում է կինոկենտրոնի կայքում տեղադրված…. դրույթներին՝ ….կինոփառատոնների և կինոշուկաների մասնակցության ապահովում, միջազգային կինոփառատոներին և միջազգային այլ **կինոմիջոցառումներին** մասնակցության ապահովում և այլն *(Իր., 01.03.2016):*

ԿԻՆՈՈԼՈՐՏ, գ. **Կինոարվեստի բնագավառ:** Այսպիսով, արմատական բարեփոխումներ են պետք **կինոոլորտում,** հակառակ դեպքում

անընդհատ կորուստներ ենք ունենալու՝ նյութական, բարոյական և մարդկային ռեսուրսների առումով *(Իր., 01.03.2016):*

ԿԻՆՈՉԻՆՈՎՆԻԿ, գ. **Կինոյի բնագավառի պաշտոնյա անձ:** ….Ըստ այն ժամանակվա **կինոչինովնիկների**, նա պետք է փողկապով լիներ, սափրված, թեև ճանապարհ կառուցող մարդ էր *(Իր., 16.01.2015):*

ԿԻՆՈՊԱՇՏ, գ. **Կինոարվեստի մոլի երկրպագու:** ….Մինչև այսօր երդվյալ **կինոպաշտ** է*(ՎԻ, էջ 168):*

ԿԻՆՈՍԵՐ, գ. **Կինո սիրող:** Ֆիլմի դիտմանը ներկա բազմաթիվ **կինոսերներ** լիահույս էին,որ այնտեղ կտեսնեին նաև ձեզ *(Իրավունք, 21.07.2015):*

ԿԻՆՈՎԱՎԵՐԱԳՐՈՂ, գ. **Փաստավավերագրական ֆիլմեր ստեղծող կինոգործիչ:** ….Ներկայացվում են 70-80-ական թվականները և մեր այսօրվա կինոգործիչները՝ թվով 45 **կինովավերագրողներ**, ովքեր շարունակել են«Ուրիշ կինոյի» ձեռքբերումները *(Իր., 16.01.2015):*

ԿԻՆՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի բնագավառում իրականացվող քաղաքականություն:** Եթե նման բան ասում է պետական **կինոքաղաքականություն** իրագործող կառույցի ղեկավարը, դա խոսում է արդեն ձևավորված կարծրատիպի մասին *(Իր., 01.03.2016):*

ԿԻՆՈՖՈՆԴ, գ. **Կինոարվեստի զարգացմանը հատկացվող ֆոնդ:** Շատ երկրների նման, մեզ նույնպես հարկավոր է ունենալ պետության կողմից ստեղծված **կինոֆոնդ,** որը օրենքի և օրենսդրական մի շարք ակտերի շրջանակներում հնարավորություն կունենա պետական ռազմավարությունը արդյունավետ իրագործել *(Իր., 01.03.2016):*

ԿԻՍԱԱԼԵԽԱՌՆ, ած. **Կիսով չափ ալեխառն:** Քայլում է նա **կիսաալեխառն** մազերով, բուսաբան Ջերբրդի Ֆեթր փողոցի վարդաստանում *(Ջ, էջ 171):*

ԿԻՍԱԱՄԱՅԻ, ած. **Կիսով չափ ամայի:** Ասեմ, որ համայնքների խոշորացումով բազմաթիվ **կիսաամայի** գյուղեր, ժամանակի ընթացքում իսպառ դատարկվելով, կվերածվեն պատմական նախկին բնակավայրերի…. *(Իր., 09.06.2015):*

ԿԻՍԱԴԱՎԱՃԱՆ, գ. **Կիսով չափ դավաճան:** Ատում եմ իմ դավաճանին, իմ երկրի քաղաքացու ու հայի նկատմամբ **կիսադավաճաններին**….*(Անդին, թ. 9-10, 2015):*

ԿԻՍԱԶՈՒՍՊ, ած. **Կիսով չափ զուսպ:** Մարգարի համար սովորական էին դարձել իր ետևից լսվող **կիսազուսպ** քրքիջները *(TVալիք, 05.10.2015) :*

ԿԻՍԱԽՈՐՔ, գ. **Տարածք բեմառաջքի և ետնաբեմի միջև:** Հիշեցի Սարոյանին…. և Սերո Խանզադյանին այլ հայ գրողների հետ բեմի **կիսախորքում** շրջանաձև նստած *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ԿԻՍԱՎԱՐԱԳՈՒՅՐ, գ. **Մի տեսակ վարագույր:** …. Հայտնվեց Օրդ - Դուսի գլուխը՝ «Օրմոնդ» հյուրանոցի **կիսավարագույրի** վերևում *(Ջ, էջ 208):*

ԿԻՐՃԱԽՈՐՔ, գ. **Կիրճի խորքը:** Նրա առջևից ճողոպրած տաճիկ երկու հեծյալներ, յուրայինների կորուստը տեսնելով ժխորով սուրացին **կիրճախորք** *(ՌԿ , էջ 65):*

ԿՃԱՊԱՏ, ած. **Կուճով՝ մարմարի փոշու և կրի շաղախով պատված:** Հաղթաբազուկ գեներալը Պետերբուրգ ճամփեց նաև Չիֆտե կառույցի **կճապատ** և քանդակազարդ դուռը *(ՌԿ, էջ 77):*

ԿՅԱՆՔԱԿԻՐ, գ. **Կյանք կրող:** Թերևս անմիջականորեն չկարողանամ բացատրել, թե դրանք ինչ լեզուներ և հատկապես ինչ գրականություններ են, թեև ակնառու են և իրենց խորության չափերով **կյանքակիր** *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ԿՈԴԱԳՐՈՒՄ,գ. **Կոդավորում:** Նկատեմ, որ Վերջինի սպասման անհայտը, որ հաճախ է հիշվում բանաստեղծի խոհերում, Մանվել Միկոյանի նշանագրային անմեկնելի **կոդագրումներից** է…. *(ԳԹ, 01.04.2016):*

ԿՈԴԱՆՇԱՆԱԿ, ած.**Գաղտնագրի նշանակություն ունեցող, գաղտնագրային**: Սկսենք ջուր, անձրև, ցող **կոդանշանակ** սիմվոլներից՝ նախապես բերելով Աստվածաշնչի բազմաթիվ օրինակներից մեկը. «Եվ Աստծո Հոգին շարժվում էր ջրերի վրա»*(ԳԹ, 22.05.2015):*

ԿՈՂԱՀԱՅԵԼԻ, գ. **Ավտոմեքենայի կողային հայելի: Կողահայելիներից** լուռ ու ակնապիշ նայում էին երկու սգավոր պատանի…. *(Ջ, էջ 213):*

ԿՈՂԱՇՐՋՎԵԼ, բ. **Կողքի վրա շրջվել:** Բախման հետևանքովFord Transad-ը կողաշրջվել է *(Ժող., 14.03.2015):*

ԿՈՂՊԵՔԱՎՈՐՎԵԼ, բ. **Կողպվել, փակվել:** Տասնյոթ տարի անընդմեջ ինքն իր ներսում փակ ու **կողպեքավորված** էր եղել, լռության մեջ թաքուն հույս էրփայփայել, թե՝ ժամանակ ասածը, ի վերջո, զորեղ բան է…. *(ԳԹ,11.03. 2016):*

ԿՈՄԻՏԱՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեր Կոմիտասի հանդեպ, Կոմիտասին սիրելը**: Պետք է նշեմ, որ հորս **կոմիտասասիրությունը** սերում է դեռևս Բարսեղ Կանաչյանից, ով իր ուսուցիչն է եղել Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում *(ԳԹ, 16.10.2015):*

ԿՈՇԿԱՍԵՂԱՆ, գ. **Կոշիկ մաքրողի սեղան:** Ինձ թվում է՝ անցած դարում գլուխս դրել եմ կոշիկ մաքրողի **կոշկասեղանին** ու մոռռ…*(Անդին, թ. 2, 2015):*

ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾԵԼ, բ. **Կոռուպցիայից ազատել:** Սրանք երկիրը օրինականության դաշտ վերադարձնելու, տնտեսությունը ստվերաթափելու, կառավարման մեխանիզմները **կոռումպազերծելու,** հանրություն-իշխանություն հարաբերություններում բարոյականությունը

առաջնահերթություն դարձնելու պահանջներ են, որոնք մշտապես են բարձրաձայնվում *(Իր., 03.05.2016):*

ԿՈՐՈՎԱՇԱՏ, ած. **Եռանդաշատ:** Տե՛ս ԱՌԱՋԱՇԱՐՔ -ի օրինակը:

ԿՌԱՎԱՁԱՅՆ, գ., մկբ. **Կռավոցի ձայնով:** Եվ ագռավի պես **կռավաձայն** ազդարարելով, թե մեղեդին վերջնականապես ընդհատվել է, թող հիշեն նաև….*(ՎՖ, էջ 137):*

ԿՌՓԱՁԵՆՔ, գ. **Բռունցքին ամրացվող զինատեսակ:** Վանեսյանը Լալայանի հետ վիճաբանության ժամանակ **կռփազենքով** հարվածներ է հասցրել Լալայանի գլխին *(Ժամ., 24.04.2014):*

ԿՐԹԱԹՈՇԱԿԱԿԻՐ, գ. **Կրթաթոշակ ստացող, կրթաթոշակառու:** ԴԱԱԴ-ի **կրթաթոշակակիրների** շարքում մեծ թիվ են կազմում նաև համալսարանականները *(Եր. համ., հունիս-հուլիս, 2016):*

ԿՐԹԱՄԱԿԱՐԴԱԿ, գ. **Կրթության մակարդակ:** …. Մեծանում է բնակչության **կրթամակարդակը***(Լրաբեր, 1, 2016, էջ 214):*

ԿՐԾՔԱԼԱՆՋ, գ. **Կուրծք, լանջ:** Զգեստը զննելու ժամանակ **կրծքալանջի** ասեղնագործված զանգակածաղկի վրա մեծ պատռվածք նկատեց *(ՌԿ, էջ 29):*

ԿՐԿՆԱՂԵՐՍ, գ. **Կրկնակի՝ երկրորդ անգամ աղերս:** …. Ու հղանամ քեզանով// **Կրկնաղերսն** այս *(ՀԲՀՍ, 1, էջ 100):*

ԿՈՒՍԱԿՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կուսակցական շինարարություն:** Նախկին արտգործնախարարը….արդեն հայտարարեց, որ **կուսակցաշինության** աշխատանքները ահագին առաջ են գնացել *(Իրավունք, 15.03.2016):*

ԿՈՒՍԱՂՋԻԿ, գ. **Կույս աղջիկ: Կուսաղջիկը,** որի ոտքերին կարմիր մաշիկներ են, Ծիրանեաց Երկրի դեռահաս դիցուհին է (*Անդին, թ. 9-10, 2015):*

Հ

ՀԱԶԱՐԱԴԱՇՈՒՅՆ, մկբ. **Հազարավոր դաշույններով:** Տե՛ս ԵՓՐԱՏԱՀԱՅ-ի օրինակը:

ՀԱԶԱՐԱՀՈՏ, ած. **Հազար հոտ ունեցող:** Մենք ևս ազատ ենք և անբարեկարգ, անջուր ու **հազարահոտ** հյուրանոցից դուրս գալով գնում ենք գործկոմ *(ՇՂ, էջ 129):*

ՀԱԶՎԱԳՅՈՒՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Հազվագյուտ՝ բացառիկ՝ արտակարգ լինելը:** Գիրքն իսկույն դարձավ մատենագիտական **հազվագյուտություն** *(Ազգ, 10.04.2015):*

ՀԱԿԱԴՐԱՊԱՏԿԵՐ, գ. **Հակադիր պատկեր:** Վկա՝ «Նապաստակի մը օրագիրը», «Չալոն», «Միջոն» պատմվածքները՝ հարազատ բնաշխարհի գեղեցկությունների և տիրող դաժան իրականության **հակադրապատկերներով***(ԳԹ, 22.04.2016):*

ՀԱԿԱՍԽՐԱՆՔ, գ. Այստեղ՝ **հակազգային քայլ:** ….Ով է ԷԷ-ն, որ իրեն անծանոթ, օտար երկիր Հայաստանում նման **հակասխրանք** է փորձում գործել *(Իր., 22.07.2016):*

ՀԱԿԱՑԵՂ, գ. **Ազգի հատկանիշներից զուրկ հանրություն:** Այո, հաստատ կա հերոս և հակահերոս, կա ազգ և **հակացեղ** (*Անդին, թ. 7-8, 2015):*

ՀԱՂԹԱԺՊՏԱԼ, բ. **Հաղթական ժպտալ:** Բայց քույրիկ բրոնզը **հաղթաժպտաց** ներան՝ նրա համար հարդարելով իր ավելի փարթամ վարսերը, լանջքը….*(Ջ, էջ 224):*

ՀԱՂՈՐԴԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Կին հաղորդավար: Հաղորդավարուհին** անդրադարձավ նաև եթերի լեզվին *(Ժող., 08.05.2015)* :

ՀԱՂՈՐԴԱՏԵՍԱԿ, գ. **Հեռուստահաղորդման տեսակ՝ ժանր:** ….Հեռուստատեսությունը, որպես իր ժամանակի տարեգիր, չի կարող սոսկ վավերագրող լինել, այլ հաղորդումների, թողարկումների և այլ **հաղոր-**

դատեսակների միջոցով փորձելու է ազդել հասարակության դիրքորոշումների և տեսակետների արտահայտման և հստակեցման վրա *(Լրաբեր, 3, 2016):*

ՀԱՄԱԶԵԿՈՒՅՈՂ, գ. **Զեկույցի հեղինակներից յուրաքանչյուրը:** ….Հայաստանում վերջերս հրապարակվեց ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) դիտորդական առաքելության **համազեկուցողների** առաջին միջանկյալ զեկույցը…. *(Լրաբեր, 2-3, 2012, էջ 229):*

ՀԱՄԱՀԵՇՏԱՑՈՒՄ, գ. **Ընդհանուր դյուրացում:** //Նա տնտեսագետ չի դառնա իսկի,//Բայց դրանով է տարվում ողջ տարին.//Դա իր տենչերի և լսած խոսքի//**Համահեշտացման** գործն է դժվարին*(ՍՍ, էջ 40):*

ՀԱՄԱՄԱՐԴ, գ. **Ընդհանրական մարդ-կերպար:** Եվ ապրելով անխախտ առանձնության մեջ, նա **համամարդն է***(ՎՅ, էջ 176):*

ՀԱՄԱՇԽԱՏԱԿԻՑ, գ. **Միասին աշխատող**: Քսան տարուց ավելի Նադեժդան և Ռուդոլֆը եղել են ոչ միայն բեմական պարընկերներ**, համաշխատակիցներ**, այլ նաև ամուսիններ*….(Ազգ, 10.07.2015):*

ՀԱՄԲԵՐԱԹԱՓ, ած. **Համբերահատ՝ համբերությունը հատած:** Ես նորից մերժում եմ վառել օգտագործված մոմեր ու աղոթել՝ հանուն համբերության, ես **համբերաթափ** եմ *(TV ալիք 20.06.2016):*

ՀԱՄԸՆԿՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Համընկնելի լինելը:** Այսպիսի կառույցները ենթադրում են շարահյուսական-հնչերանգային, չափական, հնչյունական հատույթների **համընկնելիություն,** միասնություն *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՀԱՅԱԶԱՐԿ, ած. **Հայերին զարկող:** Նա արտասվում էր ցավից և **հայազարկ** վիրավորանքից *(ՌԿ, էջ 23):*

ՀԱՅԱՀԻՄՆԱԴԻՐ, ած. **Հայերի հիմնադրած:** Սակայն բաներ կան, որոնց մասին չեմ կարող չգրել. օրինակ Այնճար քաղաքը՝ այդ **հայա-հիմնադիր,** հայախոս լուսավոր կղզին արաբական ծոցի մեջ…. (*Անդին, թ. 7-8, 2015):*

ՀԱՅԱՇԱՐԺ, գ. **Հայերի տեղաշարժ:** Այդ օրերին **հայաշարժ** եղավ դեպի Արցախ*(Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջին, 03.10.2016):*

ՀԱՅԱՍՏԱՆԱՆՊԱՍՏ, ած. **Հայաստանի շահերին նպաստող:** Այսօր աշխարհաքաղաքական իրավիճակը նույնպես հուսալի չէ, իսկ մեր լավագույն քաղաքագետները դարձյալ գործում են մեկը մյուսից մեկուսի, չկա մշակված քաղաքական համընդհանուր, **հայաստանանպաստ** հայեցակարգ *(Իր., 31.05.2016):*

ՀԱՅԱՍՏԱՆԱՇԱՀ, ած. **Հայաստանի շահերը պաշտպանող:** Միայն համատեղ **հայաստանաշահ** վերկուսակցական հայեցակարգը մեր հայրենիքն ու պետականությունը կփրկի քաղաքական վայրիվերումներից և հնարավոր ռազմական միջամտությունից *(Իր., 31.05.2016):*

ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայերին նվիրված ստեղծագործություն, հայերի մասին գրելը:** Բազմաթիվ այլ վեպերով ու վիպակներով Խանզադյանը հյուսել է իր **հայերգություն** հայրենապատումը *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՀԱՅՀՈՅԱԲԱՐԲԱՌ, ած. **Հայհոյաբան:** Տե՛ս ԱՄԲՈԽԱՎԱՅԵԼ-ի օրինակը:

ՀԱՅՏԱԳՐՈՒՄ, գ. **Հայտագրելը, հայտագիր ներկայացնելը:** Ուշադրություն, մենք սկսում ենք«Պրեմիերա» նախագծի **հայտագրումը***(Հեռ., «Շանթ», Գովազդ, 21.05.2016):*

ՀԱՅՏԱՐԱՐԱԺՈՂՈՎ, գ. **Հիմնադիր ժողով:** «Վերազարթոնք հաղթարշավ»**հայտարարաժողովն** ունի գաղափարական մի քանի հիմնադ-

րույթներ, որոնք հստակ ներկայացվեցին շահագրգիռ հանրության դատին *(Իր., 24.05.2016):*

ՀԱՅՏԱՅՈՒՅԱԿ, գ. **Հայտերի ցուցակ:** Ավելացնենք, որ Իգուաինն արդեն իսկ «Յուվենտուսի» **հայտացուցակում** է *(Իր., 29.07.2016):*

ՀԱՅՏՆԱԿԵՐՊԵԼ, բ. **Բացահայտել, հայտնագործել:** Էականն այն է, որ երկուսն էլ հավասարապես հնարավորություն են տալիս թե՛ շղարշելու տեսանելին և թե՛**հայտնակերպելու** գաղտնին *(Վ.Ֆ, էջ 251):*

ՀԱՅՐԵՆԱԿԱՐՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայրենիքի կարոտ ունենալը:** Աշխարհում երևի չկա մի ժողովուրդ, որն այդքան տուժած լինի պանդխտությունից և այդքան երգեր ստեղծած լինի **հայրենակարոտության** մասին *(ԳԹ,18.03.2016):*

ՀԱՅՐԵՆԱՀՈՒՅՍ,ած. **Հայրենիքի հույսն արթնացնող, ամփոփող:** Դու գտար նրանց ճանապարհի Բրաբիոն ծաղիկը, մեկ–մեկ տուն կանչեցիր, ….նրանց մեջ տեսար **հայրենահույս** հպարտությունը, արդարացի պահանջը*….(ԳԹ,27.12.2015):*

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայրենաճանաչողություն, հայրենիքը ճանաչելը:** Ինչ վերաբերում է 2009-ից սփյուռքահայ երիտասարդներին տուն կանչող «Արի տուն»**հայրենաճանաչության** ծրագրին՝ դրա կայացածության առհավատչյան դարձյալ թվերն են *(Ավ., 28.05.2015):*

ՀԱՆԳԱԲԱՌ, գ. **Հանգ կազմող բառ: Հանգաբառն** այս դեպքում դառնում է պատկերի ամբողջացման անփոխարինելի բառերից մեկը *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՀԱՆԳԱԿՑՎԵԼ, բ. **Հանգավորվել:** Նման դեպքում **հանգակցվող** բառերի հնչյունական նմանությունները մեծ մասամբ լինում են մոտավոր և ուշադրություն չգրավող *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՀԱՆԳԱՄԵՐԺ, ած. **Հանգը մերժող:** Հիմա տեսնենք, թե ինչ տեսակետ է հայտնել հանգաբան և **հանգամերժ** բանաստեղծը *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՀԱՆԴԱՐՏԱԿՇԻՌ, ած. **Հանդարտ՝ խաղաղ՝ հանդարտընթաց:** Մերձբալթիկան **հանդարտակշիռ** ատելությամբ, զսպելով ներռուսական հորձանքը, ակնհայտորեն չէր թաքցնում անկախության մղումները *(ՇՂ, էջ 11):*

ՀԱՆԴԻՍԱՇԱՏ, ած. **Շատ հանդիսականներ ունեցող:** ....Նրանց ճառերը ևս արժանի կլինեին հնչելու Ստոկհոլմի **հանդիսաշատ** բեմից *(Անդին, թ. 6, 2015):*

ՀԱՆՔԱԽՅՈՒՍ, գ. **Հանքանյութի մշակման ընթացքում ստացվող խարամը:** Ըստ նախագծի՝պոչամբարներում կուտակված է մոտ 300 մլն տոննա **հանքախյուս**.... *(ՀՀ, 19.06.2015):*

ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՀԱՆՈՒՄ, գ. (դիպվ.): **Հանքարդյունաբերությունից ստացվող արդյունքի ապօրինի վատնում:** Տե՛ս ԱՆՏԱՌԱՋԱՐԴ-ի օրինակը:

ՀԱՇՎԵՐԳ, գ. (գրկն.): **Մանկական բանահյուսության ժանր:** Տե՛ս ԶԱՅՐԱԽԱՂ-ի օրինակը:

ՀԱՇՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաշտված լինելը:** Իսկ հետո, ինքն էլ չիմանալով՝ երբ, ինչպես, ինչու դարձավ անտարբեր և իր վիճակի անելանելիությունը **հաշտվածության** նսեմ զգացումը պատեց հոգին *(ԳԹ, 12.07.2015):*

ՀԱՍՑԵԱԿԱՆ, ած., մկբ. **Որոշ հասցեատեր ունեցող:** Կդժվարանամ **հասցեական** մեկնաբանել, թե ինչ նկատի ուներ Նիկոլ Փաշինյանը և ում նկատի ուներ *(Իրավունք, 18.09.2015):*

ՀԱՎԵՐԺԱՀԱՐՑ, գ. **Հավերժական հարց:** Կոմպոզիտորը չէր կարող չանդրադառնալ մարդկությանը հուզող **հավերժահարցերին՝** բռնությանը, կեղծիքին, իշխանատենչությանը, նյութապաշտությանը և մարդկանց պառակտող այլ արատներին…. *(Իր., 27.05.2016):*

ՀԱՎԵՐԺԱՄԱՆՈՒԿ, գ. **Հավերժական մանուկ:** …. Նույնիսկ **հավերժամանուկներին** լքում է պահապան հրեշտակը, որպեսզի հետո, շատ հետո նորեն հանդիպման գա …. *(Վ.Ֆ, էջ 33):*

ՀԱՎԻՏԵՆԱԼՈՒՅՍ, ած. (բնստ.): **Հավիտենական լույս արձակող:** Անդ աստվածային եթերախաղով // **Հավիտենալույս** երկինքն էր բերկրում…. *(ՀԸՍ, էջ 25):*

ՀԱՏԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնահատուկ բնույթ:** …. Տեսական արժեք ունեցող բանաձևումները հետագայում գործնական կիրառություն գտան՝ պայմանավորելով Գրիգորյանի բանաստեղծության **հատկականությունը** *(ԳԹ, 18.09.2015):*

ՀԱՐԹԱԿԱԶԵՐԾ ԱՆԵԼ, բ. (դիպվ.): **Միտինգի հարթակը տնօրինելուց զրկել:** Ավելի ուշ, ծովածավալ ամբոխ հավաքած Իգոր Մուրադյանին նոր հարթակատերերը **հարթակազերծ արին***(ՇՂ, էջ 57):*

ՀԱՐԹԱԿԱՏԵՐ, գ. (դիպվ.): **Միտինգի հարթակը տնօրինող:** Տե՛ս ՀԱՐԹԱԿԱԶԵՐԾ ԱՆԵԼ-ի օրինակը:

ՀԱՐԹԱԿԼՈՐ, ած. (փխբ.): **Անարտահայտիչ:** Նրանք անիրական էին թվում այս իրականության մեջ՝ ինքնությունից պարպված գոհունակ ու **հարթակլոր** դեմքերով *(Վ.Ֆ, էջ 33):*

ՀԱՐԹԱՏԱԽՏԱԿ, գ. **Մանրահատակ:** …. Ժպտում էր ժպտացող ազնվազարմ դեմքերին՝ փայլեցրած **հարթատախտակով** հյուրասենյակում…. *(Զ, էջ 190):*

ՀԱՐԿԱՀԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հարկեր կողոպտելը, յուրացնելը:** Արգենտինացին և եղեգնաձորցին պիտի կարողանան իրենց մեծ կամ փոքր բիզնեսը դնել առանց պետական **հարկահենության** ենթարկվելու *….(ԳԹ, 15.05.2015):*

ՀԱՐՄՆԱԾԻՐ, ած. (փխբ.): **Հարսանիքին արձագանքող:** Լսվում էր **հարսնածիր** լեռների հարսանյաց ծիսակարգն ազդարարող եղջերափողերի, երգասաց քրմերի և քրմուհիների ձայներգության արձագանքն հեռու….*(Անդին, թ. 9-10, 2015):*

ՀԱՐՄՆԱՓԵՇ, գ. **Հարսնազգեստի փեշը: Հարսնափեշն** երկարած աղջիկը, որ գեղեցիկն էր գեղեցկուհիների և կուսաղջիկների մեջ, ոգևորում էր պսակավորներին և շուրջը զարդարող մոմավառ ներկաներին *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՀԱՐՑԱԿԱՆՎԵԼ, բ. **Հարցականի տակ դրվել:** Աշխարհն է **հարցականվում** *(Իր., 08.07.2016):*

ՀԱՑԱԹԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաց թխելը:** Հազարամյակների ընթացքում մարդկությունը **հացաթխության** մեջ օգտագործել է ալյուր, թթխմոր, աղ և ջուր *(Իր., 12.05.2015):*

ՀԵԳՆԱԺՊՏԱԼ, բ. **Հեգնական ժպտալ:** Չէ , չի **հեգնաժպտում**, լուրջ է նեղանում *(ԳԹ,08.05.2015):*

ՀԵԼԻՈՖԻԿԱՑՆԵԼ, բ. **Արեգակնային էներգիան ջերմային կայանների օգնությամբ արդյունաբերական ու կենցաղային նպատակներով օգտագործել: Հելիոֆիկացնելով** Հայաստանն ու Ղարաբաղը, դառնալով աշխարհի առաջին հելիոֆիկացված երկիրը, ….մենք լուրջ քաղաքական դիվիդենտներ կստանանք միջազգային հանրության առաջ…. *(Իր., 07.06.2016):*

ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾԵԼ, բ. **Հելունով գործել:** Հայ ժողովրդի երբեմնի տարածքային ու հոգեգիտակցական կուռ–միասնական ամբողջականու-

թյան գաղափարն է **հելունագործել** արվեստագետուհին իր «Կենաց ծառ» ստեղծագործության մեջ *(Ազգ,22.04.2016):*

ՀԵԾԱՆՎԱԴՊՐՈՑ, գ. **Հեծանվորդների մարզադպրոց:** Արթուր Աբրահամը, նույն ինքն Ավետիք Աբրահամյանը, նախքան բռնցքամարտիկ դառնալը սովորել է **հեծանվադպրոցում**, դարձել հեծանվասպորտի Հայաստանի բազմակի չեմպիոն…. (*Ազգ, 11.03.2016):*

ՀԵԾԵԼԱՁԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Ձիուն վարժեցնել հեծյալ կրելուն:** ….Նստում էր մերկ մեջքին, մի քանի անգամ վերուվարում քարքարոտ լեռնուղիներով. **հեծելաձիության** էր վարժեցնում *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՀԵՂԵՂԱՀՈՒՇ, ած. (այստեղ՝ **Ջրհեղեղի հուշ**): Եվ ահա՝ **հեղեղահուշ**// Անձրևը փոխվում է ձյան…. *(ՀրչՍ, էջ 34):*

ՀԵՌԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեռավար բժշկություն:** Նշվեց, որ արդիականացման գործընթացի շրջանակում հիվանդանոցն ապահովվել է **հեռաբժշկության** հնարավորություններով *(ՀՀ,14.10.2015):*

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՐՑՈՒՄ, գ. **Հեռախոսով հարցում կատարելը**: Դա …. կարողացել են պարզել ԼՂ–ի ռուսալեզու համայնքի հետ **հեռախոսահարցման** միջոցով*….(Ազգ,18.12.2015):*

ՀԵՌՈՒՍՏԱԻՐԱՊԱՏՈՒՄ,գ.**Իրադարձությունների հիման վրա նկարահանված հեռուստատեսային պատմություն:** Կոտայքի մարզի Արզնի համայնքում, սեղանի շուրջ «Այո և ոչ» **հեռուստաիրապատումն** ամփոփեց նախագծի հարավային խումբը *(ՀՀ,03.12.2015):*

ՀԵՌՈՒՍՏԱԽՈՐՀՈՒՐԴ, գ. **Հեռուստատեսային խորհուրդ: Հեռուստախորհրդի** հեռուստաելույթը ենթադրում է ոչ սովորական մի իրավիճակ *(Ժամ., 11.01.2014):*

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ, գ. **Հեռուստատեսային հարցազրույց: Հեռուստահարցազրույց** տվեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը և հայտարարեց…. *(Իր., 03.05.2016):*

ՀԵՌՈՒՍՏԱՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեռուստատեսային ճամփորդություն:** Շատ հետաքրքիր ու անակնկալներով լի **հեռուստաճամփորդություն** էր սպասում մեզ *(Հմց):*

ՀԵՌՈՒՍՏԱՌԼՈՐՏ, գ. **Հեռուստատեսության բնագավառ՝ ռլորտ:** Ինչպես վկայում են **հեռուստառլորտի** տեսաբանները, …. հեռուստատեսությունն այսպիսով էականորեն մասնակցում է իրականության հանրային ընկալմանը, թեև ուղղակիորեն չի պայմանավորում այն *(Լրաբեր, 3,2016):*

ՀԵՌՈՒՍՏԱՊԱՏՈՒՄ, գ. **Հեռուստատեսային իրապատում հաղորդում:** «Այո և ոչ» **հեռուստապատումի** հյուսիսային և հարավային թևերի մասնակիցները երեկ ամփոփեցին քսանօրյա աշխատանքների արդյունքները *(ՀՀ, 03.12.2015):*

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Հեռուստատեսային և ռադիոհաղորդումների հեռարձակում:** Նրանք, օրենքի համաձայն, պետք է լինեն լրագրության, իրավագիտության, **հեռուստառադիոհեռարձակման** կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի գործիչներ *(Հրապ., 21.10.2016):*

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԲԱՆ, գ. **Հեռուստատեսային գործի տեսաբան:** Հայաստանյան **հեռուստատեսաբանները** շեշտում են հեռուստատեսության այս դերի առանձնահատուկ կարևորությունը մեր երկրի համար *(Լրաբեր, 3,2016):*

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՖԻԼՄ, գ. **Հեռուստատեսային տեսաֆիլմ:** Բաքալյանի ֆիլմագրությունը ներառում է «Դինո» և «Լավ լսիր ինձ», ….

«Տարաձայնություն» և բազմաթիվ կինոնկարներ, ինչպես նաև մի քանի տասնյակ **հեռուստատեսաֆիլմեր** *(Ազգ, 10.04.2015):*

ՀԵՏԿԵՐՈՒԽՈՒՄԱՅԻՆ, ած. **Խումհարային:** Քո **հետկերուխումայի-նը**. Ծանոթ է բառը: **Հետկերուխումային**: Բարսելոնայում մեկին գի-տեի, արտասովոր մարդ էր, պանիրը նրա **հետկերուխումայինն** էր *(Ջ, էջ 38):*

ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ, ած. **Վնասվածքին հաջորդող շրջան:** «Անա-հիտ» քսուքը նպաստում է **հետվնասվածքային տրավմաների բուժմա-նը** *(Տն. առ., թ. 6, 2014):*

ՀԵՔԻԱԹԱՊԱՏՈՒՄ, գ. **Ոչ իրական դեպքերի հյուսվածք:** Ուրեմն, հետագա տարիներին մեզ մնում է սպասել սկիզբ ու վերջ չունեցող նրա /ու նաև մեր/ կյանքի **հեքիաթապատումի** նոր դրվագներին՝ նույնքան հետաքրքիր ու անակնկալ բացահայտումներով *(ԳԹ, 05.06.2015):*

ՀԻՄՆԱՐԺԵՔ, գ. **Հիմնական արժեք:** ….Սոցիալական խմբի արժեքը ներկայացվում է իբրև **հիմնարժեք՝** ընդհանրական բնույթով…. *(Լրաբեր, 1, 2015):*

ՀՅՈՒՍԻՍԱԴՈՒՌ, գ. **Հյուսիսային դուռ:** Բերդի **Հյուսիսադուռը** ապահով չէ, Թորգոմ *(ՌԿ, էջ 72):*

ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆ, գ. **Հնէաբան-մարդաբան: Հնամարդաբան** Լերուս-Գուրանը (1911-1986) հիմնավորապես առարկեց այս դրույթին…. *(Լրա-բեր, 2,2015, էջ 379):*

ՀՆԱՐՔԱՇԱՏ, ած. **Հնարքներով հարուստ:** Նավթալյանի՝ ծանրաձո-ղերով ճարպկախաղերն ու կրկեսային **հնարքաշատ** կատարումները մեծ տպավորություն էին թողնում (*Անդին, թ. 9-10, 2015):*

ՀՆԳԱՊԱՏՈՒՄ, գ. **Հինգ մասից բաղկացած երկ:** Մահարու ինքնակենսագրական **հնգապատումն** այստեղ դեռևս դիտվում է որպես եռագրություն *(Գարուն, թ. 1-2, 2015):*

ՀՆՉԱԿԱԶՄ, գ. (լեզվբ.): **Հնչյունական կազմ:** Ըստ այդմ, լեզուն բառերի **հնչակազմի**, բառիմաստների և դրանց փոխհարաբերությունների ամբողջական համակարգ է, որ ձև ու բովանդակություն է մտածողության համար *(Անդին, թ. 1, 2015):*

ՀՆՉՅՈՒՆԱՊՏՈՒՅՏ,գ. (փխբ.): **Հնչյունախաղ:** Բանաստեղծուհին ծավալվող վերապրումների առանցքում է: Նրա մեջ ցավը **հնչյունապտույտի** վերձգությունն ու ապրումի բացարձակությունն ունի *(ԳԹ, 06.11.2015):*

ՀՆՉՈՒՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հնչողականություն, հնչողունակություն:** ....Կոմիտասը ....ուղղել է մելոդիան, հարստացրել այն, բառերի շեշտերը հարմարեցրել է երաժշտական շեշտերին, դարձրել հարազատ հայ լեզվի **հնչունականությանը** *(Ազգ,02.10.2015):*

ՀՈԳԵԳԱԼԱՐՔ, գ. **Հոգեկան տվայտանք:** ....Կիսարթուն թմրածության պահերին անպակաս էին զառանցական տեսիլները, մղձավանջային **հոգեգալարքները** *(Գարուն, թ. 7-8, 2015):*

ՀՈԳԵԳԻՏԱԿՑԱԿԱՆ, ած. **Հոգեկերտվածքին, աշխարհընկալմանը վերաբերող:** Տե՛ս ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾԵԼ-ի օրինակը:

ՀՈԳԵՂԵՆԱՑՎԵԼ, բ. **Հոգեղեն բնույթ ստանալ:** Այն անցյալի ու գալիքի միջնամասում հավերժացնում է ներկան՝ հարատևող գոյի մշտնջենական էականությունը, չմոռացվող անցյալի մտապահված, **հոգեղենացված**, գրառված անմահությունը *(ԳԹ, 09.10.2015):*

ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Աշխարհընկալում, հոգեկերտվածք:** ....Հարատևությունը մե՛նք պետք է ապահովենք՝ մեր ինքնության առանձնահատկությունները ներկայացնող մշակույթով,

հոգեմտածողությամբ, ավանդներով, ծեսերով, ծիսակարգերով.... *(ԳԹ,08.05.2015):*

ՀՈԳԵՆԿԱՐԱԳԻՐ, գ. **Հոգեկերտվածք:** Ընդգրկուն էր նրա գործունեության ծիրը, որը վկայում է հայ և լիտվացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, **հոգենկարագրի** ու մտախառնվածքի ընդհանրությունը *(ԳԹ,22.04.2016):*

ՀՈԳԵՍՈՒԶՈՒՄ, գ. **Հոգեկան ոլորտ ներթափանցելը՝ սուզվելը:** Ուրեմն եկեք խոսենք այս պատկերավոր մտածողությունից և **հոգեսուզման** կարողությունից, և ոչ թե հանգ ու վանկից, չափ ու կշռույթից *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՀՈԳՍԱԲԱՌ, մկբ. **Մտահոգ խոսքով:** Կայազորի փոքրիկ հրապարակում Յանովսկին **հոգսաբառ** դիմեց հավաքված սպաներին... *(ՌԿ, էջ 111):*

ՀՈՂԱԲՈՒՍԱԿԱՆ, ած. **Հողային և բուսական:** Ջրերի արգելափակումով կփոփոխվի մոտ 7500-10000կմ^2 տարածքի միկրոկլիման, **հողաբուսական** ծածկը…*(Անդին, թ. 1, 2015):*

ՀՈՂԱԿԻՊ, ած. **Հողին կպչող:** Հետո նա ծիծաղելիորեն հանդիսակենտրոնացած և **հողակիպ** հայացքով փռվեց թախտին ու աներազ քնով ընկավ Մորփեոսի գիրկը *(ՎՅ, էջ 104):*

ՀՈՂԱՆԿԱՐ, գ. **Նկարի տեսակ, որն արվում է հողաշերտի վրա:** Ցավոք, նրա **հողանկարներից** քիչ ունենք: **Հողանկարների** տեղափոխումը դժվար է, Մարկոսը Նյու Յորքից չբերեց այդ աշխատանքները, այստեղ պատրաստեց *(Իր., 27.05.2016):*

ՀՈՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Նկարչություն, որն արվում է որոշակի հենքի հարմարեցված հողաշերտի վրա:** Մարկոսի **հողանկարչության** մեջ կան մի քանի ուղղություններ, որ թանգարանը չի ներկայացնում, չունի *(Իր., 27.05.2016):*

ՀՈՂԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայրենի հողը պահելը, պաշտպանելը:** Մինչդեռ **հողապահպանությունն** է ազգապահպանության հենքն ու մշտնջենականության պայմանը, հետևաբար՝ հայապահպանությունն առանց **հողապահպանության** անիմաստ է *(Լրաբեր, 2,2015, էջ 136):*

ՀՈՂԱՐՎԵՍՏ, գ. **Հողի շերտի վրա արվող գեղանկարչության ձև:** Երբ պատկերագիրքն ես թերթում, նոր միայն երևում են **հողարվեստի** զարգացումները *(Իր., 27.05.2016):*

ՀՈՄԱՆԻՇՎԵԼ, բ. **Զուգորդվել՝ զուգակցվել:** Նրանց կենսագրությունները **հոմանիշվում են** ցեղասպանության հետ *(Անդին, թ. 6, 2015):*

ՀՈՍԱՐԿՈՒՄ, գ. **Տվյալների փոխանցումը հոսքով (հիմնականում ձայնի և տեսաշարի միջոցով), երբ տվյալը գրեթե ստանալուն պես ցուցադրվում է ու տեսականորեն կարող է և չպահվել:** Այս փուլին է առնչվում նաև ինտերնետային հեռարձակման հնարավորությունը, ընդ որում՝ ոչ միայն տեսագրված նյութի տեղադրման, այլ հենց **հոսարկման** (սթրիմինգի) առումով *(Լրաբեր, 3, 2016):*

ՀՈՏԱԶԵՐԾԻՉ, գ. **Տհաճ հոտերը վերացնող, հոտազրկող, հոտազրկիչ: Հոտազերծիչների** հաճախակի օգտագործումը….ճնշում է մաշկի բնական միկրոֆլորան *(TV ալիք, 13.04.2015):*

ՀՊԱՐՏԱՇՈՒՔ, ած. **Հպարտ կեցվածքով:** Տե՛ս ԱՌԱՋԱՇԱՐՔ- ի օրինակը:

ՀՐԱՀԱՆԳԱԹԵՐԹԻԿ, գ. **Օգտագործման հրահանգների թերթիկ:** Ուշադիր կարդացե՛ք և հետևե՛ք **հրահանգաթերթիկի** հրահանգներին (<Visage> ներկանյութի հրահանգաթերթիկից):

ՀՐԱՇԱԺՊԻՏ , գ. **Հրաշալի ժպիտ:** Նաթանի անունը լսելիս՝ նրա **հրաշաժպիտը** չքացավ, դեմքը խոժոռվեց *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՀՐԱՇԱԿԵՐՏՎԱԾՔ, գ. **Հրաշակերտում, հրաշակերտություն:** Տե՛ս ԻՆՔՆԱԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ-ի օրինակը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՄՈՏ, ած. **Հրապարակամերձ:** Ուշ և սառնամանիք այդ ժամին **հրապարակամոտ** շենքի պատուհանի առջև կանգնել, անշարժացել էր Արբակը *(ՌԿ, էջ 82):*

ՀՐԱՏԱՊԵՑՆԵԼ, բ. **Հրատապ դարձնել:** Նախորդ հարյուրամյակում կատարված սխալի սրբագրումը նոր հազարամյակում **հրատապեցնում** է առավել երկարաժամկետ պարտքի մարումը *(ԳԱ, թ. 4, 2009):*

ՀՈՒՄՈՐԱՇԱՂԱԽ, ած. **Հումորով շաղախված:** Թատերական 82-ամյա ընտանիքի ներկա սերնդի **հումորաշաղախ** հանդիսանքով…. նշում էին Ալեքսանդր Գրիգորյանի՝Հայաստանի միակ ռուսական թատրոնի գեղագիտական առաջնորդության 50-րդ տարեդարձը *(Ակ., 14.10.2015):*

ՀՈՒՄՈՐԱՍԵՐ, ած. **Հումոր սիրող:** Բայց **հումորասեր** այդ նախնիները երջանիկ էին, որ այդպես էլ չիմացան թե դեռ ինչե՛ր են լինելու աշխարհում *(Ակ., 16 .09.2015):*

ՀՈՒՅՍԱՐԶԱԿՈՒՄ, գ. **Հույս արձակելը, հույս տալը:** Իսկ այն հատուկենտ **հույսարձակումները,** չօդակելով ամբողջի հետ և չդառնալով շղթա, ամփոփվում են անարձագանք *(Անդին, թ. 1, 2015):*

ՀՈՒՆԱՅԻՆ, ած. **Հունին վերաբերող՝ հատուկ:** Բոլոր գետերն ունեն **հունային** մեծ թեքություն և մեծ արագություն *(Անդին, թ. 1, 2015):*

ՀՈՒՇԱԲԼՈՒՐ, գ. **Բարձունք՝ բլուր, որի վրա կառուցված են հուշարձանները:** ….Ծիծեռնակաբերդի **հուշաբլուրի** վրա ինձ հետապնդում էր Հրազդանի կամրջից բարձրացող բայքերների աղմուկ-աղաղակը *(Իր., 15.11.2016):*

ՀՈՒՇԱՇԱՏՐՎԱՆ, գ. **Որևէ իրողության հիշատակը խորհրդանշող շատրվան:** …. Կիսանդրին **հուշաշատրվանի** մոտ *(Ջ, էջ 78):*

ՀՈՒՇԱՊՈՒՐԱԿ, գ. **Որևէ մեկի կամ որևէ նշանավոր դեպքի՝ իրադարձության ևն հիշատակին ստեղծված պուրակ**: ….Օրհնվել է **հուշապուրակի** խաչքարը *(Հեռ., Հայլուր, 05.07.2016)*

ՀՈՒՍԱՆՎԱԶՈՒՄ, գ. **Հույսը նվազելը**: Գրքում հոռետեսություն չկա. ով չի անցել խավարի միջով, չգիտե արժեքը լույսի, նկատվող **հուսանվազմանն** էլ իշխում է լավատեսությունը *….(ԳԹ, 20.02.2015):*

Ձ

ՁԱԽԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Քաղաքական ձախ կողմնորոշում ունեցող:** Ինչ վերաբերում է միավորումներին, ասեմ, որ արդեն քսան տարի է, ինչ **ձախակենտրոն** ուժերին փորձում ենք միավորել *(Իր., 12.05.2015):*

ՁԱՅՆԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Ձայնագրման ժապավեն:** ….Զոհվելուց առաջ մի հրաշքով հասցրել էր **ձայնաժապավենին** հանձնել պատերազմի ընդմիջումներին գրած իր տաք տողերը*….(ԳԹ, 13.05.2016):*

ՁԱՅՆԱՎՈՐԵԼ, բ. (դիպվ.) Այստեղ՝ կենդանի ձայնով հնչյունավորել: …. Տիկնիկներին **ձայնավորում** և կենդանի շունչ են տալիս նաև գրադարանավարներ Հասմիկ Մարգարյանը և Հասմիկ Առաքելյանը *(ԳԹ, 21.10.2016):*

ՁԱՅՆՈՒՐԱՑ, ած. (փխբ.): **Երաժշտական հնչողությանը հակասող:** Եվ այսու, մի Կոմիտասը մշտապես ավելին արժե, քան բյուր հազարավոր **ձայնուրաց** աղաղակողների բանակը *(ՎՖ, էջ 238):*

ՁԱՆՁՐԱԾՈՐ, ած. **Ձանձրալի:** Ինչ խոսք, առօրյան երբեմն հոգնեցնող է, երբեմն՝ **ձանձրածոր** ու միօրինակ…. *(ԳԹ, 28.10.2016):*

ՁԵՎԱԹՈՒՂԹ, գ. **Որևէ կարգի նույնաբնույթ տվյալները լրացնելու համար նախատեսված փաստաթղթի միասնական նմուշ:**

Ուղեցույցում…. տրվում են …. առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների՝ **ձևաթղթում** լրացման կարգի բացատրությունները *(Ուղեցույց, էջ 3):*

ՁԵՎԱԾԱՎԱԼԱՅԻՆ, ած. **Ձև և ծավալ ունեցող: Ձևածավալային** գոյությունները շարժման ազդեցությամբ ենթարկվում են վերափոխումների՝ դրան հաղորդելով նոր որակ և ֆունկցիա (*Ազգ,11.03.2016):*

ՁԵՎԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, գ. **Ձևային կառուցվածք:** Գրողն ու արվեստագետը ինչի՞ց են անկախ, համենայն դեպս ոչ հազարամյակներում արմատավորված ընտիր ավանդույթներից, որոնք տարբեր **ձևակառուցվածքներով** ապրում են նաև այսօր*…. (Ազգ,25.12.2015):*

ՁԵՎԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Ձևակերտություն՝ ձևակերտելը՝ ստեղծումը:**Ներկա ազգային գերխնդիրը ձևական իշխանափոխությունը չէ, այլ հայ ցեղատեսակի ինքնության խորքերից ծնվող քաղաքակրթական համակարգի **ձևակերտումը***(Իր., 24.05.2016):*

ՁԵՎԱՉԱՓ, գ. (իմ. նորբ.): **Գործունեության շրջանակ:** Նախագիծը քննարկվել է արտախորհրդարանական **ձևաչափով***(Իր., 01.04.2016):*

ՁԵՎԱՉԱՓԱՅԻՆ, ած. **Ձևաչափին վերաբերող:** Այստեղ համակարգային խնդիր է, ոչ թե **ձևաչափային***(Ժամ., 01.11.2013):*

ՁԻԱՇԽԱՐՀ, գ. **Ձիերի աշխարհ: Ձիաշխարհն** էլ իր օրենքներն ունի *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՁԻԱՊԱՐԱՆ, գ. **Ձին կապելու պարան: Ձիապարանները** վզներին օրուկված մայրերը անզոր էին զսպել-հնազանդեցնել իրենց խենթուկներին *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՁԻԱՍԵՐՈՒՆԴ, գ. **Ձիու սերունդ: Ձիասերունդները** պիտի վերարտադրվեն. կորուստն այսկերպ պիտի վերականգնվի *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՁԻԸՆԿԵՐ, գ. **Ձիավոր ընկեր:** Երեկոյան լուսումութին ….չորս **ձիընկերները** վերադառնում էին տուն *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՁԿՆԱՐԳԵԼՔ, գ. **Ձկնորսության արգելք:** Օղին, ծովի սառը քամիները, **ձկնարգելքի** ժամանակ ոստիկանության անխիղճ հետապնդումները նրա մտքից հանել, տարել են սերը *(Անդին, թ. 6, 2015):*

ՁԿՆԿԻԹԱՅԻՆ,ած. (փխբ.): **Այստեղ՝ ձկնկիթի կաշառքով առաջ տարվող:** Ադրբեջանական **ձկնկիթային** որակված ու արդեն ճանաչում ձեռքբերած դիվանագիտությունը որքան էլ քննադատելի, բայց արդյունքներ է տալիս….(*Ազգ,13.11.2015):*

ՁԿՆԿԻԹԱՍԵՐ,գ. (փխբ., դիպվ.): **Կաշառառու:** …. «Ձկնկիթն» անգամ մթնում լույս է տալիս, եթե հաշվի առնենք, որ ԵԽԽՎ–ում ադրբեջանական ոչ բոլոր պատվիրակներն են, որ **ձկնկիթասերների** հետ կարող են անգամ հեշտ հաղորդակցվել՝ լեզվի կամ լեզուների չիմացության պատճառով *(Ազգ, 13.11.2015):*

ՁՅՈՒՆԱԴԱԼԱՐ, ած. (փխբ.): **Ձյունաճերմակ:** Իր **ձյունադալար** անկողնու մեջ է ասես ծլել այդ բողբոջուն բույսը՝ երկու ձեռքով փարված իր նորաբողբոջ ծաղկի փափկությանը*(Անդին, թ. 6, 2015):*

ՁՅՈՒՆԱԹՆՋՈՒԿ, գ. Տե՛ս ՃԱԿԱՏԱՓՈՒՆՋ-ի օրինակը:

ՁՅՈՒՆԱԿՏՈՐ, գ. **Ձյան կտոր:** Նրանք դեռ պտտում, փնտրում, վազվզում էին արնոտ **ձյունակտորների** ետևից, որ ձորաքամին տանում էր գլորելով *(ՌԿ, էջ 48):*

ՁՅՈՒՆԱՇԱՂԱԽ, գ. **Ձյունով շաղախված:** Առաջապահ Վարդանը թամբից իջեցրեց **ձյունաշաղախ** մի զանգված *(ՌԿ, էջ 46):*

ՁՅՈՒՆԱՊԱՐ, գ. (փխբ.): **Փաթիլների պար:** Օդում չընդհատվող **ձյունապարի** մեջ հանկարծ մի զիլ ձայն իջավ *(ՌԿ, էջ 42):*

ՁՆԱՔԱՄԻ, գ. **Ձյունաբեր կամ ձյունախառն քամի:** ....Նա սառը **ձնաքամուց** պաշտպանում է գաղթականներին *(ՌԿ, էջ 42):*

ՁՈՐԱՔԱՄԻ, գ. **Ձորից փչող քամի**: Տե՛ս ՁՅՈՒՆԱԿՏՈՐ- ի օրինակը:

Ճ

ՃԱԿԱՏԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Դեմ առ դեմ, ճակատ ճակատի:** Պարոդիկ ձայնը ձեռք է բերում հեգնական երանգներ ու ընթերցողին գրավելու ճանապարհին կատարելապես ներդաշնակվում է՝ ոչնչացնելով ոչ թե **ճակատայնորեն,**այլ ներքնապես՝գաղտնաբար գրավելով թիրախ-տեքստը ու դառնալով դրա համախոհը *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՃԱԿԱՏԱՓՈՒՆՋ, գ. (դիպվ.): **Ճակատի մազափունջ:** Ձիերի **ճակատափնջերից,** քթանցքների մազմզուկներից անգամ ձյունաթնջուկներ են կախվել ու խանգարում են շնչառությանը (*Անդին, թ. 9-10, 2015):*

ՃԱՀՃԱԴԵՂԻՆ, ած. **Դեղին-ճահճագույն:** Ամենուրեք **ճահճադեղին** ծաղիկներ էին ծաղկել *(ՎՅ, էջ 62):*

ՃԱՀՃԱՆՈՑ, գ. **Ճահճուտ:** Թշնամին ներքևում պիտի խճճվի, ուր երկար **ճահճանոցն** է*(ՌԿ, էջ 77):*

ՃԱՃԱՆՁԱՍՓՅՈՒՌ, ած. (փխբ.): **Ճաճանչի փայլ՝ շող ասփռող:** ....Ինքը կրկին ու կրկին կվայելի նրա զմրուխտե աչքերի **ճաճանչասփյուռ** լույսը *(Արեն, էջ 37):*

ՃԱՄԱՐՏԱԿՈՒՄ, գ. **Ճամարտակություն:** Այնքան ճղճիմ ու ծիծաղելի են այն **ճամարտակումները,** որոնք իբր թե քաղաքական արենանեբում են հնչում *(Ավ., 16.09.2015):*

ՃԱՐՊԱԿՈՒՏԱԿ, ած. **Ճարպակալած:** Ղարաբաղյան հարցի հանգուցային քննարկումներին նրա **ճարպակուտակ,** ջրակալած աչքերի ներկայությունը չարագուշակ վերջաբան էր ակնկալում *(ՇՂ, էջ 39):*

ՃԱՐՊԿԱԽԱՂ, գ. **Մարզական ճարպկություն ցուցադրող շարժում՝ խաղ:** Տե՛ս ՀՆԱՐՔԱՇԱՏ-ի օրինակը:

ՃԵՄԱՆԱՎ, գ. **Զբոսանավ**: Ճայի նման ճերմակիրան մի **ճեմանավ** ճոճվում, ցռուկը ասիական ափն էր ուղղում *(ԳԹ, 08.05.2015):*

ՃԵՊԱՊԱՏԿԵՐ, գ. **Ճեպանկար:** Տե՛ս ԵՐԿԲՈՎԱՆԴԱԿ-ի օրինակը:

ՃԵՐՄԱԿԱԴԵՂԻՆ , ած. **Դեղնաճերմակ:** Գեղեցիկ և խորհրդանշական ժամացույցը հավանաբար պատկերում է անմոռուկների հավերժությունը, նրա դեղին կաշեգոտին էլ՝ նրա հոծ գծերի **ճերմակադեղին** ռապսոդիան (*Իր., 12.05.2015):*

ՃԶՄՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճզմվածք:** Բժիշկների հավաստմամբ՝ բոլոր զոհվածների մահվան պատճառը շնչահեղձությունն ու **ճզմվածությունն** է *(Ավ., 22.07.2015):*

ՃՅՈՒՂԱԽԻՏ, ած. մկբ. **Խիտ ճյուղերով՝ ճյուղալից՝ ճյուղաշատ:** Դրա հավաստումի վառ օրինակը Հայրիկ Մուրադյանի կյանքն էր՝ արմատի զորությամբ **ճյուղախիտ** պահել ծառը *(Իր., 05.05.2015):*

ՃՇՄԱՐՏԱԴԱՎԱՆ, ած. **Ճշմարտություն դավանող:** Հասցեատերերն էլ առանձնապես չէին փայլել իրենց **ճշմարտադավան** կեցվածքով *(ՇՂ, էջ 25):*

Մ

ՄԱԳԻԼԱՇԱՏ, ած. **Մագիլավոր:** Դեմ առ դեմ երկարուկ թախտն է, որի վրա աննկատ խլրշտաց **մագիլաշատ** կատուն *(ՌԿ, էջ 85):*

ՄԱԶԱԹԵԼՈՒԿ, գ. **Թելանման մազիկ:** Տարականը երկարուկ իր **մազաթելուկներով** դա զգաց *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՄԱԶԱՔՍՈՒՔ, գ. **Մազերի քսուք:** ….Նա հանգիստ հանեց գլխարկը՝ ներշնչելով իր **մազաքսուքի** հոտը …. *(Ջ, էջ 60):*

ՄԱՄՈՆԱՀԱՃ, ած. **Փողապաշտ, փողը աստվածացնող, Մամոնային հաճոյացող:** …Մերօրյա միայն Մամոնային ծառայող գործիչներին և նրանց ավերիչ իշխանությանը ծառայող **մամոնահաճ** կուսակցություններին վստահել-չվստահելու հարցն արդեն վաղուց պատմական անցյալում է… *(Գրաշխարհ, թ. 7-9, 2015-16):*

ՄԱՅԴԱՆԱԳԵՏ, գ. (դիպվ., հեգն.): **Կինի հրապարակում՝ Մայդանում, տեղի ունեցած և նման իրադարձություններին գիտակ:** ….Հանրաճանաչ **մայդանագետ,** արևմտյան գաղափարների նվիրյալ, մեր անկախ պետականության երկրորդ վարչապետ Հրանտ Բագրատյանը…. *(Իր., 09.06.2015):*

ՄԱՆԿՈՒՐՏՎԵԼ, բ. **Մանկուրտ դարձվել, մանկուրտացվել, բռնի կերպով հիշողությունից զրկվել:** Այդ հրապարակումները բրեժնևյան ավանդակորույս տարիներին կոչված էին վառ պահել ցեղասպանության հուշը մեր **մանկուրտված** ուղեղներում *(ՇՂ, էջ 39):*

ՄԱՆՐԱԽՆԱՄ, ած. **Խնամքով՝ մանրուքների հաշվառումով: Մանրախնամ** նախապատրաստական ու բեմադրական գործընթացների առաջին խոշորագույն միջազգային նախագիծը՝ «Զույգ արեգակներ» երկու գործողությամբ բալետը հանրության դատին հանձնվեց օրերս *(Ավ., 26.06.2015):*

ՄԱՆՐԱՀԱՎԱՔ, գ. (դիպվ.): **Սակավաթիվ մասնակիցներով հանրահավաք:** «Նոր Հայաստանի» մոտ ստացվում են ոչ թե հանրահավաքներ, այլ **մանրահավաքներ***(Իրավունք, 26.01.2016):*

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՑՎԵԼ, բ. **Դարձնել մանրամասն:** Մրցույթին ներկայացված նախագիծը բոլոր առումներով պետք է լրամշակվեր, **մանրամասնեցվեր***(ՃՇ, թ. 4, 2015):*

ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Մանրաքանդակի արվեստ:** 1970-ականներից նա, առաջինը լինելով, ցուցասրահ բերեց **մանրաքանդակագործությունը** *(Իր., 29.07.2016):*

ՄԱՇՏՈՑԱՊԱՏՈՒՄ, գ. **Մաշտոցի մասին երկեր:** Ներկայացնելով հայ գրողների **Մաշտոցապատումը՝** նրանց գործերից ծաղկաքաղ է արել …. *(ԳԹ, 16.09.2016):*

ՄԱՍՍԱԿՈՂՄ, գ. **Մասիսի կողմ:** Թուրքը գալիս է նաև **Մասսակողմից** *(ՌԿ, էջ 121):*

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ, գ. **Գիրք, մատյան:** Ընթերցողներին հանրագիտարանային գիտելիքներ տվող այս **Մատենագիրքը** սկսվում է Հայոց գրի ակունքներում կանգնած Մաշտոցի աշակերտների վկայություններով *(ԳԹ, 16.09.2016):*

ՄԱՏՈՒՑԱՍԵՂԱՆ, գ. **Վաճառասեղան (սրճարանում, ճաշարանում ևն):** ….Հաղորդավարների միջով անցնելով՝ վերադարձավ **մատուցասեղանին***(Արտ.գրակ., թ. 3, 2016, էջ 74):*

ՄԱՐԳԻՆԱԼԱՊԱՏՈՒՄ, գ. **Մարգինալ մարդկանց և վիճակների մասին գրականություն:** Տե՛ս ԱՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՄԱՐԴԱԲԱԺԻՆ, գ. **Մեկ մարդու հատկացվող բաժին:** Ամբողջ օրվա ընթացքում նրանք երազում էին այն պահը, երբ տուն կհասնեն և կփռվեն իրենց մի մարդաբաժին կենսական, տախտակե տարածության վրա (*Անդին, թ. 7-8, 2015):*

ՄԱՐԴԱԲԱՆՈՐԵՆ, մկբ. **Մարդաբանական ձևով:** Անունները փնտրում ես, փնտրում ու **մարդաբանորեն** ներկայիս մարդկանց հետ առնչություն չունեցող օրգանակերպ բաներ ես տեսնում *(Հրապ.,07.05.2014):*

ՄԱՐԴԱԴԻՏԱԿ, գ. (փխբ., դիպվ.): **Մարդուն ուսումնասիրող սարք, դիտակ:** Հայտնագործում ենք տիեզերադիտակներ, փոխարենը **մարդադիտակներ** են պետք *(TV ալիք, 21.03.2016):*

ՄԱՐԴԱԽՈՐՈՎ, ած.(դիպվ.): **Մարդուն այրող:** Լույսը բացվեց։ Արևն իր ոսկեգույն ճառագայթները գցեց **մարդախորով** և վշտախորով գյուղի վրա *(Նորք,թ. 1, 2016):*

ՄԱՐԴԱՊԱՀՊԱՆ, ած. **Մարդուն պահպանող:** Ազգապահպան և **մարդապահպան** նրա գրականությունը զարմանալի և խորհրդավար իրականություն է *(ԳԹ, 16.09.2016):*

ՄԱՐԴԱՊԱՆ, գ. (դիպվ.): **Մարդուն պահպանողը:** Կարևոր չէ արդեն, որ քաղաքում միասին են արթնանում հանցագործն ու հացագործը, մարդասպանն ու **մարդապանը**, բարեպաշտն ու բարերարը։ Բանաստեղծն արթնացո՛ղ քաղաքի հնքին է միանում *(ԳԹ,12.07.2015):*

ՄԱՐԶԱԲՆԱԿ, ած. **Մարզում ապրող, բնակվող:** ….Օպերայի տոմսարկղը «պաշարում են» նաև **մարզաբնակ** երաժշտասերները *(Ավ., 23.04.2015):*

ՄԱՐՄՆԱԲՈՒՅՐ, ած. **Մարմնի բույր ունեցող**: Ձեր **մարմնաբույր** ծոցը սրբազան է, տիկի՛ն *(ՀրչՍ 2, էջ 81):*

ՄԱՐՄՆԱԲՈՒՆ, գ. (փխբ.): **Կառքի հիմնակմախքը: Մարմնաբունը** ճոճելով՝ ֆայտոնը հետուառաջ եղավ *(Ջ, էջ 76):*

ՄԱՐՄՆԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Մարզաձև:** Աշոտ Մելոյանը 1992 թվականին շատ լուրջ զբաղվում էր **մարմնակերտությամբ** (կուլտուրիզմ*) (TV ալիք, 25.11.2013):*

ՄԱՐՄՆԱՆԴԱՄ, գ. **Մարմնի մաս**:Ալիքներն անզոր հառաչում, մարդկային գանգեր, **մարմնանդամներ** էին ափ նետում: Ահաբեկվեցի, ինչքան ուժ ունեի, բղավեցի *(ԳԹ. 08.05.2015):*

ՄԵԳԱՌԻՂԵՂ, գ. **Չափազանց մեծ հնարավորություններ ունեցող ուղեղ:** Նրա գլուխն ինչպես է հիշողության դարակներով ծանրաբեռն այդ **մեգաուղեղը** պահում, զարմանալու բան է *(Ազգ, 04.03.2016):*

ՄԵԴԻԱԱԶԴԱԿ, գ. **Լրատվությամբ տրվող ազդակ՝ հաղորդում:** Այս ամենի համատեքստում ձևավորված **մեդիաազդակները** բնականաբար ունեն որոշակի ենթատեքստ…. *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. **Լրատվամիջոցներով թողարկվող տեղեկատվություն:** 1999 թվականից գործող Media. am կայքի նպատակն է Հայաստանում ստեղծել որակյալ **մեդիաարտադրանք***(Եր.համ., թ. 3, 03.2016):*

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվամիջոցներն օգտագործելու գիտելիք և հմտություն:** Արդեն մի քանի տարի է՝ կրթական, բացատրական աշխատանք է տարվում մարդկանց **մեդիագրագիտությունը** բարձրացնելու նպատակով, բայց, ցավոք, բացթողումներ կան…. *(Իր., 08.04.2016):*

ՄԵԴԻԱԴԱՍԱԳԻՐՔ, գ. **Լրատվության օրինաչափությունների ու սկզբունքների դասագիրք՝ձեռնարկ:** Պատահական չէ, որ անգլիական **մեդիադասագրքերից** մեկում Մեդիան սահմանվում է որպես լսարանի ընդհանրական գիտակցության բովանդակություն *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվամիջոցների հաղորդագրություն:** Չէ՞ որ իրադարձությունները, որ ներկայացվում են հասարակական, քաղաքական և այլ կառույցները, առկա խնդիրները, որոնց շուրջ կառուցվում են մեդիահաղորդագրությունները, իրական են *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվամիջոցների փոխհարաբերություն:** Դասընթացի ընթացքում բանախոսն անդրադարձավ **մեդիահարաբերություններին՝** մատնանշելով այն հիմնական գործոններն ու

առաջնային անելիքները, որոնք կապահովեն ԶԼՄ-ի արդյունավետ աշխատանքը *(Եր. համ., թ.3, 03.2016):*

ՄԵԴԻԱՇՈՒԿԱ, գ. **Լրատվամիջոցների շուկա:** Ինտերնետի արագության բարելավման հետևանքով ընդլայնվում են **մեդիաշուկան** և աշխարհագրությունը *(Լրաբեր, 3, 2016):* Դասավանդում են **մեդիաշուկայի** լավագույն մասնագետները *(Հեռ., գովազդ, 22.07.2016):*

ՄԵԴԻԱՍՊԱՌՈՂ, գ. **Լրատվամիջոցների ծառայության հասցեատերը: Մեդիասպառողին** (հասարակությանը) ձեռնտու չէ առանձնապես ծանրաբեռնվել նման խնդիրներով *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ, գ. **Լրատվամիջոցների դրսևորած վերաբերմունքը:** ….Վերաբերմունքը այդ անձանց և իրողություններին, որպես կանոն, ուղիղ համեմատական է առավել տարածված **մեդիավերաբերմունքին***(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՏԱՐԱԾՔ, գ. **Լրատվամիջոցների գործունեության ոլորտ:** ….Մենք առօրյայում հաղորդակցվում ենք **մեդիատարածքից** մեզ հասած հաղորդագրությունների, դրանց սահմանած օրակարգի, թեմաների, արժեքների, պատկերացումների համատեքստում *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՏԵՍԱԿ, գ. **Լրատվության դրսևորման ձև:** Իրականից խիստ տարբեր հասարակության պատկեր ներկայացնող **մեդիատեսակը** պարզապես չի ունենա լսարան, նրան չեն հավատա *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԴԻԱՕՂԱԿ, գ. **Լրատվության շղթայի մի օղակը:** Սակայն այդ շղթայի **մեդիաօղակը** այնքան էլ պարզունակ չէ. ցանկացած արդիական թեմա, բոլոր իրադարձությունները ոչ միայն լուսաբանվում են, այլև կառուցվում՝ ըստ կառուցողների պատկերացումների, նրանց մատուցման ձևի, ընտրած ժանրի *(Լրաբեր, 1, 2015):*

ՄԵԿԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Մենիմաստություն:** Որ շաղկապը խիստ ծանրաբեռնված է, իսկ լեզուն ձգտում է **մեկիմաստության** առավելապես շարահյուսական մակարդակում *(Հրապ., 30.01.2014):*

ՄԵՂՄԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Մեղմ, հազիվ նկատելի:** Ինքն իրեն կորցրել ու չի գտնում նաև մարդկանց դեմքին հանկարծ ծաղկող **մեղմակորույս** ժպիտը *(ՎՖ, էջ 117):*

ՄԵՂՄԱՆԿԱՏ, ած. **Նրբանկատ:** Գնահատանքի, ճանաչման, սիրո, ժպիտի և անգամ **մեղմանկատ** կատակի երանգներով էր շաղախված մթնոլորտը…. *(Եր. համ., 05,2016):*

ՄԵՂՐԱՀԱՄԵՄՈՒՆՔ, գ. **Մեղրով համեմունք:** Ծովատառեխի տաք կարկանդակներ, ….**մեղրահամեմունքներ**, վարդի մուրաբա, նուշի թխվածք, փշահաղարջով լցոնված աղավնիներ, շաքարած արմտիք *(Ջ, էջ 170):*

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Մենաշնորհային դառնալը:** Այն բերում է իշխանության **մենաշնորհայնացման**, քանի որ դրանով խիստ մեծացվում են վարչապետի իրավասությունները *(Իրավունք, 21.07.2015):*

ՄԵՍԻՋԱՎՈՐԵԼ, բ. **Քննարկելով հաղորդել, գլխի գցել:** ….Իրենց պրոտեժե Զարուհի Փոստանջյանի միջոցով **մեսիջավորում** են….*(Իր., 13.05.2016):*

ՄԵՐԿԱԶԳԵՍՏ, գ. Տե՛ս ԵՐԿՆԱՓԵՇ-ի օրինակը:

ՄԹԱԳՆԱՆՔ, գ. **Մթագնում:** Հենց ուղեղային **մթագնանքով** //Կուլ գնաց մի օր Բորեաս հողմին…. *(ՀրՍ, էջ 27):*

ՄԻԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Համախոհ՝ միակարծիք լինելը:** Այո, միաբանության և **միախոհության** պակասն էր, որ մեզ հետ այդ բանը պատահեց (*Անդին, թ. 7-8, 2015):*

ՄԻԱԿԵՐՊԱՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Նույն կերպը՝ բնույթը ունենալը: Միակերպարայնությունը**, միևնույն կերպարի տարամեկնությունները՝ որպես ժողովրդի տառապանքի ընդհանրական խտացում, հաջորդաբար միմյանց շարունակող տրամադրությունների շղթան աղետի համամարդկային բնույթն են ընդգծում*….(Ազգ, 20.11.2015):*

ՄԻԱՄՆԱՅՈՒՄ, գ. **Միասնականացում:** ՈՒշադրության առնելով ժամանակակից աշխարհի տնտեսական շրջափոխության հակվածությունը, այսինքն՝ համընդհանուր չքավորության և կենսամակարդակի **միասնացման** միտումը, Դոստոևսկու երևույթը կարելի է համարել մարգարեական *(TVալիք,05.10.2015):*

ՄԻԼԻԱՐԴԱՏԻՐՈՒՀԻ, գ. **Կին միլիարդատեր,** նաև՝ **միլիարդատիրոջ կին:** Գալիս էին ծերացած **միլիարդատիրուհիներ** *(ՎՐ, էջ 397):*

ՄԻՋԳԱՂԹԱՎԱՅՐԱՅԻՆ,ած. **Գաղթավայրերի միջև եղած:** Սա ցույց է տալիս, որ Նոր Ջուղան **միջգաղթավայրային** կարևոր նշանակություն է ունեցել *(ՀՀ, 01.03.2016):*

ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ, ած. **Մեկից ավելի կրոնների:** Քաղաքական բարձրակետը Վաշինգտոնի ազգային տաճարում Հայոց ցեղասպանությանը նվիրված **միջկրոնական** աղոթքն էր *(Իր., 12.05.2015):*

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Մշակույթների միջև առկա:** Նելլի Խաչատրյանի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է. ռուսաց լեզու, թարգմանչական գործ…. լեզվամշակութաբանություն, **միջմշակութային** հաղորդակցում *(ԳԹ,04.12.2015):*

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ,գ. **Տեքստերի միջև առկա կապ:** Անշուշտ **միջտեքստայնությունն** արտահայտում է անցյալի առկայությունը ներկայի մեջ…. *(ԳԹ, 08.04.2016):*

ՄԿՆԱՍՊԱՆ, ած. **Մկներ ոչնչացնող:** Նա …. **մկնասպան** պատրաստուկ է գնել՝ մկնդեղ՝ կրծողների դեմ պայքարելու անվան տակ (*Անդին, թ. 1, 2015):*

ՄԿՐԱՏԱՊՈՉ, ած. **Մկրատի նման պոչ ունեցող**: Ես լոտոսի թերթին իջա՝ որպես // Աստծո երանելի թափահարվող՝ //**Մկրատապոչ**թիթեռ կամ էլ բզեզ *(ԳԹ, 29.0.5.2015):*

ՄԿՐԱՏՈՒՄ, գ. (փխբ.): **Մկրատելը:** …. Իշխանությունները …. մասնատում են քաղաքական դաշտը, մտածելով՝ ինչքան շատ թեկնածուներ լինեն Գյումրիում, …. այնքան լավ իշխանությունների համար: Այդ **մկրատումներից** է նաև Վահան Բաբայանի ռեֆորմիստական կուսակցությունը…. *(Իր., 17.06.2016):*

ՄՇԱԿՈՒԹԱԿԵՐՊ, գ. **Մշակույթի գոյաձև:** Ազգը իրական, բարձրագույն իմաստով **Մշակութակերպը** երևակող էլիտան է (*Անդին, թ. 1, 2015):*

ՄՇԱԿՈՒԹԱ-ՈՐԿՈՐԱՅԻՆ, ած. (դիպվ., հեգն.): **Հանրային սննդի կենտրոնի վերասերված մշակութային կենտրոն:** Ներկայացվեց վերին օղակներից մեկի փառահեղ մտադրությունը. «Թումանյան» թանգարանը դարձնել **մշակութա-որկորային** կենտրոն, որը էապես կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, քանի որ այն լուրջ գայթակղություն կկրի յուր մեջ *(Իր., 05.06.2015):*

ՄՇԱԿՈՒԹԱՊԱՇՏ, ած. **Մշակույթ պաշտող:** ….Մենք մշակութասեր, **մշակութապաշտ,** մշակութաստեղծ ազգ ենք…. *(ԳԹ, 18.11.2016):*

ՄՇԱԿՈՒԹԱՊԻՂԾ, ած. **Մշակույթ պղծող:** Իսկ ինչ անուն տալ մշակութային այն ջարդին, թալանին, **մշակութապիղծ** արարքին, որ թույլ ենք տալիս մենք մեր իսկ ձեռքով ստեղծած արժեքների նկատմամբ *(ԳԹ, 18.11.2016):*

ՄՇԱԿՈՒԹԱՍԵՐ, ած. **Մշակույթ սիրող:** Տե՛ս ՄՇԱԿՈՒԹԱՊԱՇՏ-ի օրինակը:

ՄՇԱԿՈՒԹԱՏԵՆՉ, ած. **Մշակույթ տենչացող, մշակույթի ձգտող:** ….Իր **մշակութատենչ** քաղաքականության մասին ոգևորված շարունակեց խոսել ֆինանսների նախարարը *(Հրապ., 18.11.2016):*

ՄՇՏԱՈՒՂԵԿԻՑ, ած. **Միշտ ուղեկցող:** Գաղթականը նաև կլոր մեջք ունի՝ **մշտաուղեկից** , ողորմելի մի կապոց՝ աստծո նվիրած գիշերը վրան նստած անցկացնելու համար *(ՌԿ, էջ 42):*

ՄՈԼՈՐԱԲԵՐ, ած. **Մոլորեցնող:** Ապականության զորությունն է **մոլորաբեր**, և առաքինության խաչը՝ ծանր (*Անդին, թ. 1, 2015):*

ՄՈԾԱԿԱԿԱԼ, գ. **Մոծակներից պաշտպանող ցանց:** ….Լեռնանցքում **մոծակակալները** հանեցին,ձեռնոցները՝ նույնպես, արև ու ջերմություն զգացին *(ՎԱ, էջ 65):*

ՄՈՄԱՎԱՌ, մկբ. **Մոմեր վառած**: Բազմությունը **մոմավառ** ուղեկցում էր սայլերին բարձած մի քանի նախշերի *(ՀՇ, թ. 4, 2015):*

ՄՈՆՈԷԹՆԻԿ,ած. **Նույն ազգի մարդկանցով բնակեցված:** Հայաստանը դեռ խորհրդային տարիներին **մոնոէթնիկ** հանրապետություն էր….(*Ազգ, 18.12.2015):*

ՄՈՐԵԽԱՊԱՐՍ,գ. **Մորեխների խումբ՝ պարս**: Եվ **մորեխապարսի** բնազդով լույսի դեմը բռնում ու խավարասերի բնազդն էր փառաբանում (*ԳԹ, 05.02.2016):*

ՄՏԱԿԱԹՈՑՔ, գ. **Մտատանջանք:** Ծայր չունեցող ու բարեպաշտությունից հեռու գիշերը տեղյակ չէ հարյուրյակներով կրկնվող կոխկռտված կողերի ցավից և ուղեղը կտցահարող **մտակաթոցքից** *(TV ալիք, 17.08.2015):*

ՄՏԱՀԱՅԵՑՈՒՄ, գ. **Խորհրդածություն, մտահայեցողություն:** Նաթան քրմապետն այդ մասին տեղեկացրել է **մտահայեցման** ժամանակ *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՄՏԱՀԵՆՔ, գ. **Մտածելակերպ:** Ինձ, անկեղծ ասեմ, ուղղակի հիասթափեցրել էր այն գավառական **մտահենքը,** որ իշխող էր դարձել պանդոկների և վաճառատների ինտերիերները ձևավորելիս.... *(Իր., 17.06.2016):*

ՄՏՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Մտրուկ լինելը:** Կարևորը վազում էր, իր տարերքի մեջ է, **մտրուկության** խենթ գրգիռներն էր հիշում (*Անդին, թ. 9-10, 2015):*

ՄՏՔԱՏԵՐ, գ. **Տվյալ մտքի տերը:** Այդպես մտածելը, անմեղսունակ լինի **մտքատերը**, մեղսավոր՝ ստույգ թշնամություն է, ճորտի թշնամություն *(Հրապ., 04.11.2014):*

ՄՐԳԱՇԱՂԱԽ, գ. **Մրգաբույր:** Երեկոյան ժամերը, աղջիկները՝ շաղաթաթախ **մրգաշաղախի** մեջ *(Ջ, էջ 59):*

Յ

ՅՈԹՆԱՀՈՆ, ած. Այստեղ՝ **յոթնագույն:** Հարդագողի ճամփան, մորթվող աքաղաղի կեսկատար կանչը **յոթնահոն** ծիածանի խորքում.... *(ՎՖ, էջ 10):*

ՅՈԹՆԱՇԵՐՏ, գ. **Յոթ շերտ ունեցող:** Ըստ էության «երկնային ցուլը արարելուց հետո Արարիչն արարեց **յոթնաշերտ,** զմրուխտյա-բյուրեղյա ակնաքարը, և դրեց Ցուլի ոտքերի տակ, որպես հենարան» *(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՅՈԹՓԱԿԱՆԻ, ած. **Յոթ փակ ունեցող:** Ինչ էր նախապատրաստվում, ո՞վ կարող էր բացել Կրեմլի նենգության **յոթփականի** թակարդները *(ՇՂ, էջ 112):*

ՅՈՒՂԱՇԵՐՏ,գ. **Յուղի շերտ:** Բա սրա յուղի շերտերը, սրա թևատակերի գունդ–գունդ սալերը, բդերի կուտակ–կուտակ **յուղաշերտերը**.... *(Նորք, թ. 1, 2016)*:

Ն

ՆԱԽԱԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ, գ. **Զուգավորմանը նախորդող վիճակ:** Արջերի այս ֆլիրտը,**նախազուգավորման** այս հիացնող սիրախաղը դեռ օրեր պիտի տևի *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Նախաձեռնող լինելը:** Շատ բան է կախված հենց արտադրողի **նախաձեռնողականությունից**, խելամիտ ու ճշգրիտ գործելակերպից, նախանձախնդրությունից *(ՀՀ, 03.03.2016):*

ՆԱԽԱՏԵՂ, գ. **Նախնական տեղ:** Հողն ասես կաթկթում է նրա մատներից, նրա մարմինը ձգում, տանում է **նախատեղ** *(Հրապ., 08.11.2014):*

ՆԱԽԱՏԵՔՍՏ, գ. **Նախնական տեքստ: Նախատեքստի** տիպաբանական ձևերն առավել կայուն են *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՆԱՀԱՏԱԿԵԼԻ, ած. **Նահատակության ենթակա:** Նրանք շտապեցին միանալ այնտեղ սպասող խուժանին, որպեսզի չլինի թե **նահատակելի** հոծ զանգվածից փրկվի թեկուզ մի շյուղ կամ մի բեկոր *(ՌԿ, էջ 63):*

ՆԱՎԱԿԱՅԱՐԱՆ, գ. **Նավակայան:** «Ակադեմիա» **նավակայարանում** նստեցինք «Վապորետոն» արագընթաց նավակը *(ՎՐ, էջ 130):*

ՆԱՐԴՈՍԱԳՈՒՅՆ, ած. **Նարդոսի գույն ունեցող:** .... Պարի դպրոցի պրոֆեսորը՝ մետաքսե գլխարկով, մետաքսե երեսպատ կապտամոխրագույն սերթուկով, սպիտակ փողկապով, **նարդոսագույն** նեղ

շալվարով, վառ դեղին ձեռնամաններով…. հանդիսավոր քայլով անցավ…. *(Ջ, էջ 187):*

ՆԱՐՆՋԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Դեղինի երանգով նարնջագույն:** Խմիչքը **նարնջադեղնավուն** երանգ ունի *(Իր., 10.12.2015):*

ՆԵՐԱՄԲԻՈՆԱՅԻՆ, ած. **Ամբիոնի ներսի:** Ավելի ուշ իմացանք, թե ինչպես Բորիս Դադամյանին խանգարելու, նյարդերը գրգռելու համար անընդհատ թարթել են **ներամբիոնային** կարմիր, դեղին լույսերը *(ՇՂ, էջ 157):*

ՆԵՐՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ած. **Ներհայեցական, մտազննական:** Հայկականի պարագայում հայ վերապրողի պատումը **ներհայեցողական** է, արտաքին աշխարհի ճանաչման ձևաչափում չընդունված, չտեղադրված….*(Ազգ, 12.06.2015):*

ՆԵՐՀԱՐԴԱՐԱՆՔ, գ. **Ներքին հարդարանք:** …. Իր անշուք վարձու բնակարանի ու մեքենաների նորոգման արհեստանոցի աղմկոտ **ներհարդարանքի** ֆոնին պատմում է այդ վազքի տառապագին մանրամասները *(Իր., 03.06.2016):*

ՆԵՐՄՏԱՎՈՐ, ած. **Բառիմաստի ներսը թափանցող:** Դրանք մեկ առ մեկ մեր միտքը տանում են բառիմաստների **ներմտավոր** հայեցումների *(Անդին, թ. 2, 2015):*

ՆԵՐՍՏԵՂԾԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Ստեղծաբանական ներքին շերտեր շոշափող:** Արդի մեկ այլ բանաստեղծի պարագային այս կարգի հարցադրումը թերևս անբնական դիտվեր, սակայն Հովի. Գրիգորյանի պոեզիայի ընթացքն ուղղակի պարտադրում է առանձնացնել **ներստեղծաբանական** շրջափուլեր *(ԳԹ, 18.09.2015):*

ՆԵՐՔՆԱՏԱՐ, ած. **Դեպի ներաշխարհ տանող:** …. Նրա տաղերի **ներքնատար** ընթացքները ու շարժումների արարչական մուտացիանները *(Իր., 29.04.2016):*

ՆԿԱՏԱՌԵԼ, բ. **Նկատառում անել, դիտարկել: Նկատառենք,** որ հնարավոր է հաճելին համընկնի օգտակարի հետ *(Իր., 26.06.2015):*

ՆԿԱՐԱՊԱՏՈՒՄ, գ. **Նկարներով ստեղծված պատում, երկ:** Սա նույնպես կարելի է համարել **նկարապատումի** հիմնական գաղափարը *(Ազգ, 20.11.2015):*

ՆՄԱՆԱԿԵՂԾՈՒՄ, գ. **Կեղծ՝ ձևային ընդօրինակում, նմանեցնում:** Իշխող կուսակցության բեմականացված ջանքերը, իբր, կառավարության ձևավորման համար արվում է հնարավորը, ի սկզբանե հուշում էին, որ ամենը **նմանակեղծում է** և ուրիշ ոչինչ.... *(ԳԹ, 04.09.2015):*

ՆՅԱՐԴԱԿԵՐ, ած. **Նյարդեր քայքայող:** Պարոն Շահնազարյանը ճիշտ է վարվել, որ լքել է այնպիսի **նյարդակեր** ոլորտը, ինչպիսին քաղաքականությունն է*(Իրավունք, 21.06.2016):*

ՆՇԽԱՐԱԲՈՒՅՐ, ած. **Նշխարի բույր ունեցող:** .... Դու ապրողներիս թողեցիր քո հետագիծը՝բանաստեղծական սկուտեղին դնելով **նշխարաբույր** հացդ՝ ընդդեմ հոգու քաղցի.... *(ԳԹ, 15.04.2016):*

ՆՈՐԱԲՈՐԲՈՔ, ած. **Նոր բորբոքվող: Նորաբորբոք** զգացմունքով նա ժպտաց խոհանոցի լուսամուտին *(Ջ, էջ 57):*

ՆՈՐԱԳԻՐ, գ.(իմ.նորբ.): **Նոր անդամագրված անձ:** Պատճառն այս անգամ ոչ թե ՌԱԿ հանրապետական վարչության նիստն էր, ...այլ մի խումբ **նորագիրների** երդմնակալության արարողությունը *(Ազգ,25.03.2016):*

ՆՈՐԱՁԵՎԱՐԱՐ, գ. **Նորաձևությամբ զբաղվող մասնագետ:** Խոդիկյանի կին հերոսները երևան են հանում իրենց կանացիության ներքին բնորոշ հատկանիշները՝ ասես ականջ դնելով քսաներորդ դարի հոչակավոր **նորաձևարար** Կոկո Շանելի կարծիքին.... (*Ազգ,25.12.2015):*

ՆՈՐԵԿՈՒՀԻ, գ. **Նորեկ կին:** Ակնդետ հետևող պոլսեցի **նորեկուհին** չարագուշակ բնազդի դրդմամբ ոտքի ելավ *(ՌԿ, էջ 96):*

ՆՊԱՏԱԿԱԾԻՐ, գ. **Նպատակին հասնելու ուղի:** Անդունդի եզրով քայլողի ամեն մի շարժում սրտի զարկ է, որը որոշակի **նպատակածիրում** ձևավորված մարդու գոյության իմաստն է, կյանքը *(ԳԹ, 20.02.2015):*

ՆՊԱՏԱԿԱՄՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Նպատակամղված լինելը, նպատակամղում:** Երիտասարդությանը քաղաքում պահելու **նպատակամղվածությամբ** իրականացվելու է «Խելացի քաղաք» նախագիծը *(Ավ., 14.10.2015):*

ՆՈՒՆԱՏՈՆ, գ. **Նռան տոն:** Տե՛ս ԴԵՂՁԱՏՈՆ-ի օրինակը:

ՆՐԲԱՀԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Նրբազգացություն, նրբանկատություն**: Բնածին **նրբահայացությունից** նա այդ հարցին չպատասխանեց *(ԼԱ, էջ4):*

ՆՐԲԱՄԵԾԱՐ, ած. **Նուրբ և քաղաքավարի:** Տարաբնույթ մտքերը խառնվում են Տաճարում շարունակվող հարսնահանդեսի և Արքայազնի **նրբամեծար** զգացմունքներից ծնվող մտորումների շուրջ *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՆՐԲԱՇԱՂ, ած. Նա ոսկեզօծ գլխազարդ արքայանշանը ձեռքին խաղում էր խատուտիկների և հովտաշուշանների **նրբաշաղ** թերթիկների հետ *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՆՈՒՅՆԱԽՈՐՀՈՒՐԴ, ած., մկբ. **Նույն խորհուրդն ունեցող:** Հայոց պատկերագրական արվեստի վաղնջական այս շերտն իր թեմաներով, տեսակներով և ոճերով հարատևել է ժամանակի մեջ՝ նույնակերպ ու հաճախ **նույնախորհուրդ** դրսևորվելով խեցեղեն և բրոնզե իրերի պատկերագրման մեջ, քանդակի ու ճարտարապետության մեջ, կնիքի,

դրամի ու տառերի նկարվածքում, տարազի ու գորգի զարդերում …. *(ՊԲՀ, 2, 2016, էջ 197):*

Շ

ՇԱԲԱԹԱԳԻՐՔ, գ. **Պարբերաբար տպվող գիրք:** Մտահղացումը մեր համահեղինակությամբ հրատարակած «Լույս» և«Ում համար ես վառվում լույս»… **շաբաթագրքի** տպագրությունից հետո ծնվեց *(Ակ., 14.10.2015):*

ՇԱՀԱՌԱՏ, ած. **Շահ ստանալուն միտված:** Տե՛ս ԴՐԱՄԱԳԱՐ-ի օրինակը:

ՇԱՆԹԱՑԻՐ,գ. **Շանթանետ:** …. Որ մեր մեկ տանկի, հրանոթի, ինքնաթիռի, **շանթացիրի** և այլ զենքերի ու զինտեխնիկայի դիմաց հակառակորդն ունի եռակի ու քառակի շատ *(ԳԹ,13.05.2016):*

ՇԱՊԿԱՇԱՐ, գ. **Շապիկների շարք:** Նրա վավաշոտ հայացքը զբաղված էր անցնող հերթական բարեմասնություններ ձևավորող, եղեգնյա **շապկաշարի** մեջ տեղավորված գեղեցկուհուն *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՇԱՐԱՎԱԳՈՒՅՆ, ած. **Թարախագույն: Շարավագույն** բծերով խլրտուն ձագ-տարականները ծծում են բանականությանս խխունջախեցու միջի հյութալի ծուծքը *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՇԱՐԺԱԿԱՌՔ, գ. **Փոխադրամիջոց**: ….Մենք ունենք սարքին վիճակում գտնվող **շարժակառք**, որը կանգնած է առանց վարորդի *(Ժող., 11.02.2015):*

ՇԱՔԱՐԱԲԵԿՈՐ, գ. **Շաքարի բեկոր:** ….Բերանը դնելով **շաքարաբեկորը՝** սկսեց խմել թեյը փոքր կումերով *(Արեն, էջ 64):*

ՇԵՄԱՓԱՅՏ,գ. **Շեմքափայտ:** Սիրո **շեմափայտին** անակնկալ գայթեցի մի տարիքում, երբ, թվում էր, թե սիրո փորձությունը վաղուց պիտի շրջանցած լինեի *(ԳԹ, 20.05.2016):*

ՇԵՇՏԱՀԱՐ, ած. **Շեշտակի: Շեշտահար** աղմուկի մեջ հանկարծ պսպղացին փոքրատեսք Սիրարփի մայրիկի մանրիկ աչքերը *(ՌԿ, էջ 97):*

ՇԵՔՍՊԻՐԱՆԱԼ, բ. **Արտահայտվել Շեքսպիրի լեզվով, կրկնել Շեքսպիրին:** Եթե մի փոքր **շեքսպիրանանք**, մավրն իր գործն արեց մասամբ, ու մավրը պիտի հեռանա *(Իր., 06.05.2016):*

ՇԻԿԱԼԱՐ, գ. **Լամպի շիկացման լարը:** Ամեն մի լամպ երկու **շիկալար** ունի. եթե մեկը չի վառվում, ավտոմատ կերպով մյուսն է միանում *(TV մոլ, 07.09.2015):*

ՇԻԿԱՀԵՐՈՒՀԻ, գ. **Շիկահեր կին:** Իմ դագաղի մեջ խաղաթղթերի կապոց և համակրելի **շիկահերուհի** դրեք, մահից վայրկյաններ առաջ կատակել է կատակերգու դերասան Լեոնարդ Մարքսը *(Իր., 13.05.2015):*

ՇՆՈՐՀԱՁԵՌ, գ. **Հմուտ՝ շնորհաշատ ձեռքեր ունեցող:** Տե՛ս ԳՐՉԱՊԵՏ –ի օրինակը:

ՇՆՈՐՀԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Շնորհառու լինելը:** Եզեկիել մարգարեի գրքում կա գերբնական **շնորհառության** այսպիսի մի օրինակ…. *(ՎՖ, էջ 114):*

ՇՈԿՈԼԱԴԱԳՈՐԾ, գ. **Շոկոլադ արտադրող:** Դա բելգիացի **շոկոլադագործի** գյուտն է *(TV մոլ, 10.08.2015):*

ՇՈԿՈԼԱԴԱՆԵՏ, գ. **Շոկոլադի փոշին արտանետելու սարք:** Սա շոկոլադի փոշին ներշնչելու սարք է՝ **«Շոկոլադանետ»** *(TV մոլ, 12.08.2015):*

ՇՈՐՈՐԱՎԱՐԳ, ած., մկբ.**Շորորուն վարգով: Շորորավարգ** ձիու վրայից Անդրանիկի ողջունող և ուրախացող բազուկը թռվռաց այս ու այն կողմ՝ շրջապատի վրա *(ՌԿ, էջ 69):*

ՇՐՋԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. **Շրջանաբաժանում:** Թերևս այս ուղղությամբ կատարված միակ աշխատանքը հայկական զանգվածային

լրատվության միջոցների զարգացման փուլերի **շրջաբաժանման** մոդելի առանձնացումն է…. *(Լրաբեր, 3,2016):*

ՇՈՒՆՉԱՌ, գ. **Շունչ, դաղար առնելը:** Կարճ **շունչառից** հետո հետապնդումը վերսկսվեց *(Գարուն, թ. 5-6, 2015):*

Ո

ՈԳԵԶՐՈՒՅՑ, գ. **Մտերիմ զրույց:** Ես իմ ուսանողների հետ երբեք **ոգեզրույցների** առիթը բաց չեմ թողնում *(ՀՉ, 19.02.2015):*

ՈԳԵԹՈՒՐՄ, գ. **Բուժիչ լուծույթ (настойка):** «Էսկարդը»…. կատվախոտ, ալոճ և առյուծագի դեղաբույսերի **ոգեթուրմերի** խառնուրդ է …. *(դեղի կիրառման հրահանգից):*

ՈԼՈՐԱՍԱՆԴՈՒՂՔ, գ. **Ոլորաձև սանդուղք:** Կանգ առնելով՝ նա ներքև նայեց՝ **ոլորասանդուղքի** կիսախավարին, ու խռպոտ ձայնով կանչեց…. *(Ջ, էջ 5):*

ՈՒԽԱՑՆՈՐ, ած. **Ոխից ցնորված:** Հրու՞մ են, հրում **ոխացնոր**// Հավակնորդները նախագահի *(ՀրչU1, էջ 41):*

ՈՂՋԵՐԳ,գ. **Ջոներգ:** Նկատի ունեմ ոչ թե ժամանակակից ներբողը, որ նույնանում է մակերեսային **ողջերգի,** այլ Պինդարոսի և Հորացիոսի դասական ներբողը….*(ԳԹ, 15.04.2016):*

ՈՃՐԱԿՈՒՅՏ, գ. Այստեղ՝ **ոճրագործների խումբ:** Քանի – քանի անգամ տաճկական **ոճրակույտեր՝** նամազի արյան հոտից արբեցած՝ նետվեցին հրապարակներ *(ՌԿ, էջ 17):*

ՈՉԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Չգոյություն:** Չկա հավասարություն, չկա մրցակցություն, կա դատարկություն և **ոչկեցության** դեմ դավի մասնակիցների հանցակցություն *(Անդին, թ. 1, 2015):*

ՈՌՆԱԳԻՆ, ած. **Ռոնոցի նմանվող, ուժգին:** Ի վերջո այս պատկերը աղավաղվում է, իսկ Արտոյի **ռոնագին** հեկեկոցները հետզհետե մարում են *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՈՍԿԵԾԻՐԱՆՑԻ, գ. (դիպվ.): **«Ոսկե ծիրան» փառատոնի մասնակից:** Ապա Կարմիր գորգն ուղղորդեց **ոսկեծիրանցիներին** «Մոսկվա» կինոթատրոն՝ Կարմիր դահլիճ…. *(Իր., 11.07.2016):*

ՈՍԿՐԱԶԱՆԳՎԱԾ, գ.Այստեղ՝ **ոսկորների քաշ:** Սրտի հիվանդություններ ունեցող մարդկանց մոտ **ոսկրազանգվածի** կորստի և կոտրվածքների վտանգը 6 անգամ ավելի է, քան առողջ սիրտ ունեցողների *մոտ (Բն, թ. 9, 2015):*

ՈՍՏՐԵԱՆՄԱՆ, ած. **Ոստրեի նման: Ոստրեանման** աչքերը չի կտրում բացիկից *(Ջ, էջ 133):*

ՈՐՄՆԱՀԱՐԹԱԿ, գ. **Պատի հարթակ:** Նա արագ քայլեց **որմնահարթակով***(Ջ, էջ 10):* Սափրվելու նիկելապատ թասը, ամենքից մոռացված, շողշողում էր **որմնահարթակի** վրա *(Ջ, էջ 12):*

Չ

ՉԱՐԱԶԱՐԴ, ած. **Չարամտորեն ոչնչացնող:** Թուրքաց Տուղրիլ ասպատակեց, հետո մոնղոլը, թաթարը, հետո Օսմանիան և հիմա դարձյալ **չարաջարդ** տաճիկը *(ՌԿ, էջ 77):*

ՉԱՐՉԻԱԲԱՐՈ,ած. **Չարչուն հատուկ բարք ունեցող**: Եվ միտքս դառնում էր խրտնած նժույգ. ո՞ւր է տանում մեզ այս **չարչիաբարո** վարքը, ե՞րբ է կշտանալու որովայնի խորքից նայող այս անհագ աչքը *…. (ԳԹ, 04.02.2016):*

ՉԻՊԱՎՈՐՈՒՄ, գ. **Չիպի տեղադրումը:** ….Նույնականացման քարտերը, կենսաչափական անձնագրերը, մարդկանց **չիպավորումը** մեկ

համաշխարհային կառավարության կազմավորման նախնական քայլերն են *(Իր., 11.07.2016):*

ՉՂՋԱԹԵՎԻԿ, մկբ. (դիպվ.): **Թևերը չղջիկի պես թափահարելով:** Թռչունները թռչում են…// Չղջիկները….չղջում են,// Իսկ ավելի պարզորոշ՝ // **Չղջաթևիկ** շրջում են *(ՀՀՍ, 1, էջ 36):*

ՉՂՋԻԿԱԲԱՆ, գ. **Չղջիկների մասնագետ:** Իսկ թե ինչու մեր քաղաքից անհետ չքվեցին չղջիկները, հարցի պատասխանը դու գտար հետազոտություններից մեկում մի հայազգի **չղջիկաբանի** *(ՎՖ, էջ 127):*

ՉՐԱԳՈՐԾ, գ. **Չրագործությամբ զբաղվող մարդ:** Հայաստանյան **չրագործների** առջև Ռուսաստանն այսօր լայն դռներ է բացել *(Ազրոլրատու, 16.02.2016):*

ՉՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Չիր պատրաստելը: Չրագործությունը** Հայաստանում զարգացման միտում ունի *(Ազրոլրատու, 16.02.2016*):

Պ

ՊԱՀԱԴԱՐԱԿ, գ. **Այցելուի ձեռքի իրերը ժամանակավորապես պահելու դարակ:** Մտնելով այդտեղ և ուշադրությունը շեղելու նպատակով գնելով մի ինչ-որ մանրուք՝ նրանք **պահադարակից** հանեցին սաղավարտը…. *(Արեն, էջ 34):*

ՊԱՀԱՆՋԱՁԱՅՆ, մկբ. **Պահանջող, մի բան պարտադրող ձայնով**: Երբ հերս ու մերս էլի մենակ մնացին, մի վերջին անգամ էլ մայրս հորս կանգնեցրեց, կրկնեց, խնդրեց, որ վերադառնա, էս անգամ արդեն ոչ **պահանջաձայն***(ԳԹ, 09.10.2015):*

ՊԱՀԱՏԵՂ, գ. **Դրամատներում հաճախորդին անձնական իրերի երաշխավորված պահպանության համար տրամադրվող դարակ:** Բանկը պահպանում է անհատական **պահատեղերի** վարձակալության

և գործարքների գաղտնիությունը: Իմ **պահատեղն** իմ ապահովությունն է *(Արարատ բանկի բուկլետից):*

ՊԱՅԹՅՈՒՆԱՄԵՐՁ, ած. **Պայթելու պատրաստ:** Պաշտպանական այս պատրաստությունը հաստատում է մարզում երկու ազգերի միջև **պայթյունամերձ** վիճակը *(ՇՂ, էջ 140):*

ՊԱՇՏՈՆԱԽՈՒՄԲ, գ. **Պաշտոնյաների խումբ:** Մարդը այդ խոհերից մեկեն զգաստացավ, մտաբերեց նույն նստատեղերը, որոնց վրա ստիպմամբ բազմեց հայոց **պաշտոնախումբը***(ՌԿ, էջ 103):*

ՊԱՊԱՄՈԲԻԼ, գ. **Հռոմի պապի հատուկ ավտոմոբիլը:** Երբ Հռոմի պապի սպիտակ **պապամոբիլը** թռվռում էր Գյումրվա ճանապարհներին, ես վախենում էի, որ գերամուր մեքենան խափանվելու է *(Իր., 28.06.2016):*

ՊԱՌԱՎՈՏ, ած. **Պառավի տեսք ունեցող:** Կինը **պառավոտ** էր *(Ջ, էջ 50):*

ՊԱՌԿԱՑՈՒՅՑ, գ. **Ցույց, որ արվում է պառկած:** Սկանդալային **պառկացույցը** համընկավ Զվարթնոց օդանավակայանում ռումբի վերաբերյալ կեղծ ահազանգի հետ *(Իրավունք, 01.04.2016*):

ՊԱՏԱՆԴԱՌՈՒՄ, գ. **Պատանդ վերցնելը:** ….Հաջորդեցին թուրքական ձախողված հեղաշրջումը ուրբաթ լույս շաբաթ գիշերը և հայկականը՝ ոստիկանական գնդի **պատանդառումով***(Իր., 19.07.2016):*

ՊԱՏԵՐԱԶՄԱՊԱՏՈՒՄ,գ. **Պատերազմի մասին ստեղծագործություն(ներ):** Այս զգացումներով էր թելադրված Լևոն Խեչոյանի արցախյան **պատերազմապատումին** կրկին անդրադառնալու իմ մղումը*….(ԳԹ, 06.05.2016):*

ՊԱՏԿԵՐԱԴԱՇՏ, գ. (փխբ.): **Պատկերման ոլորտ՝ տարածք:** Նրա պոեզիան և նկարչությունը **պատկերադաշտերով** նման են *(ԳԹ, 24.07.2015):*

ՊԱՏԿԵՐԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատկերային մտածողություն:** Անվարան կարելի է ասել, որ «Գարունի» պոեզիան նորարարական **պատկերամտածողությամբ** ամուր ճանապարհ է հարթել նաև Արևշատ Ավագյանի բարի ձեռքի օգնությամբ *(ԳԹ,24.07.2015):*

ՊԱՏԿԵՐԱՌՃ, գ. **Պատկերման՝ նկարելու ոճ:** Եթե Տոնականյանը ռեալիստական **պատկերառճով** է վերարտադրել թաղամասի տեսարանները, ապա Մարկոսյանը երփնագրում է իրեն հարազատ պատկերման ընդհանրական ոճով, գրեթե իմպրեսիոնիստական թեթևությամբ *(Լրաբեր, 2, 2015, էջ 58):*

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Պատկեր ստեղծելը՝ պատկերակերտում**: …. **Պատկերաստեղծումը** ջրաներկի լեզվով այնքան էլ հեշտ չէ, սակայն գտնված նկարչական լուծումները բավարարում են արտահայտելու ներքին վիճակները *(Ազգ,19.06.2015):*

ՊԱՏՄԱՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Հրապարակագրական և պատմագիտական:** Բալաքյանի «Այրվող Տիգրիս» **պատմահրապարագիտական** գիրքը ներկայացնում է ԱՄՆ-ի վերաբերմունքը Հայոց ցեղասպանությանը *(Իր., 12.05.2015):*

ՊԱՏՄԱՍՏԵՂԾ, ած. **Պատմություն ստեղծող:** Կարող ենք ասել, որ պատերազմը **պատմաստեղծ** երևույթ է…*(Ազգ, 29.04.2016):*

ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ, ած. **Պատմական և քաղաքակրթական:** Ռուս գրողն իր տարբերակի մեջ տևակարգելէ մի ամբողջ ժամանակաշրջան՝ իր մշակութային,**պատմաքաղաքակրթական** իրավիճակներով *(ՎՖ, էջ 260):*

ՊԱՐԱԴԵՐ, գ. **Դեր պարի համար**։ Ավարտական համերգին Նադեժդան կատարեց Նիկիայի դժվարագույն **պարադերը** Լ.Մինկուսի «Բայադերկա» բալետի «Ստվերներ» պատկերում*….(Ազգ, 10.07.2015):*

ՊԱՐԶԱԿԵՑԻԿ, ած. **Պարզակենցաղ:** ….Մեզ համար սիրելի գիրքը մնում է համեստագո՛ւյնը լավագույնների մեջ, լավագո՛ւյնը համեստագույնների մեջ, ինչպես ինքը՛ վառվռուն ու **պարզակեցիկ** հեղինակ Ռոբերտ Կարայանը *(ՌԿ, էջ 10):*

ՊԵՂՈՒՄՆԱԲՐԻՉ, գ. **Պեղումներ կատարելու համար օգտագործվող բրիչ:** Մեր **պեղումնաբրիչը** հոգնել էր կարծես…*(Անդին, թ. 1, 2015):*

ՊԵՏԱԿԱՆԱԶՈՒՐԿ, ած. **Պետականությունից զուրկ**: Հավատարիմ իր նախորդ նամակի…. ոգուն, փորձելով զերծ մնալ «երբեմնի **պետականազուրկ** ազգի ավանդական մոտեցումներ»ից, ՀՀ առաջին նախագահը 13 կետերի մեջ ամփոփել է իր մոտեցումները *(Ազգ, 10.04.2015):*

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՆՏՐՈՆ, ած.**Պետականության միտված:** Տե՛ս ԹԱԳԱՎՈՐԱՄԵՏ-ի օրինակը:

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏԻՉ, ած. **Պետականություն կերտող:** ….Ազգափրկիչ և **պետականակերտիչ** գործ կարող է կատարել Հայաստանի ազատամարտի վետերանների և մտավորականության դաշինքը *(Իր., 30.06.2015):*

ՊԵՏԱԿԱՆԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Պետականությանը միտված լինելը:** ….Պատասխանատու են նրանք, որոնք իրենց մտավորական հորջորջելով, **պետականամետության** կարգախոսի քողի տակ լուծելով անձնական խնդիրները՝ շղարշ են ձևավորել վարչախմբի համար *(Ժող., 04.06.2015):*

ՊԵՏԱԿԱՆԱՇԱՀ, ած. **Պետության շահը արտահայտող:** Չհասկացան, մրցակից լինել նշանակում է կոնկրետ ծրագրերով ընդդիմանալ

իշխանության բացթողումներին, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև համագործակցել՝ **պետականաշահ** իրենց ծրագրերն իրագործելու *(Ակ., 05.08.2015):*

ՊԵՏԳԱՆՁԱԳՈՂ, գ. (հեգն.): **Պետության գանձարանից գողացող:** Ի դեպ, ինչու պետական տոների շարակարգում չավելացնել այս մեկը. Հանրապետության **պետգանձագողի** տոն *(Իր., 05.06.2015):*

ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՂԾ, ած. **Պետություն ստեղծող:** ….Հայ ժողովուրդը դադարել է զոհ լինելուց և դարձել է **պետութենաստեղծ** ժողովուրդ…. *(Լրաբեր, 2, 2015, էջ 420):*

ՊՂՆՁԱՅԱՎ, գ. (դիպվ.): **Պղնձի արդյունահանման և առևտրի շուրջ ծավալվող իրարանցում: Պղնձացավն** արդեն քանի տարի տարածվում է հանրապետությունով մեկ *(ԳԹ, 28.10.2016):*

ՊՃՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Պճնազարդ՝ պաճուճազարդ խոսք:** ….Բանաստեղծը իր խոսքը չի խճողում սուտլիկ որսորդության և անդեմ լոգիզմի **պճնախոսությամբ** *(ԳԹ, 15.04.2016*):

ՊՆԴԱԿԱՆՉ, ած. (դիպվ.): **Հզոր ձայնով կանչող:** Տե՛ս ԹԻԿՈՒՆՔՈՏ-ի օրինակը:

ՊՈՌՆՈՂՈՒՍԱՆԿԱՐ, գ. **Անառակաբարո բովանդակությամբ լուսանկար:** Մալաթիայի ոստիկանը տարածել է **պոռնոլուսանկարներ** *(Իրավունք, 21.06.2016):*

ՊՍԵՎԴՈԱԶԳԱՅԻՆ, ած. **Կեղծ ազգային:** Տե՛ս ԱՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՊՏՏԱԴՈՒՌ, գ. **Պտտվող դուռ:** Նա հրեց ապակյա **պտտադուռն** ու ներս մտավ՝ անցնելով փաթեթավորման թղթի շեղջի վրայով *(Ջ, էջ 100):*

Ջ

ՋԱՅԼԱՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ջայլամ բուծելը: Ջայլամաբուծությունը** Հայաստանում հեռանկարային բիզնես կարելի է համարել *(Հեռ.,«Արմենիա», 16.05.2016):*

ՋԱՅԼԱՄԱԲՈՒՅԾ, գ. **Ջայլամ բուծող:** Հաջողակ **ջայլամաբույծը** վարկ է վերցրել *(Հեռ.,«Արմենիա», 16.05.2016):*

ՋԱՅԼԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Իրականությունը չտեսնելու տալու, ստեղծված իրավիճակի հետ հաշվի չնստելու դիրքորոշում:** Չի ցանկանում շփվել պետական կառույցների հետ, աշխատում է խուսափել, բայց դա էլ **ջայլամություն** է *(ԳԹ, 28.10.2016):*

ՋՐԱՀԵՂԻՉ, գ. **Ջուր բաց թողնող սարք:** Պլատոնովի ղեկավարությամբ կառուցվել է 768 արհեստական լճակ, որոնց 22 տոկոսը ջրաթափերով ու **ջրահեղիչներով** *(ՎՅ, էջ 197):*

ՋՐԱՏԱՐԱԾ, ած. **Ջրածածկ տարածք:** Խեղճն ասես **ջրատարած** շամբուտների մեջ փնտրում էր զոհված ընկերոջը*(ՌԿ, էջ 123):*

ՋՐԱՓՈՇՈՏ, ած. **Ջրի փոշենման ցայտերով:** ….**Ջրափոշոտ** քամին սկզբում փափագելի թվաց *(ՌԿ, էջ15):*

ՋՐԱՔԱՄԻ, գ. **Ջրի ցայտեր բերող սարք:** Ափամոտիկ եղեգներն ասես երկար ու ձիգ քարավաններ լինեն, որոնք մթնով մոլորվել են հեղեղատի մեջ ու ցուրտ **ջրաքամուց** օգնության կանչ են արձակում *(ՌԿ, էջ 122):*

ՋՐԻՄՈՒՌԱԿԱԼԵԼ, բ. **Ջրիմուռով պատած:** Իրենց՝ ամռան տապից **ջրիմուռակալած** մարմիններն էին մաքրում աշնան արևի շողի տակ և շոյում էին մամռակալած քարերի լռությունը *(ԳԹ, 28.10.2016):*

Ռ

ՌԱԴԻՈԳՈՎԱԶԴ, գ. **Ռադիոյով հաղորդվող գովազդ:** Տե՛ս ԿԻՆՈԳՈՎԱԶԴ-ի օրինակը:

ՌԱԴԻՈՇԱՐ, գ. **Ռադիոհաղորդաշար:** Երախտագիտության մեծ զգացումով էր պատմում դերասանուհին հեռուստատեսության երախտավոր Ռուբեն Ղազարյանի մասին, որը ստեղծել էր «Բարի գիշեր» մանկական **ռադիոշարը**….*(Իր., 06.05.2016):*

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱԼԵԶՈՒ, գ. **Ռադիոյի և հեռուստատեսության լեզու:** Նորաբանությունների տարբեր ենթաշերտեր …. ամենից առաջ գործածվում են պարբերական մամուլում, **ռադիոհեռուստալեզվում** և հենց դրանց միջոցով էլ տարածվում են …. *(ՀԼԽՄ, էջ 381):*

ՌԱԶՄԱԴՐՈՒՅԹ, գ. **Ռազմական դրույթ:** ….Ամերիկացիները…. սպառնում են իրենց հավանական թշմանիներին ու առաջին հերթին Ռուսաստանին գլոբալ կայծակնային հարված հասցնելու **ռազմադրույթով**…. *(Իր., 03.06.2016):*

ՌԱԶՄԱԽԻՆԴ, ած. **Մարտական:** Տե՛ս ԹԻԿՈՒՆՔՈՏ-ի օրինակը:

ՌԱԶՄԱՀԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռազմական ավազակային գործողությունների հետևանքով թալան:** Հաշվի առնելով ԻՊ–ի վերջին շրջանի առավել ագրեսիվ գործողությունները՝ պիտի ենթադրել, որ տարածաշրջանի համարյա բոլոր երկրները **ռազմահենության** պոտենցիալ թիրախ են*(ԳԹ, 12.07.2015):*

ՌԱԶՄԱՁԱՅՆ, գ. **Ռազմի ձայն:** Մեկից տոնական կրակոցներ և **ռազմաձայներ** լսվեցին շրջապատում *(ՌԿ, էջ77):*

ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ, ած. **Ռազմական և մարզական, ռազմակրթանքային:** Արայի լեռան վրա Տիգրանը ստեղծել էր **ռազմամարզական** բազա *(Հմց):*

ՌԱԶՄԱՊԱՏՄԱԿԱՆ, ած. **Ռազմական պատմությանը վերաբերող:** Կատարենք **ռազմապատմական** էքսկուրս (*Ազգ, 29.04.2016):*

ՌԵՎԵՐԱՆՍԱՅԻՆ, ած. (փխբ.): **Ծեքծեքուն:** Ամփոփիչ հոչակագրի նախագծում տեղ են գտել բավական **ռևերանսային** ձևակերպումներ Ադրբեջանի հասցեին *(Ժամ., 01.11.2013):*

ՌՈՒՍԱՀՐԵԱ, գ. **Ռուսաստանում ապրող հրեա:** Իսրայելի առաջնորդները, մասնավորապես ներկայիս վարչապետ Բենիամին Նեթանյահուն, ամեն անգամ այցելելով Մոսկվա, պարտադիր հրապարակայնորեն հանդիպում են **ռուսահրեա** համայնքի ներկայացուցիչների հետ *(Իր., 15.11.2016):*

Ս

ՍԱԿԱՎԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ած. **Քիչ բյուջե ունեցող:** Նա չի բացառել իր անհատույց մասնակցությունը որևէ **սակավաբյուջետային,** բայց լավ ֆիլմում *(TV մոլ, 26.10.2015):*

ՍԱԿԱՎԱԶՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Քիչ ջուր ունենալը:** Հովիկ Աբրահամյանը նշեց էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հարցում ատոմակայանի վերանորոգման, փոխարժեքի բարձրացման և **սակավաջրության** հիմնավորումները *(Իր.,, 26.06.2015):*

ՍԱԿԱՐԿԱՐԱՆ, գ. **Սակարան:** Տե՛ս ԳՆԱԹՌԻՉՔ- ի օրինակը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՊԱՇՏ, ած.**Սահմանադրությունը պաշտող:** Առայժմ ունենք այն, ինչ ունենք, ու այնպես չէ, որ մենք ազգովին **սահմանադրապաշտ** ենք դարձել*….(Ազգ,18.12.2015):*

ՍԱՅԼԱԾԱԾԿ, գ. **Սայլի բեռը փակող ծածկոց:** Զորավարը ընթացքի ժամանակ սրի ծայրով ետ տարավ **սայլածածկը***(ՌԿ, էջ 59):*

ՍԱՆՁԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. (փխբ.): **Կառավարման լծակ:** …. Նրանց ձեռքին էին իր և իր երկրի բախտի **սանձահանգույցները** *(Գարուն,թ. 7-8, 2015):*

ՍԱՌՅԱԶԵՐԾ, ած. **Սառույցից զերծ, առանց սառույցի**: ….Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի կենտրոնը մինչև օրս ծածկված է հաստ սառցաշերտով, ճիշտ է, այն սկսել է հալչել, և երկրների տարածքային ջրերից դուրս ի հայտ են եկել **սառցազերծ** գոտիներ *(Ազգ, 17.04.2015):*

ՍԱՌՅԱԽԻՏ, ած. **Սառույցները խիտ, խիտ սառույցներով պատված, մեջը շատ սառույց ունեցող:** Գարնան հալոցքի **սառցախիտ** հոսք:

ՍԱՌՅԱԾԱՅՐ, գ. **Սառույցի ծայրը՝ եզրը՝ կողը: Սառցածայրին** մի բան շարժվեց *(թարգմ.):*

ՍԱՌՅԱԿԵՐՏԵԼ, բ. 1. **Սառույցից կերտել՝ շինել՝ կառուցել:** 2 (փխբ.): **Սառեցնելով կերտել՝ ստեղծել: Սառցակերտել** էր ձմեռը հեքիաթն իր կապույտ…. *(մամուլ):*

ՍԱՌՅԱՀԱԼՈՑՔ, գ. **Սառույցի հալոցք:** Դրանք մշտապես վերականգնվում են անձրևների, ձնհալների և **սառցահալոցքների** ժամանակ *(Ա.Մելքումյան):*

ՍԱՌՅԱՆՎԱԳ, գ. (փխբ.): **Ջարդվող կամ բախվող սառույցների հանած ձայնը:** Ինջեց աստիճանաբար մարող **սառցանվագի** հնչյունների տակ *(թարգմ.):*

ՍԱՌՅԱՆՑՔԱՇԱՂԱՓ, գ. (տեխ.): **Սառցանցք բացելու շաղափ**: Սառույցը ահավոր կարծր էր, և **սառցանցքաշաղափը** չէր խորանում *(թարգմ.):*

ՍԱՌՑԱՇԻԼԱ, գ. (փխբ.): **Մանր սառցակտորներով խառն ջրային զանգված: Սառցաշիլայից** մեկ-մեկ վեր էր բարձրանում գերանի ծայրը *(թարգմ.):*

ՍԱՌՑԱՍԱՍՏ, ած. **Սառույցից սաստված: Սառցասաստ** երեխաները կուչ էին եկել լաստակի անկյունում *(թարգմ.):*

ՍԱՌՑԱՍՏՎԵՐ, 1. ած. **Սառույցի ստվերի նման ստվեր ունեցող**: 2. գ. **Սառցակտորի՝ սառցասարիևն ստվեր**: **Սառցաստվերի** տակ մտած նավակում ցուրտ էր *(թարգմ.):*

ՍԱՌՑԱՎԱԽ, ած. **Սառույց(ներ)ից վախեցող:** Կոնծածների մեջ **սառցավախ** չկար՝ սլացան դեպի սառցածակերը *(թարգմ.):*

ՍԱՌՑԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Սառույցի արտադրողականություն, միավոր ժամանակահատվածում արտադրված սառույցի քանակը:** Կոմբինատը բաց է թողնում իր **սառցարտադրողականության** ընդամենը տասը տոկոսը *(մամուլ):*

ՍԱՌՑԱՌԻՍ, գ. (փխբ.): **Լեռան սառած՝ սառցապատ ուս՝ լանջ:** Խարիսխը սա էր բիբլիական ափի՝ մխրճված լեռան սուրբ **սառցաուսին***(Ս.Եղիազարյան):*

ՍԱՌՑԱՓԱՅԼ, ած., մկբ.**Սառույցի փայլ ունեցող, սառույցի նման փայլող, սառույցի փայլով: Սառցափայլ** առկայծում էին պատուհանները *(թարգմ.):*

ՍԱՌՑՈՒՅԹ, գ. **Սառցածածկույթ:** Հավերժական **սառցույթում** պահպանվել են ոչ միայն այդ կենդանիների կմախքները, այլև մկանները, կաշին ու բուրդը *(TV մոլ, 20.07.2015):*

ՍԱՏԱՆԱՅԱՆԵՆԳ, ած. **Չարանենգ:** Իրականում մենք **սատանայանենգ** ու խավարային որոգայթներ հղացողներն էինք *(ՇՂ, էջ 60):*

ՍԱՐԱԴԻՐ, ած. **Սարալանջերին տարածված: Սարադիր** հանդամաս *(Զ.Խալափյան):*

ՍԱՐԱԿԱՊ, գ. **Սարերը իրար կապող՝ սարերի լանջերը իրար միացնող ցածրադիր տարածքը,լեռնանցք**: Ուղիղ անցնել չենք կարողանա, **սարակապը** պիտի գտնենք *(թարգմ.):*

ՍԱՐԱՇՂԹԱ, գ. **Լեռնաշղթա:** Առջևում նույն համատարած անտառն էր, սարերի կատարները և **սարաշղթաները** *(թարգմ.):*

ՍԱՐՈՅԱՆԱԲՈՒՅՐ, ած. (փխբ., դիպվ.): **Սարոյանին հիշեցնող:** Ամեն, ամեն ինչ այս մենատանը շնչում և ապրում է Սարոյանով և **սարոյանաբույր** է*….(Ազգ, 08.05.2015):*

ՍԱՐՈՅԱՆՈՏ, ած. (դիպվ.): **Վիլյամ Սարոյանին հիշեցնող:** Ամեն ինչ այդտեղ **սարոյանոտ** է՝ դռան առջևի իր ձեռքով տնկած դեղձենիները, Ֆրեզնոյի լեռներից բերած քարաբեկորը…. *(Ազգ, 08.05.2015):*

ՍԱՐՍԱՓԱԼԵՅՈՒՆ, ած. **Սարսափալի, սարսափալից:** Մանկական **սարսսափալեցուն** աչքեր *(մամուլ):*

ՍԱՐՍԱՓԱԽԵՆԹ, ած. **Սարսափից խենթացած, խենթանալու չափ սարսսափած**: Մատղաշ անասունների **սարսսափախենթ** վազք *(թարգմ.):*

ՍԱՐՍԱՓԱՓԱԽ, ած. **Սարսսափով փախչող: Սարսսափափախ** երամակը մոտենում էր անհատակ անդունդի եզրին *(թարգմ.):*

ՍԱՐՍՌԱՐԿՈՒ, ած. **Սարսուռ գցող՝ ազդող՝ պատճառող, սարսռազդու:** Միջանցքից լսվեց հարբած հոր **սարսռարկու** գոռգոռոցը *(թարգմ.):*

ՍԱՓՐԻՉՈՒՀԻ, գ. **Կին սափրիչ:** Խանդում էր նրան իր կնոջ՝ սիրուն ու կոտրատվող **սափրիչուհու** պատճառով *(թարգմ.):*

ՍԳԱԼԻՈՐԵՆ, մկբ. **Սգալի կերպով: Սգալիորեն** շառագունած այդ թուխպը մեծացնում էր աստղը *(թարգմ.):*

ՍԳԱԼՈՒՐ, 1. ած. **Վշտալուր, տխուր:** 2. գ. (հզվդ.): **Սգո լուր**: Սգալուրը հարևան գյուղն էր հասել կեսգիշերին *(թարգմ.):*

ՍԳԱԽԱՆՁ, ած. **Սգից՝ խոր վշտից խանձված՝ տանջված, վշտախանձ: Սգախանձ** քույրերը կուչ էին եկել՝ մի բուռ դարձել *(մամուլ):*

ՍԳԱՍԵՆՅԱԿ, գ. **Այն սենյակը, որտեղ դրված է հանգուցյալի դագաղը, սգալու սենյակ:** Այնպիսի քրքիջ բարձրացավ, որ ստիպված հեռացա նրանցից և վերադարձա **սգասենյակ***(թարգմ.):*

ՍԳԱՔՈՂ, գ. **Ի նշան սգո երեսին գցվող սև գույնի քող՝ շղարշ: Սգաքողով** տարեց կին *(թարգմ.):*

ՍԳԵՐԻՁ, գ. **Իբրև սգո նշան՝ սև գույնի երիզ, որ կպցվում է սգապսակներին, շորի կրծքամասին,փաթաթվում թևին ևն:** Հաճախում էր բոլոր թաղումներին, **սգերիզները** հավաքում *(թարգմ.):*

ՍԵԼԱՎԱՏԱՐ, ած.**Սելավի ցեխային և ցեխաքարային հոսքն իր մեջ առնելով տանող՝ հեռացնող,սելավորսիչ: Սելավատար** կառույց:

ՍԵԼԱՎՈՐՍԻՉ, ած., գ. **Սելավի հոսքը որսացող՝ կանգնեցնող կամ այլ կողմ ուղղող:** Սելավաբեր հուների վրա կառուցում են **սելավորսիչներ,** ամբարտակներ ու ավազաններ *(Հր.Գաբրիելյան):*

ՍԵՂԱՆԱՇԱՏ, ած. **Շատ սեղաններ ունեցող, որտեղ շատ սեղաններ են դրված; Սեղանաշատ** ճաշասրահում մի զույգ էր նստած, այն էլ՝ հեռու կիսամութ անկյունում *(թարգմ.):*

ՍԵՂԱՆԱՊԵՏԱՑՈՒ, գ., ած. **Սեղանապետի՝ խնջույքի կառավարիչի, թամադայի թեկնածու:** Բացի Հարոլդից գավառում ոչ մի հարմար **սեղանապետացու** չկա: - Հարոլդ, մատաղ, շաբաթ օրը Վռամիս հարսանիքն է, պիտի կառավարես *(Խ.Գյուլնազարյան):*

ՍԵՂԱՆԱՍԱԼ, գ. **Որպես սեղան՝ վրան բան դնելու համար ծառայող սալ:** Ներս եկավ…., մի վառված մոմ դրեց բուխարու **սեղանասալի** վրա և գնաց *(թարգմ.):*

ՍԵՂԱՆԱՎՈՐՈՒՄ, գ. 1. **Սեղանավորելը, սեղանավորվելը:** 2. **Սեղանավորություն. մանր առևտրով զբաղվելը:** Հասարակության որոշ, ըստ որում նկատի ունեցեք նաև բարձրագույն կրթությամբ, խավերի **սեղանավորումը** անկասելի գործընթաց է դարձել *(մամուլ):*

ՍԵՂԱՆԱՏԱԿ, գ. **Սեղանի տակ՝ ներքևում, սեղանի ոտքերի արանքում՝ միջև**: Քնում էին **սեղանատակին** գցված կարպետի վրա *(մամուլ):*

ՍԵՂԱՆԱՏԵՐ, գ. **Փողոցային մանր առևտրի համար սեղանի՝ սեղանիկի տեր, մանր առևտրական:** Թաղայինը **սեղանատերերից** «հարկը»առավոտյան է հավաքում, «էնտեղ», ինչպես ինքն էր ասում, հասցնելու համար *(մամուլ):*

ՍԵՂԱՆԵՐԵՍ, գ. 1. **Սեղանի երեսը՝ ոտների վրա դրվող հարթ մասը:** Անկյունում խառնիխուռն թափվածքին ջարդրտված **սեղաներեսներ՝** փայտից, թիթեղյա ….*(թարգմ.):* 2. **Սեղանի հարթակի վերևի մակերեսը: Սեղաներեսին** ինչ-որ անուն էր քերված …*(մամուլ):*

ՍԵՂԱՆԵՐԵՑ, գ. **Սեղանապետ, հացերեց:** Այդպիսիք եղել են լավ ասացողներ, գյուղի, միջավայրի համուհոտը խտացնող հեղինակություններ, խնջույքները կառավարող և միշտ էլ վերևում նստած սեղանապետեր (կարելի է ասել նաև **սեղաներեց**)*(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՍԵՌԱՀԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեռապես հասուն լինելը:** Ազգապահպանման տեսանկյունից խիստ կարևոր է **սեռահասության** տարիքի անձանց սեռական և վերարտադրողական առողջության պահպանումը *(Իր., 12.05.2015):*

ՍԵՌԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեռերի իրավահավասարություն, գենդերային հավասարություն:** Արևմտյան չափանիշներով նա կարող է նույնիսկ **սեռահավասարության** պահանջ ներկայացնել*(Ազ., 07.02.2015):*

ՍԵՌԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ,գ.**Սեռական մոլուցք:** ....Մեր սայթիչները հյուսեցին և վերահյուսեցին իրենց էկզոտիկ պատմությունները մեր բարձրաստիճան եկեղեցականների և ազգային ամենահարգելի բարերարների մասին, նրանց մեղադրեցին **սեռամոլության,** համասեռամոլության, մանկապղծության և մահացու այլ մեղքերի մեջ *(Ազգ, 01.04.2016):*

ՍԵՎԱԹԱՂԻՔ, ած. **Սև գույնի թաղիքով պատված:** Կենտրոնում **սևաթաղիք** վրանն էր՝ սուրսայր գագաթին ինչ-որ դրոշանման լաթով *(թարգմ.):*

ՍԵՎԱԽԻՏ, ած. **Սև ու խիտ: Սևախիտ** մազերը իրիկնային հովին տված *(ՄԿ):*

ՍԵՎԱԾԱՄ, ած. **Սև ծամեր ունեցող՝ ծամերով, ծամերը սև:** Ուռենու տակ, իմ **սևածամ,** լուռ լալիս եմ ու թախծում *(մամուլ):*

ՍԵՎԱԿՈՒՏԱԿ, ած. 1. **Սև՝ գորշ՝ մութ կուտակ կազմած՝ կազմելով:** 2. մկբ. **Սև՝ չար՝ վատ մտադրությամբ, չարակուտակ: Սևակուտակ** հավաքվում էր բազմությունը *(թարգմ.):*

ՍԵՎԱՇԻԿԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Սևին տվող՝ մուգ շիկակարմրավուն: Սևաշիկակարմրավուն** մորուք:

ՍԵՎԱՍՊԻՏԱԿ, ած. **Սև և սպիտակ (շերտերով՝ զոլերով ևն):** ....Կապիկների **սևասպիտակ** մորթուց կարված ձեռնամուշտակներ *(թարգմ.):*

ՍԵՎԱՐՆԱԳՈՒՅՆ, ած. 1. **Սևարյան գույնի**: 2. **Սևին տվող՝ մուգ արնագույն:** Նրանց սուր կոկորդային ճիչերը տարածվում էին գետի **սևարնագույն** ալիքների վրա *(թարգմ.):*

ՍԵՐՆԴԱԿՑՈՒՀԻ, գ. **Սերնդակից կին:** ….Իր շատ **սերնդակցուհիների** նման ստվերում չէր մնա….*(թարգմ.):*

ՍԵՐՏԱՃԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Սերտաճած լինելը:** …. Գործարար պատգամավորների գոյությունն Ազգային ժողովում խոսում է Հայաստանում քաղաքականության ու բիզնեսի **սերտաճածության մասին** *(Ժող., 30.09.2015):*

ՍԻՐԱՀԱՃԵԼ, բ. **Հաճոյանալ:** Սպասում ես մինչև քեզ **սիրահաճեն՝** նվաճեն *(Ջ, էջ 178):*

ՍԻՐԱՆՈՒՐԲ, ած. **Նուրբ և սիրելի:** Ներա առաջին գթառատ **սիրանուրբ** պաշտելի բառը *(Ջ, էջ 232):*

ՍԻՐԱՌՂՈՂ, ած. **Սիրով ողողված:** Մաղթում եմ քեզ **սիրառողող** առողջություն…. *(Իր., 08.07.2016):*

ՍԻՐԱՎԵՃ, գ. **Սիրո վեճ:** Տե՛ս ԵՐԳԻԾԱՆԻ-ի օրինակը:

ՍԻՐԻԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Սիրիական դառնալը:** Թուրքիան կմնա **սիրիականացման** վտանգի առաջ *(Իրավունք, 30.10.2015):*

ՍԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Անարհեստավարժություն:** Տագնապ հնչեց, թե մեր միակ օպերային թատրոնը գլորվում է **սիրողականության** անդունդը *(Ազ., 28.05.2015):*

ՍՅՈՒՆԱԿԱԽԱՂ, գ. **Մանկական խաղ:** Նա տեսավ **սյունակախաղով** տարված ցատկոտող աղջնակի պես վազելով փախչող ութսունամյա հավաքարարուհուն *(ՎՖ, էջ 139):*

ՍՈՂՆԱՇՂԹԱ, գ. **Պայուսակի եզրերը միացնող շղթա, ագուցաշղթա**: Պայուսակը **սողնաշղթայով** փակեց և հանգիստ դուրս եկավ *(Անդին, 9-10, էջ 53):*

ՍՈՄՆՁԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Սոսնձով պատված ժապավեն**: Ուրեմն, մնում է լռես, ապահովության համար **սոսնձաժապավենով** փակես բերանդ և անձայն ուրախանաս, որ օդաչափիչներ առայժմ չեն տեղադրվելու …. *(ԳԹ, 12.07.2015):*

ՍՈՎԱՍՊԱՆԴ, գ. **Սովի միջոցով մարդկանց միտումնավոր ոչնչացնելը:** …. Հայաստանը պաշտոնապես ճանաչի Ուկրաինայում ստալինյան ռեժիմի կողմից 1932-33թթ. կազմակերպված **սովասպանդը** *(ԳԹ, 28.10.2016):*

ՍՊԱՅԱԶԳԵՍՏ, գ. **Սպայական հանդերձանք՝ զգեստ:** Մուրադը…. մոտիկ շարքերի մեջ նկատեց Արբակին, որը չգիտես ինչու, երկու ձեռքով կառչել էր Միսաքի **սպայազգեստի** օձիքից *(ՌԿ, էջ 83):*

ՍՊԱՅԱԺՈՂՈՎ, գ. **Սպաների հավաք:** Արբակը ցածրամիտ համարեց գիշերային ինքնակամ իր այցը հայոց **սպայաժողով***(ՌԿ, էջ 82):*

ՍՊԱՅԱՏԵՍՔ, ած. **Սպայի տեսք ունեցող: Սպայատեսք** եկվորներից մեկն անհամբեր հարվածեց տարեց ու թևատ մի գաղթականի *(ՌԿ, էջ 129):*

ՍՊԱՍԱԴԱՀԼԻՃ, գ. **Սպասասրահ:** Ոհմակը շրջապատում էր **սպասադահլիճը***(ԼԱ, էջ 15):*

ՍՊԱՍԱԶԳԵՍՏԱՎՈՐ, ած.**Սպասարկման համազգեստ կրող:** …. **Սպասազգեստավոր** բեռնակիրը բարձրացրեց լիտերով նշված գլխարկը…. *(Ջ, էջ 99):*

ՍՊԻՏԱԿՈՍԿԻ, ած. **Սպիտակ ոսկեգույն:** Նրա աչքերն օրեցօր ավելի էին պայծառանում, աճեցին առաջին մազերը, **սպիտակոսկի** աղվամազը *(ՎՅ, էջ 68):*

ՍՏԵՂՆԱՀԱՐ, գ. **Ստեղնաշարային գործիքներ նվագող երաժիշտ:** «Ժողովուրդ»-ը….զրուցել է երաժիշտ, երաժշտագետ, «Empyray» խմբի **ստեղնահար** Գիսանե Պալյանի հետ *(Ժող., 14.03.2015):*

ՍՏՎԱՐԱՎԵՊ, գ. **Հաստափոր վեպ:** Բաց արեք Հրաչյա Քոչարի «Մեծ տան զավակները» **ստվարավեպը***(Գարուն, թ. 11-12, 2015):*

ՍՏՎԵՐԱԹԱՓԵԼ, բ. (տնտգ.): **Ստվերից հանել, բերել հարկային դաշտ:** Տե՛ս ԿՈՌՈՒՄՊԱՋԵՐԾԵԼ-ի օրինակը:

ՍՐՃԱՀԱՄ, ած. (փխբ.): **Սրճաբույր:** Իսկ սրճատան ծխում օդը **սրճահամ է**// Ու քայլերիս նման երերուն է մի քիչ *(ՀրՍ 2, էջ 10):*

ՍՐՏՆԵՂՈՒԿ, ած. **Սրտնեղիչ:** Ներսում **սրտնեղուկ** ծուխ էր *(ՌԿ, էջ 25):*

ՍՈՒՐԾԱՅՐ, ած. **Սուր ծայր ունեցող:** Ադրբեջանցի մոտ հարյուր հոգի կացիններով ու **սուրծայր** երկաթներով «Ազատություն Սումգայիթի հերոսներին» ու «թող կորչեն հայերը» վանկարկելով ներխուժում են խուտոր *(Ակ., 12.03.2015):*

ՍՓՅՈՒՌՔԱԳԵՏ, գ. **Սփյուռքագիտության հարցերով զբաղվող մասնագետ:** Ամերիկահայ **սփյուռքագետ** Խաչիկ Թոլոյանը առաջիններից էր, որ քննության առավ Սփյուռքի նշանակությունը և բազմազանությունը ժամանակակից աշխարհում…. *(Լրաբեր, 2, 2015, էջ 191):*

ՍՓՅՈՒՌՔԱՊԱՀՊԱՆ, ած. **Սփյուռքը պահպանող:** Թեպետ սփյուռքացման հետևանքով Հայրենիքը երբեմն դադարում է գոյություն ունենալ, այնուամենայնիվ, շարունակում է մնալ **սփյուռքապահպան** կարևոր գործոն *(Լրաբեր, 2, 2015, էջ 193):*

ՍՓՅՈՒՌՔԱՊԱՏՈՒՄ, գ. **Սփյուռքի թեմայով երկերի ամբողջությունը:** ....Կոմիտասի անվան պանթեոնում կկայանա Սիլվա Կապուտիկյանին նվիրված պոեզիայի ավանդական տոնը՝ նվիրված կապուտիկյանական **սփյուռքապատումին** *(ԳԹ, 23.09.2016):*

ՍՓՅՈՒՌՔՅԻ, գ. **Սփյուռքաբնակ հայ:** Նոր առաջացող սփյուռքի անդամների կողմից իրենց հայրենիքի հետ սերտ կապեր պահպանելու հիմնական պատճառներն են .... տնտեսական գործոնը, որը կանխարգելում է **սփյուռքցիների** ամբողջական ինտեգրումն ընդունող երկրում.... *(Լրաբեր, 2, 2015, էջ 192):*

Վ

ՎԱԳՈՆԱԲԵՌ, գ. **Վագոնի բեռ, վագոնին բեռնած՝ վագոնի մեջ լցված բեռ: Վագոնաբեռը** կիսով չափ պակասել էր .... *(թարգմ.):*

ՎԱԳՈՆԱԿՄԱԽՔ, գ. **Վագոնի կմախք: Վագոնակմախքի** ծռմռված ձողերին ինչ-որ՝ շատ ուտելուց հազիվ շարժվող գիշակերներ էին թառել *(թարգմ.):*

ՎԱԳՈՆԱԿՑՈՂ, գ. **Վագոնակցում կատարող երկաթուղային՝ վարպետ:** Գեղգեղում էին .... **վագոնակցողների** գրպանի սուլիչները *(թարգմ.):*

ՎԱԳՈՆԱԿՈՒՅՏ, գ. **Վագոնների կույտ:** Ռմբակոծությունից հետո կայարանի հրապարակը **վագոնակույտի** էր վերածվել *(թարգմ.):*

ՎԱԳՈՆԱՁԵՎ, ած. **Վագոնի ձև՝ տեսք ունեցող, վագոնանման: Վագոնաձև** տնակներ:

ՎԱԳՈՆԱՆՄԱՆ, ած. **Վագոնի նմանվող, վագոնաձև:** Երկրաբանների երեխաների **վագոնանման** ճամբար *(մամուլ):*

ՎԱԳՈՆԱՏԻՊ, ած. **Վագոնաձև, վագոնանման: Վագոնատիպ** վանդակ:

ՎԱԳՐԱՃԻՐԱՆ, գ. **Վագրի ճիրանների նման ճիրան ունեցող:** Ու ննջեց քաղցը, որ **վագրաճիրան** իր թաթերի մեջ դեռ սիրտն էր ծամում *(ՀՇ):*

ՎԱԳՐԱՆՄԱՆ, ած. **Վագրի (կամ վագրի որևէ բանի) նման՝ նմանող՝ նմանություն տվող:** Աչքերը դեղին էին, **վագրանման***(թարգմ.):*

ՎԱՁՔԱԹԱՓ, գ. **Վազքի թափ՝ արագություն:** .... Ամբողջ իրանի շարժումով, ասես պատրաստվելով **վազքաթափ** առնել, դոկտորին հրավիրեց մասնակցելու ....*(թարգմ.):*

ՎԱՁՔԱՊԱՀ, գ. **Վազելու պահը՝ ժամանակահատվածը՝ ընթացքի տևողությունը:** Սրընթաց **վազքապահին** ատրճանակի մի կրակոցով փշուր-փշուր արեց .... թասը *(թարգմ.):*

ՎԱՁՔՈՒՆԱԿ, ած. **Վազքի ունակ, վազել կարողացող, վազելու համար մարզված: Վազքունակ** ձի:

ՎԱԽԱՇԱՏ, ած. **Վախով լի:** Մանրիկ բոցերը հանդարտ տարուբերվում են՝ ասես տնազելով նստածներից շատերի հայացքները՝ **վախաշատ** և խռովալի *(ՌԿ, էջ 118):*

ՎԱԽՃԱՆԵՐԳԱԿ, ած. **Վախճանը՝ վերջը երգող:** Սիրտս՝ սիրո **վախճաներգակ,** բայց անեղծ է իմ հոգին *(ՀՇ):*

ՎԱՀԱԳՆԱՆԱԼ, չբ. (բնստ.): **Վահագն՝ աստվածային դառնալ:** Աստղիկ լինես՝ **վահագնանամ** իմ սիրով *(ՀՇ):*

ՎԱՀԱԳՆԱՊԱՐԳԵՎ, ած. **Վահագնատուր:** Օ՜, **վահագնապարգև** արև.... *(մամուլ):*

ՎԱՀԱՆԱՇԵՐՏ, գ. **Վահանների շերտ, շերտ կազմող վահանների շարք:** Խոյացուլերի երկու եղջյուրները աչքերի վերևի մասում ընդհանուր **վահանաշերտերով** միացած են իրար *(թարգմ.):*

ՎԱՀՐԱՄԱՔՈՒՐ, ած. **Վահրից մաքուր, վահրը՝ թարախը, մաքրած, վահր չեղած: Վահրամաքուր** վերքը պատում էր ինչ-որ մածուկով ….*(թարգմ.):*

ՎԱՂԱԲԱԲԱԽ, ած. **Շուտ բաբախող, ամեն առիթով հուզվող, ամեն ինչի արձագանքող**: Աստված տվել էր նրան **վաղաբաբախ** մի սիրտ, հոգատար, ամենահաս …. *(մամուլ):*

ՎԱՂԱԲԱՇԽ, ած. **Վաղ բաշխված՝ բաժանված: Վաղաբաշխ** օգնություն:

ՎԱՂԱԲԱՐՁ, ած. **Վաղ՝ բնականից շուտ բարձի արժանացած՝ ամուսնացած: Վաղաբարձ** հարսը առաջին երեխայի վրա հոգին աստծուն ավանդեց *(թարգմ.):*

ՎԱՂԱԳԱՂԹ, ած. **Շուտ՝ վաղուց գաղթած: Վաղագաղթ** փախստականներին մի կերպ տեղավորել էին…. *(մամուլ):*

ՎԱՂԱԳՅՈՒՏ, ած. **Վաղուց գտնված՝ հայտնաբերված՝ հայտնագործված: Վաղագյուտ** ճշմարտություններ:

ՎԱՂԱԳՈՉ, 1. ած. **Վաղ գոչող՝ կանչող՝ երգող: Վաղագոչ** թռչուններ: 2. գ. (հզվդ.): **Առավոտը շուտ՝կանուխ հնչող գոչ՝ կանչ:** Արթնացավ անասունը հանդ տանող հարևանի զիլ **վաղագոչից** *(մամուլ):*

ՎԱՂԱԳՐԳԻՌ, ած. 1. **Շուտ գրգռող՝ ներազդող: Վաղագրգիռ** թուրմ: 2. **Շուտ՝ արագ գրգռվող:**

ՎԱՂԱԳՈՒՅԺ, գ. **Անժամանակ՝ վաղաժամ գույժ՝ բոթ**: Յոթերորդ օրը…. ստացանք մահվան՝ սպանելու **վաղագույժը***(մամուլ):*

ՎԱՂԱԴԱՅԼԱՅԼ, ած. **Վաղ՝ կանուխ դայլայլող՝ երգող՝ գեղգեղող: Վաղադայլայլ** սոխակ:

ՎԱՂԱԴԱՐՁ, ած. **Շուտ՝ արագ՝ ժամկետից կանուխ դարձած՝ վերադարձած: Վաղադարձ** որսորդներ:

ՎԱՂԱԴԺԲԱԽՏ, ած. 1. **Շուտ դժբախտացած: Վաղադժբախտ** որբ երեխաներ: 2. (հզվդ.): **Վաղուց՝հնուց՝ երկար ժամանակ դժբախտ՝ դժբախտության մեջ գտնվող՝ ընկած: Վաղադժբախտ** այրին սրա-նրա լվացքը անելով որբերին պահեց մեծացրեց *(մամուլ):*

ՎԱՂԱԴՅՈՒԹ, ած. **Շուտ դյութող՝ գրավող՝ առինքնող**: Քաղաք էր.... Անմիջապես ընկավ մի **վաղադյութ** փողոցայինի ճանկը *(թարգմ.):*

ՎԱՂԱԶԱՐԴ, ած. **Վաղ զարդարված (կանաչած, ծաղկած ևն): Վաղազարդ** բնություն: **Վաղազարդ** եղրևանի:

ՎԱՂԱԶՐՈՒՅՑ, 1. գ. **Հին՝ հինավուրց զրույց՝ պատմություն: Վաղազրույց** ավանդավեպ: 2. ած. **Վաղուց՝ հնուց պատմվող՝ զրուցվող:**

ՎԱՂԱԶՈՒՍՊ, ած.**Արագ՝ կանուխ զսպված:** Հեղեղի **վաղազուսպ** հորձանքը մղվեց օժանդակ ջրատարների մեջ *(մամուլ):*

ՎԱՂԱԹԱՓ, ած. **Շուտ՝ բնականից կանուխ թափված՝ թափվող: Վաղաթափ** տերևներ՝ պտուղներ: **Վաղաթափ** մազեր:

ՎԱՂԱԹՈՎ, ած. **Շուտ՝ արագ թռվող՝ գրավող**: Թռվռան ու **վաղաթով** կրակ-աղջիկ էիր, խաբվեցի .... *(մամուլ):*

ՎԱՂԱԹՐԹԻՌ, ած. **Ժամանակից շուտ թրթռացող, զգայուն: Վաղաթրթիռ** սիրտ:

ՎԱՂԱԹԵՎ, ած. **Շուտ՝ կանուխ՝ արագ թևած՝ թռած՝ հեռացած: Վաղաթև** իմ սեր, ինձ ու՞մ թողեցիր .... *(մամուլ):*

ՎԱՂԱԼԵՐԿ, ած. **Ժամանակից շուտ լերկացած՝ մերկացած՝ ծածկույթից զրկված: Վաղալերկ** գանգ: Շոգից **վաղալերկ** գորշավուն դաշտեր:

ՎԱՂԱԼՔՅԱԼ, ած. **Վաղուց լքված**: Գաղթականների **վաղալքյալ** կայարանները կիսավեր էին *(մամուլ):*

ՎԱՂԱԽԱԲ, ած. **Շուտ խաբ(վ)ող**: Գարնան **վաղախաբ** նշաններ: ….**Վաղախաբ** մեղուները բզզում էին արկանոցի երևում *(մամուլ):*

ՎԱՂԱԽԱԽՏ, ած. **Վաղուց խախտված:** Վերականգնել **վաղախախտ** հավատը ղեկավարների նկատմամբ *(մամուլ):*

ՎԱՂԱԽԱԾ, ած. **Վաղուց խածված՝ կծված՝ խայթված: Վաղախած** ձեռքը խոնավ օրերին մզզացնում էր *(թարգմ.):*

ՎԱՂԱԽԱՅԹ, ած. Նույնն է՝ **Վաղախած: Վաղախայթ** վերքի սպի:

ՎԱՂԱԽԱՉ, ած. 1.**Վաղուց խաչված՝ տառապանքներ՝ չարչարանքներ կրած: Վաղախաչ** մի ժողովուրդ, որ մեր մեղքն էլ չենք իմանում ….*(մամուլ):* 2. **Վաղուց խաչը որպես պաշտամունքի առարկա պաշտող՝ քրիստոնյա: Վաղախաչ** Հայաստանում մի եկեղեցի էլ կառուցվեց *(մամուլ):*

ՎԱՂԱԽԵՂԴ, ած. 1. **Վաղուց խեղդված՝ խեղդվելով մահացած:** Ձկնորսի **վաղախեղդ** դիակը ալիքները ափ չէին շպրտում *(թարգմ.):* 2. (փխբ.): **Վաղուց խեղդված՝ ձայնը կտրած՝ լռած՝ չբողոքող,բողոքի ձայն չհանող: Վաղախեղդ** լեզուն բացվել էր հանկարծ *(թարգմ.):*

ՎԱՂԱԽՈԽՈՋ, ած. **Ժամանակից շուտ՝ վաղ խոխոջող**: Ձնհալի **վաղախոխոջ** առվակների երգը *(մամուլ):*

ՎԱՂԱԽՈՂԽՈՂ, ած. **Վաղուց խողխողված՝ խոցոտված՝ խոր վերքեր ստացած: Վաղախողխող** սիրտ:

ՎԱՂԱԽՈՏՈՐ, ած. **Վաղուց խոտորված՝ ուղիղ ճանապարհից շեղված: Վաղախոտոր** պաշտոնյա:

ՎԱՂԱԾԱԳ, ած. **Շուտ՝ կանուխ ծագած: Վաղածագ** արև:

ՎԱՂԱԾԱԾԿ, ած. **Վաղուց ծածկված, փխբ. ապաքինված՝ բուժված: Վաղածածկ** վերքեր:

ՎԱՂԱԾՈՒՓ, ած. **Ժամանակից առաջ, սովորականից ավելի շուտ ծփացող:** Սիրո **վաղածուփ** ալիքներ:

ՎԱՂԱԿԱԹ, ած. **Վաղուց, վաղուցվանից կաթող: Վաղակաթ** տանիքը նորոգման էր սպասում *(թարգմ.):*

ՎԱՂԱԿԱՐԳ, ած. 1. **Վաղուց կարգավորված: Վաղակարգ** սովորություն: 2. **Վաղուց կարգված՝պաշտոն՝ պարտականություն կատարելու դրված՝ հանձնարարություն ստացած: Վաղակարգ** հարկահավաք:

ՎԱՂԱԿԵԶ, ած. 1. **Շուտ՝ կանուխ կիզող՝ այրող:** Ամռան **վաղակեզ** արև: 2. **Վաղուց կիզված՝խանձված՝ տոչորված**: Խորշակից **վաղակեզ** արտերից սերմնացուն էլ չենք հավաքի *(մամուլ):*

ՎԱՂԱԿՈՉ, 1. ած. **Շուտ կանչված՝ կոչված՝ հրավիրված**: Խաշի **վաղակոչ** հյուրերը նարդու զառերն էին շրխկացնում *(մամուլ):* 2. գ. (փխբ.): **Կանուխ՝ առավոտը շուտ հնչող՝ լսվող կոչ՝ երգ:** Աքլորի **վաղակոչը:**

ՎԱՂԱԿՈՒՅՐ, ած. 1. **Շուտ կուրացած, վաղուց կույր: Վաղակույր** աշուղ: 2. (փխբ.): **Շրջապատի իրողությունները վաղուց չտեսնող՝ գնահատել չկարողացող:**

ՎԱՂԱՀՅԹԱՅԹ, ած. **Շուտ՝ հեշտ՝ արագ գտնվող, ճարվող, ձեռք բերելը դյուրին: Վաղահայթայթ** ապրանքներ:

ՎԱՂԱՀԱՏ, ած. 1. **Վաղուց հատված՝ կտրված: Վաղահատ** անտառամաս: 2. **Վաղ՝ մատղաշ՝ ոչ հասուն վիճակում հատված՝ կտրված:** ….**Վաղահատ** ցողունները չորանալիս կուչ են գալիս, …. ոչ պիտանի դառնում *(մամուլ):*

ՎԱՂԱՀԱՐԲ, ած. **Վաղ՝ արագ՝ շուտ հարբող՝ հարբած: Վաղահարբ** հարսանքավորներ:

ՎԱՂԱՀԵՎ, ած. **Վաղուց՝ շուտվանից հևացող:** Խղճում էր ոտքերը հազիվ քարշ տվող **վաղահև** կնոջը …. *(թարգմ.):*

ՎԱՂԱՀԵՐԿ, 1. գ. **Վաղ գարնանը կատարվող հերկ:** 2. **Վաղ՝ շուտ՝ շուտվանից հերկված: Վաղահերկ** արտերը արդեն կանաչին էին տալիս *(թարգմ.):*

ՎԱՂԱՀՈՉԱԿ, ած. 1. **Վաղուցվանից հռչակված՝ հռչակ ձեռք բերած:** 2. **Շուտ՝ արագ հռչակված՝հռչակ ձեռք բերած: Վաղահռչակ** վայ գործիչ-ների ազգօգուտ գործունեությունը սպառվեց համազգային սեփակա-նության ինչ-որ մասի սեփականաշնորհումով *(մամուլ):*

ՎԱՂԱՀՅՈՒՍ, ած. 1. **Վաղուց հյուսված՝ ստեղծագործված: Վաղահ-յուս** հեքիաթ: 2.**Վաղուց հյուսված՝ գործված: Վաղահյուս** գուլպաները քրքրվել, քուրջ էին դարձել *(մամուլ):*

ՎԱՂԱՁԱՅՆԵԼ, բ. **Վաղ՝ առավոտը շուտ՝ կանուխ ձայնել՝ ձայն տալ՝ կոչել՝ կանչել:** Ամաչում էր դեռ մութուլույս **վաղաձայնել՝** կարոտն առ-նել *(մամուլ):*

ՎԱՂԱՁԻԳ, ած.**Վաղուց՝ շատ ժամանակ առաջ ձգված: Վաղաձիգ** կածան:

ՎԱՂԱՁՅՈՒՆ, 1. գ. **Ժամանակից շուտ տեղացած ձյուն: Վաղաձյու-նը** ուրախացրեց միայն երեխաներին *(թարգմ.):* 2. ած. **Վաղ ձյունած, շուտ եկած ձյունով ծածկված: Վաղաձյուն** դաշտեր:

ՎԱՂԱՂՈՂԱՆՋ, ած. **Վաղ՝ շուտ՝ կանուխ ղողանջող: Վաղաղողանջ** զանգ:

ՎԱՂԱՃԵՄ, ած.**Վաղ՝ շուտ՝ կանուխ ճեմող՝ զբոսնող, զբոսանքի դուրս եկած՝եկող:** Սիրահար **վաղաճեմ** զույգերը զբաղեցրել են բոլոր նստարանները *(մամուլ):*

ՎԱՂԱՄԵԳ, գ. 1. **Վաղ՝ առավոտը շուտ հայտնված մեգ՝ մառախուղի թանձր շերտ:** Ստիպված էին սպասել **վաղամեգի** ցրվելուն *(թարգմ.):* 2. (փխբ.): **Վաղ՝ մատղաշ՝ երիտասարդ հասակում դժբախտացած, դեմքին մեգ՝ մառախուղ իջած**: Ու **վաղամեգ** հարսանց համար սև են հագել սարերը մեր *(մամուլ):*

ՎԱՂԱՄԵՐՁ, ած. **Շուտ՝ արագ մերձեցող՝ մտերմացող: Վաղամերձ** աղջիկներ չէր սիրում, հավանում էր «անմերձենալիներին» *(թարգմ.):*

ՎԱՂԱՄԽԻԹԱՐ, ած. **Շուտ՝ արագ՝ վաղուց մխիթարված: Վաղամխիթար** այրին ամուսնացավ մահվան տարին չլրացած *(թարգմ.):*

ՎԱՂԱՇԱՀ, ած. **Շուտ՝ արագ շահ՝ եկամուտ բերող: Վաղաշահ** զբաղմունք: **Վաղաշահ** առևտուր:

ՎԱՂԱՇԱՂԱԽ, ած. (հզվդ.): **Վաղ՝ շուտ շաղախված: Վաղաշաղախ** սեր:

ՎԱՂԱՇԵՆ, ած. **Վաղուց՝ անցած-գնացած ժամանակներում շինված՝ կառուցված: Վաղաշեն** կայարան:

ՎԱՂԱՇՆՈՐՀ, ած. **Վաղուց շնորհ(վ)ած՝ պարգև(վ)ած՝ տրված: Վաղաշնորհ** ձիրք:

ՎԱՂԱՉՈՒ, ած. 1. **Վաղ չվող:** 2. **Վաղուց չված՝ չու կատարած: Վաղաչու** թռչուններ:

ՎԱՂԱՊԱԳ, ած. **Վաղուց պագած՝ համբուրած՝ դավանած՝ պաշտած**: Նա դավաճանել է իր բոլոր **վաղապագ** սրբություններին և պաշտում է միայն արտարժույթը՝ արտասահմանյան բանկում, այն էլ՝ վստահելի ուրիշի անունով, դատարանով բռնագրավման ոչ ենթակա *(մամուլ):*

ՎԱՂԱՊԻՂԾ, ած. **Վաղուց պղծված: Վաղապիղծ** սկզբունքներ:

ՎԱՂԱՍԱՀ, ած. **Վաղուց՝ շուտ՝ արագ սահող՝ անցնող: Վաղասահ** օրեր:

ՎԱՂԱՍՔՈՂ, ած. **Վաղուց սքող(վ)ած՝ ծածկած՝ թաքցրած՝ թաքցված: Վաղասքող** հակումներ:

ՎԱՂԱՎԱՃԱՌ, ած. **Վաղ՝ արագ վաճառվող, գնայուն: Վաղավաճառ** արտադրատեսակներ՝ ապրանքներ:

ՎԱՂԱՎԱՌ, ած. **Վաղուց վառված՝ վառվող, բորբոքուն: Վաղավառ** սիրտ:

ՎԱՂԱՏՈՉՈՐ, ած. **Վաղ՝ շուտ՝ շուտվանից տոչորված: Վաղատոչոր** արտեր: **Վաղատոչոր** սիրտ:

ՎԱՂԱՏՐՈՓ, ած. **Վաղ՝ շուտ տրոփող, զգայուն, դյուրագրգիռ: Վաղատրոփ** սիրտ:

ՎԱՂԱՑԱՅՏ, ած. **Վաղ՝ շուտ ցայտող:** Աղջկական **վաղացայտ** արցունքներ:

ՎԱՂԱՑԱՆ, ած. **Վաղ՝ շուտ ցանած: Վաղացան** բանջարաբույսեր:

ՎԱՂԱՑԱՆՔՍ, գ. **Վաղ ցանքս: Վաղացանքսին** խանգարեցին ամենօրյա տեղատարափ անձրևները *(մամուլ):*

ՎԱՂԱՓԱԽ, ած. **Վաղուց փախած՝ հեռացած: Վաղափախ** նախաբար:

ՎԱՂԱՓԱԿ, ած. 1. **Վաղ փակված**: **Վաղափակ** խանութ: 2.**Վաղուց փակ՝ փակված, վաղուց չաշխատող**: **Վաղափակ** դպրոցներ:

ՎԱՂԱՓՈՐՁ, 1. գ. **Վաղ՝ սկզբնական փորձ: Վաղափորձերի** ձախողումները նրան չհուսահատեցրին *(թարգմ.):* 2. ած. **Վաղուց փորձված**: Իշխանության վարկաբեկման **վաղափորձ** միջոցներ *(մամուլ):*

ՎԱՂԱՔԱՂ, ած. **Շուտ քաղվող՝ հավաքվող: Վաղաքաղ** բանջարեղեն:

ՎԱՂՆՋԱՄՅԱ, ած. **Հնամյա:** Այսպես՝ **վաղնջամյա**,// Որ ծնվում ես, ծնում-// Ամբարտավան ու հեզ,// Վսեմ ու գլխիկոր,-// Շրջապտույտնեռով// Այսպես ուր ես գնում, // Ո՞վ կրակուպատիժ// Տիեզերյան Գիքոր *(Հր�չՍ 1, էջ 60):*

ՎԱՃԱՌԱԲԱԶՐԻՔ, գ.**Վաճառատեղը շրջափակող բազրիք՝ ճաղաշար: Վաճառաբազրիքին** շարված էին տարբեր տեսակի գույնզգույն տուփեր….*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱԺԱՆ, ած. **Վաճառելով՝ գինը գանձելով բաժանված: Վաճառաբաժան** կաթի փոշի *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱԺԱՆՔ, գ. **Որևէ բանի (օր.՝ օգնության ևն) բաժանումը վաճառքի միջոցով**: Սերմացու գարու **վաճառաբաժանք:**

ՎԱՃԱՌԱԲԱԽՏ, գ. **Վաճառելու՝ առևտրական գործունեության բախտ՝ հաջողություն**: Չէր բռնվում, ինչպես ինքն էր ասում՝ **վաճառաբախտը** բերում էր *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱՂՁ, ած. **Վաճառելու՝ առևտրով զբաղվելու բաղձանք՝ իղձ՝ ցանկություն ունեցող:** Պիտի տեսնեիք …. **վաճառաբաղձ** երեխաների աչքերի փայլը *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱՆՈՒԿ, ած. **Վաճառքով՝ առևտրով զբաղվելու համար բանուկ՝ հաջողակ՝ շատ գնորդներ եղող:** Հարկավոր էր ընտրել փողոցի մի **վաճառաբանուկ** անկյուն *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱՆՋԱՐ, գ. 1. **Վաճառքի համար նախատեսված՝ գնորդների մեջ մեծ պահանջարկ ունեցող:** Նրա բերած **վաճառաբանջարը** հենց մեքենայի թափքից «թոմարի» տանում էին *(մամուլ):* 2. (հզվդ.): **Վաճառվող՝ ծախվող՝ վաճառքի հանված բանջար(եղեն):**

ՎԱՃԱՌԱԲԱՇԽ, ած. **Վաճառելով բաշխված՝ բաժանված՝ սպառողներին հանձնված: Վաճառաբաշխ** սերմացու:

ՎԱՃԱՌԱԲԱՐԲԱՌ, գ. **Վաճառողների՝ վաճառքով զբաղվողների բարբառ՝ խոսվածք՝ ժարգոն՝խոսելակերպ:** ....**Վաճառաբարբառում** արդեն սկսել են պարսկերեն բառեր երևալ *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԱՐՔ, գ. **Վաճառողներին՝ վաճառականներին՝ առևտրով զբաղվողներին հատուկ բարք՝վարքագիծ՝ վարվելակերպ՝ սովորություն(ներ):** Առուփախի ու խաբելու բազարային սովորությունները աստիճանաբար փոխարինվեցին .... վաճառականական դասին հատուկ **վաճառաբարքերով***(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԲԵՌ, գ. **Վաճառքի համար նախատեսված բեռ՝ փոխադրվող ապրանք:** Չապահովագրված **վաճառաբեռների** անվթար փոխադրումը չի երաշխավորված *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԳՅՈՒՂ, գ. (փխբ.): **Վաճառքի՝ առևտրական գործառնությունների՝ առուվաճառքի գյուղ՝տեղ՝ տարածք**: Քաղաքի ամենաբանուկ հրապարակներում իսկական **վաճառագյուղեր** են բացվում՝ իրենց գյուղապետերով, հարկահավաքներով.... *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԳՈՎՔ, գ. **Վաճառվող ապրանքների գովք՝ գովազդ:** Կինոնկարը ընդհատվեց կանացի իտալական ներքնազգեստի **վաճառագովքով***(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԳՈՒՄԱՐ, գ. **Վաճառված ապրանքների գումարը, վաճառադրամ: Վաճառագումարը** հաշվարկում էին երեկոյան՝ համեմատելով վաճառացուցակի և դրամարկղային մեքենայի տվյալները *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԴԱԴԱՐ, գ. **Վաճառքի դադար՝ ընդմիջում, վաճառքը ժամանակավորապես ինչ-որ բանի համար դադարեցնելը:** Գնորդները հերթ էին կանգնել. ստիպված սպասեցի **վաճառադադարին** *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԴԱՅԼԱՅԼ, գ. (փխբ.): **Առնող-ծախողների ձայնի գեղգեղանք**: Ժամը տասնմեկին շուկայի **վաճառադայլայլը** ժխորի է վերածվում *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԴԱՍ, գ. **Վաճառականական դաս՝ հասարակական խմբավորում ըստ հիմնական զբաղմունքի: Վաճառադասն** էլ ունի իր հասարակական կազմակերպությունը….*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԴԱՐԱԿ, գ. Տե՛ս ԿԱՅԱՆԱՍՅՈՒՆ-ի օրինակը:

ՎԱՃԱՌԱԴՂՅԱԿ, գ. **Դղյակի տեսք ունեցող վաճառատուն**: Փողոցի մեջտեղում՝ առաջին գծից մի քիչ ետ, բազմել է եղբայրների …. հանրախանութը՝ **վաճառադղյակը** *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԴՅՈՒՐ, ած. **Հեշտ՝ արագ վաճառվող, գնայուն: Վաճառադյուր** ապրանքներ:

ՎԱՃԱՌԱԴՌՈՒՌ, գ. **Դուռ, որտեղից վաճառք է կատարվում: Վաճառադռան** ներքևի մասը ցանցապատ էր *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԶԱՆՑ, ած., գ. **Վաճառքի կանոնները զանց առնող (առած)՝ խախտող (խախտած)՝անտեսող՝ հաշվի չառնող (անձ):** Սովորական **վաճառազանց** մարդկանց ձեռք չենք տալիս, խոշոր ձկներ ենք փնտրում, որ քամելիք լինի…. *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԶԵՂՉ, գ. **Վաճառքի գնի զեղչ:** Հինգից ավելին գնելու դեպքում կատարվում է **վաճառազեղչ** տասը տոկոսով…. *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԶՈՐ, ած. **Վաճառելու զորություն՝ ուժ՝ ունակություն՝ կարողություն ունեցող:** Ապրանքը վստահում էր միայն **վաճառազոր** խանութներին *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԸՆՏՐԱՆԻ, գ. **Վաճառականների՝ վաճառականական դասի ընտրանի:** Ընդունելությանը հրավիրված էր Երևանի ողջ **վաճառաընտրանին** …. *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԸՆՏՐԱՆՔ, գ. **Որևէ ապրանք(հումք, արժույթ, արժեթուղթ են) վաճառելու իրավունք տվող ընտրանք** *(Ա.Աղաբեկյան):*

ՎԱՃԱՌԱԹԱԽՏ, գ. **Թախտ, որի վրա դարսվում՝ դրվում են վաճառվող ապրանքները**: Նստում էր **վաճառաթախտի** վերին ծայրին՝ մշտաածուխ չիբուխը բերանին ....*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԹԱՆԿ, ած. **Թանկավաճառ: Վաճառաթանկ** իրեր:

ՎԱՃԱՌԱԹԱՓ, գ. **Վաճառքի թափ՝ արագություն՝ գործունեություն**: Ընդմիջումից առաջ **վաճառաթափը** սովորաբար ուժեղանում է *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԹԱՔ, ած. **Թաքցնելով վաճառքի չհանվող, վաճառքից թաքցվող**: Հիմա էլ տակից ծախվող՝ **վաճառաթաք** ապրանքներ չկան, ինչպես առաջ էր ....*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԹԻ, գ. **Թիաձև գործիք՝վաճառաիր, որով սորացող նյութերը լցվում են տոպրակները՝պարկերը են՝ կշռելու՝ վաճառելու են նպատակով:** Երբ սրա կպչուն ձեռքը սկսեց վեր սողալ, **վաճառաթին** կարծես իրեն-իրեն իջավ նրա գլխին ....*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԹԻԿՆՈՑ, գ. **Վաճառողի թիկնոց:** Խալաթ չէր հագնում, այլ **վաճառաթիկնոց**՝ մեջքը մինչև ուսերը գրկող անթև մի շոր *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԹՈՒՂԹ, գ. 1. **Վաճառվող ապրանքը փաթեթավորելու թուղթ:** Պահանջում էր իրեն տալ գոնե վաճառքի ժամանակ օգտագործված երկու տոննա **վաճառաթղթի** արժեքի կեսը *(մամուլ):* 2. **Վաճառքը վկայող թուղթ՝ փաստաթուղթ:**

ՎԱՃԱՌԱԺԽՈՐ, գ. **Վաճառքի՝ առևտրի ժամանակ մարդաշատ վայրերում լինող ժխոր՝ աղմուկ: Վաճառաժխորը** հանկարծ ճեղքեց ոստիկանական ավտոմեքենայի ծանոթ ազդաշեփորի ձայնը *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱԼԱԹ, գ. **Վաճառվող լաթ՝ մաշված հնոտի հագուստեղեն՝ գործվածքեղեն**: Քրջի շուկայում՝ **վաճառալաթի** բլրի ետևում, իրենց գործարանի նախկին մեխանիկն էր թաքնվել *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱԽԱԲ, ած. **Վաճառքում խաբված: Վաճառախաբ** կինը երկար ժամանակ դես ու դեն էր շրջում ձեռքը կոխած կեղծ փողերը *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱԽԱՅԾ, գ. **Վաճառքի՝ ապրանքներ ծախելու համար օգտագործվող խայծ՝ գնորդներ գրավելու համար:** Իսկ երբ ժամը մեկին խանութում երևում էր **վաճառախայծը՝** խանութատիրոջ մատղաշ կինը, այն միանգամից լցվում էր ջահել «գնորդներով» *(թարգմ.)*:

ՎԱՃԱՌԱԿՈՆՔ, գ. **Վաճառվող ապրանքը մեջ լցրած՝ լցնելու կոնք:** Չկան խանութում վաճառասեղանի տեղը ջրով լի **վաճառակոնք** էր դրված՝ մեջը խլբլտացող ձկներ *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Վաճառքի՝ առևտրի կարևոր՝ աշխույժ՝ գործուն հանգույց (շուկա,տոնավաճառ ևն):** Մալաթիան այսօր Երևանի …. **վաճառահանգույցներից** մեկն է *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱՀԱՐԿ, գ. 1. **Վաճառվող յուրաքանչյուր ապրանքից գանձվող հարկ:** 2. **Վաճառքը թույլատրելու վճարում՝ գանձում:** Շուկա մտնելու համար **«վաճառահարկը»** պիտի մուծես նախապես *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱՀՈԳՍ, գ. **Վաճառքի հոգս՝ մտահոգություն:** Ամենամեծ **վաճառահոգսը** հիմա գնայուն ապրանք գտնելը չէ, այլ ոչ պաշտոնական հարկահավաքներին բավարարելը *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱՂԵԿ, գ. (փխբ.): **Վաճառքի՝ առևտրի կազմակերպման՝ գների սահմանման ղեկ՝ուղղություն տվող ուժ:** Բենզինի **վաճառաղեկը** մի «հզորի» ձեռքին է, դրա համար էլ մեկ գիշերում գները կարող են բարձրանալ 3-4 անգամ *(մամուլ)*:

ՎԱՃԱՌԱՃԵՂՔ, գ. **Վաճառքի՝ վաճառելու՝ ապրանքը տալու և փողը ստանալու նեղ անցք:** Ո՞վ էր **վաճառաճեղքի** ետևում՝ նա՞ ….*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՃԻԳ, գ. **Վաճառք կազմակերպելու հոգս՝ մտահոգություն:** Թողեցի, որովհետև **վաճառաճիգերս** չէին փոխհատուցվում…. *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՃՅՈՒՂ, գ. 1. **Առևտրական գործունեության բնագավառներից յուրաքանչյուրը:** Սննդի ապրանքների **վաճառաճյուղում** գերազանցապես արտասահմանյան արտադրանք է…. *(մամուլ):*

2. **Առևտրական մասնաճյուղ՝ բաժին (առանձին գործող):** Չորս գյուղում **վաճառաճյուղ** ունի *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՄԱՍ, գ. **Վաճառք կազմակերպելու մաս՝ հատված՝ բաժին:** Խանութի լավագույն **վաճառամասում** նա է տերուտնօրենը *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՄԱՏՅԱՆ, գ. **Մատյան, որտեղ գրանցվում են վաճառված ապրանքները, վաճառքի հաշվեմատյան:**

ՎԱՃԱՌԱՄԱՐՏ, գ. (փխբ.): **Ապրանքներ, ծառայություններ վաճառելու, մատուցելու մարտ՝ կռիվ՝ մրցություն:** Ազատ շուկայի **«վաճառամարտում»** շատերն են զոհվել ….*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՄՈԼ, ած., գ. **Վաճառելու՝ առևտրական գործառնության մոլուցքով բռնված՝ մոլի սովորություն ստացած՝ ունեցող (անձ), մոլի վաճառական (որպես բացասական հատկություն):** Ապրանքի չեղած տեղը **վաճառամոլը** կնոջն է վաճառքի հանում *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՆԵՐՈՒԺ, գ. **Առանձին վաճառողի շուկայի ներուժի բաժինը, վաճառքի ներուժ** *(Ա.Ադաբեկյան):*

ՎԱՃԱՌԱՆՈՐՈՒՅԹ, գ. **Վաճառքի հանված նորույթ՝ նոր ապրանք կամ ծառայություն:** Շուկայի **վաճառանորույթը** հարավամերիկյան կանաչ խնձորն է՝ առասպելական գներով ....*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՇԱՐՔ, գ. **Վաճառքի՝ առևտրական կետերի՝ խանութների ևն շարք**: Երկաթեղենի **վաճառաշարք:**

ՎԱՃԱՌԱՇԵՂՋ, գ. **Վաճառվող ապրանքների շեղջ՝ կույտ:** Նման փողոցային **վաճառաշեղջերը** բնորոշ են հատկապես Միջին Արևելքի արաբական քաղաքներին *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՇԵՐԵՓ, գ. **Վաճառքի շերեփ, ծորուն և սորուն նյութերը վերցնելու՝ չափելու՝ լցնելու վաճառագույք:** Հիմա մեղր ծախողը **վաճառաշերեփն** էլ չի կարողանում լիզել՝ գնորդ չկա *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՇՈՐԹ, ած., գ. **Առևտրում՝ վաճառելու ժամանակ գնորդին շորթող (անձ):** Այսօր **վաճառաշորթը** այնքան լկտի է, ինչքան պաշտոնով բարձր է նրա հովանավոր պաշտոնյան *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՇՐՋԻԿ, ած., գ. **Վաճառելով շրջող՝ շրջելով վաճառք կատարող, շրջիկ առևտրական (անձ), շրջավաճառ:**

ՎԱՃԱՌԱՊԱՀՈՒՍՏ, գ. **Վաճառքի (առավել շահավետ) համար պահված ապրանքների ամբողջությունը: Վաճառապահուստն** էլ մեջտեղ հանեց *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՊԱՇԱՐ, գ. **Վաճառելու ապրանքների պաշար:** Մեջտեղ հանվեցին բենզինի վերջին **վաճառապաշարները***(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՊԱՏՎԵՐ, գ. **Վաճառելու պատվեր:** Հեռախոսով ընդունված **վաճառապատվերները** կատարվում են նույն օրը՝ զեղչով *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՊԻՏՈՒՅՔ, գ. **Վաճառքի ժամանակ օգտագործվող պիտույք (անհրաժեշտ սարքեր՝գործիքներ ևն):** Մինչև հիմա **վաճառապիտույքը** վարձով եմ օգտագործում *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՋԱՆՔ, գ. **Վաճառքի՝ առևտրի ժամանակ գործադրվող ջանք՝ աշխատանք:** Ստացածս շահը **վաճառաջանքերիս** մեկ տասներորդը չի ծածկի *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՍԱՅԼ, գ. **Սայլ, որի վրայից կատարվում է առևտուրը:** Ջերմուկով լի **վաճառասայլը** տարան տուգանային հրապարակ *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՍԵՆՅԱԿ, գ. 1. **Սենյակ, որտեղ վաճառք է կատարվում, վաճառքի սենյակ:** 2. **Խանութի՝ ապրանքներ արտադրող միավորման առանձին բաժին, որտեղ վաճառք է կատարվում:** Պատրաստի արտադրանքը՝ պատվիրատուի տվյալներով հանդերձ ուղարկվում է **վաճառասենյակ***(մամուլ):* Առաջին **վաճառասենյակում** ուտելեղեն է ցուցադրված, երկրորդում՝ հագուստեղեն…. *(թարգմ):*

ՎԱՃԱՌԱՎԱՐՁ, գ. **Վաճառատարածքը վարձակալելու վարձ՝ վճար:** Կենտրոնում վարձակալելու մասին երազել անգամ չի կարելի՝ **վաճառավարձը** անմատչելի է *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՏԱԿԱՆՔ, գ. **Վաճառքից հետո մնացած ապրանքամնացորդը:** Ուրիշների նման **վաճառատականքը** էժան գնով չէր սաղացնում, բաժանում էր աղքատներին *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՏԱՐԱԾՔ, գ. 1. **Առևտրական նպատակներով օգտագործվող տարածք:** Ընդարձակել տոնավաճառի **վաճառատարածքը:** 2. **Շրջավաճառին հատկացված տարածք, վաճառքի տարածք***(Ա.Աղաբեկյան):*

ՎԱՃԱՌԱՏԵՐ, գ. 1. **Վաճառքի կետի (տոնավաճառ, շուկա, խանութ ևն) տեր՝ սեփականատեր**: 2. **Վաճառվող ապրանքի տեր՝ սեփականատեր:**

ՎԱՃԱՌԱՅՈՒՊ, գ. 1. **Վաճառականի ցուպ՝ գավազան:** 2. (փխբ.): **Վաճառականական իշխանության խորհրդանշան**: Եվ մինչև խորին

ծերություն մենք մեզ վրա զգացինք նրա **վաճառացուպի** զորությունը *(թարգմ):*

ՎԱՃԱՌԱՅՈՒՅԱՓԱՅՏ, գ. (հզվդ.): **Վաճառողի ցուցափայտ**: Որպես մետր ծառայում էր **վաճառացուցափայտը,** որի վրա հավասար հեռավորությամբ փորվածքներ էին արված *(թարգմ):*

ՎԱՃԱՌԱՓԱԹՈՒՅԹ, գ. **Վաճառքի համար նախատեսված ապրանքի (գործվածքեղեն՝ թուղթ ևն) փաթույթ:** Խանութից ետ էին ուղարկել անջրանցիկ թղթի ճմռթված **վաճառափաթույթները**՝ գնորդ չկար….*(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՓԱՍՏ, գ. **Վաճառված՝ գնված լինելու փաստ՝ իրողություն**: Յուրաքանչյուր ապրանքի **վաճառափաստը** պետք է հաստատվի դրամարկղային մեքենայի կտրոնով *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՓԵՂԿ, գ. **Փեղկ (լուսամուտի, դռան ևն), որտեղով ապրանք է վաճառվում:** Հերթապահ դեղակրպակի **վաճառափեղկը** գիշերցերեկ բաց է *(մամուլ):*

ՎԱՃԱՌԱՔԱՂՑ, գ. (փխբ.): **Վաճառելու՝ առևտրով զբաղվելու քաղց՝ բուռն ցանկություն**: Կարծում էր՝ բանտից դուրս գալուց հետո խանութի կողմը չի նայի, բայց մի ամիս չանցած, մի տեսակ **վաճառաքաղց** էր զգում …. *(թարգմ):*

ՎԱՅԵԼԱՄՈԼ, ած., գ. **Վայելքների մոլի սիրահար, կյանքը հաճույքներ վայելելուն նվիրած (անձ): Վայելամոլ** երիտասարդ: Մշտածիծաղ **վայելամոլ:**

ՎԱՅԵԼՉԱԿԵՆՑԱՂ, ած. **Վայելուչ կերպով՝ պատշաճորեն ապրող՝ կենցաղավարող, վայելչակյաց: Վայելչակենցաղ** թաղամաս *(թարգմ):*

ՎԱՅԵԼՉԱՀԱՐԴԱՐ, ած. **Վայելչաբար՝ գեղեցիկ կերպով հարդարված,գեղահարդար: Վայելչահարդար** մազեր:

ՎԱՅԵԼՉԱՇՆՈՐՀ, ած. 1. **Վայելուչ՝ գեղեցիկ շնորհ՝ ձիրք՝ կարողություն ունեցող: Վայելչաշնորհ** փորագրանկարիչ: 2. **Գեղաշնորհ, գեղեցկաշնորհ:**

ՎԱՅԵԼՉԱՓՈԽԵԼ, բ. **Գեղափոխել:** Վարսավիրը նորից սկսեց իր գրաբարը.- Այնպես **վայելչափոխեմ,** որ չճանաչես հարսնացուիդ *(թարգմ):*

ՎԱՅԵԼՉՈՏՆ, ած. **Վայելուչ՝ համաչափ ու գեղեցիկ ոտքեր ունեցող:** Ահա և ավանակը **վայելչոտն** ….*(թարգմ):*

ՎԱՅՐԱԲԱՎԻՂ, գ. (փխբ.): **Տարածության մեջ ձգվող բավիղ՝ խառնիխուռն ճանապարհների լաբիրինթոս՝ դժվարելանելի վիճակ:** Սիրո ցանցում **վայրաբավիղ** ելք եմ փնտրում կույրի պես *(թարգմ):*

ՎԱՅՐԱԲԱՐԲԱՌ, գ. (հզվդ., գրք.): **Տեղական բարբառ՝ խոսվածք:** Հարևան գյուղերից մեկից մյուսը գնալիս փոխվում է **վայրաբարբառը***(թարգմ):*

ՎԱՅՐԱԲՈՒՅՍ, գ. (հզվդ.): **Վայրի բույս, վայրենի՝ չպատվաստված՝ չազնվացված բույս, վայրակ,պատվաստակալ: Վայրաբույսերը** սովորաբար աճեցվում են սերմերից…. *(ձեռնարկ):*

ՎԱՅՐԱԳԱԲԱՐՈ, ած. 1. **Վայրագ բարք՝ բնույթ ունեցող**: 2.**Վայրագությամբ արված՝ կատարված՝տեղի ունեցած**: Երեխաների **վայրագաբարո** ծեծ *(մամուլ):*

ՎԱՅՐԵՆԱԲԱՐՔ, ած. **Վայրենու բարք ունեցող՝ դրսևորող, վայրենաբարո**: Լեռնային **վայրենաբարք** ցեղեր:

ՎԱՅՐԵՆԱԿԱՂԿԱՆՁ, ած. (բնստ.): **Վայրենանման կաղկանձող, վայրենախոս:** Հեգ մանուշակի քնքշանուշ լեզուն ….դրեց բերանը **վայրենակաղկանձ** ուրիշ մի մարդու *(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՀԱՅԱՑ, ած., մկբ. **Վայրենու հայացքով՝ տեսքով: Վայրենահայաց** կանգնած էր հայելու առաջ *(թարգմ):*

ՎԱՅՐԵՆԱՄԱՐԴ, գ. (բնստ.): **Վայրենի մարդ, դեռևս վայրենությունից դուրս չեկած, վայրենի:** ….Դեռ նորաստեղծ **վայրենամարդը** վարդ չուներ կրծքին *(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՄԹՈՏ, ած. (բնստ.): **Վայրենի և մութ՝ խավար:** Այգուց ոնց մտնենք **վայրենամթոտ** անտառը կրկին *(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՌՀՄԱԿ, ած. **Վայրենիների նման ռիմակ կազմած՝ ռիմակով ապրող:** ….Էակն առաջին դեռ մանկաթոթով, անմարդալեզու, **վայրենառիմակ** …. լուռ թափառում էր ….*(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՊՏՂԵԼ, չբ. (բնստ.): **Վայրենու նման պտղել՝ զավակ ունենալ՝ բազմանալ:** Դեռ չէր էլ փնտրում մարդացման ճամփան, **վայրենապտղած,** մութ անտառներում.... բազմանում էր ցոփ….*(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՍՈՒՐԲ, ած. (բնստ.): **Վայրի՝ բնական տեսքը՝ բնույթը պահած ու սուրբ՝ սրբազան:** Ես՝ **վայրենասուրբ** Կովկասի որդի *(ՀՇ):*

ՎԱՅՐԵՆԱՏԵՍԻԼ, ած. (բնստ.): **Վայրենու տեսք՝ արտաքին ունեցող, վայրենու տեսքով,վայրենանման:** Ուրիշ մի համրի բերանը դրեց, **վայրենատեսիլ** ուրիշ մի համրի *(ՀՇ):*

ՎԱՅՐԷՋՔԱՆՇԱՆ, գ. 1. **Վայրէջքի տեղը նշող նշան (գիծ, գծերի զուգորդում, գիշերը՝ վառվող էլեկտրական լամպեր ևն):** 2. **Վայրէջքի՝ վայրէջք կատարելու ազդանշան (ազդանշան տվող ինքնաթիռի թևերի շարժումով, հրթիռի արձակումով ևն): Վայրէջքանշանը** չնկատվելը հարգելի պատճառ չհամարվեց *(թարգմ):*

ՎԱՅՐԷՋՔԱՆՑՈՒՄ, գ. (օդգ.): **Անցում վայրէջքի, վայրէջքի անցնելը, վայրէջք կատարելը: Վայրէջքանցումը** ուշացնելու դեպքում ստիպված մի պտույտ ևս պիտի անել օդանավակայանի վրա *(թարգմ):*

ՎԱՅՐԷՋՔՈՒՂԻ, գ. **Վայրէջքատեղ:** Եվ արթնացավ միայն այն ժամանակ, երբ անիվները թեթևակիորեն հպվեցին բետոնե **վայրէջքուղուն***(Արեն, էջ 43):*

ՎԱՅՐԸՆԿԵՑ, ած. 1. **Վայրընթաց:** 2. **Դեպի ցած իջնող՝ թեքված՝ ձգվող:** Թավ **վայրընկեց** բեղեր:

ՎԱՅՐԸՆՏԵԼ, ած. **Տեղին՝ վայրին՝ տեղի պայմաններին ընտելացած՝ ընտելացող: Վայրընտել** կենդանիներ՝ բույսեր:

ՎԱՅՐԿԵՆԱՄԱՍ, գ. (հզվդ.): **Վայրկյանի մաս՝ հատված, չափազանց կարճ ժամանակահատված:** Մարդու կյանքը .... անսկիզբ, անսահման հավիտենականությանը անհամեմատելի չնչին մի **վայրկենամաս** է *(թարգմ):*

ՎԱՅՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. (հզվդ., գրք.): **Վայրի՝ տարածքի (հանդամասի, շինհրապարակի ևն)օգտագործում՝ շահագործում: Վայրօգտագործման** պայմանագրային մուծումների ուշացում՝ հետաձգում *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱԱՂԲ, գ. (հզվդ.): **Վանդակի մեջ կուտակված աղը**: Գործադուլի օրերին գազանանոցի **վանդակաաղբը** կուտակվել ու գարշահոտություն էր տարածում չորս կողմը *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԲԱԺԱՆ, 1. ած.**Վանդակները բաժանող, հարևան վանդակների միջև ընկած:** Շնիկը խցկվել էր **վանդակաբաժան** նեղ ճեղքի մեջ և խղճալի վնգստում էր *(թարգմ):* 2. գ. **Վանդակները բաժանող՝ վանդակների միջև ընկած տարածքը կամ բաժանող որևէ այլ բան՝ միջնորմ՝ պատ՝ մետաղյա շերտեր ևն:**

ՎԱՆԴԱԿԱԲԱՆՏ, ած. (փխբ.): **Վանդակում բանտարկ(վ)ած, անելանելի՝ անհույս վիճակում գտնվող: Վանդակաբանտ** սրտիս դարման ո՞վ է տալու ....*(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱԲԱՑ, ած. **Վանդակը՝ վանդակի մուտքը բացված: Վանդակաբաց** գազանը, ամբողջ գիշեր դրսում շրջելով, լուսաբացին վերադարձել ու իր սովորական անկյունում քուն էր մտել *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԹԱԿԱՐԴ, գ. (գրք.): **Թռչուններ՝ կենդանիներ որսալիս որպես թակարդ օգտագործվող վանդակ:** Լուսաբացին, երբ աչքերը բացեց ինչ-որ խլղոցից, **վանդակաթակարդի** մեջ կծկված մի օձ նկատեց *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԽՈՐՇ, գ. **Վանդակաձև խորշ:** Պարսպի **վանդակախորշերում** փամփուշտներ ու վառոդ էր շարված՝ վանդակամաններում *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԽՈՒՅՍ, ած. 1. **Վանդակից խույս տված՝ փախած՝ հեռացած՝ բաց թողնված: Վանդակախույս** թռչուն: 2. ած. **Վանդակային՝ անազատ կյանքին չհարմարվող՝ անսովոր, վանդակից խուսափող: Վանդակախույս** կենդանիներ:

ՎԱՆԴԱԿԱԽՈՒՑ, գ. 1. **Բանտի՝ արգելափակման վայրի ճաղապատ (մեկ՝ մի քանի՝ բոլոր կողմերից) խուց, ուր պահվում են դատապարտվածները՝ մեղադրյալները ևն:** 2. **Դատարաններում ևն՝ ճաղապատ վանդականման խուց, որտեղ փակում են հատկապես վտանգավոր մեղադրյալներին: Վանդակախցերը** մեր դատարանների նորույթներից են *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱԾԱԾԿ, 1. ած.**Վանդակներով ծածկված՝ պատված, վանդակներ սարքված:** Շուկայի **վանդակածածկ** հրապարակ: 2. գ.**Վանդակի ծածկ՝ վերևի պատը՝ ճաղաշարը:**

ՎԱՆԴԱԿԱԾՈՐ, ած. **Վանդակից ծորացող: Վանդակածոր** ջրիկ աղտեղությունները հավաքվում են փորված հատուկ հորերի մեջ *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԾՈՐԱԿ, գ. **Վանդակի մեջ տեղադրված՝ եղած ջրի ծորակ:** …. Փորձել էր հանել **վանդակածորակը***(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱԾՈՒՂԱԿ, գ. **Վանդակաթակարդի միջոցով սարքված ծուղակ:** Արդեն քանի անգամ աղվեսը թռցնում էր խայծ դրված մսակտորը՝ ճարպկությամբ խուսափելով **վանդակածուղակից** *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱԿՅԱՑ, ած. **Վանդակ(ներ)ում կյանք վարող՝ ապրող՝ մնացող**: **Վանդակակյաց** թռչուններ:

ՎԱՆԴԱԿԱՀԱԿ, ած. **Վանդակին հակված, վանդակի վրա կռացած: Վանդակահակ** երեխաներ: Փշատենու **վանդակահակ** ճյուղերը ծաղկել՝ բուրում էին *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՀԱՏ, ած. (փխբ.): **Վանդակը հատած՝ կտրած՝ վանդակից (այն բացելով՝ ջարդելով ևն) գողություն անող:** Քննիչը գրպանահատ բառի նմանությամբ ... սարքել էր **վանդակահատ** գողեր արտահայտությունը *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՀԱՐ, ած. **Վանդակին հարող՝ մոտ ընկած՝ կպած**: Կատուն պատշգամբ էր հասել **վանդակահար** բարդու վրայով *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՀԼՈՒ, ած., մկբ. **Վանդակին՝ վանդակային կյանքին հլու՝ հնազանդ՝ ենթարկվելով: Վանդակահլու** ապրում է այնտեղ և առյուծ արքան.... *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՀՈՏ, գ. **Վանդակներից փչող հոտ:** Չմաքրվող գազանանոցի **վանդակահոտը** վերևի բնակիչներին է հասնում *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՃԵՄ, ած. **Վանդակում ճեմող:** Նախանձով էր նայում իրենց կյանքից գոհ **վանդակաճեմ** շնագայլերին *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՄԱՀ, ած. **Վանդակում մահացած՝ սատկած: Վանդակամահ** կենդանի:

ՎԱՆԴԱԿԱՄԱՂՁ, գ. **Վանդակային՝ անազատ կյանքից առաջացած մաղձ՝ դառնություն՝ատելություն՝ զայրույթ:** Առաջին իսկ առիթով կատաղած հովազը իր **վանդակամաղձը** թափել էր ամեն առավոտ վանդակը մաքրող խեղճ կնոջ գլխին *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՄԱՍ, գ. **Վանդակի մաս՝ հատված:** Աջ՝ ստվերոտ ու հով **վանդակամասը** մայր կապիկը հատկացրել էր նորածիններին ….*(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՄԵՐՁ, ած. **Վանդակին մերձ՝ մոտ՝ հարող: Վանդակամերձ** տարածք մտնելը խստիվ արգելվում է *(ցուցանակ):*

ՎԱՆԴԱԿԱՄՈՏ, ած. **Նույնն է՝ Վանդակամերձ: Վանդակամոտ** աղբյուր:

ՎԱՆԴԱԿԱՄՈՒՏ, գ. **Վանդակ մտնելը՝ վանդակում տեղավորվելը, վանդակային կյանք սկսելը:** Օձերի **վանդակամուտը:**

ՎԱՆԴԱԿԱՆԿԱՐ, ած. **Վրան վանդակներ նկարած, վանդականախշ: Վանդականկար** վզնոց:

ՎԱՆԴԱԿԱՇԵՄ, գ. **Վանդակի շեմ՝ մուտք**: Սայթաքել **էր վանդակաշեմին**….*(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՇԵՐՏ, ած. **Վանդակաձև նախշերով՝ վանդակներով շերտավորված: Վանդակաշերտ** կտորից շրջազգեստ:

ՎԱՆԴԱԿԱՉԱՓ, ած. **Վանդակի չափ՝ մեծություն ունեցող**: Ինչո՞ւ է հոգիս վանդակվել իր **վանդակաչափ** բարձրավանդակում *(ՄԿ):*

ՎԱՆԴԱԿԱՍԱԼ, գ. (շին.): **Վանդակաձև՝ քառանկյունի սալ: Վանդակասալերի** միացումների անորակության պատճառով դրանց միջև ճեղքվածքներ էին գոյացել *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՍԱՅԼ, գ. **Վանդակի ձև ունեցող (ճաղապատ՝ քառանկյուն կողերով ևն) սայլ:** Ամբոխը կիսվեց՝ ճանապարհ տալով **վանդակասայլին** *(Հ.Ղուկասյան):*

ՎԱՆԴԱԿԱՍՈՒՆ, ած. **Վանդակում՝ անազատ վիճակում սնված՝ ապրած՝ մեծացած: Վանդակասուն** կենդանիներ: Ազատ շարժիր թևերդ, **վանդակասուն** իմ մանկիկ *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՏԱՆԻՔ, 1. ած. **Վանդակաձև՝ քառանկյունի տանիք ունեցող՝ տանիքով**: 2. ած. **Ճաղապատ տանիք ունեցող՝ տանիքով**: 3. գ. **Վանդակի տանիք՝ ծածկ**: Բների **վանդակատանիքները**.... մաղ են դարձել *(մամուլ):*

ՎԱՆԴԱԿԱՏԵՂ, գ. **Վանդակները դնելու տեղ**: Պարզ գծագրվում էին սևին տվող **վանդակատեղերը***(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՑՈՒՅՑ, գ. **Վանդակի տեղը ցույց տվող՝ մատնանշող ցուցանակ**: Կրծողների **վանդակացույցի** սլաքը.... թեքվել էր դեպի տնօրենի գրասենյակի շենքը *(թարգմ):*

ՎԱՆԴԱԿԱՓԱԿ, 1. ած. **Վանդակում փակված՝ արգելափակված, վանդակարգել**: **Վանդակափակ** կենդանիների բազմացում: 2. գ. **Վանդակի փակ, վանդակը փակելու հարմարանք (կողպեք, սողնակ ևն):** Ջարդված **վանդակափակ:**

ՎԱՆԴԱԿԱՓԱՅՏ, գ. **Վանդակ(ներ) պատրաստելու՝ սարքելու շինափայտ (ճաղեր, տախտակներ ևն):**

ՎԱՆԴԱԿԱՓՈԽ, ած. **Վանդակը փոխած՝ մի վանդակից մյուսը տարված: Վանդակափոխ** գազանիկը անհանգստության նշաններ էր ցույց տալիս *(մամուլ):*

ՎԱՆԿԱԲՈՒՆ, գ. **Վանկի միջուկ՝ բուն:** Ձայնավորները վանկարար են և վանկի կազմում հանդես են գալիս իբրև **վանկաբուն** (*Անդին, թ. 7-8, 2015):*

ՎԱՇՏԱԳՆԴԱՑԻՐ, գ. (ռազմ.): **Վաշտային՝ վաշտին հատկացված գնդացիր: Վաշտագնդացիրը** լռեցվեց ակնթարթորեն *(թարգմ):*

ՎԱՉԿԱԽՈՒՄԲ, գ. **Վաչիկներով ճանապարհորդող՝ վաչիկներում ապրող մարդկանց խումբ:** Թուրքական և քրդական **վաչ-կախմբեր***(թարգմ):*

ՎԱՌԵԼԱԽՈՒՑ, գ. (տեխ.): **Վառելանյութի այրման խուց**: Վթարը տեղի է ունեցել Բոինգի կենտրոնական **վառելախցում** տեղի ունեցած պայթյունից *(մամուլ):*

ՎԱՌՈԴԱԾԻՐ, գ. **Վառոդի ծիր՝ այրված վառոդի հետք՝ հետագիծ օդում: Վառոդածիրը** մատնեց հրաձիգի թաքստոցը *(թարգմ):*

ՎԱՌՈԴԵՂԵՆ, ած. (փխբ.): **Շատ շոգ, սաստիկ այրող՝ տապ:** Մի շաբաթվա չափ կրակվում էին շոգ, ասես **վառոդեղեն** օրեր *(թարգմ):*

ՎԱՎԵՐԱՊԱՏՈՒՄ, գ. **Վավերական իրադարձություններ ներկա-յացնող ստեղծագործություն(ներ)**: Մ.Սարգսյանի **«վավերապատու-մը»** սկսվում է 1943-ից, Հայրենական պատերազմի խրամատներից հարազատներին գրած սեղմ ու տարողունակ մի նամակից.... *(Իր., 10.06.2016):*

ՎԱՏԱԳՈՒՅԺ, ած. **Վատ՝ չարագուշակ բանի մասին գուժող՝ հայտ-նող՝ լուր տվող:** Գների նոր բարձրացման մասին **վատագույժ** հաղորդագրությունը տեղ հասավ կեսօրին ....*(մամուլ):*

ՎԱՏԱՁՈՒՅԼ, ած. 1. **Վատ՝ անորակ ձուլված**: **Վատաձույլ** հումքից լավ արտադրանք չես ստանա *(թարգմ):* 2. (փխբ.): **Վատ՝ ոչ ամուր՝ ոչ**

սերտորեն միացած: Այսօր ականատես ենք հարյուրավոր, արդեն ամուսնացած **վատաձույլ** զույգերի բաժանման *(թարգմ):*

ՎԱՏԱՄՈՐԹ, ած. 1. **Վատ՝ ոչ անհրաժեշտ՝ ընդունված ձևով մորթված: Վատամորթ** աքլորը դեռ երկար թպրտում էր *(թարգմ):* 2. Վատամորթի:

ՎԱՏԱՄՈՐԹԻ, ած. **Վատ՝ անորակ՝ օգտագործման համար ոչ պիտանի**: Ճագարների **վատամորթի** ցեղ:

ՎԱՏԱՍԱՀ, ած. 1. **Վատ՝ անվարժ՝ ոչ հմուտ սահող՝ սղղացող**: Նորավարժ և **վատասահ** այցելուներին տրամադրվում է առանձին սահուղի *(մամուլ):* 2. **Վատ սահունակություն ունեցող,դժվարասահ: Վատասահ** դահուկներ:

ՎԱՏԱՏԵՆՉ, ած. **Վատ՝ վատություն՝ վատ բաների մասին տենչացող, վատություն անել ձգտող**: Ես այդպիսին չէի ջահել ժամանակ…. կյանքը ինձ դարձրեց **վատատենչ** ու չարասիրտ *(թարգմ):*

ՎԱՏԱՔԱՅԼ, ած. **Վատ՝ ոչ պահանջվող ձևով՝ անկանոն քայլող**: **Վատաքայլ** ջոկը պատժվում էր օրապահությամբ *(թարգմ):*

ՎԱՐԱԳՈՒՐԱՊԱՍՏԱՌ, գ. **Վարագույրի պաստառ**: Պատուհանը ծածկված էր ծանր **վարագուրապաստառով***(թարգմ):*

ՎԱՐԱՐԱՆՁՐԵՎ, ած. **Վարար՝ հորդ անձրևներով բնորոշվող՝ ունեցող: Վարարանձրև** գարուն՝ աշուն:

ՎԱՐԱՐԱՐՅՈՒՆՔ, ած.**Վարար՝ առատ՝ շատ արցունք թափող, լացող, ողբացող**: Սփոփանքի ինչ խոսք գտնեմ, որ ասեմ ձեզ, **վարարարցունք** մայրե՛ր, քույրե՛ր…. *(մամուլ):*

ՎԱՐԱՐԱՍԵՐ, ած (հզվդ.): 1. **Բուռն, բորբոքուն կերպով սիրող՝ սեր ունեցող՝ արտահայտող**: 2. **Ցանկասեր, կրքոտ կերպով սիրող՝ սեր արտահայտող: Վարարասեր** աչքեր:

ՎԱՐԳԱՄՐՑՈՒՅԹ, գ. (մարզ.): **Վարգարշավ:** Մածնավաճառները .... մեկ-մեկ էլ ավանակների **վարգամրցույթ** էին կազմակերպում *(թարգմ):*

ՎԱՐԳԱՍԱՀ, մկբ. **Վարգով սահելով, համընթաց առաջ գնալով, վարգարշավ**: Դարպասից ելնելով՝ **վարգասահ** գնաց բարձր եղևնիների կողքով *(թարգմ):*

ՎԱՐԴԱՐԾԱԹԱՎՈՒՆ, ած. (հզվդ.): **Վարդագույնին տվող արծաթավուն**: Զարդարուն, **վարդաարծաթավուն** ծրագրեր.... *(թարգմ):*

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ, գ. (փխբ.): **Վարդերից՝ վարդափնջերից՝ վարդապսակներից կազմված բլուր՝ բլրակ:** Գերեզմանի վրա բարձրացող **վարդաբլուրը** նրա նկատմամբ հարգանքի առհավատչյան էր *(մամուլ):*

ՎԱՐԴԱԲՈՂԲՈՋ, ած.**Վարդի նման բողբոջած՝ բողբոջող, կիսաբաց, նորաբողբոջ, մատղաշ: Վարդաբողբոջ** շուրթեր: **Վարդաբողբոջ** կուրծք:

ՎԱՐԴԱԲՈՐԲ, ած. **Վարդի նման բորբ՝ տաք՝ ջերմ: Վարդաբորբ** ժպիտ:

ՎԱՐԴԱԲՈՑ, ած. **Վարդագույն բոց՝ ցոլք արձակող՝ ունեցող: Վարդաբոց** շուրթեր:

ՎԱՐԴԱԳՈՎ, ած. **Վարդ գովող՝ երգող՝ վարդով հմայված՝ գրավված: Վարդագով** սոխակ:

ՎԱՐԴԱԳՈՎՔ, գ. (հզվդ.): **Գովք՝ գովասանություն վարդին, վարդին նվիրված ստեղծագործություն:** Բանաստեղծի **վարդագովքը** նորովի է շնչում *(մամուլ):*

ՎԱՐԴԱԳՈՒՆԱՆԱԼ, չբ. **Վարդագույն դառնալ: Վարդագունացող** ծովի մակերեսին նավեր ու նավեր էին շատանում *(թարգմ):*

ՎԱՐԴԱԴՅՈՒԹ, ած. (հզվդ.): **Վարդով դյութված՝ գրավված: Վարդաղյութ** սոխակ՝ սիրահար:

ՎԱՐԴԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող դարչնագույն: Վարդադարչնագույն** բծեր:

ՎԱՐԴԱԶԱՐԴԵԼ, բ. 1.**Վարդազարդ դարձնել, վարդերով պատել: Վարդազարդել** ամբիոնը՝ կամար՝ գործվածք: 2. **Վարդենիներով պատել, վարդենիներ տնկել՝ աճեցնել**: Ծառուղին երկու կողմից **վարդազարդել** էին վաղ գարնանը *(թարգմ):*

ՎԱՐԴԱԹԱՎԻՇ, ած. 1. **Վարդի նման նուրբ՝ քնքուշ՝ գեղեցիկ**: 2. **Վարդագույն նրբամաշկով: Վարդաթավիշ** կուրծք:

ՎԱՐԴԱԹԵՅ, գ. **Վարդի (չորացած) պսակաթերթիկներով պատրաստված թեյ: Վարդաթեյի** բուրմունքը գլխապտույտ էր առաջացնում *(թարգմ):*

ՎԱՐԴԱԹՈՎ, ած. **Վարդով՝ նրա գեղեցկությամբ ու հմայքով թոված: Վարդաթով** աշուղ:

ՎԱՐԴԱԹՐԹԻՌ, ած. (փխբ.): **Վարդի նման թրթռուն՝ նուրբ ու քնքուշ:** Չէր կարողանում հայացքը կտրել անծանոթուհու **վարդաթրթիռ** շուրթերից *(թարգմ):*

ՎԱՐԴԱԽԱԲ, ած. 1. **Վարդ(եր)ից խաբված**: 2. (փխբ.): **Վարդի նման գեղեցիկ՝ դուրեկան՝ հաճելի ինչ-որ բանից խաբված**: Կույր ու **վարդախաբ՝** …. փշի դեմ առա *(մամուլ):*

ՎԱՐԴԱԽԱՅԹ, 1. գ.(փխբ.): **Վարդի՝ վարդենու փշի խայթելը՝ ծակելը**: 2. ած. **Վարդից խայթված: Վարդախայթ** սիրտ:

ՎԱՐԴԱԽԱՅԾ, գ. (փխբ.): **Վարդի նման՝ ինչ-որ արտակարգ գեղեցիկ ու գրավիչ բան, որը օգտագործվում է որպես խայծ: Վարդախայծից** խաբվեցի, տատասկ փուշը սիրտս առա *(մամուլ):*

ՎԱՐԴԱԽԵՆԹ, ած. **Վարդ(եր)ից խենթացող՝ խանթացած, վարդեր շատ սիրող: Վարդախենթ** ծաղկաբույծ:

ՎԱՐԴԱԾԱՂԿՈՒՆ, ած. **Վարդերով՝ վարդենիներով ծաղկուն: Վարդածաղկուն** պարտեղ:

ՎԱՐԴԱԿԱՊՏԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող կապույտ գույնի՝ գույն ունեցող: Վարդակապտագույն** կավաշեն տներ *(թարգմ):*

ՎԱՐԴԱԿՈԹ, գ. **Վարդենու ծաղկի՝ վարդի կոթը՝ կոթունը**: Շոգ կեսօրին բողբոջները **վարդակոթերից** ներքև են կախվում *(թարգմ):*

ՎԱՐԴԱՀԱԳ, ած. **Վարդ(եր)ից՝ վարդ(եր)ի բույրից հագեցած՝ կշտացած:** -Զանձրանա՞մ: **Վարդահագ** սոխակ տեսե՞լ ես *(մամուլ):*

ՎԱՐԴԱՀԱՍՈՒՅԹ, գ. **Վարդերի վաճառքից՝ վարդերից ստացվող հասույթ՝ շահ**: Ռուսաստանից .... բերած **վարդահասույթով** տունս սարքեցի *(մամուլ):*

ՎԱՐԴԱՀԵԾ, ած. **Վարդերը կորցնելու՝ վարդերի կորստի պատճառով հեծեծացող՝ դառնորեն լացող՝ ողբացող**: Վարդերի ջերմոցները ավերեցին, ու բոլորս դարձանք **վարդահեծ** սոխակներ *(մամուլ):*

ՎԱՐԴԱՀՈԾ, ած. **Վարդենիներով՝ վարդերով խիտ ծածկված, վարդապատ: Վարդահոծ** նախագավիթ:

ՎԱՐԴԱՀՈՎԻՏ, գ. **Վարդերի՝ վարդենիներով պատված՝ ծածկված հովիտ**: .... Ինչպիսի՜ **վարդահովտում** եք ապրում *(թարգմ):*

ՎԱՐԴԱՀՐԱՊՈՒՅՐ, 1. գ. **Վարդի հրապույր՝ գրավչություն**: **Վարդահրապույրը** ամեն առավոտ նրան քաշում էր այդ պուրակը, որտեղ վարդ էին ծախում *(մամուլ):* 2. **Վարդերից՝ վարդերով հրապուրված, վարդերի հրապույրով տարված: Վարդահրապույր** սոխակ դարձած երգում էր հմայիչ *(թարգմ):*

ՎԱՐԴԱՃՄՈՒՌ, ած. **Վարդի ճմռած՝ տրոր(վ)ած թերթիկներից պատրաստվող, սարքվող: Վարդաճմուռ** զանգվածի վրա շաքարի փոշի կամ ավելի լավ է նույն տարվա քամած մեղր են ավելացնում …. *(մամուլ):*

ՎԱՐԴԱՃԵՐՄԱԿ, ած. 1. **Վարդագույնին տվող ճերմակ**: 2. **Վարդագույն և ճերմակ շերտերով պատված՝ շերտերից կազմված: Վարդաճերմակ** դրոշներ *(թարգմ):*

ՎԱՐԴԱՃՅՈՒՂ, գ. **Վարդենու՝ ծաղկած վարդերով ճյուղ: Վարդաճյուղի** վրա ծաղկած վարդերը վառվում են թանկագին քարերի նման *(թարգմ):*

ՎԱՐԴԱՄԱՆԻՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող մանիշակագույն: Վարդամանիշակագույն** ծաղիկներ:

ՎԱՐԴԱՄԱՑԱՌ, ած., գ. **Վարդենու՝ մասրենու մացառներով պատված (հանդամաս, հողակտոր ևն):** Կտրտել էր անանցանելի **վարդամացառները** ու պատվաստել *(մամուլ):* Անմշակ, **վարդամացառ** պարտեզ *(թարգմ):*

ՎԱՐԴԱՄՇԱԿ, ած. **Վարդ(ենիներ) մշակող՝ խնամող: Վարդամշակ** հողագործ:

ՎԱՐԴԱՆԱՆԱԼ, չբ. (փխբ., բնստ.): **Վարդան Մամիկոնյան դառնալ, հայրենիքի համար անել այն, ինչ Վ.Մամիկոնյանը իր ժամանակ, անձնվեր՝ անսահման հայրենասիրությամբ տոգորվել: Վարդանացած** հայոց քաջեր…. *(մամուլ):*

ՎԱՐԴԱՆԱՑՎԵԼ, կր. և չբ., վարդանացնել-ի: Հորս տնկած վարդենիք՝ խնկաբույրով ամբրոսի մրցում էին փառքի հետ **վարդանացված** Շիրազի *(ՀՇ):*

ՎԱՐԴԱՆՎԵԼ, չբ. (բնստ.): **Վարդան Մամիկոնյանի մեջ մարմնավորվել, հայրենիքի համար անձնուրաց պայքարել:** Ավարայրից Սարդարապատ …. հայ ոգին **Վարդանվելով** այս էլ ահա տասնվեց դար անդադար Մասիսվել է ….*(ՀՇ):*

ՎԱՐԴԱՇԵՂՋ, գ. **Վարդերի շեղջ՝ կուտակ՝ կույտ**: Բեմի առաջամասի **վարդաշեղջը** արագ բարձրանում էր *(մամուլ):*

ՎԱՐԴԱՇՂԹԱ, գ. **Վարդերով՝ վարդերից պատրաստված՝ հյուսված շղթա, վարդերի դրասանգ:** Անուշաբույր **վարդաշղթան**, որ ստացել էր Հնդկաստանում, մասունքի պես պահում էր *(մամուլ):*

ՎԱՐԴԱՊԱՐՏԵԶ, գ. **Վարդերի պարտեզ. պարտեզ, որտեղ վարդեր են աճում**: Առավոտյան վաղ՝ դեռ ցողը չանցած, իջնում էր **վարդապարտեզ** ….*(թարգմ):*

ՎԱՐԴԱՏԵՂ, 1. գ. **Վարդ(եր)ի՝ վարդենիների տեղ (վաճառքի վայր, աճեցնելու հողակտոր ևն):** Շուկայում **վարդատեղերի** քարե սափորները դատարկ են *(մամուլ):* 2. ած. **Վարդի տեղ դրված, վարդ համարված, վարդի փոխարեն**: Մտել ես վարդանոց ու **վարդատեղ** տատասկ փնջել ….*(թարգմ):*

ՎԱՐԴԱՑԱՅԳ, գ. **Վարդագույն ցայգ՝ արշալույս: Վարդացայգին**, երբ սկսվեց սոխակի դայլայլը, աշխարհն էլ վարդաշաղ դարձավ *(թարգմ):*

ՎԱՐԴԱՑՈՒԼ, ած. **Վարդի նման՝ գույնով ցոլացող**: Վերջալույսին լճակի **վարդացոլ** մակերեսին …. նավակների ստվերներ երևացին *(թարգմ):*

ՎԱՐԴԱՑՈՒԼՔ, գ. **Վարդագույն ցոլք**: Ջրին նայել չէր լինում՝ **վարդացոլքը** կուրացնում էր *(թարգմ):*

ՎԱՐԴԱՓԱՅՏ, գ.**Վարդագույն փայտ (որից թանկարժեք կահույք են պատրաստում):**

ՎԱՐԴԱՔԱՂ, ած. 1. **Վարդ քաղող, վարդենու ծաղիկները որպես զարդածաղիկ կոթունով թփից կտրող: Վարդաքաղ** աղջիկ, մատդ կծակես *(թարգմ):* 2. Վարդի ծաղկաթերթիկները հավաքող (տնտեսական կամ արդյունաբերական նպատակներով): Արևը դեռ չէր բարձրացել …., և դիմացի լանջի վարդանոցից լսվում էր գույնզգույն գոգնոցներով **վարդաքաղ** աղջիկների զրնգուն երգը *(թարգմ):*

ՎԱՐԴԱՔԱՄՎԱԾՔ / ՎԱՐԴԱՔԱՄՈՒՔ, գ. **Վարդի ծաղկաթերթիկներից ստացված քամվածք՝ քամուկ**: Մեր գյուղում այրված տեղին **վարդաքամվածք** են դնում *(մամուլ):*

ՎԱՐԺԱԳՆԴԱԿ, գ. (մարզ.): **Բռնցքամարտիկներին մարզելիս օգտագործվող գնդակաձև մարզաիր:** Նա չարացած խփում էր բռնցքամարտի **վարժագնդակին***(թարգմ):*

ՎԱՐԺԱՀԱՐԹԱԿ, գ. **Վարժական՝ ուսումնական հարթակ**: Զրացատկի **վարժահարթակ**:

ՎԱՐԺԱՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ, գ. (մսնգ.): **Վարժական՝ ուսումնական՝ մարզական հրաձգություն: Վարժահրաձգության** մարզումների համար ինքներս ենք փամփուշտ գնում…. *(մամուլ):*

ՎԱՐԺՈՎԻ, ած. **Վարժեցված, վարժ(վ)ելու հետևանքով ստացվող, ոչ բնական, հավուր պատշաճի:** Հայտնվեց մեկը ճերմակ կուրտկայով, **վարժովի** հերթապահ ժպիտ պարգևեց Չերչիլին *(թարգմ):*

ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՈՒՄ, գ. **Վարկանիշի սահմանում:** Ստեղծել դպրոցների **վարկանիշավորման** համակարգ *(Հմգ):*

ՎԱՐՁԱԳԱՆՁԵԼ, բ. **Վարձը գանձել: Վարձագանձել** ըստ էլեկտրահաշվիչների ցուցումների:

ՎԱՐՁԱՇԵՆՔ, գ. **Վարձու (վարձված, վարձելիք, վարձվող) շենք:** Խմբագրությունը իր գոյությունը քարշ է տալիս **վարձաշենքի** նկուղային հարկում *(մամուլ):*

ՎԱՐՁԵՐԹ, գ. **Փոխադրամիջոցի լրիվ կամ մասնակի վարձակալում, վճարով փոխադրամիջոցը ամբողջությամբ կամ նրա մի մասը վարձակալելը (չարտեր):**

ՎԱՐՁԵՐԹԱԿԱԼ, գ. **Փոխադրամիջոցը (ինքնաթիռ, նավ, ավտոմեքենա ևն) վարձակալած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:**

ՎԱՐՁԱՇԵՆՔ, գ. **Վարչական՝ կառավարչական շենք:**

ՎԱՐՍԱԿԱՀՈՒՆԴ, գ. **Վարսակի հունդ՝ հատիկ՝ սերմ՝ վարսակ:** Երաշտից ցմքած **վարսակահունդ:**

ՎԱՐՍԱԿԱՀՈՒՆՁ, ած. **Վարսակ հնձող: Վարսակահունձ** կոմբայն:

ՎԱՐՍԱՊՍԱԿ, գ. **Վարսերի՝ մազերի պսակ՝ պսակաձև՝ շրջանաձև հյուսք՝ հյուսվածք:** Երկու հյուսերի փոխարեն, որոնք ժամանակին սիրում էր ետ գցել գլխի ընդոստ շարժումով, ծանր **վարսապսակ** էր եզերում գլուխը *(թարգմ):*

ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Վարսավիրանոցին հատուկ, վարսավիրանոցի**: Խանգարում էր միայն օտար, **վարսավիրանոցային** հոտը *(թարգմ):*

ՎԱՐՈՒՆԳԱՋՈՒՐ, գ. 1. **Վարունգահյութ:** 2. **Ոռոգման համար վարունգին տրվող ջուր**: Շոգ եղանակներին **վարունգաջուրը** շատ սառը չի կարելի տալ *(մամուլ):*

ՎԱՐՔԱՏԵՐ, ած. **Վարքի տեր**: Նման **վարքատեր** իշխանությունը ունակ է նաև այլ մերժումների, նաև նորանոր կոտորածների *(ԳԹ, 20.02.2015):*

ՎԵՐՆԱԿՈՒՅՏ, գ. Այստեղ՝ **ապօրինի հարստացած խավ:** Ինքս առաջարկում եմ հետևյալ ելքը. **վերնակույտը** պետք է զողոն-գույքը վաճառի *(Իր., 05.06.2015):*

ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերադարձնելի լինելը:** Որոշ-մամբ կանոնակարգվում են օտարերկրյա պետություններում զինծա-ռայողին բուժման ուղարկելու գործընթացը, բուժման, ճանապարհա-ծախսի և կեցության գումարի ձևավորման, հատկացման և դրա հետ **վերադարձնելիության** հետ կապված հարաբերությունները *(ՀՀ, 24.04.2016):*

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերադարձելի լինելը:** Ամենակո-պիտ կերպով խախտվել է արևմտյան ֆինանսական կարևորագույն սկզբունքներից մեկը՝ չտալ պարտք, եթե վստահ չես դրա **վերադարձվե-լիությանը***(Ազգ, 10.07.2015):*

ՎԵՐԱԿԻՍՎԵԼ, բ. **Վերաբաժանվել:** Աշխարհը՝ **վերակիսվելու** շե-մին *(Իրավունք, 23.09,2015):*

ՎԵՐԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերստին ձեռք բերված անկախություն: - Վերանկախության** տարիներին հրապարակագիրներն ու սյունակա-գիրները երջանիկ են …. *(ԳԹ, 16.09.2016):*

ՎԵՐԱՊՐՈՂ, գ. Այստեղ՝ **փրկված:** Փորձ է արվում թուրքի, քրդի, արաբի օգնությամբ ամեն մի հայ **վերապրողի,** ներկայացնել որպես փրկվածի (*Անդին, թ. 1, 2015):*

ՎԵՐՆՈՒՂԻ, գ. **Վերև տանող ուղի:** Շոգի և տոթի, արևի խենթությու-նից գայթակղված մարդը քայլերն ուղղում, մոտենում է վերև տանող փողոցի աջ մայթը զարդարող ծառուղու ծառախիտ ուղեգիծը երիզող **վերնուղուն** (*Անդին, թ. 9-10, 2015):*

ՎԵՐՋՆԱՀԱՆԳ, գ. **Տողավերջի հանգը:** Բանաստեղծությունը ներքին հանգի, **վերջնահանգի,** հնչյունական ներդաշնակության համադրման օրինակ է *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՎԵՐՋՆԱՀԱՆԴԵՍ, գ. **Եզրափակիչ հանդիսություն:** Նորաստեղծ փառատոնի անխաթար ընթացքի **վերջնահանդեսին** Աբովյանում թատերարվեստի զարգացումը խթանելու համար Վահագն Գրիգորյանն արժանացավ …. ոսկե մեդալի *(Ավ., 14.10.2015):*

ՎԵՐՋՆԱՍՏՈՒԳՈՒՄ, գ. **Վերջնական ստուգում:** Ինչ - որ մեկը, **վերջնաստուգման** համար մահականման ծառի մի հին ճյուղով, համենայն դեպս, հրում է արջին *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՎԵՐՋՆԱՎՃԻՌ, գ. **Վերջնական որոշում:** Հանձնաժողովի **վերջնավճռի** մասին մենք տեղեկացանք հունիսի սկզբին *(ՀՇ, թ. 4, 2015):*

ՎԵՑՀԱՏՈՐՅԱԿ, գ. **Վեցհատորյա հրատարակություն:** Իսկ«Հայկական ճարտարապետության պատմության»**վեցհատորյակի՝** հարուստ պատկերազարդված երկրորդ (2002) և երրորդ (2004) հատորները լույս տեսան Մ.Հասրաթյանի խմբագրությամբ *(Լրաբեր, 2, 2015, էջ 431):*

ՎԶԱՄԱՍ, գ. Այստեղ՝ **հագուստի վիզը:** Նոպայի ժամանակ ծվեն-ծվեն եղած հագուստի վրայից հագած **վզամասի** լայն բացվածքով պարուսինե կոպիտ բաճկոնը գրկել էր նրա իրանը *(Գարուն, թ. 3-4, 2014):*

ՎԻՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ,գ. **Վիպային լինելը:** Նովելին ևս բնորոշ է **վիպայնությունը**, օրինակ՝ Զոհրապի նովելներից շատերը, դրանք նովելապատմվածքներ են, վեպի ճյուղեր *(ԳԹ, 08.04.2016):*

ՎԻՔԻ, գ. Առհասարակ զարգացում ապրեցին բոլոր նախագծերը, որոնց պայմանավորված էին **վիքիով** *(Իր., 10.06.2016):*

ՎԻՔԻԲԱՌԱՐԱՆ, գ.**էլեկտրոնային բառարան:** ….Մենք առաջ անցանք տարածաշրջանի այլ վիքիմեդիաներից, ունեցանք բավական հարուստ **վիքիբառարան**, վիքիդարան *(Իր., 10.06.2016):*

ՎԻՔԻԴԱՐԱՆ, գ. Տե՛ս ՎԻՔԻԲԱՌԱՐԱՆ-ի օրինակը:

ՎԻՔԻՄԵԴԻԱ, գ. Տե՛ս ՎԻՔԻԲԱՌԱՐԱՆ-ի օրինակը:

ՎԻՔԻՊԵԴԻԱ, գ. **Ազատ հանրագիտարան, որը բաց է խմբագրման և լրացման համար:** Դրանց թվում կարևոր էր«Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպությանը հատկացված օգնությունը, որի շնորհիվ հայերեն **վիքիպեդիան** ընդլայնվեց՝ հասնելով շուրջ երկու հարյուր հազար հոդված ունեցող **վիքիպեդիայի** *(Իր., 10.06.2016):*

ՎՇՏԱԲԵՐԿՐՈՒՆ, ած. **Վշտալի և բերկրալի:** Նա **վշտաբերկրուն** արցունքներն աչքերին պատմում էր, որ ինչ-որ հրաշքով վերագտել ու վերապրել էր իր կորսված մանկությունն ու ծննդավայրը *(ՎՅ, էջ 244):*

Տ

ՏԱԳՆԱՊԱԶԴ, գ. (ռազմ): **Տագնապի ազդանշան: Տագնապազդը** հնչեց արշալույսին ականջ ծակող սուլոցով *(թարգմ.):*

ՏԱԳՆԱՊԱՇԱՏ, ած. **Տագնապալից:** Ծերունի Արբակը երևակայական տեսիլքից սթափվեց միայն կառքի մեջ, երբ լսեց Հուսիկի արտաքուստ հանդարտ, սակայն **տագնապաշատ** ձայնը *(ՌԿ, էջ 15):*

ՏԱԽՏԱԿԱՄԱԾԵ, ած. **Տախտակապատ, տախտակներով ծածկված: Տախտակամածե** հատակ*(Ադ.Այվազյան):*

ՏԱԽՏԱՆԱՎ, գ. **Տախտականավ:** Գետը սառցապատվելուց առաջ **տախտանավերը** ափ էին քաշվում *(թարգմ.):*

ՏԱՂԱՉԱՓԱԳԵՏ, գ. **Տաղաչափագիտություն մասնագետ:** ….Տարբեր **տաղաչափագետներ** իրավամբ հանգը համարում են չափական կառուցվածքի տարր *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՏԱՂԱՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Տաղաչափագիտությանը հատուկ՝ վերաբերող, տաղաչափագիտության:**

ՏԱՂԱՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գրականագիտության բնագավառ, որն ուսումնասիրում է չափածո խոսքի՝ որպես լեզվի առանձնահատուկ համակարգի, ձևական կառուցվածքի տարրերը: Տաղաչափագիտությունը** ունի չորս հիմնական բաժին՝ չափագիտություն, հանգիտություն, բանաստեղծական տների կառուցման տեսություն և տեսություն բանաստեղծական կայուն ձևերի (հայրեն, սոնետ…., գազել ևն) մասին *(Դ.Գասպարյան):*

ՏԱՃԱՐԱԳՄԲԵԹ, 1. գ. **Տաճարի գմբեթ:** Բոլորին …. հայտնի է ս. Սոֆիայի **տաճարագմբեթը** վերականգնող հայ ճարտարապետ-շինարարի անունը *(մամուլ.):* 2. ած.**Տաճարի գմբեթի նման գմբեթ ունեցող: Տաճարագմբեթ** շինություն:

ՏԱՃԱՐԱԶԱՆԳ, 1. գ. **Տաճարի զանգ:** 2. (փխբ.): ած. **Վեհ, հպարտ, վսեմ (ինչպես տաճարի զանգը): Տաճարազանգ** կոչնակ: **Տաճարազանգ** նախիրյան լեզու:

ՏԱՄԿԱՀՈՏ, գ. **Տամկության՝ խոնավության հոտ:** Շոգեհարված կեչավելի սաղարթային **տամկահոտը** պարուրեց նրան *(թարգմ.):*

ՏԱՄԿԱՇՈՒՆՉ, ած. **Խոնավություն պարունակող, խոնավություն արտաշնչող:** Նրան սնուցում, խնամում էր Լարան իր …. **տամկաշունչ** կոկորդային շշունջով *(թարգմ.):*

ՏԱՇՏԱՋՈՒՐ, գ. **Տաշտի ջուր:** Արջը դուրս եկավ սալաքարի **տաշտաջրից**, թափահարեց իրեն, հետո մոտենալով էգին մեկնվեց նրա կողքը *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՏԱՊԱՍՏԵԼ, բ. (իմ. նորբ., շին.): **Որևէ բանի տակ փռոց՝ վրաքաշ անել**: Զյութով **տապաստել** հատակը:

ՏԱՊԱՏՈՉՈՐ, ած. **Տապից՝ սաստիկ շոգից տոչորված՝ չորացած՝ խանձված: Տապատոչոր** արտեր:

ՏԱՊԱՐՈՒՄ, գ. **Տապարելը, տապարվելը:** Նախորդ իշխանությունների հիմքերի **տապարումը՝** կացնահարումը, հենց դրանից էլ սկսվեց *(մամուլ):*

ՏԱՌԱՊԱՀՅՈՒՍ, ած (բնստ.): **Տառապանքներից՝ տառապանքներով հյուսված՝ հորինված: Տառապահյուս** և թախծաձոր երգեր հայի *(մամուլ):*

ՏԱՌԱՊԱՎԱՅՐ, գ. **Տառապանքների վայր:** Երբ հայրենիքը դառնում է **տառապավայր**…. *(մամուլ):*

ՏԱՎՂԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Տավիղից հնչող:** Փակվեցին նախերգանքի **տավղահնչյուն** ակորդները *(Ջ, էջ 232):*

ՏԱՐԱԳԱՂԹԵԼ, չբ. **Տարագաղթ կատարել, օտար աշխարհ գնալ: Տարագաղթած** իմ եղբայրներ, ուշքի եկեք, դարձեք ձեր տուն *(մամուլ):*

ՏԱՐԱԳԱՂԹՈՒՄ, գ. **Տարագաղթելը, տարագաղթ կատարելը: Տարագաղթման** առաջն առնելու, գոնե գործընթացը ինչ-որ չափով դանդաղեցնելու, ամենագործուն միջոցը նոր աշխատատեղերի ստեղծումն է *(մամուլ):*

ՏԱՐԱԶԱՀԱՆԴԵՐՁ, ած. **Տարազով հանդերձավորված:** Խելամտորեն ընտրված իրարահաջորդ պատկերներով աներևույթ ուժգնանում է անմեղ նահատակների արյան կանչը մեր պատմական հայրենիքի **տարազահանդերձ** քարտեզի բոլոր արնաներկ հանգրվաններում *(Ակ., 07.05.2015):*

ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՈՐԵՆ, մկբ. **Տարաժամանակյա կերպով:** Պարոդիան ավերում է լեզվական նշանի կայունությունը՝ փոխակերպելով այն խոսքային նշանի, ներգործելով սյուժեի հետագծի վրա ու ձեռք բերելով խոսքի **տարաժամանակորեն** արտահայտված ներդաշնակության հատկանիշը *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՏԱՐԱԾՔԱԶՐԿԵԼ, բ. **Տարածքից զրկվել:** 95 տարի առաջ կնքվեց Հայաստանը **տարածքազրկող** Լենին- Աթաթուրք ոճրագործ պայմանագիրը *(Իրավունք, 18.03.2016):*

ՏԱՐԱԿԵՐՊՈՒՄ, գ. **Տարակերպ դարձնելը, տարակերպելը:** Դրան է ծառայում նաև լավ հայտնի սյուժեների բազմակի **տարակերպումը** *(ՎՅ, էջ 191):*

ՏԱՐԱՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարբեր մեկնություն, մեկնաբանություն:** Տե՛ս ՄԻԱԿԵՐՊԱՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՏԱՐԱՇԵՐՏ, ած. **Տարբեր շերտեր ունեցող:** Վահան Մարտիրոսյանի փախուստը Բաքու բազմիցս **տարաշերտ** քննարկումների առարկա դարձավ *(Ժող., 03.10.2015):*

ՏԱՐԱՇԵՐՏՎԵԼ, բ. **Տարբեր շերտերի հետ հարաբերվող:** Դասական հայ սփյուռքը…. արդեն թևակոխել է չորրորդ-հինգերորդ սերունդը, որը, մասնավորապես Արևմուտքի երկրներում, վերասերվում է առավելապես օտար ամուսնությունների հետևանքով ծնված խառնածին, հետևաբար և պարբերաբար փոխակերպվող ու **տարաշերտվող** ինքնությամբ, օտարախոս, օտարացած հավաքականության…. *(Լրաբեր, 2, 2015, էջ 124):*

ՏԱՐԲԵՐԱԿԵԼԻ, ած. **Տարբերակման ենթակա:** Պարոդիայի ժանրի հստակեցման սահմաններում **տարբերակելի** են տարատեսակներ…. *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՏԱՐԵԳՐԱՄԱՏՅԱՆ, գ. **Տարեգրության մատյան:** ….Այդ գրքերը հաստատապես գրանցեցին Ռոլանդ Շառոյան մանկական գրողի անունը դարավերջի մանկագրության **տարեգրամատյանում** *(ԳԹ, 12.07.2015):*

ՏԱՐԸՆԹԵՐՑՎԵԼ, բ. **Գրական ստեղծագործության՝ երկի տարբերակները տարբեր ընթերցելը, մեկնաբանելը:** Բանաստեղծի մահվանից հետո նրա ստեղծագործությունները ընթերցողից անկախ **տարընթերցվում են**. բոլորովին նոր ընկալումներ են փոխանցում, նորովի մտածմունքի առիթ են հանդիսանում….(*ԳԹ, 29.04.2016):*

ՏԱՐՓԱՌԱՏ, ած. **Տարփալի՝ տարփալից՝ սիրատենչ:** Մի անհագուրդ, **տարփառատ** համբույրով նրանց շուրթերը միաձուլվեցին…. *(Ջ, էջ 200):*

ՏԱՓԱՎԱՅՐ, գ. **Վարելահողի՝ արտի վայր՝ վարելատեղ, արտատեղ: Տափավայրերից** վերադարձող կանայք ապշած մնացին՝ լուրը լսելով *(թարգմ.):*

ՏԵԽՆԱԴԱՐ, գ. **Տեխնիկայով հագեցած դար:** ….Մեր **տեխնադարում** լուսանկարում են բոլորը *(Իր., 15.11.2016):*

ՏԵՍԱԲԱԺԻՆ, գ. **Տեսանյութերի հատված:** Իսկ **տեսաբաժնում** այսօր մոտոցիկլետներ են *(Հեռ., Արմնյուզ, 25.10.2016):*

ՏԵՍԱԾՐԵԼ, բ. Այստեղ՝ **փնտրել անհրաժեշտ ալիքը:** ….Միացրեց հեռուստացույցը և սկսեց **տեսածրել** ալիքները *(Արեն, էջ 125):*

ՏԵՍԱԿԱՄԵՐՁ, ած. Տե՛ս ԱՐԺԵՏԱՐԱԾՔ–ի օրինակը։

ՏԵՍԱՀԱՎԵԼՎԱԾ, գ. **Տեսանյութը որպես հավելված:** Հավելվածը համալրված է նաև «Дио»**տեսահավելվածով***(Եր. համ., հունիս-հուլիս, 2016):*

ՏԵՍԱՀՈՐԻԶՈՆ, գ. (փխբ.): **Մտահորիզոն՝ մտավոր տեսադաշտ:** Տարեցտարի կարծիքս, **տեսահորիզոնս** փոխվում է *(TV ալիք, 27.10.2014):*

ՏԵՍԱՆԿԱՐԵԼ, բ. **Տեսագրել, տեսանկարահանել:** Մենք,ասես տեսախցիկը ձեռքներիս և ոտքներս հրաշքով գետնից կտրած դիտում ու **տեսանկարում** ենք մեկ ճանապարհով ընթացող ընկերուհիներին *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՏԵՍԱՈՂՋՈՒՅՆ, գ. **Տեսագրված ողջույնը:** Տեղադրել էր հայտնի երգչուհիներին ուղղված **տեսաողջույն***(Հմ):*

ՏԵՍԱՍԱՐՔ, գ. **Տեսագրող սարք:** ….Խոսվում է գիշերային **տեսասարքերի** մասին*(ԳԹ, 01.05.2015):*

ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ, գ. **Տեսագրությունը վերարտադրող սկավառակ:** Երկար ժամանակ է, ինչ աշխատում ենք **տեսասկավառակի** վրա *(Իրավունք, 09.09.2015):*

ՏԵՍԱՍՓՅՈՒՌ, գ. **Պատկերասփյուռ, հեռուստացույց:** Ո՛չ, չէի սխալվել, ու դժվար էր հավատալ, որ անպատեհ ժամի **տեսասփյուռի** հաղորդումը այդքան դիտող էր ունեցել *(ԳԹ, 25.12.2015):*

ՏԵՍԱՔՆՆԱԿԱՆ,ած. **Տեսական և քննական:** Ժողովածուի առաջին հոդվածը՝ «Գրականագիտության բազմադիմությունը», **տեսաքննական** յուրատիպ մուտք–առաջաբան է հաջորդ հրապարակումների համար*….(ԳԹ, 08.04.2016):*

ՏԵՎԱԿԱՐԳ, գ. **Ժամանակի մեջ փոխհաջորդելու կարգ:** Մշտապես ներկան նշանակում է փոխանդրադարձումների անընդհատություն, և նման **տևակարգն** է հնարավոր դարձնում նրանց միևնույն դիրքը ժամանակի անվերջության մեջ *(ՎՖ, էջ 260):*

ՏԵՎԱԿԱՐԳԵԼ, բ. **Կարգաբերել ժամանակի մեջ:** Տե՛ս ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ-ի օրինակը:

ՏԵՐՄԻՆԱԲԱՌ, գ. **Տերմինի արժեքով գործածված բառ:** Նրա հրապարակումներում **տերմինաբառերն** աջ ու ահյակ սփռված չեն և, մա-

նավանդ, չեն ճչում, ներկա են ընտրովի, տեղը տեղին ու անհրաժեշտաբար*….(ԳԹ,08.04.2016):*

ՏԵՐՄԻՆԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (հեգն.): **Անհարկի շատ տերմիններ գործածել:** Տե՛ս ԽՈՍՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ–ի օրինակը:

ՏԻԵԶԵՐԱՀԱՆՃԱՐ, ած. **Տիեզերահամբավ, տիեզերահռչակ:** ….Աշխարհի մարդկությանը ներկայացրեց միջնադարյան հոգևոր գլուխգործոցը որպես «Գեոնային լուսապսակ» **տիեզերահանճա**ր երևույթ, ինչպես անվանել է ակադեմիկոսը, իսկ Նարեկացուն՝ որպես այդ հզոր ինֆորմացիոն թագի կրողն ու կապավորը *(ԳԹ, 04.09.2015):*

ՏԻԵԶԵՐԱՇՆՈՐՀ,ած. **Տիեզերական շնորհով՝ ձիրքով օժտված:** Ինչպես չասեմ՝ երկիր, որդիներդ աստծո զավակներ են, այսպիսի **տիեզերաշնորհ** մասնագետներ միայն հայերս ունենք…. *(ԳԹ, 08.04.2016):*

ՏԽՐԱՏԵՍՔ, ած. **Տխրատես՝ տխուր տեսք ունեցող՝ տխրատեսիլ: Տխրատեսք** գիշերը իր մութ դրոշմը դեռևս չէր հավաքել մարդկանց դեմքերից:

ՏՀԱՃԱՀԱՄ, ած. **Տհաճ համ ունեցող:** Հետո էլ սանձ գցեց, բերանը **տհաճահամ** երկաթ խոթեց *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՏՆԱՇԱՐՔ, գ. **Տների շարք:** Զորավարը նկատում էր նաև այն **տնաշարքերը**, որոնց լուսամուտների վարագույրներն անգամ չեն շարժվում *(ՌԿ, էջ 73):*

ՏՈՆՈՒՍԱՎՈՐԵԼ, բ. **Տոնուսը բարձրացնել:** Խատուտիկը օգտագործվում է որպես ջերմիջեցնող, օրգանիզմը **տոնուսավորող** և քրտնամուղ միջոց *(ՀԴ, թ. 1, 2014):*

ՏՊԱԳՐԱՆԿԱՐ, գ. **Տպագրված նկար, տպագիր նկար**: Հնատիպ հմայիլների նկարազարդումները ….ձեռագիր նախօրինակների

նմանողությամբ նախորդում են տեքստին, որոնք կապված են **տպագրանկարում** առկա կերպարի կամ հորինվածքի հետ *(Ազգ, 29.05.2015):*

ՏՊԱԳՐԱՏԱԽՏԱԿ, գ.**Տախտակ, որի վրա տպագրում են**: Սրբերի պատկերների համար հաճախ օգտագործված է միևնույն **տպագրատախտակը** ….*(Ազգ, 29.05.2015):*

ՏՈՒԳԱՆՔԱԾՐԱՐ, գ. **Տուգանքի ծանուցում պարունակող ծրար:** Իսկ ինչպես կկոծկեն նրանք արտառոց այն դեպքը, երբ երկու անգամ չստացած ու նամակում փոխած ազգանունով են ուղարկում **տուգանքաածրարը** *(Ազգ,16.10.2015):*

ՏՈՒԳԱՆՔԱՉԱՓ, գ.**Տուգանքի չափը:** Հարկադիր ծառայությունը ինչո՞ւ չի հետաքննում արդեն ուռճացված **տուգանքաչափը**…. *(Ազգ, 16.10.2015):*

Ր

ՐԱՖՖԻԱՄԵՐԺ, ած. **Ռաֆֆու ստեղծագործությունների արգելանքը ընդգրկող:** (Ժամանակահատվածի մասին): ….Այդ **ռաֆֆիամերժ** տարիներին (1920-ական թթ.) Ահարոնյանը …. ձգտում է ամեն կերպ, նաև այս հոդվածով իր հայրենակիցների ուշադրությունն ու միտքը սևեռել ժամանակների կապի վրա…. *(Լրաբեր, 1, 2016, էջ 268):*

Ց

ՑԱԽԱՇԱՐ, ած. **Ցախերով հյուսված:** Լուսիկը երբ թոնիրը վառում էր՝ հաց թխելու, Թելլին մոտենում էր **ցախաշար** պարսպին (*Անդին, թ. 2, 2015):*

ՑԱԾՐԱՄԱՍ, գ. **Ստորին մաս՝ հատված՝ վայր:** Հովիտների **ցածրամասից** ալիքվում է օտար մի խրխինջ՝ առնատենչ, կանչող *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՑԱԾՐԱՄԻՏ, ած. **Նենգամիտ, չարամիտ:** Չէ՞ որ ամեն մի չար բան առանց խորամանկության երբեք չի կարող իրագործվել, և նույնիսկ ամենահիմարն ու **ցածրամիտը** չարն անելիս օգտագործում է այն *(Գարուն, թ. 5-6, 2015):*

ՑԱՆՑԱՎԱՆԴԱԿԱՅԻՆ, ած. **Ցանցահյուս վանդակներով:** «Սևան ակվա» ՓԲԸ-ն նախատեսում է հիմնել և լճում տեղակայել մոդելային **ցանցավանդակային** ձկնաբուծական տնտեսություն *(Իրավունք, 25.03.2016):*

ՑԱՆՑԱՑՎԱԾ,ած.(փխբ.): **Հանրացանցերի տիրապետությանը ենթարկված:** ....Որպես պատգամավոր մարդը պարտավոր է բարձր պահել երկրի հեղինակությունը, այդ թվում սոցիալական ցանցերում, իսկ **ցանցացված** մեր ժամանակներում՝հատկապես սոցիալական ցանցերում (*Ազգ, 04.03.2016):*

ՑԱՎԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ցավազգացություն:** ....Մի շարք այլ պատումների հիմնական զարկերակը **ցավազգացողությունն** է իր եղեռնված ժողովրդի, անցյալի հիշողությունների, հայրենի կորուսյալ եզերքների հանդեպ.... *(ԳԹ, 22.04.2016):*

ՑԱՏԿԱՔԱՅԼ, գ. **Ցատկելով քայլելը:** Քաղաքի շները այլևս պոչերը ցցած ու կայտառ չեն անցնում հայացքիդ առաջ, այլ մի տեսակ պոչը քաշած ընկրկուն **ցատկաքայլով,** անհուն տխրությամբ ու վախվորած կարեկցանքով նայում են մարդկանց *(ՎՅ, էջ 124):*

ՑԵԽԱՏԻԼ, գ. **Ցեխոտ տիղմ:** Այդպես պոչ պոչի էլ, ծնկներից հետ կանաչոտ **ցեխատիլի** մեջ կորած, հաղթահարում ենք բարձունքը *(ՇՂ, էջ 28):*

ՑԵՂԱՀԱՎԱՏՔ, գ. **Ցեղակրոնություն:** ....Նժդեհը իր **ցեղահավատքով**, Նիցշեի տեսլականում ոչ մեկ անգամ հայտնված «Զավակների երկրի» կենսիմաստության վերականգնողն ու իրագործողն է *(Գարուն, թ. 1-2, 2015):*

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվող գիտաճյուղ:** Նա …. **Ցեղասպանագիտության** միջազգային ասոցիացիայի անդամ է …. *(Լրաբեր, 2, 2015, էջ 421):*

ՑԵՂԱՍՊԱՆԱՊԱՏՈՒՄ,գ.**Ցեղասպանության մասին պատմող ստեղծագործություն**:Պերճ Զեյթունցյանի **ցեղասպանապատում** դրամատուրգիան ունի պատմական գիտելիքներով հարուստ պատմողական թանձր շերտ…. *(ԳԹ,15.05.2015):*

ՑՆՑԱԴԵՊ, գ. **Սենսացիա:** Ռիգայում ավարտվեց ԵՄ Արևելյան հարևանության չորրորդ գագաթնաժողովը՝ առանց **ցնցադեպերի** *(Իր., 26. 05.2015):*

ՑՆՑԱԴԵՊԱՅԻՆ, ած. **Սենսացիոն:** Միայն նման գագաթնաժողովների մասնակցության փորձ չունեցողների կամ իրադարձությունների կամայական անդրադարձի հրահանգ ունեցողների համար էին իրադարձությունները **ցնցադեպային** *(Իր., 26.05.2015) :*

ՑՆՑԱԿԱԹՎԱԾԱՅԻՆ, ած. (փխբ.): **Շոկային:** Իմ ահազանգերին ի պատասխան մասնագիտական մի **ցնցակաթվածային** բացատրության արժանացա *(Իր., 12.05.2015):*

ՑՆՑՈՒՂԱԴՈՒՅԼ, գ. **Ցնցուղով դույլ:** ….Դանիել բեկը **ցնցուղադույլով** ջրում էր դռնաշեմի բարձրիկ վարդատունկերը *(ՌԿ, էջ 108):*

ՑՐՈՂԱԿԱՆ, ած. (ժրգ.): **Խուսափողական:** Հոկտեմբերի 28-ին իր հերթական նամակի **ցրողական** պատասխանն է ստացել…. Դավիթ Հարությունյանից *(Հրապ., 31.10.2013):*

ՑՈՒՅԱԿԱՎԱՐ, գ. **Կարգավար:** Դուբլինի Միացյալ հանրակառքերի ընկերության խոպոտ **ցուցակավարը** գոռում էր անունները…. *(Ջ, էջ 98):*

ՑՈՒՑԱԿՎԵԼ, բ. **Ցուցակով ներկայացվել:** Պարտատոմսերը **ցուցակվելու** են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում և գնանշվելու են շուկա ստեղծողների միջոցով *(Իր., 07.06.2016):*

ՈՒ

ՈՒՂԵՐԹԱՎՈՐ, գ. **Ճանապարհորդ:** Շների վզին մշտապես կախված էր կոնյակով լի մի փոքր տափաշիշ՝ մոլորված **ուղերթավորների համար***(ՎԻ, էջ 15):*

Փ

ՓԱՅ ՄՏՆԵԼ, բ. **Առանց իր մասնակցության իրականացվող գործնական ձեռնարկումի շահույթից մասնաբաժին պահանջելը և յուրացնելը:** ….Որպեսզի մի գործարար ներմուծմամբ կամ արտահանմամբ զբաղվի, **փայ եք մտնում***(Իր., 03.06.2016):*

ՓԱՅԱՄՏՆՈՒՄ, գ. **Փայ մտնելը:** Արդ **փայամտնումը** դարձել է ՀՀ տնտեսության անբաժանելի մասը *(Իր., 03.06.2016):*

ՓՂՈՒՀԻ, գ. **Էգ փիղ:** Դողէրոցքի մատնված **փղուհին** նստում է ոզնու վրա *(Գարուն, թ. 7-8, 2015):*

ՓՈԽԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, գ. **Փոխադարձ անդրադարձում:** Տե՛ս ՏԵՎԱԿԱՐԳ-ի օրինակը:

ՓՈԽԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ ենթակայություն:** Մի՞թե այդ հիմքի վրա են համագործակցում համաեվրոպական շուկայի երկրները, **փոխենթակայության** սկզբունքի վրա, թե շուկայական ազատ առևտրի *(ՇՂ, էջ 168):*

ՓՈԽՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ հասկացողություն:** ….Գլխավոր հրամանատարը, խորհրդի հրավիրելով զինակիցներին, ջանում էր հանգիստ և անընկճելի ընթացք բերել

փոխհասկացողության մի թանկ երևույթ, որ այնքան անհրաժեշտ է ամենաճշգրիտ որոշում և վճիռ կայացնելուհամար*(ՌԿ, էջ 125):*

ՓՈԽՀՈՍՔ, գ. **Փոխադարձ հոսք:** Խոսքը մասնավորապես, վերաբերվում էր տարածաշրջանային այնպիսի ծրագրերին,որոնք կարող են պայմաններ ստեղծել միավորելու չորս երկրների էլեկտրաէներգետիկական համակարգերը՝ բարձրացնելով փ**ոխհոսքերի** կառավարման մակարդակը *….(ՀՀ,14.04.2016):*

ՓՈԽՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ ճանաչելիություն:** Տե՛ս ԲԼՈԳՈԼՈՐՏ-ի օրինակը:

ՓՈԽՇՓՈՒՄ, գ. **Փոխադարձ շփում:** Միջմշակութային **փոխշփումների** ահռելի բացը լրացնելու շնորհիվ մի սքանչելի ֆիլմ ենք ստացել *(Ավ., 05.08.2015):*

ՓՈՍՏԱՆԱՎ, գ. **Փոստային նավ:** Ծովերի տիրակալը. նա ծովածոցի վրայով հարավ էր նայում. դատարկ. միայն **փոստանավի** փետրանման ծուխը, աղոտ՝ վառվռուն երկնակամարի վրա, և խուսավար առագաստը Մագլիոնսի մոտ *(Ջ, էջ 18):*

ՓՈՐԱԳՐԱՊԱՏԿԵՐ, գ. **Փորագրված պատկեր, փորագրանկար:** ….1698 թվականին բաժանվել է նրանից՝ նրան թողելով իր պատրաստած և իր ստորագրությունը կրող **փորագրապատկերները** *(Ազգ, 29.05.2015):*

ՓՈՐԱԳՐԱՔԱՆԴԱԿ, գ. **Փորագրված քանդակ:** Ես երկար կանգնած մնացի մի **փորագրաքանդակի** առջև*….(Ազգ,25.12.2015):*

ՓՈՐՁԸՆԿԱԼՈՒՄ,գ. **Փորձի ընկալում**: ….Երևույթների բացառապես անձնական **փորձընկալումներ** (հայրենասիրություն, սիրերգության ընկալումները) Գրիգորյանի պոեզիայում առաջացրել են միայն իրեն հատուկ փուլեր, որոնք ընդհանրացնել ընդհանուր գրա-

բանական դաշտի պարագծում, անհեթեթություն կլիներ *(ԳԹ,18.09.2015):*

ՓՈՔՐԱՏԵՍՔ, ած. **Տեսքով փոքր:** Տե՛ս ՇԵՇՏԱՀԱՐ-ի օրինակը:

ՓՈՒԼԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Փուլերի վերածելով իրականացնելը:** Հայաստանյան համացանցային լրատվության դաշտի զարգացման **փուլայնացման** փորձեր մինչև օրս չեն արվել…. *(Լրաբեր, 3, 2016):*

Ք

ՔԱՂԱՔԱՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ,ած. **Քաղաքական-հեռուստատեսային:** Հենց այն օրերին, երբ ողջ Հայաստանը, նաև հայությունը սևեռված էին «Եվրոտեսիլ» կոչված **քաղաքահեռուստատեսային** մեծ շոուի, հատկապես նրա հայ մասնակցի վրա, Լոնդոնի «Սավոյ» թատրոնում, մայիսի 15–ին տեղի էր ունենում մրցանակաբաշխության հանդիսավոր մի արարողություն*….(Ազգ,27.05.2016):*

ՔԱՂԱՔԱՆԿԱՐ, գ. Այստեղ՝ **քաղաքի նկարագրություն:** Տե՛ս ԵՐԵՎԱՆԱՊԱՏՈՒՄ–ի օրինակը:

ՔԱՂԱՔԱՎԵՐԱՓՈԽՈՒՄ, գ. **Քաղաքի վերափոխում:** Չնայած Ռոլանդ Շառոյանը մի քանի տարի առաջ տունը լուսանկարել էր, բայց **քաղաքավերափոխումների** պայմաններում արդեն չկար նաև մեր քաղաքապետի մեծ պապի տունը *(Անդին, թ. 7-8, 2015):*

ՔԱՂՔԵՆԻԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Քաղքենիական մտածողություն:** Տարօրինակ է, տրամաբանում է մեր **քաղքենիամտությունը,** մեր հավատքը դեպի Եվրոպան կույր զգացում էր *(Ավ., 02.09.2015):*

ՔԱՋԱԳԼՈՒԽ, ած. **Քաջ, հմուտ ղեկավար:** Ազգի **քաջազլուխ** տղամարդը Շահումյանն է *(ՌԿ, էջ 118):*

ՔԱՌԱԹԻ, ած….. **Չորս թիով թիավարվող:** Անցնելով նավեր, խարսխաշղթաներ, նավարկելով դեպի արևմուտք, անցնելով **քառաթի**

նավակները, ալիքների վրա լողացող ճմռթված անպետք թղթի կտորը՝ գալիս է Եղիան *(Ջ, էջ 203):*

ՔԱՌԱՊԱՏՈՒՄ, գ. **Չորս մասից բաղկացած պատում՝ ստեղծագործություն:** Ահա այս ամենը Վագներն արտահայտել է իր արվեստում՝ օպերաներում, մասնավորապես, «Նիբելունգի մատանին» **քառապատումում** *(Իր., 27.05.2016):*

ՔԱՌԱՎԱՐԳ, մկբ. **Քառատրոփ վարգով:** Դոփում էին, խրխնջում անհանգիստ **ու քառավարգ** իջնում ձորը, որտեղով սառը աղբրաջուր էր հոսում *(Անդին, թ. 9-10, 2015):*

ՔԱՐԱՀԱՏԱՐԱՆ, գ. **Արտաղրամաս, որտեղ քար են հատում:** Աջից **քարահատարանի** բակն է *(Ջ, էջ 85):*

ՔԾՆԱՆՔԱԿՈՒՅՏ, գ. **Քծնանքների խումբ, կույտ:** Այս **քծնանքակույտի** հետ գրականությունից խոսել հնարավոր չէ *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՔԾՆԱՍՊԵՏ, գ. **Քծնելու մեջ հմուտ՝ վարպետ:** ՀՀ օլիգարխիատի դրածո մտավորական **քծնասպետներ**, բացահայտ գործող ԼԳՏԲ-ականներ և ակնհայտ հայտավորված աղանդավորներ *(Ժող., 15.06.2015):*

ՔՉԱԿԱԶՄ, ած. **Քչաքանակ:** Ճշմարիտ է զորավար, սակայն **քչակազմ** են մեր գնդերը *(ՌԿ, էջ 88):*

ՔՐԻՍՏՈՆԵԱԹԱՓԵԼ, բ. **Քրիստոնյա բնակչությանը տեղահանել:** Այդ գործարքը հնարավոր դարձավ, քանի որ գերազանցապես քրիստոնյա բնակչություն ունեցող Սերբիայի կազմում ալբանացի մահմեդականների կողմից անկախ վարչական միավորի ստեղծումն ու պաշտպանությունը ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածքները **քրիստոնեաթափելու**՝ միջազգային կառույցների «աշխարհաքաղաքական նպատակահարմարության» առանցքային մաս են կազմում *(Լրաբեր, 2, 2015, էջ 136):*

ՔՈՒՆՔԱԿՈՂ, ած. Այստեղ՝ **կիսադեմ:** Ես կարծեցի վիրավորած կլինեմ նրան, եթե աջ **քունքակողից** գլուխս շուռ տամ ձախի *(Գարուն, թ. 9-10, 2015):*

ՔՈՒՆՔԵՐԵՍ, գ. Այստեղ՝ **կիսադեմ:** Փռված եմ բերնիս վրա՝ աջ **քունքերեսս** շրջած կողքի *(Գարուն, թ. 9-10, 2015):*

Օ

ՕԳՏԱՀԱՇԻՎ, գ. **Օգտատիրոջ հաշիվը համացանցում:** Ինքնասպանության յուրաքանչյուր քայլը չինուհին լուսանկարել և հրապարակել է իր instegram-ում: Նրա **օգտահաշվի** համարն է …*(Հմ):*

ՕԴԱՉԱՓԻՉ, գ. **Օդը չափող սարք, օդաչափ:** Տե՛ս ՍՈՄՆՁԱԺԱՊԱՎԵՆ–ի օրինակը:

ՕՏԱՐԱԴԱՎԱՆ, ած. **Օտարներին դավանող:** ….Այսօր հավատի մեր ծառը նույն խնամքի կարիքն ունի **օտարադավան** զանազան տարափոխիկ հողմերի ու հարձակումների դեմ *(ԳԹ,19.02.2016):*

ՕՁԱՀՐԹԻՌ, գ. Տե՛ս ԿԱՐՄՐԱՍԵՎ-ի օրինակը:

ՕՇԱՐԱԿԱԴՈՆԴՈՂ, գ. **Օշարակից պատրաստած դոնդող:** Նե կոկիկ, դանդաղ լցրեց **օշարակադոնդողը***(Ջ, էջ 225):*

ՕՊՏԻՄԱԼԱՑՆԵԼ, բ. **Կրճատել՝ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:** Հետագա զարգացման ծրագրերի մեջ մտնում է հակաճգնաժամային ծրագրի ներդրումը՝ նպատակ ունենալով **օպտիմալացնել** ընկերության ֆինանսական գործունեությունը *(Ավ., 14.10.2015):*

ՕՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Օտար լեզվով գրելը:** Մեր թշնամիներն ու բարեկամները մեզ մեղադրում են քսենոմանիայի մեջ. Օտարամոլություն, **օտարագրություն** նույնիսկ այն ժամանակ, երբ խաղաղ է եղել հայոց երկիրը *(Անդին, թ. 5, 2015):*

ՕՏԱՐԱՆՎԱՃՈՒԹՅՈՒՆ, գ. **Օտարների կողմից նվաճված լինելը:** Եվ **օտարանվաճությունն** աքսորի է մատնում ազատությունը, որն ինքնադրսևորման միակ հնարավորությունն է *(Անդին, թ. 1, 2015):*

ՕՐԱԾԵԳ,գ. **Առավոտ: Օրածեգին** հայրը գերանդին ուսել, հանդ է եկել, խոտ է հնձում «փաթիլ-փաթիլ»,մայրն էլ քիչ հետո ամանը պռունկ–պռունկ ապուր է բերել…. *(ԳԹ, 04.09.2015):*

ՕՐԱՎԱՐՏ, գ. **Օրավերջ:** …. Ու մենք սահում ենք այդ լուրերի, իրադարձությունների, անցուդարձի մակերեսին՝ գերազանցապես **օրավարտին** ամեն ինչ մոռանալով, եթե կոնկրետ մեզ չեն վերաբերում *(Իր., 19.06.2015):*

ՕՐԻՆԱՄԵՏ, ած. **Օրենքին միտված, օրինապահ, օրինահարգ:** Թող չթվա, թե ես իշխանամետ եմ: Ո՛չ, ես **օրինամետ** եմ *(Իր., 22.07.2016):*

Ֆ

ՖԵՅՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Համակարգչային face book հանրացանցից օգտվող հայեր:** ….Ես շարունակելու եմ պնդել այն, ինչ արդեն ասացի. եթե ոչ ամեն օր, գոնե մեռելոցից մեռելոց **ֆեյսահայության** գործազուրկ հատվածը մոմ պիտի վառի Ցուկերբերգի հանգուցյալ նախնիների հիշատակին *(Իր., 19.02.2016):*

ՖԻԼՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ.**Հեղինակի՝ նկարահանված ֆիլմի ամբողջությունը:** Տե՛ս ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՖԻԼՄ–ի օրինակը:

ՖՈՏՈԱՐՎԵՍՏ, գ. **Լուսանկարչական արվեստ:** Մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր տարի …. հետևյալ յոթ բնագավառներում …. **ֆոտոարվեստ** *(ՀՀ նախագահի մրցանակի մասին հայտարարությունից):*

ՖՈՏՈԳՈՎԱԶԴ, գ. **Լուսանկարների միջոցով տարածվող գովազդ:** Տե՛ս ԿԻՆՈԳՈՎԱԶԴ-ի օրինակը:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԵՐԳԵՅԻ
ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԿԱՌԼԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԱ ԳՐԻԳՈՐԻ
ՍԱՀԻՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ ԵՐՎԱՆԴԻ

ՆՈՐ ԲԱՌԵՐ
Բ պրակ

Համակարգչային շարվածքը՝ Գ. Հովսեփյանի
Համակարգչային էջադրումը՝ Ա. Գուլոյանի

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

Տպաքանակը՝ 150